

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա
Երևանի գեոդեռային հետազոտությունների կենտրոն

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ
ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՈՒՄ**

**ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ**

Երևան 2005

**«ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՈՒՄ:
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ»**

ժողովածուն

հրատարակվում է Բաց հասարակության ինստիտուտի
Հայաստանի օժանդակության հիմնադրամի աջակցությամբ
«Պետական կրթական չափորոշիչ:
Գենդերային կրթությունը բարձրագույն դպրոցում»
նախագծի շրջանակներում

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՈՒՄ: ՊԵՏԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ: Համալսարանական կրթու-
թյամբ կանանց ասոցիացիա: Գենդերային հետազոտությունների
կենտրոն: Երևան, 2005: 324 էջ

*Ժողովածուում ներկայացված են գենդերային կրթության ընդհանուր հիմունք-
ները և ներածական դասընթացի, մի շարք մասնագիտությունների և առարկաների,
«Գենդերը և տնտեսագիտությունը», «Հայոց պատմության գենդերային դիսկուր-
սը», «Գենդերը և մարդու իրավունքները» հատուկ դասընթացների չափորոշիչների
նախագծերը, որոնք հիմնված են 2004-2005 թթ. կատարված հետազոտությունների
և հայ հասարակության ժողովրդավարացման համատեքստում բարձրագույն
կրթության բարեփոխման ու գենդերային կրթության ինստիտուցիոնալացման հիմ-
նախնդիրների մի շարք տեսական մոտեցումների մշակման վրա:*

*Գենդերային կրթությունը դիտելով քաղաքացիական դաստիարակության, քա-
ղաքացիական ակտիվության և պատասխանատվության բարձրացման կարևոր
գործոն՝ հեղինակները և մշակողները համարում են, որ գենդերային կրթության
ներդրումը Հայաստանի բարձրագույն դպրոցի համակարգում կնպաստի ուսանող-
ների շրջանում ժողովրդավարական մշակույթի և իրավագիտակցության, ակտիվ
քաղաքացիական դիրքորոշման և պատասխանատվության ձևավորմանը:*

© Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, 2005

Ներածություն

Գենդերային կրթությունը անընդհատ կրթության համակարգում քա-
XXI դարում կրթությունը դիտվում է բազմապլան հիմնախնդիրների լուծման
բանալի և արդյունավետ մեխանիզմ, որ հնարավորություն է տալիս կյանքը
կառուցելու ակտիվ քաղաքացիության և աշխատանքի գրավչության սկզ-
բունքներով: Գենդերային հայեցակետի առանձնացումը մշակույթի և կրթա-
կան քաղաքականության ոլորտներում ենթադրում է ռազմավարական պլա-
նավորում և կանխատեսում կատարելիս անցնել բազային՝ գենդերայնորեն
կողմնորոշված, անընդհատ կրթության կամ, ինչպես ընդունված է այսօր
ասել, «ցմահ կրթության» կամ «կրթության ամբողջ կյանքում»:

Անընդհատ կրթությունը պետք է նպաստի անհատի հարմարմանը փո-
փոխվող միջավայրին, նրա մտավոր հնարավորությունների առավել ինք-
նարտահայտմանը և մասնագիտական առաջխաղացմանը, քաղաքացիա-
կան ակտիվության վերելքին:

Կրթությունը՝ պատրաստման ու վերապատրաստման ողջ համակարգը,
այսօր պետք է մասնագիտական առաջխաղացման առավել մեծ հնարավո-
րություններ ընձեռի բոլոր տարիքների մարդկանց՝ անկախ սեռից: Կրթու-
թյան համակարգի կատարելագործման պետական ռազմավարությունը
պետք է ուղղված լինի կրթության ու ինքնակրթության զարգացմանն ու
վարկի բարձրացմանը, քաղաքացիների՝ կրթությունը աշխատանքի ու ըն-
տանեկան կյանքի հետ համատեղելու իրավունքի ապահովմանը՝ անկախ
սեռից:

Գենդերային ռազմավարությունը պետք է միտված լինի նրան, որ տղա-
մարդիկ ու կանայք ոչ միայն կարողանան հեշտությամբ ընտելանալ փոփո-
խություններին, այլև գլխավոր դերակատարներ դառնան գիտելիքների ժա-
մանակակից հասարակությունում: Այդ հանգամանքը ենթադրում է այն ան-
ջրպետի հաղթահարում, որ առաջացել է բնակչության՝ կյանքի փոփոխվող
պայմաններին համեմատաբար հեշտությամբ հարմարված փոքրաթիվ խմ-
բի և այն մեծաթիվ խմբի միջև, որը, ըստ էության, մի տևական ժամանակա-
հատված դուրս է մնացել ակտիվ կյանքից:

Այսպիսով, բոլոր քաղաքացիների համար հավասար հնարավորություն-
ների և անընդհատ կրթության մշտական մատչելիության ապահովումը
պահանջում է առաջին պլան մղել հատուկ գենդերային ծրագրերի մշա-
կումն ու ներդրումը, գենդերային գիտելիքների ներառումը գիտության ա-
վանդական ոլորտներում, կրթական համակարգի բոլոր մակարդակներում՝
սկսած նախադպրոցական դաստիարակությունից մինչև միջնակարգ,
բարձրագույն և հետդիպլոմային կրթությունը, ինչպես նաև դասավանդման
արդյունավետ մեթոդների կիրառումը:

Գենդերային բաղկացուցչի ներառումը միջնակարգ դպրոցի կրթական չափորոշիչներում, բարձրագույն և մասնագիտական կրթության համակարգի բոլոր կրթական չափորոշիչներում, ինչպես նաև ամբողջ ուսումնամեթոդական գրականության և մանկավարժական կադրերի մասնագիտական վերապատրաստման, պետական ծառայողների և գործադիր իշխանության մարմինների մասնագետների որակավորման բարձրացման ուսումնական ծրագրերի գենդերային փորձագիտությունը կնպաստեն Հայաստանի ինտեգրմանը եվրոպական կառույցներին և Բոլոնյան գործընթացին: Գենդերային կրթությունը անընդհատ կրթության համակարգում քաղաքացիական դաստիարակության, քաղաքացիական ակտիվության և պատասխանատվության բարձրացման, գենդերային հավասարության՝ որպես զուգակշռված ժողովրդավարության նախադրյալի, հասնելու կարևոր գործոն է:

Այդ իսկ պատճառով 2004 թ. Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի գենդերային հետազոտությունների կենտրոնի փորձագետներն ու հետազոտողները նախաձեռնեցին գենդերային կրթության չափորոշիչների մշակումը, որոնք հրատարակված են «Պետական քաղաքացիականության հայեցակարգային հիմունքները գենդերային կրթության բնագավառում: Գենդերային կրթության պետական չափորոշիչների նախագիծ» ժողովածուում:

Գենդերային կրթության չափորոշիչները մշակելիս աշխատանքային խումբը հիմնվել է «Գենդերային իրազեկություն և գենդերային զգայնություն. զուգակշռված ժողովրդավարության նախադրյալներ» ծրագրի շրջանակներում (ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (Վարշավա) հետ համագործակցությամբ) Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում գենդերային առարկաների դասավանդման քառամյա փորձի վրա:

Առաջին փուլում՝ 2004 թ., գենդերային կրթության չափորոշիչների մշակումն ընթանում էր այն պայմաններում, երբ դեռևս չկային բարձրագույն դպրոցի հաստատված կրթական չափորոշիչներ: Աշխատանքային խումբը Հայաստանի մի շարք համալսարաններում ու ինստիտուտներում ուսումնասիրել է բարձրագույն դպրոցի կրթական չափորոշիչների մշակվածության աստիճանը, կազմակերպել է հանդիպումներ գենդերային հիմնախնդիրներով հետաքրքրվող դասախոսների, ինչպես նաև գենդերային առարկաների դասընթացներն ունկնդրող ուսանողների հետ: Ուսումնասիրվել են նաև ԱՊՀ մի շարք երկրներում, մասնավորապես Ռուսաստանի Դաշնությունում մշակված կրթական չափորոշիչները (հատկապես հասարակագիտական մասնագիտությունների):

Չափորոշիչների մշակումը դժվարացել է նաև այն ոչ այնքան ակնհայտ և ոչ միշտ ճանաչվող գործոնով, որ դեռևս միասնական «գենդերաբանու-

թյուն» գիտություն չի ձևավորվել, և հակոտնյա մոտեցումների ու մեթոդաբանությունների վերջնական կոնսենսուս ձեռք չի բերվել, գենդերային հիմնախնդիրները դուրս են գալիս առանձին գիտակարգերի շրջանակներից, հետևաբար դրանք լիովին կարող են հայեցակարգվել միայն միջառարկայական մոտեցման շրջանակներում: Առայժմ կայունացած ակադեմիական գիտակարգեր չկան, իսկ երևան եկող գենդերային դասընթացները, որպես կանոն, փորձարարական և նորարարական բնույթ ունեն, ինչը, մի կողմից, դրանք ճկուն և արդիական է դարձնում, մյուս կողմից՝ դժվարացնում միասնական չափորոշիչների մշակումը:

Աշխատանքի ընթացքում՝ թե՛ առաջին և թե՛ երկրորդ փուլում, հեղինակները նկատի են ունեցել այն հանգամանքը, որ գենդերային տեսությունը՝ գիտական գիտելիքի և մեթոդաբանության այս նոր ուղղությունը, չի ձևավորվել որպես գիտության առանձին ճյուղ և որպես ակադեմիական գիտակարգ՝ մշակման ու կայացման փուլում է: Այս հանգամանքը ևս որոշակիորեն բարդացրել է չափորոշիչների մշակման աշխատանքը:

Գենդերային առարկաների դասավանդման սեփական փորձի դրական արդյունքները, ինչպես նաև ուրիշ երկրների բարձրագույն դպրոցի չափորոշիչների մշակման ուսումնասիրությունը առաջին փուլում հնարավորություն են տվել որոշելու չափորոշիչների ձևավորման հիմնական մոտեցումը: Այն պայմաններում, երբ չափորոշիչների ձևավորման միասնական մոդել չի ձևավորվել, հեղինակային խումբը ելել է այն փաստից, որ գենդերային կրթությունը քաղաքացիական դաստիարակություն է, և անհրաժեշտ է, որ ուսանողները տիրապետեն գենդերային գիտելիքներին՝ անկախ բուհի և մասնագիտության տեսակից: Չափորոշիչները մշակողները հաշվի են առել նաև այն հանգամանքը, որ գենդերային գիտելիքները անհրաժեշտ է ներառել տարբեր մասնագիտություններում և առաջին հերթին հասարակագիտական մասնագիտություններում, որոնք առավել չափով են ուղղված քաղաքացիական դաստիարակությանը:

Միասնական կրթական չափորոշիչների մշակումը բարդ էր նաև այն պատճառով, որ չափորոշիչների միասնական սկզբունքներ և մոտեցումներ չկային: Այլ կերպ ասած՝ չափորոշիչները մշակվում են առանձին գիտակարգերի, դասընթացների, մասնագիտությունների և անգամ առանձին ուսումնական հաստատությունների և կրթական համակարգի առանձին աստիճանների համար: Այս առանձնահատկությունները հաշվի առնելով՝ առաջարկվել է ներկայիս պայմաններում գենդերային կրթական չափորոշիչների օպտիմալ ալգորիթմը, որը, մեր կարծիքով, որպես մոդել, կարող է հաջողությամբ օգտագործվել ուրիշ մասնագիտությունների և գիտակարգերի չափորոշիչները մշակելիս:

Առաջարկվել և իրականացվել է գենդերային կրթության չափորոշիչը երեք մակարդակում մշակելու արդյունավետ գաղափարը.

Առաջին մակարդակ՝ ներածական դասընթացի՝ գենդերային հիմնախնդիրների ներածության մշակում:

Երկրորդ մակարդակ՝ գենդերային բաղկացուցչի ներառում գոյություն ունեցող ակադեմիական գիտակարգերում (կամ գիտակարգերի խմբերում):

Եվ, վերջապես, **երրորդ մակարդակ**՝ միջառարկայական գենդերային դասընթացի, հետագայում՝ հատուկ գենդերային դասընթացների մշակում:

«Գենդերային կրթության ընդհանուր հիմունքներ» պետական կրթական չափորոշիչի նախագծի հայեցակարգային մոտեցումների փորձարկման հարցում նշանակալի դեր է խաղացել 2004թ. հունվարի 16-ին կայացած «Գենդերային կրթությունը բարձրագույն դպրոցում. հետագա կառուցակարգման փորձն ու հիմնախնդիրները» կլոր սեղանը, որին մասնակցել են գիտության և կրթության փոխնախարար Արա Ավետիսյանը, Հայաստանի ռեկտորների խորհրդի նախագահ, Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և հանրապետության մի շարք առաջատար բուհերի ռեկտորները:

Կլոր սեղանի քննարկումները հաստատեցին հեղինակային կոլեկտիվի կողմից ընտրված գենդերային կրթության չափորոշիչների մշակման գիտական մոտեցումների ճշտությունն ու հիմնավորվածությունը:

Ասցիցիայի գենդերային հետազոտությունների կենտրոնի առաջին՝ 2004 թ. հրատարակված «Պետական քաղաքականության հայեցակարգային հիմունքները գենդերային կրթության բնագավառում: Գենդերային կրթության պետական չափորոշիչների նախագիծ» ժողովածուում գետեղվել են մի շարք գիտական հոդվածներ բարձրագույն դպրոցի բարեփոխման, գենդերային կրթության հիմնախնդիրների մասին հայ հասարակության փոխակերպման և զլոբալացման գործընթացների համատեքստում, ինչպես նաև պետական կրթական չափորոշիչների նախագծերը, այն է՝ «Գենդերային կրթության ընդհանուր հիմունքները», երկրորդ մակարդակի չափորոշիչները՝ «պատմություն», «փիլիսոփայություն», «քաղաքագիտություն», «իրավագիտություն», «տնտեսագիտություն» մասնագիտությունների համար գենդերային-տեսական գիտելիքների և հմտությունների միասնական պահանջները, երրորդ մակարդակի չափորոշիչը՝ «Գենդերային տեսության ներածություն» միջառարկայական դասընթացը և ծրագրերը:

Շարունակելով գիտական հետազոտությունները՝ հեղինակային խումբը նոր փուլում՝ 2005 թ., մշակել է ներածական դասընթացի, մի շարք նոր մասնագիտությունների, առարկաների և հատուկ գենդերային գիտակարգերի պետական կրթական չափորոշիչների նախագծերը:

Երկրորդ ժողովածուով գիտական-մանկավարժական հասարակայնությանն են ներկայացվում հետևյալ պետական կրթական չափորոշիչների նախագծերը.

- ◆ առաջին մակարդակ՝ գենդերային-տեսական գիտելիքների և հմտությունների միասնական պահանջներ «Գենդերային գիտելիքների հիմունքներ» ներածական դասընթացի համար,

- ◆ երկրորդ մակարդակ՝ գենդերային-տեսական գիտելիքների և հմտությունների միասնական պահանջներ «Մշակութաբանություն», «Հոգեբանություն» մասնագիտությունների, «Մանկավարժություն», «Մանկավարժության պատմություն», «Հայ ազգագրություն» առարկաների համար,

- ◆ երրորդ մակարդակ՝ «Գենդերը և տնտեսագիտությունը», «Հայոց պատմության գենդերային դիսկուրսը», «Գենդերը և մարդու իրավունքները» հատուկ դասընթացներ:

Նկատի ունենալով, որ հավանաբար ոչ բոլորն ունեն 2004 թ. հրատարակված «Պետական քաղաքականության հայեցակարգային հիմունքները գենդերային կրթության բնագավառում: Գենդերային կրթության պետական չափորոշիչների նախագիծ» ժողովածուն, ներկա ժողովածուում վերահրատարակվում է նշված ժողովածուի «Գենդերային կրթության ընդհանուր հիմունքները» պետական կրթական չափորոշիչի նախագիծը, որում ներկայացված են գենդերային կրթական չափորոշիչների ելակետային մոտեցումները, մակարդակներն ու բովանդակությունը:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի գենդերային հետազոտությունների կենտրոնի փորձագետների խումբը երախտագիտություն է հայտնում ՀՀ գիտության և կրթության փոխնախարար Արա Ավետիսյանին խորհրդատվության և պետական կրթական չափորոշիչների նախագծերի մշակմանն օժանդակելու համար:

«Մանկավարժություն», «Մանկավարժության պատմություն» առարկաների, «Մշակութաբանություն» մասնագիտության և «Հայոց պատմության գենդերային դիսկուրսը» հատուկ դասընթացի չափորոշիչները մշակողների խումբը խորին երախտագիտություն է հայտնում մանկավարժական գիտությունների թեկնածու, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս Լատրա Ասատրյանին, Ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտի պրոռեկտոր, մանկավարժական գիտությունների դոկտոր Ֆրունգե Ղազարյանին, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի գրականության ամբիոնի դասախոս Սերգեյ Չաքարյանին, ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Ստեփանյանին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Գոհար Վարդումյանին, Հյուսիսային համալսարանի լրագրության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Լիլիթ Չաքարյանին՝ արժեքավոր առաջարկությունների համար:

Նախագծի ղեկավարը և պետական կրթական չափորոշիչների մշակման աշխատանքային խումբը երախտապարտ են բոլորին, ովքեր իրենց աջակցությամբ և մասնակցությամբ նպաստել են չափորոշիչների մշակմանը:

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան երախտագիտություն է հայտնում Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի, Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի, Ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտի, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի, Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի, Սանկտ Պետերբուրգի արտաքին տնտեսական հարաբերությունների, տնտեսագիտության և իրավունքի ինստիտուտի Երևանի մասնաճյուղի, Երևանի «Ինտերլինգվա» լեզվագիտական համալսարանի, Երևանի հյուսիսային համալսարանի, Լ. Քալաշյանի անվան բաց համալսարանի, Երևանի «Գալիք» համալսարանի ռեկտորատներին գեներալային կրթության ինստիտուցիոնալացման, համագործակցության, «Գեներալային գիտելիքները» որպես ժողովրդավարական մշակույթի և իրավագիտակցության մատչառի» ծրագրի իրականացմանը օժանդակելու համար:

Հեղինակները շնորհակալություն են հայտնում Անահիտ Հարությունյանին պետական կրթական չափորոշիչների նախագծերի հայերեն հրատարակության խմբագրման համար:

Գիտական խումբը խոր երախտագիտություն է հայտնում Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամին (Հայաստան), որի աջակցության շնորհիվ հնարավոր դարձավ հետազոտության անցկացումը, պետական կրթական չափորոշիչների նախագծերի մշակումն ու սույն ժողովածուի հրատարակումը: **Չեմնա Հասարայան** Ծրագրի ղեկավար, մանկավարժական գիտությունների թեկնածու, Երևանի «Ինտերլինգվա» համալսարանի դասախոս, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի գեներալային հետազոտությունների կենտրոնի ղեկավար:

Չեմնա Հասարայան

*Ծրագրի ղեկավար,
մանկավարժական գիտությունների թեկնածու,
Համալսարանական կրթությամբ
կանանց ասոցիացիայի նախագահ*

ԲԱԺԻՆ 1

**ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ
ՆԱԽԱԳԻԾ**

**«ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ»**

**«ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ
ՆԱԽԱԳԻԾԸ ՄՇԱԿՈՂ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ**

Ջենմա Հասրաթյան, Երևանի «Ինտերլինգվա» համալսարանի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի գենդերային հետազոտությունների կենտրոնի ղեկավար, խմբի ղեկավար

Վլադիմիր Օսիպով, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, Ասոցիացիայի գենդերային հետազոտությունների կենտրոնի փորձագետ, խմբի խորհրդատու

Սոֆյա Բաբայան, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու

Անահիտ Թելունց, Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի փիլիսոփայության ամբիոնի դոցենտ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Ելենա Վարդանյան, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՆԱԽԱԳԻԾ

«ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ»¹

Վերջին տարիների սոցիալ-տնտեսական և քաղաքական փոխակերպումները և որակական նոր մակարդակի քաղաքակրթական գործընթացները Հայաստանում թելադրում են կրթության քաղաքականության բարեփոխման և կրթական չափորոշիչների միասնականացման հրամայականը միասնական կրթական տարածությունում ուսանողների մրցունակության և շարժունակության ապահովման համար: Բոլոնյան գործընթացն **առավել արդիական դարձրեց այդ խնդիրը:**

Պետական կրթական չափորոշիչը պետության հաստատված հիմնարար փաստաթուղթ է, որը սահմանում է կրթության նպատակներն ու խնդիրները, նորմավորում կրթական ծրագրերի բովանդակությունը, ուսանողների գիտելիքների մակարդակին, կարողություններին և ունակություններին ներկայացվող պահանջները:

Պետական կրթական չափորոշիչները կրթության բոլոր փուլերում ուսուցման նպատակների և շեմային մակարդակների չափորոշման հիմք են ծառայում.

- կրթության բոլոր մակարդակների շրջանավարտներին ներկայացվող ընդհանուր, միասնականացված պահանջներ ձևավորելու,
- կրթության բոլոր մակարդակներում և մասնագիտական կրթության տարբեր ոլորտներում միասնականացված ուսումնական պլաններ և ուսումնական ծրագրեր ստեղծելու,
- երկրի կրթական տարածությունը միջազգային կրթական տարածության մեջ ներառելու համար:

¹ Արտատպվում է «ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ: ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ» գրքից: Համալսարանական կրթությամբ կանանց սոցիալազգիս, Եր. 2004:

Կրթության չափորոշիչը զարգացնում, համադասում և միասնականացնում է կրթության այնպիսի պարամետրեր, ինչպիսիք են բովանդակությունը, կառուցվածքը և ներկայացման մակարդակները, մոնիտորինգի մեթոդներն ու ձևերը և ուսուցման արդյունքների մեկնաբանումները:

Չափորոշիչը կոչված է ապահովելու կրթության որոշակի մակարդակի կայունությունը, դրա անընդհատ վերարտադրությունը և կատարելագործումը՝ հասարակության զարգացման հեռանկարներին համապատասխան:

Գենդերային կրթության չափորոշիչի հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները.

1. Հասարակության սոցիոմշակութային զարգացման պահանջ-մունքների և առանձնահատկության հաշվառումը:

2. Ամբողջականությունը, համակարգվածությունը և գործառության լիակատարությունը կրթության նպատակների և ներքին տարբերակվածության տեսանկյունից:

3. Չափորոշիչների համաձայնեցվածությունը և հաջորդայնությունն՝ ըստ շարունակական կրթության սանդղակի:

4. Չափորոշիչի կայունությունը որոշակի ժամանակահատվածում և կատարելագործման հնարավորությունը դրա իրականացման պայմանների փոփոխման դեպքում, այսինքն՝ հասարակության զարգացման տվյալ փուլում նոր սոցիալական պատվերի և աշխատանքի շուկայի նոր պահանջների դեպքում:

5. Տեխնոլոգիականությունը, գործնական ստուգման հնարավորությունը:

Թվարկված սկզբունքների ամբողջական կենսագործումը հնարավորություն կտա, որպեսզի չափորոշիչը դառնա կրթության ժողովրդավարացման կարևոր միջոց՝ միտված դրա որակի և արդյունավետության բարձրացմանը:

Անցումը ունիտար կրթության դարաշրջանից կրթական մոդելների

բազմազանությանը (մասնավոր բուհեր, հեռաուսուցում, ոչ ֆորմալ կրթություն, ինֆորմալ կրթություն) պահանջում է կարգավորման հստակ մեխանիզմ՝ ունակ կանխելու միասնական կրթական տարածության քայքայումը: Չափորոշիչները կոչված են կատարելու հատկապես կայունացման և կարգավորման գործառույթը՝ չսահմանափակելով տարբերակված մոտեցումների զարգացումը և այլընտրանքային ծրագրերի ստեղծումը, սակայն այդ ամենը պետք է ապահովի գիտելիքների միասնականացված ծավալ, որը չի կարող չափորոշիչով սահմանված մակարդակից ցածր լինել:

Այդպիսով ձեռք են բերվում՝

- *կրթության որակի երաշխիքներ,*
- *կրթության համարժեքություն, որը*
- *միջազգային պարամետրերին կրթության համապատասխանության,*
- *ուսանողների և շրջանավարտների ակադեմիական շարժունակության ապահովման կարևոր նախադրյալ է:*

Դրա հետ մեկտեղ կրթության առանձին մակարդակների ստորին և վերին սահմանների միասնական բնութագրերը որոշող հստակ պարամետրերը, ինչպես նաև մեկ մակարդակից մյուսին անցնելու շեմային ատեստացիաների չափելի չափանիշները հնարավորություն են տալիս ապահովելու կրթության երաշխավորված որակ, որն անհրաժեշտ և բավարար է աշխատանքի միջազգային շուկայում ուսանողի հետագա մասնագիտական գործունեության համար այնպիսի պայմաններում, ինչպիսիք են.

- *կենսագործունեության բոլոր ոլորտներն ընդգրկող արմատական սոցիալ-տնտեսական և քաղաքական փոխակերպումները,*
- *հասարակության ժողովրդավարացումը և գլոբալացումը,*
- *տեղեկատվական և կիրառական տեխնոլոգիաների արդիականացումը,*
- *միջազգային հանրությանը Հայաստանի տնտեսական և մշակութային հետագա ինտեգրումը,*
- *անցումը անընդհատ կրթության հասարակության:*

Անընդհատ կրթության հասարակություն դառնալու համար, որը ժամանակի մարտահրավերն է, բոլոր երկրները պետք է իրենց քաղաքացիների համար ապահովեն այնպիսի գիտելիքներ, մասնագիտական հմտություններ և որակավորում ձեռք բերելու հնարավորություն, որոնք կհամապատասխանեն միջազգային չափորոշիչներին և ճանաչված կլինեն միասնական կրթական տարածության մեջ:

Կրթությունը կոչված է կատարելու մի շարք գործառույթներ.

զարգացնող - անձի հոգևոր պահանջմունքների բավարարում, ստեղծագործական աճի ապահովում,

փոխհատուցող - բազային կրթության ծախսերի հատուցում,

հարմարեցնող - օպերատիվ նախապատրաստում արագ փոփոխվող սոցիալական իրավիճակի պայմաններին,

ինտեգրացնող - ներառում նոր մշակութային համատեքստի և գլոբալ տեղեկատվական հանրության մեջ, որտեղ գիտելիքի գործոնը հիմնական ռազմավարական պաշարն է դառնում,

տեղեկատվական - տիրապետում նորագույն տեղեկատվական պաշարներին և հաղորդակցության տեխնոլոգիաներին՝ խուսափելու համար սոցիալական մարզինալացումից և բևեռացումից,

վերասոցիալականացման - հասարակության մշակութային և բարոյական արժեքների յուրացում, վարքի ստերեոտիպերի իմաստավորում և ընտրում, վարքի մոդելների օրինականացում և համաձայնագրում:

Կրթվածության չափանմուշային մոդելի սոցիալապես նշանակալի ցուցանիշներ են.

Գործառութային զրազիտությունը - հասարակության զարգացման քաղաքակրթական-մշակութային մակարդակին համապատասխան սոցիալ-մշակութային տեղեկատվության անհրաժեշտ ծավալի յուրացում, ինչը նախադրյալներ է ստեղծում տեղեկատվական, բազմամշա-

կութային, բաց հասարակության պայմաններում անձի լիարժեք գործառության համար:

Մասնագիտական իրազեկությունը - մարդու՝ տվյալ պահին հասարակության մեջ ընդունված *նորմատիվներին և չափորոշիչներին* համապատասխան մասնագիտական գործառույթներ կատարելու, ինչպես նաև մասնագիտության մեջ տեսական գիտելիքների և գործնական փորձի ներառման միջոցով սեփական հայեցակարգային ուղին կերտելու ընդունակությունը.

Մշակույթը, որը կրթական քաղաքականության համատեքստում պետք է ընկալվի, մի կողմից, որպես առարկայացված սոցիալական փորձ՝ կենսագործունեության տարբեր ոլորտներում (տեխնոլոգիայի, տնտեսության, քաղաքականության, սոցիալական հարաբերությունների, հոգևոր) մարդկային հասարակության նվաճումների ամբողջություն, մյուս կողմից՝ որպես անձի զարգացման մակարդակ, որը չափվում է ըստ անհատի կողմից կուտակված սոցիալական փորձի յուրացման: Հանրագումարում դա որոշում է մասնագետի մասնագիտական մշակույթը:

Որպես ազգային կրթական ռազմավարությունների մշակման հիմնական առաջնահերթություն ճանաչված անընդհատ կրթության կառուցվածքում ընդունված է սահմանազատել դրա տեսակները՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ:

Անընդհատ կրթության իրականացումը հենվում է «ուղղաձիգ ինտեգրման» վրա, այսինքն՝ յուրաքանչյուր մակարդակի՝ նախադպրոցական, տարրական, միջնակարգ, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթության մուտքի և ելքի չափանիշների ու նորմատիվների հաջորդայնության և հստակ կարգավորման վրա: Ենթադրվում է նաև «հորիզոնական ինտեգրում»՝ ուսումնական հաստատություններում կրթության զուգակցում ոչ ֆորմալ կրթության հատուկ մոդելների հետ, հասարակական կազմակերպությունների, մասնագիտական վերապատրաստման ուսումնամեթոդական կենտրոնների, որոշակի սոցիալական խմբերին ուղղված նպատակային ծրագրերի և նախագծերի միջոցով:

Սոցիալ-կրթական պրակտիկայում անընդհատ կրթության իրակա-

նացման համար կարևոր նշանակություն ունեն կրթական համակարգի օղակների հաջորդայնությունը և ոչ ֆորմալ կրթության ուղիների ճյուղավորվածությունը:

Անընդհատ կրթության իրականացման սկզբունքներն են՝

- *դրա կառուցվածքի սահմանումը և նորմատիվ ամրագրումը,*
- *այդ կառուցվածքի զարգացման կառավարման պետական-հասարակական համակարգի ստեղծումը,*
- *հասարակության մեջ անընդհատ կրթության մշակույթի ձևավորումը:*

Ֆորմալ կրթության բլոկը *կարգավորվում*, նորմավորվում է պետության և հասարակության կողմից:

Կրթության յուրաքանչյուր մակարդակի միասնականացված չափորոշիչները՝ անկախ ուսումնական հաստատության տեսակից, հենց նման կարգավորման համընդհանուր միջոց են:

Կրթական համակարգի չափորոշումը ենթադրում է՝

- *առանձին մասնագիտությունների միասնականացրած չափորոշիչների,*
- *առանձին գիտակարգերի չափորոշիչների,*
- *կրթության տարբեր մակարդակներում գիտելիքների գնահատման հստակ չափանիշների և մեխանիզմների, այսինքն՝ չափանմուշային ալգորիթմների առկայություն:*

Չնայած Հայաստանում կրթական չափորոշիչների մշակումը ընթացքի մեջ է, դրանց արդիականությունը կասկած չի հարուցում: Ընդամին փորձեր են արվում՝ որոշելու բարձրագույն մասնագիտական կրթության չափորոշման ընդհանուր հայեցակարգը, նպատակը, խնդիրներն ու հեռանկարները, գործընթացի հաջորդականությունը, ազգային և տարածաշրջանային առանձնահատկությունները:

Գենդերային կրթության չափորոշիչների մշակումը առաջանցիկ բնույթ է կրում, քանի որ գենդերային կրթության անհրաժեշտությունը թելադրված է կյանքի իրողություններով. կրթությունն ամբողջու-

թյամբ կոչված է առաջ անցնելու աշխարհում կատարվող սոցիալական փոփոխություններից, պատրաստելու երիտասարդությանը, որպեսզի համարժեք ընկալի այն հասարակությունը, որի մեջ ապրելու է: Հայաստանի մուտքը միջազգային քաղաքակիրթ հանրություն առաջնահերթ ռազմավարությունների թվում առաջացրեց գենդերային հավասարության հասնելու, սեռերի իրավահավասարության գաղափարները երիտասարդ սերնդի աշխարհայացքի մասը դարձնելու խնդիրը:

Մարդու իրավունքների իրականացման հետ անմիջականորեն կապված գենդերային հետազոտությունների արդյունքների ներդրումը կրթական համակարգում չափազանց կարևոր է որպես քաղաքացիական հասարակության և զուգակշռված ժողովրդավարության կայացման կարևորագույն նախադրյալ:

Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային անհամաչափության խորացման միտումը, որը բնորոշ է վերջին տարիներին Հայաստանին, զգալի չափով կանխորոշված է այն հանգամանքով, որ էգալիտար գենդերային մշակույթի ձևավորումը ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության համակարգում ժողովրդավարական փոխակերպումներին համապատասխան չի ընթանում: Տեղ է գտնում հայրիշխանական գենդերային կարծրատիպերի վերարտադրությունը կրթության համակարգի միջոցով, որը, շեշտը դնելով ուսանողների մասնագիտական պատրաստության վրա, չի նպաստում գենդերային իրավահավասարությանը միտված ժողովրդավարական արժեքների դաստիարակմանը: Կրթության գործող համակարգը, արմատավորելով հասարակության մեջ կնոջ դերի մասին ավանդական պատկերացումները, պայմաններ է ստեղծում հասարակական կյանքից կանանց հետագա դուրսմղման համար:

Ժողովրդավարության ժամանակակից հայեցակարգը ելնում է այն գաղափարից, որ անհնար է կառուցել իրապես ժողովրդավարական հասարակություն՝ առանց գենդերային հավասարության հասնելու: Գենդերային հարաբերությունները ներթափանցում են կյանքի բոլոր ոլորտները, ուստի անհրաժեշտ է ոչ միայն փոփոխել շատ հասարա-

կական կառույցներ, այլև վերակառուցել մարդկանց գիտակցությունը՝ ազատելով նրանց բազմաթիվ նախապաշարումներից: Այդ առաքելությունը կարող է կատարել միայն էգալիտար գիտակցության ձևավորմանը միտված դաստիարակությունը: Դա հեշտ գործընթաց չէ, քանի որ մարդը մանկուց ներառված է գենդերային աստիճանակարգման մեջ:

Հին ժամանակներից ի վեր մարդկությունը ապրում է հայրիշխանական հասարակությունում՝ հարուստ ավանդույթներով, որոնք, ըստ էության, անձնային ինքնադրսևորումը սահմանափակող սոցիալական վերահսկման միջոց են:

Գենդերը, հատվելով այլ սոցիալական պարամետրերի հետ, որոշում է մարդու անհատական հնարավորությունները կրթության, մասնագիտական գործունեության, իշխանության, կարիերայի աստիճանների հասնելու, ընտանեկան դերի և վերարտադրողական վարքի մեջ: Փաստորեն գենդերը հասարակության **սոցիալական մշակույթի** չափման պարամետր է՝ դնելով **հասարակական աստիճանակարգման** և գերիշխանության ու իշխանության համակարգի հիմքերը:

Ժողովրդավարական փոխակերպումները, որոնք ընդգրկել են միջազգային հանրությունը, ներառյալ Հայաստանը, նշանավորում են գերիշխանության և գերակայության մոդելի տապալումը և հայրիշխանական համակարգին նետված մարտահրավերը:

Կրթության ինստիտուտները, առաջին հերթին բարձրագույն դպրոցը, կարող են և պետք է ակտիվորեն աջակցեն հայրիշխանական գենդերային մշակույթի փոփոխմանը և նոր սերնդի էգալիտար աշխարհայացքի ձևավորմանը: Դա անհրաժեշտ է անձի սոցիալական ադապտացման և լիարժեք գործառության համար բաց հասարակության մեջ, որը մերժում է բևեռացումը և գենդերային դերերի կարծր նախասահմանվածությունը և XXI դարի գերակա ռազմավարություն է հայտարարում գենդերային իրավահավասարությունն ու զուգակշռված ժողովրդավարությունը:

Բարձրագույն կրթության կառուցվածքի և բովանդակության ար-

մատական վերակառուցումը, վերջնական նպատակ ունենալով կրթական քաղաքականության գենդերային համաչափությունը և այն հասարակության գենդերային մշակույթի փոփոխմանը նպատակատղելը, արդիական հիմնախնդիր է դառնում:

Այսպիսով, ուսումնական պլաններում գենդերային հիմնախնդիրներին նվիրված նորարարական գիտակարգերի ներմուծումը, նոր ծրագրերի և ուսումնական ձեռնարկների ստեղծումը, դրանց դասավանդման օպտիմալ մեթոդների մշակումը, ինչպես նաև կրթական ցիկլի համապատասխանեցումը միջազգային չափորոշիչներին դարձել է պարտադիր անհրաժեշտություն:

Գենդերային կրթության ընդհանուր հիմունքները

Գենդերային կրթությունն, ըստ էության, քաղաքացիական կրթություն է, քանի որ դրա մեթոդաբանության հիմքը ոչ միայն տղամարդկանց և կանանց սոցիալական կարգավիճակների տարբերության նկարագրությունն է, այլև այդ տարբերությունների գնահատումը հասարակության կողմից, իշխանության և գերիշխանության, ըստ սեռային պատկանելության խտրականության, իրավունքի, ազատության և ազատության սահմանների հիմնախնդիրների վերլուծությունը:

Գենդերային դասընթացների հիմնական մեթոդաբանական հայեցակարգը գենդերային դերերի մշակութային և հնարավոր փոփոխականության գաղափարն է: Առնականության և կանացիության չափանմուշային նորմատիվները տարբեր մշակույթներում տարբեր բովանդակություն ունեն: Գենդերային դերերը յուրահատուկ են ազգային, մշակութային և ժամանակագրական տարբեր շերտերի համար և կախված են բազմաթիվ երևույթներից՝ ազգային մենթալիտետից և ավանդույթներից, լեզվից, հասարակության քաղաքակրթության աստիճանից, կրոնից, պատմությունից, էթնոհոգեբանությունից, բանահյուսությունից, առասպելներից, ծեսերից: Գենդերային կարծրատիպերը նախանշում են կյանքի ուղին ու կենսակերպի չափորոշիչները և սահմա-

նափակող շրջանակներ դնում: Մարդը ոչ միայն յուրացնում և վերարտադրում է գենդերային նորմատիվները, այլև ինքն է ստեղծում ու վերացնում դրանք առօրյա շփումների ընթացքում, այսինքն՝ այդ գործընթացը կառավարելի է:

«Գենդեր» կատեգորիան ինքնավար և անփոփոխ չէ. այն հատվում է «ազգություն», «պետություն», «ազգային մշակույթ», «սոցիալական ինստիտուտներ», «պատմություն», «դարաշրջան» հասկացությունների հետ: Հենց այս համատեքստում էլ կառուցվում են տղամարդկանց և կանանց սոցիալական կարգավիճակները: Գենդերի կառուցումը կառավարելի գործընթաց է, հետևաբար հնարավոր է նաև այն փոփոխել, այսինքն՝ հասարակության գենդերային մշակույթը կարող է ձևափոխվել:

Ներկայացնել այդ հիմնադրույթը և խթանել գենդերային դերերի կարծր աստիճանակարգման հարացույցի փոխարինումը հավասար հնարավորությունների քաղաքականությամբ, սա է գենդերային կրթության գլխավոր նպատակը:

Գենդերային կրթության կառուցակարգման (ինստիտուցիոնալացման) և բովանդակության, կառուցվածքի ու ներկայացման մակարդակների, արդյունքների գնահատման միասնականացման համար անհրաժեշտ է որոշել ***գենդերային կրթության մակարդակները և դրա չափորոշիչները՝ համապատասխան միջազգային պարամետրերին:***

Հայաստանի բարձրագույն դպրոցում գենդերային դասընթացների փորձարարական դասավանդման որոշակի փորձի առկայությունը, ռուսաստանյան, հյուսիսամերիկյան և եվրոպական փորձի ուսումնասիրումը ցույց են տալիս գենդերային կրթական չափորոշիչը երեք մակարդակով ներկայացնելու նպատակահարմարությունը:

Առաջին մակարդակ: Գենդերային գիտելիքների ներածական (նախապատրաստական) դասընթաց, որը ներկայացնում է հիմնական հայեցակարգերի և հասկացությունների համառոտ տեսությունը:

Երկրորդ մակարդակ: Գենդերային բաղադրիչի ներմուծում հասարակական-հումանիտար ցիկլի գիտակարգերի մասնագիտությունների մեջ:

Երրորդ մակարդակ: Հատուկ գենդերային գիտակարգեր և դասընթացներ. ընդհանուր միջգիտակարգային դասընթաց «Գենդերային տեսության ներածություն», «Գենդերային գիտելիքների հիմունքներ», ինչպես նաև միջգիտակարգային բնույթի գիտելիքները խորացնող հատուկ դասընթացներ՝ «Գենդերը և տնտեսագիտությունը», «Գենդերը և պատմագիտությունը», «Գենդերային հիմնախնդիրները իրավունքում», «Կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում», «Քաղաքագիտության գենդերային առումները», «Գենդերի սոցիոլոգիա», «Գենդերային հիմնախնդիրները փիլիսոփայության մեջ»:

Առաջին մակարդակ

Առաջին մակարդակը նախատեսված է բոլոր մասնագիտությունների ցածր (I-II) կուրսերի ուսանողների համար: Դա գենդերային գիտելիքների **նախապատրաստական դասընթաց է**, որը նախորդում է հաջորդ աստիճաններում գենդերային գիտակարգերի ավելի խոր ուսումնասիրմանը: Այն ենթադրում է գենդերային նվազագույն գիտելիքների ներկայացում, որոնք պետք է մեկնարկային հիմք դառնան հետագա խորացման համար կոնկրետ մասնագիտության գծով այլ հումանիտար և սոցիալ-տնտեսական գիտակարգերի շրջանակներում: Այս աստիճանը հիմնական գենդերային հայեցակարգերի, մոտեցումների և հասկացությունների համառոտ վերլուծական տեսություն է:

Նախապատրաստական դասընթացը նախատեսված է 8 դասաժամի համար:

Առաջին մակարդակի նպատակն է ծանոթացնել ուսանողներին

Ժամանակակից գենդերային տեսության հիմնական հասկացություններին, մոտեցումներին և ուղղություններին:

Այս մակարդակի ուսումնական դասընթացի **խնդիրներն են**.

- հիմնական պատկերացում տալ գենդերային հետազոտությունների առարկայի և յուրահատկության մասին,
- հիմնավորել գենդերային տեսության հիմնական կանխադրույթը՝ «կենսաբանական սեռ» և «գենդեր» հասկացությունների տարբերակումը՝ որպես մշակութաբանական և սոցիալական երևույթ,
- ներկայացնել գենդերային տեսության հիմնական հասկացությունները՝ գենդերային դերերը, գենդերային կարծրատիպերը, գենդերային դրսևորումը (դիսփիլեյը), գենդերային պայմանագիրը, գենդերային սոցիալականացումը, գենդերային համակարգը, գենդերային գաղափարախոսությունը և մշակույթը.
- ներկայացնել գենդերային հետազոտությունների՝ որպես առանձին գիտակարգի ձևավորման հասարակական, հասարակական-քաղաքական և գիտատեսական համատեքստը.
- ձևավորել գիտելիքներ գենդերի տեսության զարգացման հիմնական փուլերի և գենդերային դիսկուրսի ներկա վիճակի մասին.
- ձևավորել պատկերացում հասարակության մեջ և առօրյա մակարդակում գենդերի գործառության եղանակների մասին.
- ձևավորել պատկերացում հասարակության գենդերային համակարգի մասին (գենդերային հարաբերությունները տնտեսական, քաղաքական, իրավական, սոցիալական ոլորտներում).
- տալ հիմնական պատկերացում մշակույթի ոլորտում գենդերի ներկայացուցչության եղանակների մասին.
- ձևավորել գիտելիքներ հասարակության մեջ գենդերային իրավահավասարության հասնելու հնարավորությունների և եղանակների մասին:

Դասընթացի ավարտին ուսանողները ձեռք կբերեն գիտելիքների ծավալ, որը բավարար է գենդերային հիմնախնդիրների որոշակի դրսևորումների գնահատման և թե՛ անձնական, թե՛ հասարակական գիտակցության մեջ հայրիշխանական աշխարհայացքային կողմնորոշիչների և կարծրատիպերի հաղթահարման համար:

Նախապատրաստական դասընթացը կոչված է ապահովելու հետևյալ հմտությունները՝

- գենդերային վերլուծության հասկացությունների ապարատի և մեթոդաբանության տիրապետում,
- սոցիալական և մշակութային երևույթների գնահատում գենդերային իրավահավասարության դիրքերից,
- հասարակական կյանքում տղամարդկանց և կանանց դերերի մասին ոչ կարծրատիպային պատկերացումների ձևավորում:

Երկրորդ մակարդակ

Երկրորդ մակարդակը նախատեսված է բարձր (III-IV) կուրսերի ուսանողների համար: Այս աստիճանը գենդերային բաղադրիչի ներմուծումն է այլ գիտակարգերի մեջ տարբեր ուղղությունների մասնագետների պատրաստման գործընթացում:

Երկրորդ մակարդակի նպատակն է ներմուծել գենդերային գիտելիքները և գենդերային տեսանկյունը այն մասնագիտական գիտելիքների ոլորտ, որն ընտրել են տվյալ ճյուղի ուսանողները: Նման հարցադրումը իրականացնում է գենդերային հետազոտությունների միջգիտակարգային բնույթը և գենդերային մեթոդաբանության ներմուծումը սոցիոհումանիտար գիտելիքների տարբեր ոլորտներ:

Այս մակարդակի հիմնական **խնդիրներն են**.

- ծանոթացնել ուսանողներին սոցիոլոգիայի, պատմագիտության, քաղաքագիտության և իրավունքի տեսության մեջ նոր վերլուծական մոտեցումներին՝ գենդերային գործոնների հաշվառմամբ.
- ցույց տալ գենդերային տեսանկյունից սոցիալ-տնտեսական, հասարակական և պատմական երևույթների փորձաքննության հնարավորությունը.
- ներկայացնել սեռերի հարաբերություններով միջնորդավորված սոցիալական իրականության, տարածության և ժամանակի մեջ դրա

փոփոխությունների, այսինքն՝ աշխարհագրական, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, էթնոմշակութային և ժամանակագրական գործոնները հաշվի առնող ուսումնասիրման նոր հարացույցը,

- ներկայացնել հարացույցի փոխարինումը՝ անցումը կենսաբանական դետերմինիզմից սոցիալական գործոնների գերակայություն մարդու վարքի մոդելներում,
- ցուցադրել տարբեր ոլորտներում տղամարդկանց և կանանց սոցիալական կարգավիճակի և գործառական դերերի փոփոխման դինամիկան,
- ցույց տալ գենդերային ճյուղավորման երկու կողմերի փորձը և աշխարհայեցողությունը գիտական հետազոտություններում և ուսումնական գիտակարգերում հաշվի առնելու հնարավորությունը.
- բացահայտել կանանց դիսկուրսի՝ որպես գիտելիքների հատուկ աղբյուրի, թաքնված ձևերը պատմագիտության, քաղաքականության, գրականության, մշակույթի մեջ և հասարակական կյանքում:

Հաշվի առնելով, որ քաղաքացիական հասարակության կայացման գործընթացի, ժողովրդավարական արժեքների ձևավորման և արդյունավետ սոցիալական փոփոխությունների համար առաջնահերթ նշանակություն ունեն ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսական գիտակարգերը, նպատակահարմար է գենդերային բաղադրիչը առաջին հերթին ներմուծել հասարակական-հումանիտար հոսքի գիտակարգերում՝ պատմագիտության, քաղաքագիտության, իրավունքի, փիլիսոփայության, տնտեսագիտության մեջ:

Հետագայում անհրաժեշտ է ինչպես ավանդական (սոցիոլոգիա, հոգեբանություն, լեզվագիտություն, գրականագիտություն), այնպես էլ նոր, հետխորհրդային շրջանում ներմուծված (մարդաբանություն, մշակութաբանություն) սոցիալական և հումանիտար գիտակարգերի ավելի լայն ցանկ ընդգրկել: Բոլոր հոսքերում կիրականացվի գենդերային հետազոտությունների հիմնական առաջնահերթությունը՝ դրանց միջգիտակարգային բնույթը, ինչը արմատապես արդիականացնում է դասական գիտությունների ակադեմիական գիտակարգությունը և հաստատում սոցիալա-

կան գիտության զարգացման նոր մոդելներ: Դա, ըստ էության, հարացույցի փոփոխում է առանձին գիտակարգերի ներսում, որը գենդերային աստիճանակարգման հաղթահարման նոր հեռանկարներ է բացում:

Երրորդ մակարդակ

Երրորդ մակարդակը նախատեսված է բարձր կուրսերի ուսանողների և մագիստրանտների համար:

Երրորդ մակարդակը իրականացնում է անմիջական գործնական ուղղվածություն ունեցող և դրական սոցիալական փոփոխությունների միտված քաղաքացիական կրթության հիմնական սկզբունքները:

Գենդերային մոտեցումը նպատակաուղղված է սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում, անկախ սեռային պատկանելությունից, ինքնադրսևորման հավասար հնարավորությունների քաղաքականության ձևավորմանն ու հաստատմանը:

Դասընթացի հիմնական նպատակները

- նպաստել ուսանողների կողմից գենդերային հիմնախնդիրների էության գիտակցմանը, աջակցել անձնային ինքնադրսևորմանը խոչընդոտող սեռադերային կարծրատիպերից ձերբազատված գենդերային գիտակցության ձևավորմանը,
- նպաստել ակտիվ քաղաքացիական դիրքորոշման ձևավորմանը,
- աջակցել յուրաքանչյուր անհատի կողմից հիմնական ժողովրդավարական արժեքների՝ իրավահավասարության, սոցիալական արդարության և սոցիալական պատասխանատվության (անկախ սեռից, տարիքից, ռասայից), մարդու իրավունքների և ազատությունների գերակայության գիտակցմանն ու իրականացմանը:

Դասընթացի խնդիրները

- Ծանոթացնել ուսանողներին արդի գենդերային տեսության հիմնական հասկացություններին, մոտեցումներին և հիմնադրույթներին:
- Յույց տալ գենդերային հիմնախնդիրների միջգիտակարգային բնույ-

թը և բացահայտել այլ սոցիալական գիտակարգերի հետ հատման կետերը:

- Գաղափար տալ գենդերային խտրականության մասին, բացահայտել սեռի հատկանիշով խտրականության առաջացման մեխանիզմները և հաղթահարման ուղիները:
- Դիտարկել կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում:

Այս մակարդակի հիմնական դասընթացը՝ «Գենդերային տեսության ներածությունը», նպատակաուղղված է հիմնական գենդերային հիմնադրույթների խորացված ուսումնասիրմանը դրանց միջգիտակարգային տեսանկյունից:

Դա ինքնուրույն ակադեմիական գիտակարգ է, որը նոր տեսանկյուն է մտցնում ավանդական գիտակարգերում՝ բեկելով տվյալ գիտության հիմնական կանխադրույթները գենդերային մեթոդաբանության միջոցով: Գենդերի և առանձին գիտակարգերի հատման կետերը հեռանկարներ են ստեղծում հետազոտման նոր պարզաբանական մոդելների և մեթոդների ներդրման համար և տնտեսական, սոցիալական և քաղաքական գործընթացների գենդերային վերլուծության հնարավորություն են ընձեռում:

Նման մոտեցումը նպաստում է գիտական հետազոտություններում այրակենտրոն կողմնորոշիչների փոխարինմանը, ընդգրկում է կանանց փորձը՝ որպես գիտելիքի հատուկ աղբյուր, կանխադրում է սոցիալականի գերակայությունը կենսաբանականի նկատմամբ և ենթադրում սոցիալ-տնտեսական երևույթների փորձաքննություն սեռի գործոնի հաշվառմամբ, ինչն ապահովում է սոցիալական իրականության համարժեք նկարագրություն և առհասարակ սոցիալական գիտելիքի ձևափոխում:

*«Գենդերային տեսության ներածություն» միջառարկայական դասընթացը հնարավոր է դարձնում գենդերային մեթոդաբանության ներդրման ճանապարհով առանձին գիտությունների տեսական մշակումների և գենդերի տեսության վերջին նվաճումների **համադրումը** սոցիոհումանիտար գիտելիքների տարբեր ոլորտներում:*

Առաջարկվող դասընթացում գենդերային հիմնադրույթները վերլուծվում են երկու մակարդակով.

- *Մակրոսոցիալական մակարդակում* խոսքը ըստ սեռի հատկանիշի սոցիալական գործառույթների տարբերակման և համապատասխան մշակութային նորմերի մասին է: Գենդերային հիմնախնդիրների ներկայացումն այս մակարդակում ենթադրում է տղամարդկանց և կանանց սոցիալական վիճակի առանձնահատկությունների բացահայտում՝ գործունեության տիպային տեսակների, սոցիալական կարգավիճակների, զանգվածային պատկերացումների և այլն: Այդ նպատակով օգտագործվում են այնպիսի գիտակարգերի հետազոտությունների արդյունքներն ու կուտակած գիտելիքները, ինչպիսիք են սոցիոլոգիան, ժողովրդագրությունը, ազգաբանությունը և մշակութային մարդաբանությունը, տնտեսագիտությունը, պատմագիտությունը:
- *Միջանձնային հարաբերությունների մակարդակում* գենդերային հիմնախնդիրները ծագում են ոչ միայն համասոցիալական նորմերից և փորձառություններից, այլև գործունեության որոշակի համակարգից և սոցիալական դիրքորոշումներից, որոնք տիպական են որոշակի փոքր խմբի համար: Գենդերային հարաբերությունների դիտարկումն այս մակարդակում հենվում է հիմնականում սոցիալ-հոգեբանական գիտելիքի վրա:

Երրորդ մակարդակը նախատեսում է նաև *հատուկ դասընթացների* մշակում գիտելիքի այս կամ այն բնագավառի ավելի խորացված ուսումնասիրման համար՝ գենդերային մեթոդաբանության կիրառմամբ: Դրանք *էլեկտիվ* դասընթացներ են ուսանողների ընտրած տարբեր գիտակարգերի խաչաձևումով, ինչպես օրինակ՝ «Գենդերը և տնտեսագիտությունը», «Գենդերը և պատմագիտությունը», «Գենդերային հիմնախնդիրները իրավունքում», «Կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում», «Զաղաքագիտության գենդերային առումները», «Գենդերի սոցիոլոգիա», «Գենդերային հիմնախնդիրները փիլիսոփայության մեջ», «Գենդերային քաղաքականությունը սոցիալական շարժումներում»:

Նման դասընթացները կոչված են ապահովելու նյութի տիրապետման այնպիսի մակարդակ, որը հնարավորություն տա ձեռք բերելու պատշաճ որակավորում՝

- հասարակական կյանքի նշանակալի ոլորտներում (քաղաքական,

- տնտեսական, կրթական, ընտանեկան, առողջապահական և այլն) գենդերային փորձաքննություն, ինչպես նաև օրենսդրական գործընթացի գենդերային փորձաքննություն անցկացնելու համար,
- գենդերային տեսության և գիտելիքի մասնագիտական բնագավառի խաչմերուկում նորարարական դասընթացների մշակման և դասավանդման, ինչպես նաև ասպիրանտուրայում մասնագետների պատրաստման համար,
 - սոցիալական և ժողովրդավարական փոխակերպումների գործընթացում ակտիվ ընդգրկվելու համար,
 - մարդու իրավունքների աստիճանակարգում կանանց իրավունքների գերակայության օրինականացման համար, ինչը անհրաժեշտ նախադրյալ է, անկախ սեռային պատկանելությունից, բոլոր քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրականացման հավասար հնարավորություններ ստեղծող իրավական և սոցիալական պետության կայացման համար. սա, ըստ էության, գենդերային կրթության բլոկն է, որն ուղղված է ապագա սերնդի իրավական գիտակցության և իրավական մշակույթի փոփոխմանը,
 - հասարակության գենդերային մշակույթի փոխակերպման և իրական գենդերային իրավահավասարության հասնելու համար, ինչը զուգակշռված ժողովրդավարության կայացման անհրաժեշտ պայման է:

Սպասվելիք արդյունքները

Ուսանողը գենդերային հետազոտությունների ոլորտում պետք է՝

- Գիտելիքներ ձեռք բերի՝

- արդի գենդերային տեսության հիմնական հասկացությունների, մոտեցումների և հայեցակարգերի մասին,
- գենդերային կարծրատիպերի փոփոխականության, բազմազանության, տեղական և մշակութային պայմանավորվածության, տղամարդկային և կանացի մույնականացման նոր տիպերի մշակման հնարավորության մասին,
- գենդերային կարգի օրինականացման գործակալների, տեխնո-

լոգիաների և պաշարների, այդ գործընթացում սոցիալական ինստիտուտների և պետական քաղաքականության առաջատար դերի մասին,

- տարբեր հասարակություններում տղամարդկանց և կանանց սոցիալ-իրավական կարգավիճակի և գործառական դերերի բազմազանության և փոփոխման դինամիկայի մասին,

- սոցիոլոգիայում, պատմագիտության, քաղաքագիտության, տնտեսագիտության, իրավունքի տեսության մեջ գենդերային գործոնը հաշվի առնող նոր վերլուծական մոտեցումների մասին,

- գենդերային իրավահավասարության հասնելու հնարավորությունների և եղանակների մասին:

- **Գիտակցի՝**

- գենդերը սոցիալականացման, կոնկրետ հասարակությունում վարքի մոդելների, կանացիության-առնականության նորմատիվների տիրապետման գործընթաց է,

- գենդերը տղամարդկանց և կանանց սոցիալական կարգավիճակ է, որը, հատվելով այլ շերտադասական պարամետրերի հետ, սահմանում է մարդու հնարավորությունները կրթության, մասնագիտական գործունեության, իշխանության մատչելիության մեջ, ընտանեկան դերում և վերարտադրողական վարքում, ինչը սեռի հատկանիշով հասարակության աստիճանակարգման հիմքն է կազմում:

- **Չեռք բերի հմտություններ՝**

- սոցիալական երևույթների գենդերային վերլուծության, օրենսդրության և օրենսդրական գործընթացի գենդերային փորձաքննության,

- խտրականության ցանկացած ձևի, մասնավորապես սեռի հատկանիշով խտրականության բացահայտման և կանխման,

- մարդու իրավունքների պաշտպանության:

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ
ՆԱԽԱԳԻԾԸ ՄՇԱԿՈՂ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ**

Ջեմմա Չասրաթյան, Երևանի «Ինտերլինգվա» համալսարանի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, Չամալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի գեներերային հետազոտությունների կենտրոնի ղեկավար, խմբի ղեկավար

Սոֆյա Բաբայան, Վանաձորի Գ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու

Ելենա Վարդանյան, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու

Սիրանուշ Խաչկալյան, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնի դասախոս

Ֆրունզե Ղազարյան, Ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտի պրոռեկտոր, ինստիտուտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր

Ռուզաննա Մարդոյան, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Նինա Չովհաննիսյան, Վանաձորի Գ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հոգեբանության դասախոս

Չրանտ Ավանեսով, Երևանի պետական համալսարանի հոգեբանության ամբիոնի դասախոս, հոգեբանական գիտությունների դոկտոր

Կարինե Բազեյան, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու

Յուրի Սկրտումյան, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

-
- Գյուլնարա Յովհաննիսյան**, Երևանի տնտեսագիտական ինստիտուտի դասախոս, տնտեսագիտության թեկնածու
- Ջարություն Մարգարյան**, Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական բաժանմունքի փոխդեկան, տնտեսագիտության թեկնածու
- Արթուր Նիկողոսյան**, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի դասախոս
- Վիգեն Քոչարյան**, Երևանի պետական համալսարանի ավագ դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու
- Մելինե Ջարությունյան**, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի դասախոս
- Լիլիթ Սիմոնյան**, Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական համալսարանի դասախոս, ՀՀ Սահմանադրական դատարանի անդամի օգնական

ԲԱԺԻՆ 2

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՆԱԽԱԳԻԾ ԵՎ
ԾՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

«ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԳԻՏԵԼԻԶՆԵՐԻ
ՀԻՄՈՒՆԶՆԵՐ»

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅ

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՆԱԽԱԳԻԾ

«ԳԵՆԴԱՐԱՅԻՆ ԳԻՏԵԼԻԲՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՆԱԽԱԳԻԾԸ ՄՇԱԿՈՂ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Սոֆյա Բաբայան, Վանաձորի Գ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու

Ջենմա Հասրաթյան, Երևանի «Ինտերլինգվա» համալսարանի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի գեներալային հետազոտությունների կենտրոնի ղեկավար

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՆԱԽԱԳԻԾ

Առաջին մակարդակ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

«ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՐ

Գենդերային մոտեցումն ուղղված է, անկախ սեռից, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ինքնադրսևորման հավասար հնարավորությունների քաղաքականության ձևավորմանը և հաստատմանը: Գենդերային հետազոտությունների մեթոդաբանության հիմքը տղամարդկանց և կանանց գենդերային հարաբերությունների միջոցով հասարակության մեջ հաստատվող կարգավիճակների, դերերի, կյանքի նորմերի տարբերությունների նկարագրությունն է, իշխանության և գերիշխանության վերլուծությունը: Գենդերը սոցիալական շերտադասության հիմնարար սկզբունքներից մեկն է: Ժողովրդավարության կայացումը և մարդու իրավունքների պաշտպանությունը անքակտելիորեն կապված են գենդերային ստորակարգության հաղթահարման հետ:

Գենդերային կրթությունը կնպաստի գիտելիքի փոխակերպմանը համոզմունքների ու գործողությունների, հավասար իրավունքների, հնարավորությունների և արդյունքների գերակայության վրա հիմնված այլընտրանքային գենդերային մշակույթի ձևավորմանը: Այն նպատակաուղղված է քաղաքացիական ակտիվության և պատասխանատվության բարձրացմանը, քաղաքացիական իրավագիտակցության, հայրիշխանական կարծրատիպերից գերծ, իրավահավասար (էգալիտար) մտածողության ձևավորմանը, գենդերային հավասարության՝ որպես

զուգակշռված ժողովրդավարության նախադրյալի, նվաճմանը: Գենդերային կրթությունը դիտարկում է այնպիսի արդիական սոցիոհումանիտար և տնտեսական հիմնախնդիրներ, ինչպիսիք են իրավունքը, ազատությունը, տարբերությունները մարդկանց միջև, փոխգործողության ռազմավարությունները, ընտանիքը, աշխատանքը և զբաղվածությունը, տղամարդկանց և կանանց սոցիալ-իրավական կարգավիճակը՝ այդպիսով ընդգրկվելով քաղաքացիական դաստիարակության և կրթության համատեքստում:

«Գենդերային գիտելիքների հիմունքներ» ներածական դասընթացը նախատեսված է բարձրագույն դպրոցի I-II կուրսերի ուսանողների համար: Դասընթացը ենթադրում է նվազագույն գենդերային գիտելիքների հաղորդում, որոնք կբարձրացնեն ուսանողների գենդերային զգայնությունը և կարող են հիմք դառնալ հասարակական-հումանիտար ցիկլի գիտակարգերում գենդերային բաղադրիչի հետագա ներմուծման, ինչպես նաև միջառարկայական գենդերային դասընթացների խորացված ուսումնասիրման համար: Ներածական դասընթացը ներառում է հիմնական գենդերային հիմնադրույթների, մոտեցումների և հասկացության ձևերի հակիրճ տեսությունը: Դասընթացը նախատեսված է 8-12 ժամի համար:

Ներածական դասընթացի նպատակն է հիմնական գենդերային գիտելիքների հաղորդումը քաղաքացիական իրավագիտակցության և հայրիշխանական կարծրատիպերից զերծ, իրավահավասար (էգալիտար) մտածողության ձևավորման համար:

Դասընթացի խնդիրներն են.

Հաղորդել գիտելիքներ՝

- *գենդերային տեսության հիմնական հասկացությունների վերաբերյալ. գենդերային դերեր, գենդերային կարծրատիպեր, գենդերային դրսևորում (դիսֆիլեյ), գենդերային պայմանագիր, գենդերային սոցիալականացում, գենդերային համակարգ, գենդերային մշակույթ,*

- սոցիալ-տնտեսական և հասարակական քաղաքական ոլորտի գենդերային հայեցակետերի վերաբերյալ:
Դիտարկել՝
- կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում,
- գենդերային խտրականությունը հաղթահարելու և գենդերային իրավահավասարության հասնելու հնարավոր մեխանիզմները:

Դասընթացի բովանդակությունը

Մոդուլ 1. Ներածություն: Հիմնական հասկացությունները: Գենդերային սոցիալականացում: Սոցիալական ոլորտի գենդերային առումները:

«Գենդերը» որպես սոցիալական և մշակութաբանական հասկացություն: Գենդերը որպես շերտադասական կատեգորիա: Գենդերային նորմատիվների կախվածությունը մշակույթից, ազգային ավանդույթներից և սովորույթներից, կրոնից, պատմությունից, հասարակության քաղաքակրթվածության աստիճանից: Գենդերային կարծրատիպերի պատմական պայմանավորվածությունը և փոփոխականությունը, գենդերային դերերի բազմազանությունը տարբեր մշակույթներում:

Գենդերային տեսության հիմնական հասկացությունները. գենդերային դերեր, գենդերային դրսևորում (դիսփլեյ), գենդերային նույնականություն, գենդերային կարծրատիպեր:

Հասարակության գենդերային կազմակերպման տիպերը և ձևերը. մայրիշխանություն և հայրիշխանություն, իշխանության և գերիշխանության մոդելները հաստատող սոցիալական վերահսկման եղանակները, գենդերային անհամաչափությունը՝ որպես հայրիշխանության ստորակարգային մոդելի հետևանք:

Գենդերային սոցիալականացում. փուլերը, ինստիտուտները, գործակալները և տեխնոլոգիաները, տղամարդկանց և կանանց սոցիալականացման առանձնահատկությունները, կարծր գենդերային սո-

ցիալականացման հետևանքները տղամարդկանց և կանանց համար:

Գենդերային համակարգ, գենդերային պայմանագիր, գենդերային կարգ, գենդերային ռազմավարություններ: Պետության և սոցիալական քաղաքականության դերը գենդերային համակարգի ձևավորման գործում:

Հասկացություն հանրային և մասնավոր ոլորտների մասին: Գենդերային մոտեցումը ընտանիքի և հասարակական գործընթացների վերլուծությանը:

Մոդուլ 2. Հասարակական-քաղաքական ոլորտի գենդերային հայեցակետերը

Քաղաքական ոլորտում գենդերային անհամաչափության հիմնախնդիրը: Քաղաքական գործընթացների գենդերային հայեցակետերը.

- տղամարդկանց և կանանց քաղաքական մասնակցությունը,
- կանայք և տղամարդիկ ընտրական գործընթացներում. գենդերային առանձնահատկությունները,
- ներկայացվածությունը գործադիր և դատական իշխանության մարմիններում, տարածաշրջանային և տեղական ինքնակառավարման մարմիններում,
- քաղաքական լիդերության գենդերային հայեցակետերը:

Կանանց կարգավիճակի և քաղաքացիական ակտիվության բարձրացման, գենդերային իրավահավասարության հասնելու հիմնախնդիրը, կանանց քաղաքական մասնակցության և որոշումների ընդունման մակարդակում նրանց ներկայացվածության ընդլայնման տեխնոլոգիաները: Գենդերային քվոտաները և տարբեր երկրներում դրանց կիրառման փորձը:

Կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում: Իրավունքների, հնարավորությունների և արդյունքների հավասարությունը՝ որպես ժողովրդավարական քաղաքացիական հասարակություն ձևավորման պայման:

Հայաստանի կողմից վավերացված միջազգային իրավական

փաստաթղթերը կանանց իրավունքների մասին: ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW). Կանանց իրավունքների պաշտպանության և գենդերային իրավահավասարության հասնելու ազգային մեխանիզմները:

Կանանց շարժումը, հետադարձ հայացք, արդի վիճակը, հեռանկարներ:

Մոդուլ 3. Տնտեսական ոլորտի գենդերային հայեցակետերը

Սոցիալ-տնտեսական փոխակերպումների ազդեցությունը գենդերային համակարգի վրա: Տղամարդկանց և կանանց միջև տնտեսական տարբերությունների առաջացման աղբյուրները, չափերը և դրսևորման մեխանիզմները: Տղամարդկանց և կանանց մասնագիտական ռազմավարությունները տնտեսական բարեփոխումների շրջանում:

Գենդերային անհամաչափությունը աշխատանքի շուկայում, հորիզոնական և ուղղաձիգ մասնագիտական խտրարարություն:

Խտրականությունը աշխատանքի և զբաղվածության ոլորտում: Խտրականության կանխարգելման և հաղթահարման տեխնոլոգիաները: Սոցիալական քաղաքականության ինստիտուտների միջոցով խտրականության և խտրարարության վրա ներգործելու հնարավորությունները:

Գենդերային տնտեսագիտության հիմնական հասկացությունները, մարդու ժամանակի գին, ուրույն ընտանեկան (ամուսնական) կապիտալ, ուրույն շուկայական կապիտալ, սոցիալական կապիտալ, կրկնակի ծանրաբեռնվածություն և այլն:

Ընտանեկան ոլորտի, տնային տնտեսության արտադրողական գործառույթի, տնային տնտեսությունում աշխատանքի հաշվառման և գնահատման, դրա տնտեսական կարևորության, վերարտադրողական վարքի գենդերային վերլուծությունը:

Սպասվելիք արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողները կատանան գիտելիքներ, որոնք բավարար չեն գենդերային հիմնախնդիրների որոշակի դրսևորումների գնահատման և հայրիշխանական աշխարհայացքային կողմնորոշիչների հաղթահարման համար:

Ներածական դասընթացը կոչված է ապահովելու հետևյալ կարողությունները.

- տիրապետել գենդերային վերլուծության հասկացությանը և ապարատին և մեթոդաբանությանը,
- գնահատել սոցիալական և մշակութային երևույթները գենդերային իրավահավասարության դիրքերից,
- ձևավորել ոչ կարծրատիպային պատկերացումներ հասարակական կյանքում տղամարդկանց և կանանց դերի մասին:

«Գենդերային գիտելիքների հիմունքներ» ներածական դասընթացն անցած ուսանողը՝

պետք է ունենա գիտելիքների՝

- ժամանակակից գենդերային տեսության հիմնական հասկացությունների վերաբերյալ,
- գենդերային կարծրատիպերի պատմական փոփոխականության և մշակութային պայմանավորվածության, տղամարդկանց և կանանց նույնականության նոր տիպերի մշակման հնարավորությունների վերաբերյալ,
- գենդերային կարգի օրինականացման գործակալների, տեխնոլոգիաների և ռեսուրսների վերաբերյալ,
- տարբեր հասարակություններում տղամարդկանց և կանանց սոցիալ-իրավական կարգավիճակի և ֆունկցիոնալ դերերի բազմազանության և դրանց փոփոխման դիմամիկայի վերաբերյալ,
- հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական ոլորտի գենդերային հայեցակետերի վերաբերյալ,

- գենդերային իրավահավասարության հասնելու հնարավորությունների և եղանակների վերաբերյալ,

պետք է ունենա տարրական հմտություններ`

- հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական երևույթների գենդերային վերլուծության,
- սեռի հատկանիշով խտրականության բացահայտման և կանխարգելման,

պետք է գիտակցի`

- գենդերը` որպես սոցիալ-շերտադասական կատեգորիա, որը որոշում է մարդու հնարավորությունները կրթության մեջ, մասնագիտական գործունեության ոլորտում, իշխանության մատչելիության առումով, ընտանեկան դերում և վերարտադրողական վարքում,
- գենդերային իրավահավասարության` որպես քաղաքացիական հասարակության կայացման, կարևոր պայմանի անհրաժեշտությունը:

«ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅԻ ԾՐԱԳԻՐ

«Գենդերային գիտելիքների հիմունքներ» ներածական դասընթացը նախատեսված է բարձրագույն դպրոցի I-II կուրսերի ուսանողների համար: Դասընթացը ենթադրում է գենդերային այն նվազագույն գիտելիքների հաղորդում, որոնք կբարձրացնեն ուսանողների գենդերային զգայնությունը և կարող են հիմք դառնալ հասարակական-հումանիտար ցիկլի գիտակարգերում գենդերային բաղադրիչի հետագա ներմուծման, ինչպես նաև միջառարկայական գենդերային դասընթացների խորացված ուսումնասիրման համար: Ներածական դասընթացը ներառում է հիմնական գենդերային հիմնադրույթների, մոտեցումների և հասկացության ձևերի պարադիգմի հստակացումը:

Դասընթացը նախատեսված է 8-12 ժամի համար: Սակայն ծրագիրն ավելի ընդլայնված է ներկայացվում՝ դասավանդողին այլընտրանքային թեմաներ ընտրելու հնարավորություն ընձեռելու համար, հատկապես այն դեպքում, երբ դասավանդումը սահմանափակվում է միայն այս դասընթացով և հետագայում չի շարունակվում:

Ներածական դասընթացի նպատակը.

հիմնական գենդերային գիտելիքների հաղորդում՝ գենդերային զգայնության բարձրացման, քաղաքացիական իրավագիտակցության և հայրիշխանական կարծրատիպերից զերծ՝ իրավահավասար (էգալիտար) մտածողության ձևավորման համար:

Դասընթացի խնդիրները.

- *հաղորդել գիտելիքներ գենդերային տեսության հիմնական հասկացությունների վերաբերյալ. գենդերային դերեր, գենդերային կարծրատիպեր, գենդերային դրսևորում (դիսֆիլեյ), գենդերային պայման-*

- նագիր, գենդերային սոցիալականացում, գենդերային համակարգ, գենդերային մշակույթ,
- հաղորդել գիտելիքներ սոցիալ-տնտեսական և հասարակական քաղաքական ոլորտի գենդերային հայեցակետերի վերաբերյալ,
 - դիտարկել կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում,
 - դիտարկել գենդերային խտրականությունը հաղթահարելու և գենդերային իրավահավասարության հասնելու հնարավոր մեխանիզմները:

Դասավանդման մեթոդը

Մա նոր տիպի ինտեգրատիվ դասընթաց է, որը նախատեսում է ոչ միայն կրթական կապիտալի կուտակում, այլև «գիտակցության փոփոխում»: Այն նպատակաուղղված է գենդերային զգայնության բարձրացմանը և գենդերային վերլուծության տարրական հմտությունների պատվաստմանը: Նման բովանդակության իրականացման համար անհրաժեշտ է դասավանդման ոչ ստանդարտ մեթոդիկա՝ հիմնված ներառական ուսուցման սկզբունքի վրա: Ուսուցման ավանդական ձևերը (մինի-դասախոսություններ, սեմինարներ, հարց ու պատասխաններ) խորհուրդ է տրվում գուզակցել ոչ ակադեմիական ձևերի՝ դերային խաղերի, հոգեբանական վարժանքների, բանավեճերի, խնդրահարույց իրավիճակների (case study), ցուցադրական նյութերի (պաստառների, տեսալսողական նյութեր), անհատական ռեֆլեքսիայի, փոքր խմբերում աշխատանքի, ուղեղային գրոհների հետ:

Դասընթացի կառուցվածքը հիմնվում է երեք հիմնական մոդուլների վրա.

Մոդուլ 1. Ներածություն: Հիմնական հասկացությունները: Գենդերային սոցիալականացում: Սոցիալական ոլորտի գենդերային հայեցակետերը:

Մոդուլ 2. Հասարակական-քաղաքական ոլորտի գենդերային հայեցակետերը:

Մոդուլ 3. Տնտեսական ոլորտի գենդերային հայեցակետերը:

Մոդուլ 1

Ներածություն: Հիմնական հասկացությունները:

Գենդերային սոցիալականացում:

Սոցիալական ոլորտի գենդերային առումները:

«Գենդերը» որպես սոցիալական և մշակութաբանական հասկացություն: Գենդերը որպես շերտադասական կատեգորիա: Գենդերային նորմատիվների կախվածությունը մշակույթից, ազգային ավանդույթներից և սովորույթներից, կրոնից, պատմությունից, հասարակության քաղաքակրթվածության աստիճանից: Գենդերային կարծրատիպերի պատմական պայմանավորվածությունը և փոփոխականությունը, գենդերային դերերի բազմազանությունը տարբեր մշակույթներում:

Գենդերային տեսության հիմնական հասկացությունները. գենդերային դերեր, գենդերային դրսևորում (դիսֆիլեյ), գենդերային նույնականություն, գենդերային կարծրատիպեր:

Հասարակության գենդերային կազմակերպման տիպերը և ձևերը. մայրիշխանություն և հայրիշխանություն, իշխանության և գերիշխանության մոդելները հաստատող սոցիալական վերահսկման եղանակները, գենդերային անհամաչափությունը՝ որպես հայրիշխանության ստորակարգային մոդելի հետևանք:

Գենդերային սոցիալականացում. փուլերը, ինստիտուտները, գործակալները և տեխնոլոգիաները, տղամարդկանց և կանանց սոցիալականացման առանձնահատկությունները, կոշտ գենդերային

սոցիալականացման հետևանքները տղամարդկանց և կանանց համար:

Գենդերային համակարգ, գենդերային պայմանագիր, գենդերային կարգ, գենդերային ռազմավարություններ: Պետության և սոցիալական քաղաքականության դերը գենդերային համակարգի ձևավորման գործում:

Հասկացություն հանրային և մասնավոր ոլորտների մասին: Ընտանիքի և հասարակական գործընթացների վերլուծության գենդերային մոտեցումները: Սոցիալական քաղաքականության և հասարակության զարգացման գործընթացների գենդերային փորձաքննությունը: Պետության սոցիալական քաղաքականության ազդեցությունը գենդերային համակարգի վրա:

Առաջարկվող գրականություն Հայաստանում հրատարակված

1. ԹՈՐՊՈՎ՝ ժ., ԹՉպՊպվՌպ Չ չպվՊպվՎոպ ՌրրսպՊՏՉՈՎՌ՝, ԺԲպՉՈՎ, 2002.
2. ըՈՌՈՎ հ., ՔպվՊպվՌ Ռ ՊՌրՍՐՌՎՌՎՌՓՌ՝. ՔպվՊպվՎոպ ՌրրսպՊՏՉՈՎՌ՝ ղ11, ԺԲպՉՈՎ, 2002.
3. Մխիթարյան Ա., Գենդերային տեսության ներածություն, Երևան, 2002, Գենդերային հետազոտություններ ղ12.
4. Գենդերային հետազոտություններ, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Երևան, 2001-2001, ղղ I–XVII.
5. Ջաքարյան Լ., Գենդերային գիտելիքների հիմունքներ, Երևան, 2003, Գենդերային հետազոտություններ ղ16.
6. Վորոնինա Օ., Տյոմկինա Ա., Գենդերը և մշակույթը: Գենդերային հետազոտություններ, Երևան, 2001, ղ3.
7. Մուֆեյ Ն., Աղջիկների գենդերային սոցիալականացման հիմնախնդիրները: Գենդերային հետազոտություններ, Երևան, 2002, ղ14.
8. Բազեյան Կ., Գենդերի էթնոմշակութային առումները, Երևան, 2002, Գենդերային հետազոտություններ ղ6.
9. Կլիմենկովա Տ., Գենդերային մոտեցման քննարկման շուրջ, Գենդերային հետազոտություններ, Երևան, 2001, ղ1.
10. Թումանյան Ս., Տղամարդու և կնոջ իրավահավասարության խնդիրները առաս-

- պելաքանության մեջ: Ջուգակչոված ժողովրդավարություն, Երևան, 1999.
11. Ջորավովիսյովա Ե., Տյոմկինա Ա., Կանանց հետազոտությունները և գենդերային հետազոտությունները Արևմուտքում և Ռուսաստանում, Գենդերային հետազոտություններ, Երևան, 2001, դ6.
 12. Ռիմաշևսկայա Ն., Գենդերային հարաբերությունները Ռուսաստանի զարգացման խորհրդային և հետխորհրդային տարածությունում: Գենդերային հետազոտություններ, Երևան, 2001, դ3.
 13. Հովհաննիսյան Գ., Մոցիլական ապահովության գենդերային հիմնախնդիրները Հայաստանում: Գենդերային հետազոտություններ, Երևան, 2002, դ14

Մոդուլ 2

Հասարակական-քաղաքական ոլորտի գենդերային հայեցակետերը

Քաղաքական գործընթացների գենդերային հայեցակետերը.

- տղամարդկանց և կանանց քաղաքական մասնակցությունը,
- կանայք և տղամարդիկ ընտրական գործընթացներում. գենդերային առանձնահատկությունները,
- ներկայացվածությունը գործադիր և դատական իշխանության մարմիններում, տարածաշրջանային և տեղական ինքնակառավարման մարմիններում,
- քաղաքական լիդերության գենդերային հայեցակետերը,
- գենդերային անհամաչափությունը քաղաքական ոլորտում:

Կանանց կարգավիճակի և քաղաքացիական ակտիվության բարձրացման, գենդերային իրավահավասարության հասնելու հիմնախնդիրը, կանանց քաղաքական մասնակցության և որոշումների ընդունման մակարդակում նրանց ներկայացվածության ընդլայնման տեխնոլոգիաները: Գենդերային քվոտաները և տարբեր երկրներում դրանց կիրառման փորձը:

Կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում:

Իրավունքների, հնարավորությունների և արդյունքների հավասարությունը՝ որպես ժողովրդավարական քաղաքացիական հասարակության ձևավորման պայման:

Հայաստանի կողմից վավերացված միջազգային իրավական փաստաթղթերը կանանց իրավունքների մասին: Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW). Կանանց իրավունքների պաշտպանության և զենդերային իրավահավասարության հասնելու ազգային մեխանիզմները:

Կանանց շարժումը. հետադարձ հայացք, արդի վիճակը, հեռանկարները:

Առաջարկվող գրականություն Հայաստանում հրատարակված

1. Հասրաթյան Ջ., Հայ հասարակության զենդերային մշակույթի ձևավորման մի քանի հարցեր: Գենդերային հետազոտությունների ինստիտուցիոնալացում: Գենդերային հետազոտություններ, Երևան, 2001, դ1.
2. ԸրԲՈՑ՝վ ԺՋ., թպվՊպԲԿՍպ ԲՈՉպվրՑՉՏ; ՋպվրՍՍպ չԲՈՋՊՈվրՍՍպ Ռ-տՏսՌ-ՅՌ-իպրՍՍպ ցփՌրՅՌ-պ, թպվՊպԲԿՍպ՝ ՊՌ-վՌ-ՎՌ-ՍՌ րՏՉԲպ-ՎպվվՏչՏ ՏոքպրՑՉՌ. ԻպվքՌ-վօ ԸԲ-ՎպվՌ-Ռ Չ 21-ՏՎ ՉպՍպ /ՎՌՅպԲՌ-Ռսօ ՍՍվԻպԲպվՓՌ-Ռ/, ԸԻձԿ, ԺԲպՉՌվ, 2002.
3. Հասրաթյան Ջ., Կանանց շարժումը Հայաստանում 20-րդ դարում: Ջուզակչոված ժողովրդավարություն, Երևան, 1999.
4. Էլիոտ Պ., Սենդել Ն., Ֆեմինիզմի սահմանները, Գենդերային հետազոտություններ, Երևան, 2001, դ1.
5. Կոչկինա Ե., Ֆեմինիստական քաղաքագիտական հայեցակարգի մշակում. կնոջ դերը և քաղաքականության տեսության վերանայումը, Գենդերային հետազոտություններ, Երևան, 2001, դ5.
6. Տյոմկինա Ա., Կանանց շարժումը որպես հասարակական շարժում. պատմություն և տեսություն: Գենդերային հետազոտություններ, Երևան, 2001, դ2:
7. Ջդրավոմիսլովա Ե., Տյոմկինա Ա., Արևմտյան ֆեմինիստական ավանդույթը, կիրառելիությունը կանանց հետազոտությունների ռուսաստանյան համատեքստի նկատմամբ: Գենդերային հետազոտություններ, Երևան, 2001, դ3:
8. Իվանովա Ե., Կանանց իրավունքները և մարդու իրավունքները: Գենդերային հետազոտություններ, Երևան, 2002, դ14.

9. Հարությունյան Ա., Հայ կանանց շարժումը 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին: Գենդերային հետազոտություններ, Երևան, 2001, դ2.
10. Հարությունյան Ա., Հայ կանանց շարժումը 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին, Գենդերային հետազոտություններ, Երևան, 2001, դ2:
11. Հարությունյան Ա., Կանանց իրավունքները Հարաստանում: Գենդերային հետազոտություններ, Երևան, 2002, դ14.
12. Ջաքարյան Լ., Գենդերային հիմնախնդիրները 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարասկզբի հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ, Գենդերային հետազոտություններ, Երևան, 2001, դ4.
13. Ժամանակակից հասարակության գենդերային դինամիկա, Հայաստանի կանայք 21-րդ դարում, խորհրդածողովի նյութեր, Երևան, 2000:
14. Նիկողոսյան Ա., Պատմության գենդերային դիսկուրսը: Գենդերային հետազոտություններ, Երևան, 2003, դ15.
15. Հարությունյան Մ., Գենդերային իրավահավասարությունը մարդու իրավունքների համակարգում, Երևան, 2002, դ8.
16. Բաբայան Մ., Կնոջ իրավունքները մարդու իրավունքների համատեքստում: Գենդերային հետազոտություններ, Երևան, 2002, դ14.
17. Կանանց իրավունքներ. միջազգային իրավական նորմեր, իրականացման երաշխավորություններ: ՄԱԿ-ի կոնվենցիաներ (աղապատացված տարբերակ): Չուզակչոված ժողովրդավարություն, Երևան, 1999.
18. Գրիգորյան Գ., Կանանց քաղաքական իրավունքների իրականացման վիճակը Հայաստանում: Գենդերային հետազոտություններ, Երևան, 2002, դ14.
19. Մկրտչյան Ա., Ֆեմինիստական մտքի զարգացման պատմությունը Հայաստանում: Գենդերային հետազոտություններ, Երևան, 2002, դ14.
20. Осипов В., Демократия участия: гендерный аспект. Гендерные исследования, Ереван, 2001, №4.
21. Осипов В., Европейские подходы к гендерной проблематике, Гендерные исследования. Специальный выпуск, 2005.
22. Осипов В., Gender mainstreaming: теория и практика. Гендерные исследования, Ереван, 2001, №5.
23. Գրիգորյան Գ., Սահմանադրական ավանդույթները հայ իրավունքի հուշարձաններում (Կ.Պոլիսի Ազգային Սահմանադրությունը), Կանանց քաղաքացիական մասնակցություն, Երևան, 2001.
24. Овнатяня Т., Выборный процесс: электоральные предпочтения мужчин и женщин, Гендерные исследования. Специальный выпуск, 2005.

Մոդուլ 3

Տնտեսական ոլորտի գենդերային հայեցակետերը

Սոցիալ-տնտեսական փոխակերպումների ազդեցությունը գենդերային համակարգի վրա, տղամարդկանց և կանանց սոցիալ-տնտեսական կարգավիճակի տարբերությունները անցումային շրջանում: Տղամարդկանց և կանանց միջև տնտեսական տարբերությունների առաջացման աղբյուրները, չափերը և դրսևորման մեխանիզմները:

Գենդերային անհամաչափությունը աշխատանքի շուկայում. հորիզոնական և ուղղաձիգ մասնագիտական խտրարարություն: Խտրականությունը աշխատանքի և զբաղվածության ոլորտում: Խտրականության կանխարգելման և հաղթահարման տեխնոլոգիաները: Սոցիալական քաղաքականության ինստիտուտների միջոցով խտրականության և խտրարարության վրա ներգործելու հնարավորությունները:

Գենդերային տնտեսագիտության հիմնական հասկացությունները. մարդու ժամանակի գին, ուրույն ընտանեկան (ամուսնական) կապիտալ, ուրույն շուկայական կապիտալ, սոցիալական կապիտալ, կրկնակի ծանրաբեռնվածություն:

Ընտանեկան ոլորտի, տնային տնտեսության արտադրողական գործառույթի, տնային տնտեսությունում աշխատանքի հաշվառման և գնահատման, տնտեսական արժևորության, վերարտադրողական վարքի գենդերային վերլուծությունը:

Տղամարդկանց և կանանց մասնագիտական ռազմավարությունները տնտեսական բարեփոխումների շրջանում:

**Առաջարկվող գրականություն
Հայաստանում հրատարակված.**

1. Կյուրեղյան Ա., Գենդեր և տնտեսություն: Երավական հայեցակետեր, Գենդերային հետազոտություններ, Երևան, 2002, դ13.
2. Аракелян И., Трудовая эмиграция. Гендерный подход. Гендерные исследования. Специальный выпуск, 2001.
3. Հովհաննիսյան Գ., Գենդերը և տնտեսագիտությունը: Գենդերային հետազոտություններ, Երևան, 2004, դ19.
4. Оганесян Г., Мхитарян А., Гендерные проблемы рынка труда в Армении в условиях глобализации, Гендерные исследования. Специальный выпуск, 2005.
5. Գևորգյան Ա., Գենդերային հիմնախնդիրները զբաղվածության շուկայում: Գենդերային հետազոտություններ, Երևան, 2002, դ14.
6. Հովնաթանյան Թ., Կանանց տնտեսական իրավունքները և դրանց իրականացման հնարավորությունները անցումային շրջանում, Կանանց քաղաքացիական մասնակցություն, Երևան, 2001.

Կախված դասընթացի տևողությունից, ուսանողների հիմնական մասնագիտության ուղղվածությունից, բուհից և ֆակուլտետից՝ առաջարկվում է սեմինարների, կլոր սեղանների, վարժանքների, բանավեճերի, ուղեղային գրոհների օրինակելի թեմատիկա, որոնք կարող են դասավանդողի հայեցողությամբ ընդգրկվել ներածական դասընթացում.

1. Գենդերային սոցիալականացման գործակալները, տեխնոլոգիաները, ռեսուրսները և ինստիտուտները: Մանկության երկու մշակույթները:

2. Ժամանակակից Հայաստանի գենդերային մշակույթը. հայրիշխանության վերածնունդ, թե՞ գենդերային իրավահավասարություն:

3. Գենդերային պայմանագրերի տիպերը Հայաստանում: Պետության, սոցիալական ինստիտուտների, ավանդույթների և կրոնի դերը գենդերային համակարգի ձևավորման գործում:

4. Սոցիալական քաղաքականությունը և գենդերային հարաբերությունները:

5. Աշխատանքի և զբաղվածության շուկան ժամանակակից Հայաստանում: Կանայք և տղամարդիկ զբաղվածության ֆորմալ և ոչ ֆորմալ, առաջնային և երկրորդային հատվածներում:

6. Ընտանիք, հայ ընտանիքի կարգավիճակային-դերային կառուցվածքը: Տնային տնտեսության արտադրողական գործառույթը: Անցումային շրջանի դերային կարգափոխումը (դերերի շեղումը): Տղամարդկանց և կանանց տնային աշխատանքի գնահատման մեթոդիկաները:

Արտասահմանյան գրականություն

1. *Хрестоматия по курсу "Основы гендерных исследований", под редакцией О.А.Ворониной, Москва, 2000.*
2. *Теория и методология гендерных исследований, под редакцией О.А.Ворониной, Москва, 2001.*
3. *Хрестоматия феминистских текстов, Санкт-Петербург, 2000.*
4. *Симона де Бовуар, Второй пол, Санкт-Петербург, 1997.*
5. *Баскакова М.Е., Равные возможности и гендерные стереотипы на рынке труда, Москва, 2000.*
6. *Журженко Ю.В., Анализ положения женщин в переходной экономике: в поисках феминистской эпистемологии, Москва, 2000.*
7. *Мезенцева Е., Гендер и экономика: мировой опыт и экспертиза российской практики, Москва, 2002*
8. *Айвазова С., Гендерное равенство в контексте прав человека. Пособие, Библио-Центр сайта OWL, Москва, 2001.*

ԲԱԺԻՆ 3

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱԿԱՐԴԱԿ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԵՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԶՆԵՐԻ ԵՎ
ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ
ՊԱՀԱՆՋՆԵՐ

«ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»,
«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ»,
«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»,
«ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ»
ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

**ԵՐԿՐՈՐԴ ՍԱԿԱՐԳԱԿԻ
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ
ՆԱԽԱԳԻԾԸ ՄՇԱԿՈՂ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ**

Ջենմա Հասրաթյան, Երևանի «Ինտերլինգվա» համալսարանի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի գենդերային հետազոտությունների կենտրոնի ղեկավար, խմբի ղեկավար

Ելենա Վարդանյան, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու

Սիրանուշ Խաչկալյան, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնի դասախոս

Ֆրունզե Ղազարյան, Ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտի պրոռեկտոր, ինստիտուտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մանկավարժական գիտությունների դոկտոր

Ռուզաննա Մարդոյան, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Նինա Հովհաննիսյան, Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հոգեբանության դասախոս

Հրանտ Ավանեսով, Երևանի պետական համալսարանի հոգեբանության ամբիոնի դասախոս, հոգեբանական գիտությունների դոկտոր

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԵՍԱԿԱՆ
ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ
ՊԱՀԱՆՁՆԵՐ**

«ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մշակութաբանությունը՝ որպես մշակույթի ու մարդու մասին համակարգված գիտելիք, որպես մշակույթի տեսություն և պատմություն, ձեռք է բերում յուրատեսակ միջառարկայական մետատեսության կարգավիճակ, որն ապահովում է ներթափանցումն անհատի և ժողովուրդների հոգեկանի խորքերը, թույլ է տալիս բացահայտել պատմության մեխանիզմների գործունեությունը, մարդկային կեցության գաղտնիքները, իմաստավորել մարդկային ցեղի համատեղ ստեղծագործության էությունը: Մշակութաբանությունը դառնում է սոցիալ-պատմական գործընթացի և ամբողջական աշխարհի ըմբռնման հզոր էվրիստիկական միջոց: Մշակույթի ցանկացած հիմնախնդիր վերաբերում է անհատին և հասարակությանը, որոնց գոյությունն անհնար է առանց զենդերային հարաբերությունների: Հետևաբար մշակութային հիմնախնդիրներն ամբողջությամբ ներթափանցված են զենդերով: Գենդերը մշակութային իրողություն է:

Մասնագիտական գիտելիքները համարելով զենդերային տեսությամբ ու մեթոդաբանությամբ՝ մշակութաբանն ընդունակ կլինի ավելի ճշգրիտ և համարժեք (ադեկվատ) հասկանալ պատմության ու մշակույթի գաղտնի մեխանիզմները, անհավասարության ու խտրականության, անհանդուրժողության ու բախումների բոլոր դրսևորումների արմատներն ու պատճառները և ուղի հարթել դեպի հումանիզմ, երկխոսություն ու ներդաշնակություն: Պարզ է դառնում, որ հասարակության զենդերային մշակույթի և անհատի զենդերային մույնականացման շրջանակներից դուրս անիմաստ է անհատի և հասարակության մենթալիտետի,

դրդապատճառների, դերային մոդելների, վարքի տեխնոլոգիաների ըմբռնումը: Մշակութաբանական գիտության գենդերային վերակառուցումն ակնհայտ է դարձնում այն, որ «գենդեր», «գենդերային մտածողություն», «գենդերային մշակույթ», «գենդերային հարաբերություններ», «գենդերային կարծրատիպեր» և այլ հասկացություններ հավասարապես և՛ ածանցյալ են ընդհանուր մշակույթից, և՛ մշակութաստեղծ գործոններ են:

Մշակութաբանական տեսության և մեթոդաբանության գենդերային չափման բացահայտումը կնպաստի ժամանակակից հասարակության մշակութային-մարդաբանական հիմնախնդիրների, անհատի սոցիալականացման ձևերի ու առանձնահատկությունների ուսումնասիրմանը:

Գենդերային գիտելիքները կարող են արդյունավետ լինել հասարակության կոնկրետ ոլորտների ուսումնասիրմանն ուղղված կիրառական հետազոտություններում: Դրանց նպատակն է բացատրել հայրենական և համամարդկային մշակույթների կայացման, մոդեռնացման գործընթացները, հասարակության զարգացման, մարդկանց կենսագործունեության ձևերի, մարդկային որակների ու ընդունակությունների գենդերային առանձնահատկությունները: Կիրառական ուսումնասիրությունների հիման վրա կարող են մշակվել երաշխավորություններ քաղաքական գործիչների, քաղաքագետների, քաղաքացիական հասարակության ինստիտուտների, սոցիալական վերափոխումների այլ մասնակիցների համար:

Գենդերային տեսությանն ու մեթոդաբանությանը տիրապետող մասնագետ մշակութաբանը պատրաստ է պրոֆեսիոնալ գործունեության հասարակության կյանքի հետևյալ ոլորտներում.

- գիտա-հետազոտական,
- փորձագիտա-վերլուծական,
- մշակութային-լուսավորական,
- կազմակերպչական-կառավարման,
- կարգավորման-նախագծման:

Չափօրինակի նպատակները

- Պատրաստել գենդերային տեսության, պրակտիկայի ու մեթոդաբանության ոլորտներում հիմնավոր գիտելիքներ ունեցող մասնագետ մշակութաբան:
- Մասնագետի մեջ ձևավորել հետաքրքրություն մշակույթի գենդերային ըմբռնման, մշակութաբանական տեսության և մեթոդաբանության գենդերային վերակառուցման, գենդերային հետազոտությունների հմտությունների ու կարողությունների և մասնագիտական գործունեության մեջ դրանք կիրառելու նկատմամբ:
- Նպաստել հասարակության հումանիտար վերակառուցմանը, կանանց ու տղամարդկանց համար հավասար հնարավորությունների ու հավասար իրավունքների հաստատմանը:

Չափօրինակի խնդիրներները

- Հայտնաբերել գենդերային շարժառիթներն ու դրանց հետևանքները մշակույթի տեսության ու պատմության մեջ:
- Բացահայտել մշակույթի և գենդերի փոխադարձ կախվածությունը, նրանց սոցիալական ներուժը:
- Մշակութաբանության մեջ օգտագործել գենդերային հետազոտությունների ու գենդերային վերլուծության մեթոդները և ընդլայնել առարկայի կիրառական և ճանաչողական հնարավորությունները:
- Պարզել գենդերի դերը մշակութային նորմերի ստեղծման և քայքայման գործում:
- Հայտնաբերել գենդերային մշակույթի վերարտադրությունն ու փոխանցումն ապահովող ձևակազմիկ մեխանիզմներն ու գործոնները, այլաբնույթ գենդերային մշակույթի և այլաբնույթ գենդերային հարաբերությունների առաջացմանը նպաստող գործոնների ուսումնասիրում:
- Այդ գործոնների ազդեցության ընդհանրական հետևանքների կանխատեսում և ուսումնասիրում:

Չափօրինակի բովանդակությունը

Ներածություն

Գենդերը՝ որպես մշակութային իրողություն և մշակութաբանական կատեգորիա: Նրա տեղն ու դերը մշակույթում և մշակութաբանության հասկացությունների համակարգում: Գենդերային վերլուծությունը՝ որպես մշակութաբանության մեթոդաբանական հնարք: Գենդերը՝ որպես մշակույթի դրսևորման և գործառնության, անհատի սոցիալականացման և սոցիոմշակութային նույնացման ունիվերսալ ձև, որպես մշակույթի հիմք և արդյունք:

Մշակույթի նկատմամբ գենդերային մոտեցման կիրառման մեթոդներն ու առանձնահատկությունները:

Տղամարդկանց և կանանց սոցիալականացման առանձնահատկություններն ավանդական մշակույթներում: Սեռային չափանիշով խտրականության պատճառներն ու հետևանքները: Գենդերային նույնացումը և տարավարքությունը (դիվերսիֆիկացիա) ժամանակակից մշակույթում: Անհատի էթնոմշակութային և անհատական ինքնագիտակցությունը:

Գենդերային հավասարությունը՝ որպես ժամանակակից մշակույթի արժեք: Բոլոր քաղաքացիների հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների գաղափարախոսությունը, միջազգային փաստաթղթերն ու միջազգային քաղաքականությունը, դրանց իրականացման հնարավորություններն ու դժվարությունները:

Կիրառական գենդերային հետազոտություններ. գենդերային տեխնոլոգիաներ, գենդերային մոդելավորում, գենդերային կազմավորում, գենդերային փորձաքննություն: Հումանիտար գիտելիքների գենդերային վերակառուցում. շարժառիթները (հիմնավորում, մոտիվացիա) և հնարավորությունները:

Գենդերի էթնոմշակութային բնույթը: Հայ ժողովրդի գենդերային մշակույթի կայացումը և զարգացումը: Հայ կանանց և տղամարդկանց սեռադերային մոդելների փոփոխությունը պատմական զարգացման ընթացքում: Ժամանակակից հայ հասարակության գենդերային մշա-

կույթը: Ազգային և արևմտյան գենդերային հարաբերությունների ու արժեքների հարաբերակցությունը:

Մշակույթի տեսություն և մեթոդաբանություն

Անտիկ իմաստասերների մշակութաբանական հայացքները

Հունա-հռոմեական ժողովրդավարության, ազատության և հավասարության ընտրախավային (էլիտար) բնույթը: Անտիկ մշակույթի կիսակատար (անհետևողական) մարդակենտրոնությունը: Կանանց և տղամարդկանց սեռադերային կարծրատիպերի իմաստասիրական-աշխարհայացքային հիմքերը Հին Հունաստանում և Հռոմում: Տղամարդու և կնոջ էության, հասարակության մեջ տեղի ու դերի ըմբռնումը Պլատոնի, Արիստոտելի, Պլուտարքոսի իմաստասիրական տեսություններում (հայեցակարգերում): Սերը, ընտանիքը, ամուսնությունը: Կինը տղամարդու կյանքում: Հետերաների և կուրտիզանուհիների ինստիտուտը:

Մշակույթի, մարդու և ազատության ըմբռնումը հռոմեական իմաստասիրության մեջ: Կանանց և տղամարդկանց վարքի սեռադերային մոդելների բարոյա-իրավական ամրագրումը (սահմանումը):

Մշակութային-իմաստասիրական որոնումները նախաքրիստոնեական Հայաստանում: Հասարակության սոցիալական կառուցվածքի, անհատի ազատության և բարոյականության հիմնախնդիրները, ամուսնաընտանեական և իրավաունեցվածքային հարաբերությունները: Կանայք պետական գործերում:

Վաղ քրիստոնեության և միջնադարյան մտածողները մշակույթի մասին

Կնոջ և տղամարդու էության ու նշանակության քրիստոնեական մեկնաբանությունը: Ազատության, հավասարության և մարդու մեղավորության մասին պատկերացումների արտացոլումը Ավգուստինոս Երանելու բարոյագիտական հայեցակարգում:

Հավասարության կրոնական և սոցիալական ըմբռնումների հակասականությունը: Կանանց ու տղամարդկանց իրավունքների, պարտականությունների և գործունեության ոլորտների հստակ ամրագրումը եկեղեցու կողմից: Կրոնը որպես կանանց ու տղամարդկանց սեռադերաժին մոդելների կառուցման տեխնոլոգիա և անհատի անձնական կյանքի սոցիալական վերահսկման միջոց:

Աստվածաշնչյան կանանց կերպարները: Թովմա Աքվինացին, Պիեռ Աբելյարը կնոջ էության, դերի մասին պետության ու հասարակության մեջ և ընտանիքում: Վաղ քրիստոնեական դոգմաների մեղմացումը:

Միջնադարյան Հայաստանի գենդերային իրողությունները: Կանանց ներդրումը Հայաստանում քրիստոնեության տարածման գործում: Կանայք քրիստոնեական Հայաստանում: Ամուսնա-ընտանեկան հարաբերությունների կարգավորումը Աշտիշատի ժողովի կողմից: Հուստինիանոսի բարեփոխումները և ունեցվածքային-ժառանգական իրավունքի գենդերային ներդաշնակեցումը Հայաստանում:

Մեսրոպ Մաշտոցի և Եզնիկ Կողբացու սոցիոմշակութային հայացքների գենդերային դիտարկում: Մովսես Խորենացու «Հայոց պատմության» գենդերային իմաստավորում:

Մխիթար Հերացու, Ներսես Շնորհալու սոցիալական հայացքները: Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»: Կանայք Հայաստանի հոգևոր-մշակութային կյանքում: Կանայք ազատագրական շարժման մեջ:

Մշակութաբանական հայեցակարգերը վերածննդի դարաշրջանում

Վերածննդի դարաշրջանի մարդակենտրոնության առանձնահատկությունները:

Էրազմ Ռոտերդամցու և Միշել Մոնտենի չափավոր հումանիզմը: Աստվածամարդու մասին առասպելը, վերածննդի դարաշրջանի հումանիզմի ընտրախավային բնույթը: Կնոջ թեման հումանիստների աշխատ-

տություններում: Ամուսնաընտանեկան հարաբերությունների արտա-
ցումն ուտոպիստների աշխատություններում:

Ռեֆորմացիան՝ որպես մշակույթի աշխարհականացում: Բողոքա-
կան էթիկան որպես ազատական ժողովրդավարության և ազատական
գաղափարախոսության հիմք: Հասարակության մեջ անհատի դերի վե-
րանայումը: Անձի ազատություն: Պորիտանական էթիկան և կինը: Վե-
րածննդի և Ռեֆորմացիայի գաղափարախոսությունները՝ մարդու և աշ-
խարհի նույնացման նոր ձևերի ակունքներ:

Կինը ասպետական մշակույթում: Միրո հայեցակարգը պարտեզա-
յին (կուրտուազային) մշակույթում: Կնոջ թեման արվեստում: Վեներա-
Մադոննա երկրնտրանքը Բուրիգելլիի ստեղծագործություններում:

XIV-XVI դարերի Հայաստանի սոցիալ-պատմական իրադրության
զենդերային իմաստավորումը:

Նոր ժամանակի մշակութաբանական տեսությունները

Մարդու հայեցակարգը, կնոջ և տղամարդու էության մասին պատ-
կերացումները Ֆրանսուա դ'Լարոշֆուկոյի «Մաքսիմներում» և Բլեզ
Պասկալի «Դատողություններում»:

Ներդաշնակ հասարակարգի որոնումները Գոթֆրիդ Վիլհելմ Լեյբնի-
ցի և Վոլտերի աշխատություններում: Թոմաս Հոբսի բնական իրավունքի
տեսությունը: Մարդու տեղը պետություն - մշակույթ համակարգում: Սե-
փականության և աշխատանքի բնական իրավունքը՝ ազատության և հա-
վասարության նախապայման. Ջոն Լոկը: Հավասարության և ազատու-
թյան զենդերային չափումները: Ժան-ժակ Ռուսոյի հասարակական վե-
րակառուցման տեսության մեջ բնական դաստիարակության, բնական
կյանքի և հասարակական պայմանագրի զենդերային դիտակետը:

Բուրժուական հասարակության իրավագիտակցության ձևավորու-
մը: Կանանց իրավունքների ըմբռնումը Մորելիի «Բնության կողմնա-
կամ օրենքների իրական ոգին», Գաբրիել Մաբլիի «Օրենսդրության
մասին կամ օրենքների սկզբունքները», Ժան-ժակ Ռուսոյի «Մահմա-
նադրության նախագիծ Կորսիկայի համար» ծրագրային աշխատու-
թյուններում:

Իմաննուիլ Կանտը պետության, ազատության, հավասարության և բարոյականության մասին: Օրենքը և բարոյականությունը՝ որպես մարդկանց հավասարությունն ապահովող արժեքներ: Կանտի էթիկան (բարոյագիտությունը)՝ որպես «կանխամտածվածության բարոյականություն», կանխամտածվածության գենդերային պայմանավորվածությունը:

Պետությունը, մարդը, օրենքը, հավասարությունը և ազատությունը Հեգելի իմաստասիրական համակարգում: Քաղաքացիական հասարակությունը-մշակույթը-անհատը: Ընտանիքի և սեռերի բնական տարբերությունների գաղափարը Հեգելի տեսության մեջ:

Մարդը-գերմարդը, ազատությունը և բարոյականությունը Ֆրիդրիխ Նիցշեի հայեցակարգում: Կնոջ և տղամարդու էության և սոցիալական արժևորման (նշանակության) նիցշեական ընկալումը:

Գենդերային հիմնախնդիրները Նիկոլայ Գանիլևսկու, Օսվալդ Շպենգլերի, Առնոլդ Թոյնբրի, Սամուել Հանֆինգթոնի քաղաքակրթական տեսությունների լույսի ներքո:

Օսվալդ Շպենգլերի պետության և հասարակության հայեցակարգի կենսաբանականությունը (բիոլոգիզմը): Կյանքի տղամարդկային և կանացի սկզբունքները:

Ազատության և հավասարության գաղափարների գենդերային չափումները XVII–XIX դարերի հայ իրավասոցիալական մտքում: Հովսեփ Էմին, Շահամիր Շահամիրյան, Հովսեփ Արղության, Հովհաննես Խնուսեցի:

Մշակույթը և հոգեբանությունը

Ջիզմունդ Ֆրեյդի, Կարլ Գուստավ Յունգի՝ մշակույթի տեսության հոգեբանական վերակառուցման փորձերը: Չանգվածների հոգեբանության և մարդկային «ես»-ի էությունն ըստ Ֆրեյդի: Նույնացման հիմնախնդիրը: Սեքսուալությունը, սերը, լիբիդոն: Ֆրեյդի բիոսեքսուալության տեսության քննադատությունը:

«Կոլեկտիվ անգիտակցականը» և «արքետիպերը»՝ որպես մշակութաստեղծ գործոններ: Կարլ Գուստավ Յունգի մարդու հայեցակարգը: Յունգը կանացի էության մասին: Գենդերը և հոգեվերլուծությունը:

Մշակույթի և մարդու հիմնախնդիրները Լևի Ստրոսի կառուցվածքային-մարդաբանական հայեցակարգում:

Խաղային մշակույթի հայեցակարգը

«Խաղ-մշակույթի» հումանիստական արժեքները. Յոհան Հեյզինգայի «Խաղացող մարդը» (Homo ludens) աշխատության գենդերային դիտարկումը:

Խուան Օրտեգա-ի-Հասեթի սոցիոլոգիական գաղափարների գենդերային իմաստավորումը: Մշակույթի ընտրախավային բնույթը: Անհատի արժեզրկումը զանգվածային մշակույթում: Անհատականության ժխտումը Հերման Հեսսեի մշակութային մոդելում:

Սոցիալական խաղը և սոցիալական դերերը: Սոցիալական խաղի և սոցիալական դերերի գենդերային իմաստավորումը: Կանայք ու տղամարդիկ՝ որպես սոցիալական խաղի մասնակիցներ: Խաղի կանոնների գենդերային բնույթը: Կանանց ու տղամարդկանց սոցիալական դերերի վերաբերյալ կարծրատիպերը տարբեր մշակույթներում: Մարդու կյանքը՝ որպես խաղ: Սոցիալական խաղի հասարակական և հանրամատչելի բնույթը: Գենդերային հաշվեկշիռը մշակութաստեղծ խաղում՝ որպես մարդկային համակեցության և զարգացման անհրաժեշտ պայման:

Մշակույթի իմաստասիրություն

Գենդերային հարաբերությունները՝ որպես հասարակական կեցության և հասարակական ինքնագիտակցության ձևակազմիկ գործոն: Մշակույթը՝ որպես արժեք, որպես հաղորդակցման ու ստեղծագործության ձև:

Հաղորդակցման և ստեղծագործության ձևի գենդերային չափումները և գենդերային պայմանավորվածությունը:

Մշակույթի գոյաբանության և իմացաբանության գենդերային տեսակետը: Գենդերը՝ որպես ընտանիքում և հասարակության մեջ իշխա-

նական-ունեցվածքային հարաբերությունների նախադրյալ և արտացոլում:

Գենդերը՝ որպես ժամանակակից հասարակության մշակութային-մարդաբանական հիմնախնդիրների իմացության միջոց:

Մշակույթը՝ որպես նշանային համակարգ: Գենդերային կարծրատիպերի արտացոլումը մշակութային լեզուներում և կողերում: Տղամարդկանց ու կանանց մշակույթների լեզուները: Տղամարդու և կնոջ մարմնի, հագուստի, շարժումների, բարքերի, գեղագիտության, տրամաբանության, հույզերի ու զգացմունքների «լեզուները»:

Սոցիալական մշակութաբանություն

Մշակույթը և հասարակությունը: Ազգայինը և համամարդկայինը, սոցիալականը և անհատականը անձի գենդերային գիտակցության մեջ և վարքագծում:

Գենդերային մշակույթը էթնոսի ավանդույթների ու մենթալիտետի հետևանքից դրանք ձևավորող պատճառի վերածվելու պայմանները: Գենդերային պատկերացումների շարժընթացը ժամանակի ու տարածության մեջ և տարբեր սոցիալական խմբերում: Վարքագծի գենդերային մոդելների գործառության առանձնահատկությունները ժամանակակից հասարակության մեջ:

Ընտրախավի, զանգվածային, ազգային և ժողավրդական մշակույթներ: Գենդերային հարաբերությունները և արժեքները այդ մշակույթներում: Տղամարդկանց և կանանց մարմնականության ու սեքսուալության բացարձականացումը, մարդու հոգևոր-սոցիալական էություն, նրա արժեքայնության, ազատության ու արժանապատվության արժեզրկումը զանգվածային մշակույթի կողմից: Բրիստոնեական արժեքների ճգնաժամը: Հայ հասարակության կառուցվածքային և գործառության կազմավորման գենդերային դիսփիլեյը բոլոր մակարդակներում՝ ընտանիքից մինչև քաղաքականություն: Գենդերային աններդաշնակության պատճառներն ու հետևանքները և դրա վերացման հնարավոր ուղիները: Հայ հետազոտողների ներդրումը գենդերային տեսության մեջ:

Տեսալսողական լրատվամիջոցների դերը անհատի ինքնագնահատականի, հավակնությունների, շարժառիթների, գենդերային վարքի և գենդերային դերերի, նույնացման չափանիշների ձևավորման գործում: Գործնականում և մասնագիտական գործունեության մեջ միկրոսոցիոմի գենդերային մշակույթի վերաբերյալ գիտելիքների կիրառման հնարավորությունները:

Անհատը և մշակույթը

Հասարակության գենդերային մշակույթը և անձի անհատական աշխարհը: Անձի բազմատարրությունը:

Սոցիալականացման ընթացքում այլամշակութային տարրերի ձևավորման անխուսափելիությունը: Կրթությունը, տեղեկատվությունը, հաղորդակցումը, միգրացիան՝ որպես անհատի և հասարակության գենդերային իդեալի ու պրակտիկայի փոփոխման գործոններ:

Գենդերի և մշակույթի փոխկապակցվածությունն ու փոխկախվածությունը: Մշակույթը՝ որպես գենդերային հարաբերությունների և գենդերային կարծրատիպերի վերարտադրության մեխանիզմ: Անհատի գենդերային մշակույթը՝ որպես հասարակության սոցիալական զարգացման գործոն:

Անհատի դերը գենդերային հարաբերությունների նոր մոդելների ստեղծման և փոխանցման գործում: Գենդերային վարքը որպես անհատի հոգեկանի ճանաչողական և շարժառիթային ոլորտների արտացոլում:

Գենդերային նույնացումը և գենդերային շեղումը (դեվիացիա) որպես մշակութային նորմեր: Անձնական կյանքի և կենցաղի գենդերային տեսանկյունները:

Մշակույթը՝ որպես ավանդույթ

Ավանդույթը՝ որպես հասարակության գենդերային հարաբերությունների պահպանման, վերարտադրության ու փոխանցման մեխանիզմ: Ավանդական մշակույթի գենդերային ասիմետրիան: Ավանդույթը՝ անհատի գենդերային վարքի սոցիալական վերահսկման գործոն

մեխանիզմ: Նոր հարացույցների նկատմամբ տարբեր մշակույթների ավանդույթների ընկալունակության աստիճանը: Արմատների պաշտամունքը և գլոբալացումը: Գենդերային վարքի շեղումները՝ որպես ազգային ավանդույթի և էթնիկական նույնացման քայքայման սպառնալիք:

Ավանդապաշտության (տրադիցիոնալիզմ), արմատականության (ռադիկալիզմ), հիմնապաշտության (ֆունդամենտալիզմ) գենդերային չափումները: Ավանդույթի և նորի բախումը, դրա արտացոլումը գենդերային հարաբերություններում:

Հայ մշակույթի պատմական ընկալունակությունն այլամշակույթ տարրերի, դրանց յուրացման և արդյունավետ գործառնությունն սպառնալիք նկատմամբ:

Հելլենիզմը Հայաստանում: Օտարների՝ ասորիների, պարսիկների, արաբների, թուրքերի և այլոց ազդեցությունը հայ մշակույթի վրա և հայ մշակութային ավանդույթի ամբողջականությունը: Ավանդապաշտության և մոդեռնիզմի դրսևորումները ժամանակակից Հայաստանում:

Մշակույթի պատմություն

Մշակույթի տիպաբանությունը և պարբերացումը

Մշակույթի պատմության ըմբռնման գենդերային տեսակետները, մշակութաբանական աղբյուրների տիպերը և տեսակները, դրանց գենդերային չափումները:

Մշակույթի առաջացումը: Նախնադարյան մշակույթ

Գիցական մտածողությունը՝ որպես աշխարհընկալման և աշխարհակարգի հաստատման ձև նախնադարյան հասարակարգում: Գիցերգությունը՝ որպես մարդկանց, մարդկանց ու բնության միջև հարաբերությունները կարգավորող հավատալիքային-բարոյական սկզբունք և գործնական օրենք:

Տոտեմը և տաբուն համայնքի տղամարդկանց ու կանանց հարաբե-

րությունների կարգավորման, նախնական սոցիալականացման և նույնացման պրագմատիկ միջոցներ: Արյունապղծության տարուն: Տղամարդու և կնոջ սեռադերային մոդելների ձևավորումը անիմիստական աշխարհայացքի շրջանակներում:

Նվիրագործումը (ինիցիացիա) նախնադարյան հասարակարգում որպես յուրօրինակ «գենդերային մկրտություն», որպես արմատապես նոր անհատական-սեռային ինքնագիտակցման ձեռնադրում: Տղամարդկանց ու կանանց վարքի նկատմամբ սոցիալական վերահսկողությունը ծեսի և ուսուցման միջոցով: Մոգությունը և իշխանության առաջացումը: Տղամարդկանց ու կանանց հարաբերությունների աստիճանավորումը:

Հին հայերի դիցաբանության գենդերային իմաստավորումը: Ասքերի սոցիալական նշանակությունը: Դիցաբանությունը՝ որպես հին հայկական ցեղերի սեռադերային պատկերացումների յուրահատկությունների արտացոլում: Դիցական կանանց կերպարները: «Ամուսնաընտանեկան» հարաբերությունները: Հայ հայրիշխանական ընտանիքը: Կնոջ դիրքն ընտանիքում ու հասարակության մեջ:

Կոնֆուցիանա - դատսիստական մշակույթ

Կոնֆուցիականության սոցիալ-բարոյա-քաղաքական արժեքների հայրիշխանական բնույթը: Չինական մշակույթի հայրիշխանական-տոհմային հումանիզմը: Չինական մշակութային ավանդույթը՝ պետություն – ընտանիք – հասարակություն համակարգում կնոջ ու տղամարդու տեղի ու դերի մասին: Անձնական կյանքը կազմակերպող սկզբունքների գենդերային նորմավորող բնույթը. հնագանդությունը, պարտքը (պարտականություն)-բարոյականությունը՝ որպես անհատի գենդերային վարքի որոշիչներ: Մարդու և մարդկային ակտիվության ըմբռնումների տարբերությունը եվրոպական և չինական մշակույթներում: Դատսիստական էթիկան մարդ-բնություն փոխհարաբերությունների, մարդու ազատության, ստեղծագործական կարողությունների մասին: Ծեսը՝ որպես անհատի սոցիալականացման մատրիցա, որպես հավերժ կենդանի հայրիշխանական տոհմային հարաբերությունների

վերարտադրության, եսակենտրոն ձգտումներից ազատագրման մեխանիզմ:

Չին էթնոսի գենդերային հարաբերությունների կայունությունը: Չինական մշակույթի անհաղորդությունը գենդերային շեղումների նկատմամբ:

Հնդկա-բուդդայական մշակույթ

Բրահմանիզմի, բուդդիզմի, հինդուիզմի աշխարհայացքային սկզբունքների և հնդկաբուդդայական ավանդույթի սոցիալական հիմքերի գենդերային չափումները: Մարդը բուդդայականության սոցիալաբարոյական համակարգում: Գլխավոր արժեքները՝ հանդուրժողականությունը և հնազանդությունը, որպես սոցիալական ակտիվությունը ճնշող գործոններ: Կաստայական համակարգը՝ որպես գենդերային շեղումների սահմանափակման մեխանիզմ: Կարմայի օրենքը և կաստային հասարակարգը՝ մարդկանց սոցիալական և իրավական հավասարության հաստատման արգելքներ: Դեհարման, արթհան, կաման, մոքշան՝ գենդերային ավանդույթների անխաթարությունը ապահովող կարգավորիչ բարոյական օրենքներ:

Հինդուիզմի կենսասիրությունը: Կնոջ կերպարը հինդուիստական մշակույթի փիլիսոփայական և կրոնա-էրոտիկ գրականության մեջ: Կնոջ գեղեցկության, ամուսնու և կնոջ հարաբերությունների, զգայական հաճույքների ու սեռական կյանքի մշակույթի թեման V դարի հինդուիստական գրականության մեջ. Մահարաշի Վիցիյանա, «Կամա-Սուտրա»: Կրոնաէրոտիկ բովանդակությամբ ստեղծագործությունները XVII-XIXդդ. ընթացքում:

Մահմեդական մշակույթի աշխարհը

Մահմեդական միաստվածության առանձնահատկությունները: Անհատի արտամղվածությունն արժեքների Ալլահ – ումմա - ընտանիք համակարգից:

Մահմեդական իրավունքի կրոնական բնույթը. Շարիաթը և աղաթը որպես անհատի ու հասարակության կյանքը կազմակերպող ու կարգա-

վորող միջոցներ: Օրինականացված գենդերային ասիմետրիան: Կինը մահմեդական աշխարհում: Ամուսնա-ընտանեկան հարաբերությունները: Բազմակնության մարդասիրական մոլորմները:

Մահմեդականի կյանքի, մտածելակերպի, կենցաղի, արժեքների համակարգի մշտական և խիստ վերահսկումը ումմայի կողմից՝ որպես անհատի ազատության սահմանափակում: Մահմեդական հումանիզմի առանձնահատկությունները:

Իսլամի ավանդական դիմադրությունն արտաքին մշակութային ազդեցություններին՝ որպես արգելք գենդերային հավասարության հաստատման ճանապարհին:

Գենդերային հարաբերությունների առանձնահատկությունները ժամանակակից մահմեդական աշխարհում: Ավանդականը և ժամանակակիցը: Մոդեռնիզմի և ֆունդամենտալիզմի գենդերային չափումները մահմեդական մշակույթում: Տղամարդկանց և կանանց անձնական ու հասարակական կյանքը մահմեդական տարբեր երկրներում:

Արևելք - Արևմուտք. մշակութային արժեքների բախման գենդերային տեսանկյունները: Կանայք մշակութային բախումներում: Իսլամի տեսության մեջ կնոջ էության ու նշանակության վերաբերյալ պատկերացումների և իրականության հակասականությունը:

Քրիստոնեական մշակույթ

Աշխարհի քրիստոնեական պատկերը: Անհատի տեղը և դերը աշխարհում: Անհատը՝ որպես արժեք: Աստվածամարդու գաղափարը: «Նախաստեղծ մեղքը» և նրա հետևանքները: Կնոջ մեղսավորությունը: Ազատության և հավասարության առանձնահատկությունները քրիստոնեական մշակույթում: Կնոջ աշխարհը և տղամարդու աշխարհը:

Կանայք պետության ու հասարակության մեջ և ընտանիքում: Կնոջ էության ստորադասումը «հավատո հանգանակում» և օտարվածությունը եկեղեցական աստիճանակարգից:

Կանանց և տղամարդկանց մենակեցություն: Վանականության դերը քրիստոնեական մշակույթում: Կաթոլիկության դոգմաները կնոջ, տղամարդու, ընտանիքի և ամուսնության մասին:

Քրիստոնեության բողոքական տարբերակը (վարկածը) և նորեվրոպական մշակույթի կայացումը: Մարտին Լյութերի, Թոմաս Մյունցերի, Ժան Կալվինի հայացքների գենդերային չափումները: Կյանքի իմաստի, ազատության ու հավասարության վերաարժեքավորումը: Մաքս Վեբերը մշակույթում բողոքականության նշանակության մասին: Նոր տեսակի անհատի ձևավորումը: Իրավահավասարության համար կանանց շարժման սկիզբնավորումը: Գենդերային չափօրինակների փոփոխությունը: Ժամանակակից իրադրությունը քրիստոնեական աշխարհում գենդերային իրավահավասարության ոլորտում. ձեռքբերումներ, հիմնախնդիրներ ու հեռանկարներ:

Քրիստոնեական արժեքների և քրիստոնեական գաղափարախոսության դերը Հայաստանում ազգային գենդերային ավանդույթների կայացման գործում: Հայ մտածողների դիրքորոշումները մարդու էությանը, ազատությանը, սեռերի հավասարությանը, բարոյականությանը, սեքսուալությանը, Ադամի և Եվայի նախաստեղծ մեղքին վերաբերող հարցերի նկատմամբ: Գենդերային բաղադրիչը Եզնիկ Կողբացու, Դավիթ Հարքացու, Գրիգոր Մագիստրոսի հայացքներում: Եվայի մեղքի մեկնաբանությունը Հովհաննես Խնուսեցու կողմից:

Մշակույթի ժամանակակից հիմնախնդիրները

Տեխնիկայի մշակութա-իմաստասիրական հիմնախնդիրները

Տեխնիկան՝ որպես սոցիալական երևույթ: Տեխնոթիկա: Տեխնիկան՝ որպես տղամարդկային արժեքների նյութականացում:

Մարդը (տղամարդը և կինը) տեխնիկայի աշխարհում: Տեխնիկայի ինքնավարությունը և մարդու նկատմամբ գերազանցությունը: Մարդու վերածվելը «հասարակության պտուտակի», նրա սոցիոմշակութային արժեքի նվազեցումը: Կարլ Յասպերսի և Ժակ Էլյուի հայեցակետերը տեխնիկայի ու ունեցվածքային-իշխանական հարաբերությունների փոխադարձ կապի մասին: Տեխնիկայի իշխանությունը: Իշխանության տեխնիկացումը: Առաջընթացի բարոյա-էթիկական, տնտեսական,

իրավական, սոցիալական, ֆիզիոլոգիական, հոգեբանական, էկոլոգիական հիմնախնդիրների գենդերային կտրվածքը:

Տեխնիկան-առաջընթացը-կյանքը: Ապագայի հորիզոնները. Էրիխ Ֆրոմմի «Ունենալ, թե լինել», Ժ.Դորստի «Քանի դեռ չի մեռել բնությունը», Մեդուսի «Աճի սահմանները» աշխատությունների, Ուոլտ Ուիտմեն Ռոսթոմի տնտեսական աճի տեսության, Էլվին Թոֆլերի «Երրորդ ալիքի» հայեցակարգի գենդերային չափումները:

Մարդու բնույթը և տեխնիկական դետերմինիզմը: Ազատության և ստեղծագործության հիմնախնդրի գենդերային նախադրյալներն ու հետևանքները: Առաջընթացի առանձնահատկություններն արևելյան և արևմտյան երկրներում: Տեխնիկական առաջընթացի և հասարակության հոգևոր-մշակութային արժեքների գուգակցման (ներդաշնակեցման) հնարավորությունները:

Կնոջ կենսակերպն ու մշակույթը, ընտանիքի, ամուսնության, երեխաների դաստիարակության, ազգի վերարտադրության հիմնախնդիրները տեխնացված հասարակությունում:

Տեխնիկան և կանանց ու տղամարդկանց մենակությունը:

Սոցիալական հավասարությունը՝ որպես ժամանակակից մշակույթի արժեք

Հավասարության և անհավասարության կենսաբանական, կրոնական և սոցիալական հայեցակարգերը պատմական զարգացման մեջ, դրանց գենդերային չափումների շարժընթացը և արտացոլումը սոցիալական կյանքում: Հավասարության ժամանակակից ըմբռնման ժողորդավարական և մարդասիրական էությունը:

Մարդկանց բնական հավասարության և անհավասարության գաղափարները միջնադարյան Հայաստանի պատմա-փիլիսոփայական մտքի մեջ: Պավլիկյանների և թոնդրակյանների գաղափարախոսության գենդերային չափումները: Կանայք թոնդրակյան շարժման մեջ: Պայքարը կանանց և տղամարդկանց սոցիալական հավասարության համար: Սոցիալական անհավասարության քննադատությունը Հովհաննես Մայրավանցու կողմից: Մեսրոպ Մաշտոցի, Եզ-

նիկ Կողբացու, Հարքացու, Մխիթար Հերացու, Ներսես Շնորհալու, Մանդակունու և այլոց սոցիալական հայացքների գենդերային չափումները:

Տղամարդկանց և կանանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ժամանակակից հայեցակարգը: Միջազգային փաստաթղթերը և նորմավորող ակտերը խտրականության բոլոր ձևերի վերացման մասին: Գենդերային հավասարությունը որպես մշակութային արժեք. իրավական և փաստական հավասարություն, իրականություն և հեռանկարներ:

Արդիականության գլոբալ հիմնախնդիրները

Գլոբալ հիմնախնդիրների ձևակերպումը և մարդկային պահանջ-մունքների բավարարման տեսության և պրակտիկայի վերանայման, «մարդկային որակների բարելավման» անհրաժեշտությունը «Հռոմեական ակումբի» փաստաթղթերում: «Կենսամակարդակ», «կենսորակ», «մարդկային որակներ» հասկացությունների գենդերային բովանակությունը: Հումանիզմի և մարդակենտրոնության, հավասարության և արդարության, բռնության նկատմամբ անհանդուրժողականության ժամանակակից հայեցակարգը: Ֆորբեստորի և Մեդրուսի «Աճի սահմանները», Մեսսերովիչի և Պեստելի «Մարդկությունը շրջադարձային կետում», Պեչչեի «Մարդկային որակներ» գեկույցների գենդերային չափումները: Հումանիզմի հայեցակարգը՝ արդիականության գլոբալ հիմնախնդիրների լույսի ներքո:

Մշակույթ - բնություն, մշակույթ - անհատ փոխհարաբերությունների գենդերային չափումները:

Կանանց և տղամարդկանց պատասխանատվության աստիճանը գլոբալ հիմնախնդիրների առաջացման մեջ:

Գլոբալ հիմնախնդիրը՝ որպես տղամարդկային արժեքների ճգնաժամի արտահայտություն: Մշակույթի և էտատիզմի, իշխանության, փողի, անձնական առաջընթացի սկզբունքների գենդերային ասպեկտները:

Կանայք մարդկության գոյատևման համար պայքարում: Թրաֆի-

քինգը, ահաբեկչությունը, թմրադեղերի վաճառքը՝ որպես տղամարդկային շահերով պայմանավորված նոր գլոբալ հիմնախնդիրներ: Կանայք տղամարդկանց շահերի ոլորտում: Մարդկային համակեցության գլոբալ էթիկայի մշակումը՝ որպես գենդերային շահերի (հետաքրքրությունների) ներդաշնակեցման պայման:

Մշակութային բնապահպանություն (էկոլոգիա)

Բնություն–մշակույթ փոխկախվածության պատմական շարժընթացը, ժամանակակից առանձնահատկությունները: Բնապահպանական հիմնախնդիրների էությունը, պատճառները և հետևանքները: Լավատեսական և հոռետեսական տեսությունները: Մեդուսի, Էրիխ Ֆրոմմի, Դորոտի, Ուոլտ Ռոստոմի, Ռայմոն Արոնի, Մասուդի, Էլվին Թոֆֆլերի տեսակետները: Մարդկային պահանջմունքների բավարարումը՝ որպես բարոյական–մշակութային հիմնախնդիր: Սպառման օբյեկտիվ–մշակութային և սուբյեկտիվ–եսասիրական (հակամշակութային) մոլորմները: Տղամարդկանց և կանանց սպառման գենդերային առանձնահատկությունները:

Էկոլոգիայի կախվածությունը տղամարդկանց հետաքրքրություններից և տղամարդկանց գործունեությունից՝ քաղաքականությունից, գաղափարախոսությունից, տնտեսությունից և առաջընթացից: Կիոտոյի արձանագրությունը և առաջատար պետությունների տնտեսաքաղաքական հավակնությունները:

Էկոլոգիական հիմնախնդիրները՝ որպես ունեցվածքային իշխանական հարաբերություններում բարոյական բաղադրիչի նվազման արտացոլում կենսոլորտի վրա:

Մարդու և կյանքի էկոլոգիա: Կինը՝ որպես կենսոլորտի և սոցիալական ոլորտի օբյեկտ և սուբյեկտ:

Կանանց մասնակցությունը գլոբալ էկոլոգիական մշակույթի սկզբունքների ստեղծման և կիրառման գործում:

- գլոբալ էկոլոգիական էթիկա,
- կենսոլորտի, կյանքի և մարդու պաշտամունքի հակակշիռ տեխնիկայի պաշտամունքի,

- մարդու (կյանքի ու կենսոլորտի) պաշտպանություն մարդ-գիշատչից,
- էկոհամակարգի բազմազանության պահպանումը՝ որպես ինքնատիպ ազգային մշակույթների գոյության պայման,
- արժեքների վերանայում. բնության, մարդու, մշակույթի գերակայությունը քաղաքականության, տնտեսության առաջընթացի, կարիերայի և այլնի նկատմամբ: Կանայք էկոլոգիական մշակույթի սկզբունքների հաստատման համար մղվող պայքարում:

Առօրեական մշակույթ

Առօրեական մշակույթի ձևավորման վրա ազդող բնական, պատմական, սոցիոմշակութային գործոնները: Տղամարդու և կնոջ առօրեական մշակույթի գումարելիները: Անհատի սոցիալական կարգավիճակը և նրա առօրեական մշակույթը: Ավանդույթի և կրթության դերը տղամարդկանց և կանանց կողմից վարքային նորմերի յուրացման և կիրառման գործում: Այլամշակութային վարքաձևերի առաջացման պայմանները և դրանց գենդերային դրսևորումները: Մենթալությունը՝ որպես մշակութային տեսակ (կերպ): Տղամարդու և կնոջ մենթալություն: Մենթալությունը և առօրեական մշակույթը: Հայկական մենթալության առանձնահատկությունների արտացոլումը տղամարդկանց և կանանց առօրեական մշակույթում: Առօրեական մշակույթի փոփոխությունները սոցիալ-պատմական զարգացման ընթացքում: Մշակութային գլոբալացումը, էթնոկենտրոնությունը և առօրեական մշակույթը: Մենթալիտետի միտվածությունն այլափոխության: Հայ կանանց և տղամարդկանց առօրեական մշակույթի նորմերի փոփոխությունները:

Ժողովրդական, զանգվածային, ընտրախավային մշակույթների գենդերային չափումները և դրանց հարաբերակցությունը առօրեական մշակույթում:

Տղամարդկանց և կանանց դերերի և վարքային մոդելների առանձնահատկությունները կենցաղի, հաղորդակցման, հագուստի, հանգստի ու ժամանակի կազմակերպման, շարժուձևի ու կեցվածքի, խոսելաձևի ու բառապաշարի, զգացմունքների արտահայտման, տնային աշխատ-

տանքի, երեխաների դաստիարակության, պարտականության կատարման, հնազանդության և այլ ոլորտներում: Առօրեական մշակույթի գնահատման չափանիշները, կարծրատիպերը: Տեխնիկան կնոջ և տղամարդու առօրեական կյանքում:

Հասարակական կարծիքը՝ որպես վերահսկաման ինստիտուտ: Հասարակության երկակի չափօրինակները. պահանջկոտությունը կանանց և ներողամտությունը՝ տղամարդկանց նկատմամբ:

Կիրառական մշակութաբանություն

Կիրառական մշակութաբանության առարկան: Գենդերային չափումը կիրառական մշակութաբանության մեջ ընդգրկելու անհրաժեշտությունը և առանձնահատկությունները: Մշակութային հիմնախնդիրների գենդերային բնութագրիչները բացահայտող մեթոդները և տեխնոլոգիաները: Գենդերի կառուցման հիմունքները: Գենդերակազմիկ գործոնների և գործընթացների կառավարման մեթոդները: Գենդերային նախագծերի ստեղծում: Գենդերային նախագծման և խորհրդատվության ձևերն ու մեթոդները:

Հասարակության գենդերային հարաբերությունների ներդաշնակեցմանն ուղղված գիտա-գործնական ծրագրերի պատրաստում և իրականացում: Հասարակության գենդերային շարժընթացի նախագծում և կանոնավորում (ճշտում):

Գենդերային մշակութաբանության հիմնախնդիրները ժամանակակից Հայաստանում: Գենդերային հավասարության կայացմանը խոչընդոտող թաքուն մեխանիզմների հայտնաբերում: Հայաստանում կատարվող գենդերային հետազոտությունների վերլուծություն և արժևորում: Հասարակության տարբեր խավերի նկատմամբ իրականացվելիք գենդերային քաղաքականության սկզբունքների և մեխանիզմների մշակում (նախապատրաստում):

Մշակութաբանության մասնագետի գենդերային գիտելիքների և հմտությունների մակարդակին առաջադրվող պահանջները

Կանանց և տղամարդկանց դերային մոդելների առանձնահատկությունների և սոցիոմշակութային բնույթի, սոցիոշարժընթացի հետ կապված օբյեկտիվ փոփոխման ըմբռնում: Գենդերային հավասարության՝ որպես ժամանակակից մշակույթի արժեքի և ներդաշնակ ժողովրդավարական քաղաքացիական հասարակության կայացման գործոնի ընկալում: Գենդերի և մշակույթի փոխալայնմանավորվածության բացահայտում:

Մշակութաբանը պետք է գիտենա.

- տարբեր ժամանակների ու մշակույթների բնագիտական, կրոնական, սոցիալական, փիլիսոփայական, հոգեբանական տեսությունները տղամարդու և կնոջ տեղի ու դերի մասին,
- գենդերի պատմությունը, ժամանակակից տեսություններն ու պրակտիկաները,
- ֆեմինիզմի և գենդերի ընդհանուր և տարբերիչ գծերը,
- ֆեմինիստական տեսությունների հիմնական ուղղություններն ու դրանց քննադատությունը,
- կանանց շարժման պատճառների սոցիալ-պատմական և մշակութային պայմանավորվածությունը,
- գենդերային խտրականության պատճառներն ու հետևանքները,
- գենդերային սոցիալականացման մատրիցաները տարբեր մշակույթներում,
- հայկական գենդերային մշակույթի և գաղափարախոսության առանձնահատկությունները:

Մշակութաբանը պետք է կարողանա.

- կիրառել ձեռք բերած գիտելիքները կոնկրետ սոցիոմշակութային իրադրության գենդերային վերլուծության համար՝ հնարավոր

հետևանքները կանխատեսելու և կանոնավորելու (ուղղելու) նպատակով,

- բացատրել այս կամ այն հասարակության գենդերային մշակույթի կայացման ու գործառության առանձնահատկությունները, արդիականության գենդերային իրողությունները,
- հանձնարարականներ մշակել սոցիալական տարբեր խմբերի և սոցիալական վերափոխումների այլ մասնակիցների համար գենդերային քաղաքականությունն ու պրակտիկան պլանավորելիս և իրականացնելիս,
- վերլուծել և բացատրել երկրի գենդերային իրականությունը և զարգացման հեռանկարները,
- կատարել օրենքների և կարգավորող որոշումների գենդերային փորձաքննություն՝ տղամարդկանց և կանանց նկատմամբ դրանց կիրառման հետևանքների գենդերային արդարացիության տեսանկյունից,
- հիմնավորել և պաշտպանել սեփական տեսակետը կոնկրետ գենդերային իրադրության վերաբերյալ,
- համապատասխանեցնել սեփական վարքը և ավանդական գենդերային կարծրատիպերը մշակութային կոնկրետ իրադրությանը,
- հասկանալ այս կամ այն սոցիալական երևույթի, անհատների կամ խմբերի արարքների ու վարքի պատճառներն ու հետևանքները, նրանց գենդերային մշակույթի կամ գենդերային հետաքրքրությունների (շահագրգռվածության) տեսանկյունից,
- հաշվի առնել առկա մարդկային ու մշակութային պաշարները, նրանց ներուժն ու սահմանափակումները գենդերի կառուցման ժամանակ,
- ներդնել գենդերային գիտելիքներն ու փորձը գործունեության տարբեր ոլորտներում և կոնկրետ սոցիալական խմբում,
- բացահայտել գենդերի մշակութաստեղծ և մշակութթով պայմանավորված հայեցակետերը,
- հիմնավորել գենդերային կրթության՝ որպես անհատի բազմակող-

մանի զարգացման և հասարակության ներդաշնակեցման գործոնի անհրաժեշտությունը,

- կազմել պրոֆիսիոնալ գործունեությանն առնչվող նորմավորող և իրավական փաստաթղթեր, հանձնարարականներ հիմնախնդրի գենդերային հայեցակետի հաշվառմամբ,
- կողմնորոշվել արդի սոցիոմշակութային իրողություններում, համարժեք արձագանքել և կարողանալ ազդել դրանց վրա:

Մշակութաբանը պետք է ունենա.

- անհատի և հասարակության գենդերային հիմնախնդիրների ուսումնասիրման ժամանակակից մեթոդների և մոտեցումների կիրառման,
- մշակույթի տարբեր ոլորտների գենդերակազմիկ ներուժի և գենդերային կախվածության բացահայտման,
- գենդերային հավասարության ու ներդաշնակության իրականացմանը նպաստող գիտա-գործնական ծրագրերի պատրաստման և իրականացման,
- գենդերային գիտելիքների գործնական կիրառման՝ գենդերային խորհրդատվության, նախագծային գործունեության, գենդերային հիմնախնդիրների բացահայտման ու դասակարգման, գենդերային վերլուծության,
- գենդերակազմիկ գործոնների ու գործընթացների մոդելավորման և կառավարման,
- գենդերային գիտելիքների նկատմամբ պահանջարկի ձևավորման և դրանց բավարարման,
- գիտա-հետազոտական, ուսումնա-դաստիարակչական, լուսավորական գործունեության հմտություններ:

Մասնագետը պետք է տիրապետի.

- գենդերի տերմինաբանական ապարատին և մեթոդաբանությանը և հմտորեն օգտագործի դրանք,
- գենդերային հիմնախնդիրների բացահայտման և ձևակերպման հմտությանը,

- գենդերային վերլուծության և գենդերային փորձաքննության մեթոդներին,
- գենդերային տեսությունների ստեղծման մեթոդներին ու տեխնոլոգիաներին,
- գենդերային բախումների ու գենդերային անհամաչափության վերացման մեթոդներին, հմտություններին, գիտելիքներին,
- տեսական ուսումնասիրությունների արդյունավետությունն ապահովող կիրառական հնարքների համալիրին,
- սոցիալապես նշանակալի երևույթների՝ գենդերային հայեցակետերով կանխատեսման, կարգավորման ու կառավարման տեխնոլոգիաներին:

Մասնագետը պետք է պատրաստ լինի.

- գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ բանավեճերի և երկխոսության,
- մշակութաբանության տարբեր բաժիններում գենդերային բաղադրիչի ներդրման,
- բազմամշակույթ միջավայրում նոր գենդերային տեսություններ ու վարքային մոդելների յուրացման,
- դիմակայման խտրականության ցանկացած դրսևորումներին՝ այդ թվում նաև սեռային հատկանիշով,
- մասնակցության գենդերային թեմաներով միջառարկայական նախագծերին:

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԵՍԱԿԱՆ
ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ
ՊԱՀԱՆՁՆԵՐ**

«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՄԱՐ

Կրթության սոցիալական ինստիտուտը և համապատասխան կրթական ենթամշակույթը սոցիալ-քաղաքական ձևափոխումների ժամանակ հայտնվում են հասարակական հետաքրքրությունների կենտրոնում: Մրընթաց փոխվող արժեքները, գլոբալ գործընթացները և հիմնախնդիրները, բազմամշակույթ քաղաքակրթական իրադրությունը, մշակութային բազմակարծությունն ու անհամասեռությունը ենթադրում են կրթության ու կրթվածության նոր իդեալների ձևավորում, նոր պահանջներ են առաջադրում կրթական տեսությանն ու պրակտիկային: Այս կապակցությամբ, ի պատասխան ժամանակի մարտահրավերների, առաջանում է նոր մանկավարժական հարացույցի մշակման անհրաժեշտություն՝ որպես նոր սոցիալական պատվեր և սոցիալական սպասում: Մանկավարժական տեսության ու պրակտիկայի հարացույցի մշակումն ու ներդրումը ժամանակակից փուլում կարող է իրականացվել կրթության և սոցիալական շարժընթացի փոխադարձ կապի համատեքստում, ինչը ենթադրում է մանկավարժական մտքի ու պրակտիկայի դիտարկում գենդերային տեսանկյունից:

Մանկավարժության պատմությունն, ըստ էության, անհատի նպատակաուղղված սոցիալականացման հասարակական պատվերի տեսական ըմբռնման ու գործնական իրականացման պատմությունն է: Կրթությունն ու դաստիարակությունը միշտ էլ ուղղված են եղել մարդու նախապատրաստմանը լիարժեք հոգևոր, ընտանեկան և հասարակական կյանքին: Տարածվածության աստիճանով և գործ-

նական առումներով առաջին հերթին հենց այս ոլորտներն են բնութագրվում գենդերային հարաբերություններով: Մանկավարժության պատմության վերաբերյալ ընդարձակ գրականության մեջ կրթության և դաստիարակության գենդերային հայեցակետը չի առանձնացվում:

Մանկավարժության ժամանակակից տեսության մեջ ու գործնականում գենդերային բաղադրիչի ներդրման անհրաժեշտության հիմնավորումը պահանջում է մանկավարժության պատմության վերախմաստավորում գենդերային չափման շարժընթացի տեսանկյունից: Դա հնարավորություն կտա բացահայտել «մշակույթ-կրթություն-գենդեր-անհատ» համակարգի տարրերի փոխադարձ կապի ու զարգացման օրինաչափությունները, հասկանալ կրթության պրակտիկայում գենդերի օբյեկտիվ ներառվածությունը, նրա թաքուն ազդեցությունը հասարակության սոցիոմշակութային կյանքի վրա, մանկավարժական գործընթացում գենդերի անտեսման վտանգավորությունը և, հետևաբար, ուսուցման ու դաստիարակության գործընթացի կառավարման տեսության մեջ ու պրակտիկայում նրա գիտակցված ընդգրկման անհրաժեշտությունը: Մանկավարժության պատմության դասավանդումը՝ գենդերային կողմնորոշմամբ, հնարավորություն կտա խուսափել կրթության համակարգում և հասարակության մեջ գենդերային կարծրատիպերի, գենդերային շերտադասության, անհավասարության և անարդարության վերարտադրությունից:

Չափորոշիչը մշակելիս հեղինակներն առաջնորդվել են «Մանկավարժության պատմություն» առարկայի Հայաստանի բուհերում ներկայումս գործող ուսումնական ծրագրերի բովանդակությամբ:

Հեղինակներն անհրաժեշտ են համարում.

- մանկավարժության պատմության մեջ գենդերային գիտելիքներ ինտեգրելիս որոշել ընդհանուր մոտեցումները՝ նախնադարից մինչև մեր օրերը կրթության և դաստիարակության գործընթացում գենդերի առկայության ու շարժընթացի հիմնավորմամբ,

- պարզել սոցիալական շարժընթացի և կրթության, սոցիալական շարժընթացի և գենդերի փոխադարձ կապն ու փոխապայմանավորվածությունը:

Գենդերային բաղադրիչի ինտեգրումն առաջադրված է՝ հաշվի առնելով եվրոպական մանկավարժական տեսության և պրակտիկայի մշակվածությունն ու հարուստ ավանդույթները և գլոբալ կրթական տարածության միասնականացման միտումները:

Հայ մանկավարժական մտքի հնագույն պատմությունը և հարուստ ավանդույթները, տեսությունն ու պրակտիկան նույնպես արժանի են ուշադրության: Սակայն հայ մանկավարժական մտքի պատմության բացերի պատճառով նյութը տեղաբաշխված է անհավասարաչափ: Հայերի կրթության ու դաստիարակության պատմությունը՝ գենդերային նպատակադրման տեսանկյունից, օրգանապես ընդգրկված է մանկավարժության ընդհանուր պատմության համապատասխան բաժիններում:

Ռուսական մանկավարժության պատմության բավական մանրամասն դիտարկումն արդարացված է նախ նրանով, որ այն ինքնին ուշագրավ, յուրօրինակ և ունիկալ փորձ է, և վերջին հարյուրամյակների ընթացքում մեծ նշանակություն և ազդեցություն է ունեցել Հայաստանի կրթական համակարգի ձևավորման և զարգացման գործում:

Չափորոշիչը կարող է հաշվի առնվել և օգտագործվել.

- պետական կրթական հայեցակարգ ու քաղաքականություն մշակելիս և իրականացնելիս,
- ուսումնական պլաններ, ծրագրեր, դասագրքեր ու մեթոդական ձեռնարկներ կազմելիս,
- ուսուցիչների, տարբեր մակարդակների կրթության համակարգի կազմակերպիչների ու ղեկավարների վերապատրաստման, որակավորման բարձրացման, ատեստավորման ժամանակ,
- կրթության կազմակերպման ու կառավարման ոլորտի պաշտոններում պետական ծառայողներ ընտրելիս:

Պետական չափորոշիչն ուղղված է.

- մանկավարժական տեսության, մեթոդաբանության ու պրակտիկայի գենդերային վերաիմաստավորմանը,
- մասնագետ – մանկավարժների և կրթության կազմակերպիչների գենդերային զգայնության բարձրացմանը,
- «Մանկավարժության պատմություն» առարկայի դասավանդման կատարելագործմանը,
- մասնագետ – մանկավարժների գենդերային մշակույթի ձևավորմանը և քաղաքացիական ակտիվության բարձրացմանը:

Չափորոշիչի նպատակները.

- մանկավարժական տեսության և պրակտիկայի զարգացման պատմության վերաիմաստավորում՝ գենդերային հավասարության և ներդաշնակության տեսանկյունից,
- մանկավարժության տեսության մեջ և պրակտիկայում գենդերային բաղադրիչի ընդգրկման մակարդակի, ծավալի ու գործառության նշանակության սահմանում,
- «մանկավարժության պատմություն» մեջ գենդերային չափման ներառում կրթության և դաստիարակության՝ սոցիոդինամիկայի և սոցիալական պատվերի հետ կապված գենդերային առանձնահատկությունները բացահայտելու նպատակով,
- կրթության և դաստիարակության՝ գենդերային խտրականությունը հաղթահարելու օբյեկտիվ – պատմական միտման բացահայտում,
- գենդերային հավասարության՝ որպես մանկավարժության տեսության և պրակտիկայի պատմական զարգացման օբյեկտիվ օրինաչափության ներկայացում:

Չափորոշիչի խնդիրները.

- բացահայտել կրթության գենդերային ներուժը պատմական զարգացման տարբեր փուլերում,
- մասնագետներին պատկերացում տալ կրթության տեսության մեջ և պրակտիկայում գենդերային բաղադրիչի ներառման մակարդակի,

ծավալի և հասարակության պահանջների, տիրապետող գաղափարախոսության ու պետական քաղաքականության փոխադարձ կապի մասին,

- ձևավորել պատմական զարգացման տվյալ փուլում գենդերային իրողությունների, հասարակության գենդերային սպասումների և մանկավարժական գործունեության գենդերային արդյունքների համարժեք գնահատման հմտություններ և կարողություններ,
- ցույց տալ կրթության տեսության, պրակտիկայի և գենդերի պատմական փոխադարձաբանությունը,
- հիմնավորել գենդերի նշանակությունն ընդհանուր մանկավարժական համատեքստում և նրա ազդեցությունը կրթության վերջնական նպատակի վրա տարբեր պատմական ժամանակահատվածներում, սեռային չափանիշով խտրականության բոլոր դրսևորումները մանկավարժության տեսության ու պրակտիկայի մեջ բացառելու անհրաժեշտությունը,
- մանկավարժական տեսություններ, կանոններ ու մեթոդներ ընտրելիս ապահովել գենդերային արդարություն և ներդաշնակություն,
- գենդերի մանկավարժական կառուցում և մանկավարժության գենդերային վերակառուցում,
- օգնել կրթության կազմակերպիչներին և կառավարողներին գենդերային բաղադրիչ պարունակող մանկավարժական հարացույց մշակելիս և ներդնելիս,
- որոշել գենդերային կրթության բովանդակությունն ու տեղը կյանքի մշակութային ունիվերսումում, մարդու ըմբռնումը և կրթության իդեալը, ժամանակակից աշխարհում մանկավարժական գիտության իմաստն ու առանձնահատկությունները,
- պատրաստել ժամանակակից հասարակության ու կրթության պահանջներին համապատասխան գենդերայնորեն զգայուն մասնագետ մանկավարժներ, մանկավարժական գործընթացի կազմակերպիչներ ու կառավարողներ:

Չափորոշիչի բովանդակությունը

I. Ներածություն

Կրթության և դաստիարակության պատմության գենդերային ըմբռնումը: Հասարակության աշխարհայացքային դրույթները, արժեքները, մենթալիտետը, կենսաձևը, ավանդույթները՝ որպես կրթության ու դաստիարակության մեջ գենդերային մոտեցումների տեսական ու գործնական հիմքեր: Կանացի և տղամարդկային էությունների դրսևորումը տարբեր ժողովուրդների և դարաշրջանների աշխարհայացքում ու արժեքներում, դրանց վերարտադրությունը կրթական համակարգի միջոցով:

Կրթությունը և դաստիարակությունը որպես հասարակության գենդերային իդեալների, հարաբերությունների և դերերի վերարտադրության, պահպանման ու փոփոխման նախադրյալ և հետևանք: Ազգային և համամարդկային, ավանդականի և նորի փոխհարաբերությունների շարժընթացը մանկավարժության պատմության մեջ:

Մանկավարժության տեսության ու պրակտիկայի գենդերային խնդիրների ու դրդապատճառների փոփոխությունները՝ կապված սոցիալական շարժընթացի հետ:

Հայ մանկավարժության գենդերային ըմբռնում: Գենդերային կրթության ու դաստիարակության առանձնահատկությունները Արևելյան ու Արևմտյան Հայաստանում և հայկական սփյուռքում:

Գենդերային կրթության ժամանակակից վիճակը և հեռանկարները: Գենդերային կրթությունը՝ որպես մանկավարժական պրակտիկայի որակապես նոր ձև: Ժամանակակից մանկավարժական տեսություններում և պրակտիկայում գենդերի ընդգրկումը՝ որպես հասարակության արդիական սոցիալական պատվեր:

Հասարակության մեջ նոր, ներդաշնակ գենդերային հարաբերությունների կառուցմանը, հաստատմանը և գործառույթին ուղղված նորարարական տեսական դասընթացների ու մեթոդների անհրաժեշտությունը:

II. Դաստիարակությունը նախնադարյան հասարակությունում

Նախնադարյան ասքը և ծեսը որպես գենդերային դաստիարակության դպրոցներ: «Ես-գիտակցության» հոգեկանի անհատական-շարժառիթային ոլորտների գենդերային նույնացման առանձնահատկությունների ձևավորման սկիզբնավորումը:

Տղաների և աղջիկների սեռադերային դաստիարակության ձևերի, նպատակների ու խնդիրների սոցիալ-պատմական պայմանավորվածությունը: Տղաների և աղջիկների նվիրագործումը՝ որպես ընտանիքում և հասարակության մեջ խիստ որոշակի գենդերային դերերի կատարման պատրաստականության քննություն: Ասքը, տոտեմիզմը, անիմիզմը՝ որպես նախնադարյան կրթության և դաստիարակության տեսական-իմացաբանական հիմքեր:

Կնոջ դերը համայնքի երեխաների դաստիարակության գործում:

III. Դպրոցը և դաստիարակությունը Հին Արևելքում

Արևելյան հասարակությունների գենդերային կարծրատիպերը և պետական կրթական քաղաքականության առանձնահատկությունները: Սեռային հատկանիշով խտրականությունը Եգիպտոսի, Պարսկաստանի, Հնդկաստանի և Չինաստանի կրթադաստիարակչական համակարգերում: Աղջիկների՝ որպես հասարակության պակաս կարևոր անդամների կրթությունը՝ ընտանիքի մասնավոր գործ:

Կինը հինարևելյան մշակույթներում:

Կրոնա-պաշտամունքային պատկերացումները՝ որպես գենդերային դաստիարակության գործոն:

Առաջին տեսական ընդհանրացումները և դաստիարակության համակարգի ստեղծումը Կոնֆուցիուսի կողմից: Չինական կրթության և դաստիարակության գենդերային առանձնահատկությունները:

IV. Դպրոցը և դաստիարակությունը հին աշխարհում

Երկրի բնակլիմայական պայմանները և պատմական ճակատագիրը՝ որպես կրթության ու դաստիարակության հայեցակարգի ձևավորման գործոններ: Պետական շահերի, քաղաքականության, գաղափար-

րախոսության և կրթության հայեցակարգի փոխադարձ կապը: Մարդ-քաղաքացու դաստիարակումը՝ պոլիսային մշակույթի նպատակ:

Սպարտայում արիության ու տղամարդկային արժեքների սերմանումը երկու սեռերի մեջ՝ որպես կրթական գործընթացի նպատակ:

Աթենքի ժողովրդավարական-մարդասիրական կրթահամակարգի գենդերային առանձնահատկությունները: Հին իմաստասերներ Սոկրատեսի, Գենոկրիտի, Պլատոնի, Արիստոտելի հայացքները տղամարդկանց ու կանանց կրթության և դաստիարակության մասին: Կնոջ օտարումը հունական պոլիսների հասարակական-քաղաքական հարաբերություններից և կրթության պետական համակարգից:

Հին աշխարհի մշակույթը՝ դիցաբանությունը, թատրոնը, ժողովրդական խաղերը, արվեստը, ճարտարապետությունը՝ որպես անհատի գենդերային դաստիարակության միջոց և միջավայր: Գենդերային կարծրատիպերի և գենդերային հարաբերությունների դաստիարակումն ու վերարտադրությունը կրթության միջոցով:

Կրթության գենդերային առանձնահատկությունները հունական դպրոցների տարբեր տեսակներում. ակադեմիա, լիկեյ, կինոսարգ: Հունական մանկավարժության մեջ սոփեստների ներդրման գենդերային տեսակետը:

Կրթության գենդերային չափումը՝ որպես հռոմեական կայսրության գենդերային համակարգի արտացոլում:

V. Գենդերային դաստիարակությունը և կրթությունը Հին Հայաստանում

Կանանց և տղամարդկանց դաստիարակումը դիցաբանությամբ, ավանդույթով, թատրոնով. «հանդիսական ուսմունքը»: Կազմակերպված պետական կրթության և դաստիարակության խտրական բնույթը՝ դասային և սեռային չափանիշներով: Աղջիկների դաստիարակությունը և կրթությունը՝ որպես ընտանիքի մասնավոր գործ:

Գենդերային կրթության և դաստիարակության հունա-հռոմեական հայեցակարգերի ու պրակտիկայի ազդեցությունը հայերի մանկավարժական պրակտիկայի վրա:

Առաջին ժողովրդական դպրոցների երևան գալը տղաների համար IV դարում, նրանց գենդերային դերերի սահմանափակությունը և որոշակիությունը:

VI. Դաստիարակությունը և կրթությունը արևմտավրոպական երկրներում (V-XVII դդ.)

Արևմտավրոպական և բյուզանդական կրթական համակարգերի աշխարհայացքային հիմքերի գենդերային բնութագրերը: Հին աշխարհի կրթական համակարգերի փլուզման գենդերային հետևանքները: Կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների դերը գենդերային կրթության և դաստիարակության մեջ:

Ուսուցման և դաստիարակության տիպերը

Գենդերային կարծրատիպերի արմատավորումը կրոնական դաստիարակության համակարգի միջոցով ծխական, եկեղեցական, վանական դպրոցներում: Աշխարհիկ կրթության միասնական համակարգի բացակայությունը:

Եկեղեցական կրթությունից կնոջ բացարձակ օտարումը: Աղջիկների կրթությունն ու դաստիարակությունն ընտանիքում՝ որպես ընտանեկան կյանք ու տնտեսություն վարելու նախապատրաստում:

VII. Կրթությունն և դաստիարակությունը Հայաստանում V-XVII դդ.

Կրթության աշխարհիկ բնույթը IV-V դդ. Հայաստանի ժողովրդական դպրոցներում: Տղաների կրթությունն ու դաստիարակությունը որպես նպատակաուղղված նախապատրաստում հայրենանպաստ գործունեության: Տղամարդկային արժեքների դաստիարակումը՝ կրթության նպատակ:

Հայերի մոտ կրթության կրոնականացումը V դարում: Վանական, ծխական, եկեղեցական դպրոցները: Ջանգվածային խաղերի, թատրոնի, աշխարհիկ-բարոյական առակների, լեգենդների, ասքերի և այլնի արտամղումը եկեղեցական կրթության համակարգից: Դաստիարակության գենդերային տեսակետները կանանց և տղամարդկանց միաբանություններում:

Մասնավոր և տնային դպրոցների առաջացումը: Աղջիկների կրթու-

թյունը տնային պայմաններում: Հայ կանայք կրթության և դաստիարակության կազմակերպման գործում: Սահակադուխտ Սյունեցու, Շուշան Պահլավունու և այլոց գործունեությունը: Տղամարդու կրթություն - դաստիարակությունը ընտանիքում և դպրոցում՝ ըստ տարիքային շրջաբաժանման: Տնային աշխատանքը, ծեսերը, ավանդույթները՝ որպես գյուղացիների աղջիկների գենդերային իդեալների, հմտությունների ու փոխհարաբերությունների դաստիարակման մեխանիզմ:

Աղջիկների ուսուցումը Բագրատունիների արքայատոհմի կառավարման շրջանում: Գրիգոր Պահլավունու կրթական հայացքների գենդերային բովանդակությունը:

Կրթության և դաստիարակության գենդերային բաղադրիչի արտացոլումը «Մասունցի Դավիթ» էպոսում:

Գենդերային կրթության և դաստիարակության յուրահատկությունը Կիլիկյան Հայաստանում:

Կրթության և դաստիարակության գենդերային չափման շարժրեքացը միջնադարյան Հայաստանում:

VIII. Կրթության զարգացման սկիզբը Ռուսաստանում

Գենդերային կրթության ու դաստիարակության սոցիոմշակութային նախադրյալները Ռուսաստանում՝ մանկավարժական տեսության և պրակտիկայի զարգացման տարբեր ժամանակաշրջաններում:

Կրոնա-եկեղեցական կրթություն – X-XVIII դդ.

Պետական կրթություն – XVIII դ. երկրորդ կես – XIX դ.

Հասարակական կրթություն – XIX դ. երկրորդ կեսից – 1918թ.

Կրոնա-եկեղեցական մանկավարժություն

Կրթության ու դաստիարակության եկեղեցական բնույթը Ռուսիայում X-XIIIդդ: Մանկավարժության տեսությունը՝ որպես հին ռուսական հայրիշխանական հարաբերությունների հիմնավորում:

Կին-մարդու, կին-ամուսնու, դստեր մասին հիմնկտակարանային գաղափարների արտացոլումը «Մեղու», «Ոսկեշորք», «Измарага», «Հայսմավորք», «Домострой» հնագույն ժողովածուներում:

Կնոջ վտարումը եկեղեցական կրթության ու դաստիարակության համակարգից: Գենդերային խրատները տղաներին և կնոջ դերի գնահատականը Վլադիմիր Մոնամախի «Խրատներում»: «Мастера грамоты» դպրոցները, առաջին ուսումնարանները, եղբայրական դպրոցները, ակադեմիաները՝ տղամարդկանց եկեղեցական ուսումնական հաստատությունների տեսակներ:

IX. Դպրոցը և մանկավարժական միտքը Վերածննդի դարաշրջանում

Եվրոպական երկրների մշակութային գաղափարախոսության փոփոխությունը և դպրոցի ու կրթության հայեցակարգի վերաիմաստավորումը՝ որպես Վերածննդի դարաշրջանի գենդերային մարդասիրական արժեքներ: **Թոմաս Մորի** գաղափարները դպրոցական կրթության պետական համակարգում տղաների ու աղջիկների ուսուցման և բարոյական դաստիարակության մասին: **Ֆրանսուա Ռարլեն** ֆիզիկապես ուժեղ, կրթված ու լավ դաստիարակված պատանուն կյանքին նախապատրաստելու՝ որպես հումանիստական կրթության նպատակի, մասին: **Էրազմ Ռոտերդամցու**՝ մարդկանց բնական հավասարության և դաստիարակության գործընթացում յուրաքանչյուրի բնական ընդունակությունների և ակտիվության զարգացման նպատակով անհատական մոտեցման նշանակության մասին գաղափարների գենդերային բովանդակությունը: Համընդհանուր հավասարության և հումանիտար կրթության գաղափարները **Թոմազո Կամպանելլայի** հայացքներում:

Կանանց կրթության բնույթը և առանձնահատկությունները: Տղաների և աղջիկների համատեղ ուսուցմամբ առաջին դպրոցների երևան գալը: Կրթության համակարգում գենդերային դերերի շարունակվող տարանջատում:

Խզումը հումանիստների առաջադիմական գաղափարների, տեսությունների և եվրոպական երկրների փաստական մանկավարժական պրակտիկայի միջև:

Հայաստանի կրթական համակարգը XIV – XVI դդ.

Գլխավորի և Տաթևի Համալսարանները: Եսայի Նչեցու, Հովհաննես Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու՝ անհատի, ազատության, ճանաչողության ու կրթության վերաբերյալ հայացքների գենդերային բաղադրիչը: Միջնադարյան Հայաստանի միջնակարգ և բարձրագույն կրթության տղամարդկային բնույթը:

Հայաստանի կրթության և դաստիարակության համակարգի վրա XIV-XVI դդ. աշխարհաքաղաքական իրադրության ազդեցության գենդերային հայեցակետերը:

X. Մանկավարժությունը և կրթությունը նոր ժամանակներում

Յան Ամոս Կոմենսկու դաստիարակության տեսության մարդասիրության և ժողովրդավարության գենդերային ըմբռնումը: Կոմենսկու մանկավարժության համակարգում տարիքային դասակարգման և բնական համապատասխանության սկզբունքների գենդերային վերլուծությունը: Մոր դերը նախադպրոցական երեխաների դաստիարակության գործում: Տարրական դպրոցում տղաների ու աղջիկների համատեղ ուսուցման և համընդհանուր կրթության մասին Կոմենսկու հայացքների գենդերային տեսակետը: Ժողովրդավարության, մարդասիրության, ժողովրդայնության սկզբունքները՝ Կոմենսկու մանկավարժական տեսության կարևորագույն տարրեր:

Դաստիարակության նպատակների ու խնդիրների գենդերային ասիմետրիան **Ջոն Լոկկի** մանկավարժական տեսության մեջ: Բարեկիրք ջենտլմեն - բուրժուայի դաստիարակումը՝ որպես Լոկկի կրթական տեսության նպատակ:

Կանացի արժեքների և կանանց հասարակայնորեն նշանակալի դերերի վտարվածությունը կրթության և դաստիարակության համակարգից:

Լուսավորությունը՝ որպես նոր գաղափարական հոսանք

Կրթության և դաստիարակության ոլորտում գենդերային անհամա-

չափության պահպանումը *Ժան-ժակ Ռուտյի* ժամանակներում: Կանանց դերը Ռուտյի հայացքների կայացման գործում: Բնական հավասարության և բնական դաստիարակության գաղափարների գենդերային էությունը: Մարդ-տղամարդու ձևավորումը՝ դաստիարակության նպատակ: Կնոջ կոչումը և կնոջ դաստիարակության յուրահատկությունը Ռուտյի համակարգում. կնոջ դաստիարակումը տղամարդու համար:

Կրթության և դաստիարակության միջոցով տղամարդկային արժեքների վերարտադրության եվրոպական ավանդույթի շարունակումը Իոհան Հենրիխ Պեստալոցցիի մանկավարժության տեսության մեջ: Պեստալոցցիի դաստիարակության բնական նպատակահարմարության և զարգացնող ուսուցման գաղափարների գենդերային հայեցակետերը:

Հայ դպրոցը և մանկավարժությունը Լուսավորության դարաշրջանում

Կրթության ժողովրդականացման գաղափարները և նոր գենդերային մոտեցումները Լուսավորության դարաշրջանի հայ մտածողների կրթա-դաստիարակչական ծրագրերում. *Մադրասի խումբը, Հովսեփ Էմին, Մովսես Բաղրամյան* և այլք:

Հայ պատանիների կրթությունն ու դաստիարակությունը՝ նրանց հասարակական-քաղաքական գործունեության պատրաստելու նպատակով: Տղաների արտասահմանում կրթվելու գենդերային հետևանքները:

Կանանց աստիճանական ներգրավումը դաստիարակության գործընթացում և կանանց կրթության ակտիվացումը: Կանայք մասնավոր և ընտանեկան դպրոցներում: Իգական դպրոցների երևան գալը: Կանանց կրթության բովանդակությունը և նպատակները: Բարեգործական կազմակերպությունների դերը Անդրկովկասում հայ աղջիկների կրթության ու դաստիարակության կազմակերպման գործում: Օրիորդաց դպրոցների, պանսիոնների և ուսումնարանների բացումը Թիֆլիսում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Շուշիում, Ախալցխայում: Իգական արհեստագործական ուսումնարանների բացումը՝ որպես կանանց սո-

ցիալական նշանակության վերանայման և հասարակական կյանք մտնելու վկայություն:

Եկեղեցական և աշխարհիկ լուսավորության առանձնահատկությունները Հայաստանում: **Մեսրոպ Թադիսայան** ընտանիքում երեխաների դաստիարակության գործում մոր դերի, ընտանիքում և հասարակական կյանքում կանանց կրթության նշանակության մասին: Աղջիկների դպրոցական կրթության անհրաժեշտության և հնարավորությունների մասին հարցադրումը Թադիսայանի աշխատություններում: Գիտական և ստեղծագործական գործունեության բնագավառում կանանց մասնակցության ազգային առանձնահատկությունները:

Կրթության ժողովրդավարացման գենդերային տեսակետը **Խաչատուր Աբովյանի** մանկավարժական համակարգում: Ընտանիքը՝ գենդերային դաստիարակության կարևոր գործոն: Գենդերային նույնականացումը ընտանիքում. հոր և մոր՝ որպես դաստիարակների, դերը: Աբովյանի հայացքները երկու սեռերի երեխաների հավասարության և նրանց բարոյական, ֆիզիկական, մտավոր դաստիարակության մասին:

Միքայել Նալբանդյանը տղաների և աղջիկների համատեղ և հավասար ուսուցման՝ որպես ժողովրդին կրթելու համար ազգային դպրոցի ստեղծման միակ ուղու մասին: Գիտության մեջ և արվեստում կանանց ու տղամարդկանց հնարավորությունների վերաբերյալ Նալբանդյանի հայացքների գենդերային հավասարակշռված բնույթը: Նալբանդյանը կանանց կրթության՝ որպես կանանց անհատականության ձևավորման և զարգացման անհրաժեշտ պայմանի մասին: Անհատի գենդերային սոցիալականացումը՝ մանկավարժական հիմնախնդիր:

Աշխարհիկ պետական դպրոցի զարգացման սկիզբը Ռուսաստանում XVIII դ.

Ռուսաստանի սոցիալ-քաղաքական զարգացման միտումները և դրանց արտացոլումը պետական կրթական քաղաքականության մեջ: Դասային և սեռային խտրականությունը կրթության և դաստիարակության համակարգում՝ Մոսկվայի և Պետերբուրգի առաջին պետական

դպրոցներում: Աղջիկների և գյուղացիների գենդերային հավակնությունների սահմանափակությունը սոցիալական կյանքում: Կրթությունը և մասնագիտացումը՝ որպես գենդերային դերերի և վարքի նպատակաուղղված կառուցում:

Գիտությունների ակադեմիան, գիմնագիաները և համալսարանները

Ազնվական պատանիների կրթության հարկադրական բնույթը, նրանց գենդերային դերերի խիստ որոշակիությունը՝ պետության կարիքներին համապատասխան: Ազնվագարմ կանանց ուսուցումը մուսկոլյան համալսարաններում XVIII դ. 80-ական թթ.՝ որպես սոցիալպատմական անհրաժեշտություն: Օտարերկրյա մասնավոր գիշերօթիկների (պանսիոնների) բացումը 1784թ.: Աշակերտների թվի ավելացումը պանսիոններում և կանանց գիտելիքների ծավալի ու բովանդակության սահմանափակումները: Կրթական համակարգում գենդերային հարաբերությունների ներդաշնակեցման գաղափարների ու ծրագրերի իրականացման դժվարությունները:

Տեսական մանկավարժությունը և կրթության հայտնի գործիչները Ռուսաստանում

Ընտանեկան, եկեղեցական և այլ պարտականությունների մասին քրիստոնեա-բարոյական խրատները ***Իվան Տիխոնի Պոսոշկովի*** «Հայրական խրատներ որդուս» երկում՝ որպես պետական կրթության համակարգում ավանդական արժեքների և լուսավորության գաղափարների համատեղման փորձ:

Վասիլ Նիկոլայի Տասիշչևի աշխարհիկ մանկավարժությունը: Ծորտ գյուղացիների տղաներին և աղջիկներին կրթելու անհրաժեշտության հիմնավորումը և առանձնահատկությունները:

Յա. Ա. Կոմենսկու և ***Ջ. Լոկկի*** մանկավարժական գաղափարների տարածումը ***Մ. Վ. Լոմոնոսովի*** կողմից: Հասարակ ժողովրդի տղա զավակներին լավ կրթություն տալու, գիտությունների նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու ձգտման արմատավորումը: Տղաների գենդերային վարքի և գենդերային դերի ընտրության ազատությունը:

Ազնվագարն օրիորդաց Սնուլիի դաստիարակչական ընկերության հիմնումը **Իվան Իվանովիչ Բեցկոյի** կողմից: Կրթության և դաստիարակության դասային սկզբունքի հաղթահարման անհրաժեշտության հիմնավորումը և տղամարդկանց ու կանանց կրթության հնարավորությունների ընդլայնումը: Տարբեր խավերի տղաների և աղջիկների համար պետական կրթական հաստատությունների ստեղծման անհրաժեշտության գաղափարը Բեցկոյի աշխատություններում: Ընտանիքը և ընտանեկան պարտավորությունները՝ որպես կնոջ կյանքի իմաստ: Կանանց և տղամարդկանց գիտելիքների բովանդակության, մակարդակի և գործունեության ոլորտների որոշակիությունը:

Երեխաների դաստիարակությունն ազնվական ընտանիքներում

Ազնվական ընտանիքներում գենդերային մոտեցումների առանձնահատկությունները երեխաների դաստիարակության գործում: Տղամարդկանց գենդերային սոցիալականացումը պետական կրթադաստիարակչական հաստատություններում: Ջինվորական ուսումնարանների կին, տղամարդ և զինվորական դաստիարակների դերային գործառույթները՝ ըստ Բեցկոյի:

Ազնվական կանանց դաստիարակության քրիստոնեաբարոյական բովանդակությունը: Աղջիկների մանկավարժական ընդունակությունների զարգացումը՝ որպես հասարակական պատվեր կրթությանը:

Թագավորող անձանց՝ Ելիզավետա Պետրովնայի և Եկատերինա Մեծի դերը պետական կրթության ու դաստիարակության կազմակերպման գործում:

Ազնվագարն օրիորդաց ընկերության սանուհիների դերը ռուսական հասարակության լուսավորության գործում: Ազնվագարն օրիորդաց դաստիարակության ընկերությունը՝ որպես Ռուսաստանի այլ գերատեսչությունների իզական կրթական հաստատությունների սկզբնավորում:

Հասարակ ժողովրդի կրթությունը և ժողովրդական դպրոցը

Երեխաների նախապատրաստումը ընտանեկան պարտականու-

թյունների կատարմանն ընտանիքում կրոնա-բարոյական դաստիարակության միջոցով: Տնային աշխատանքի սեռատարիքային բաժանումը՝ անհատի գենդերային սոցիալականացման միջոց:

Ռուսաստանում պետական հանրակրթական դպրոցների ցանց ստեղծելու փորձերը Պետրոս Մեծի կառավարության կողմից: Գյուղացիների երեխաների օտարվածությունը պետական կրթական համակարգից:

Հակասությունը կրթության ոլորտում դասային քաղաքականության և պետության պահանջմունքների միջև: Կրթություն ստացած գյուղացի տղամարդկանց գենդերային պատկերացումների և գենդերային դերերի փոփոխությունը:

Ռուսաստանի կրթական համակարգը XIX դ.

Կրթության կազմակերպման գործում դասային սկզբունքների մեղմացումը: Տղաների և աղջիկների կրթության սկզբնավորումը ծխական և գավառական դպրոցներում:

Տղամարդկանց գենդերային դերերի կառուցումը դասական և ռեալական գիմնազիաներում, գավառական դպրոցներում:

Կրթության և դաստիարակության պետական քաղաքականության փոփոխությունը ճորտատիրական իրավունքի վերացումից հետո: **Ն. Ի. Պիրոգովի, Կ. Գ. Ուշինսկու, Լ. Ն. Տոլստոյի** մանկավարժական հայացքները: Ուշինսկու մանկավարժական մարդաբանության գենդերային չափումները, նրա գործունեությունը և բարեփոխումները կանանց կրթության ոլորտում: Ազնվագարմ օրիորդաց Սմոլնիի ինստիտուտը:

Տոլստոյի մանկավարժական գաղափարներն ու գործունեությունը ժողովրդական կրթության ոլորտում: Գյուղացի տղաների ու աղջիկների համատեղ ուսուցման պրակտիկան: Տոլստոյի մանկավարժական գաղափարների գենդերային հայեցակետերը:

Ջարգացնող կրթության գաղափարի ձևավորումը Ուշինսկու, Ռաչինսկու, Տոլստոյի կողմից, նրա գենդերային ներուժը:

Ռաչինսկին իգական դպրոցների, համատեղ ուսուցման, հասարակության մեջ կրթված կնոջ տեղի և դերի մասին:

Իգական և արական, կառավարական, մասնավոր, օտարերկրյա դավանանքների եկեղեցիներին կից կրթական հաստատությունները XIX դ. վերջում: Տղամարդկանց նպատակաուղղված գենդերային սոցիալականացումը փակ տիպի ուսումնադաստիարակչական հաստատություններում: Սաների կյանքի չափից ավելի նորմավորումը և կամքի ճնշումը՝ որպես նրանց գենդերային ընտրության սահմանափակում: Համալսարաններում կանանց ուսուցման արգելքը:

Տղաների և աղջիկների համատեղ ուսուցումը մասնավոր դպրոցներում:

Մանկավարժական տեսությունները և նրանց իրականացումը կրթության և դաստիարակության պրակտիկայում

Կանանց կրթության սահմանափակությունը: Իգական կրթության ընտանեկան-բարոյական բնույթը: Գեղջկուհիների մեկուսացումը կրթական համակարգից: Իգական պանսիոնների, փակ տիպի ինստիտուտների ու դպրոցների ցանցի ընդլայնումը: Իգական կրթության հիմնական ուղղությունները. դասային կրթա-դաստիարակչական հաստատությունները, վճարովի գիմնազիաները, վճարովի կրթությունը: Փակ տիպի իգական ինստիտուտների երևան գալը: «Կայսրուհի Մարիայի հաստատությունների գերատեսչությունը»:

Արքունի իգական ինստիտուտները: «Կրթության ոլորտում կանանց հայրենասիրական միության» գործունեությունը քաղաքացիների աղջիկների և սպանների որբերի դաստիարակության գործում:

Ժողովրդական լուսավորության նախարարության իգական գիմնազիաները: Կրթության ոլորտում խտրականության դրսևորումը կանանց նկատմամբ՝ սեռային և դասային պատկանելության, գիտելիքների որակի, քանակի, բովանդակության և մասնագիտական գործունեության իրավունքի չափանիշներով:

Կանանց պայքարը բարձրագույն կրթություն ստանալու համար XIX դ. երկրորդ կեսին: Համալսարանական քաղաքներում կանանց բարձրագույն կուրսերի բացումը: Կանանց բարձրագույն կրթության կազմակերպման դժվարությունները: Կանանց մասնագիտական գործունեության ոլորտների սահմանափակությունը: Կանանց պետական ծառայության արգելքը:

Մ. Ս. Լոխվիցկայայի, Վ. Ա. Պոլտորոցկայայի, Ա. Վ. Ժիկովինայի, Ս. Լիսիցյանի գործունեությունը կանանց կրթության կազմակերպման ուղղությամբ: Կանանց կրթության դուրս գալը մանկավարժական և բժշկական մասնագիտությունների շրջանակներից և մասնագետների պատրաստումը արդյունաբերական ձեռնարկությունների համար:

Կանանց կրթությունն արտասահմանում: Իգական կրթության մասնավոր և հասարակական բնույթը: Համալսարան ընդունվելիս աղջիկներից ուստիկանության տեղեկանքի և ծնողների թույլտվության պահանջը՝ որպես սեռային խտրականություն, կանանց ինքնուրույնության սահմանափակում: Ոչ պետական բարձրագույն դպրոցը՝ որպես պաշտոնական քաղաքականությամբ կանանց նկատմամբ դրսևորված խտրականության արձագանք: Իգական ոչ պետական բարձրագույն դպրոցի՝ պետական հաստատություններին հավասար իրավական կարգավիճակի ձեռքբերումը:

Ի. Մ. Սեչենովի, Յ. Ա. Տիմիրյազևի, Մ. Ն. Պոկրովսկու, Վ. Ի. Վերնանդսկու, Ս. Ա. Չապլիզինի և այլոց մասնակցությունը կանանց կրթության կազմակերպման գործին: Կանանց բարձրագույն կրթության պետական կարգավիճակ ստանալը:

Կանանց ծառայողական ցուցակի և նրանց ինքնաիրացման հնարավորությունների ընդլայնումը: Կրթությունը, ազատությունը և անկախությունը որպես գենդերային վարքի փոփոխության խթաններ:

Մանկավարժական կադրերի պահանջարկի աճը՝ կապված ժողովրդական կրթության ընդլայնման հետ: Իգական ուսումնարանների, դասընթացների և ինստիտուտների դերը մանկավարժական կադրերի պատրաստման գործում:

Ն. Ե. Վվեդենսկու, Պ. Ֆ. Լեսգաֆտի, Վ. Մ. Բեխտերևի, Ն. Օ. Լոսս-

կու և այլոց գործունեությունը իզական կրթական հաստատություններում:

Երկու սեռերի ուսուցման համար հատուկ մանկավարժական դասընթացների առաջացումը:

Կին ունկնդիրների խմբակների կազմավորումը կոնկրետ մանկավարժական խնդիրների լուծման նպատակով: Նախարարության ուսուցչական ճեմարանների արական բնույթը, ունկնդիրների դասային-կրոնական կազմը:

Դպրոցը և մանկավարժությունը XIX դ. վերջում (բարենորոգչական մանկավարժություն)

Տարրական կրթության համակարգի գեղեցիկ հաշվեկշիռի օրենսդրական կարգավորումն արևմտյան երկրներում: Կրթության համակարգի և բովանդակության վերանայումը հասարակության սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական պահանջմունքների փոփոխության հետևանքով: Գեղեցիկ կարծրատիպերի փոփոխությունը: Պետական կրթա-դաստիարակչական հաստատություններում կանանց կրթության մատչելիության ազատականացումը: Կանանց բարձրագույն կրթության տարածումը: Կնոջ կոչման մասին պատկերացումների փոփոխությունը:

Տնտեսական և հասարակական-քաղաքական փոփոխություններին համապատասխանող դպրոցի և կրթության նոր մոդելների որոնումները:

Ուսումնական գործընթացում աշակերտների ինքնագործունեության, նախաձեռնության, ստեղծագործության խրախուսման, հասարակության բոլոր խավերի կրթության իրավունքի մասին Կոմենսկու, Ռուսոյի, Պետտալոցցիի գաղափարների արդիականացումը: Անվճար պետական դպրոցների ցանցի ընդլայնումը:

Բարենորոգչական մանկավարժական գաղափարների իրականացման գեղեցիկ հետևանքները. աշխատանքային դպրոցը, գործու-

նեության մանկավարժությունը, անհատականացումը, սոցիալական, բուժական, բարոյական, սեքսուալ և այլ մանկավարժությունները:

Մխրլաստիկայի, ձևականության, դրզմատիզմի և աշակերտի անհատականության, նախաձեռնության, ձեռներեցության ճնշման քննադատությունը բարենորոգչական (ռեֆորմատորական) մանկավարժության կողմից:

Գեորգ Կերշենշտեյների «Քաղաքացիական դաստիարակության» և «աշխատանքային դպրոց» հաստատությունների գենդերային ուղղվածությունը: Տղաների և աղջիկների առանձին ուսուցումն ու դաստիարակությունը՝ որպես գենդերային խտրականության ձևավորման նախադրյալ:

Ջոն Գյուիի մանկավարժական սկզբունքների՝ օգտապաշտության, անհատական գործունեության, իմպուլսիվության և բնագրականության (ինստինկտիվության) գենդերաստեղծ ներուժը: Հանգամանքների անհատի կանխամտածված և նպատակահարմար ընտելացման սկզբունքները Էդուարդ լի Թորնդայքի «Էքսպերիմենտալ մանկավարժության» և Վիլիելմ Ավգուստ Լայի «Գործողության մանկավարժության» մեջ և նրանց գենդերային ընթերցումը անհատի պահանջվածության տեսանկյունից:

Կրթության տարածումը և կանանց ու տղամարդկանց սեռադերային մոդելների բազմազանության սկզբնավորումը:

Կրթության և դաստիարակության գենդերային առանձնահատկությունները Արևմտյան և Արևելյան Հայաստաններում: Աշխարհիկ և եկեղեցական կրթության տարբերությունները գենդերային տեսանկյունից:

XI. Կրթությունը XX դարում

Սոցիալ-տնտեսական զարգացման միտումների ազդեցությունը մանկավարժական մտքի և կրթության պրակտիկայի վրա XX դ. սկզբում: Նոր կրթական հայեցակարգի գենդերային ներուժը:

Մարդու անձնական զարգացման առանձնահատկությունների կենսաբանացնող և սոցիալականացված հայեցակարգերը և դրանց գենդերային հետևանքները: Կենսաբանասոցիալական (բիոսոցիալական) տեսության գենդերային չափումը:

Կրթության բարեփոխման սկզբունքների գենդերային ներուժը.

- կրթության ժողովրդավարացումը և հումանիզացումը, բազմատեսակությունը, տարակառուցվածքայնությունը և ազգային բնույթը, համամարդկային արժեքների գերակայությունը, էթնոմշակութային, գենդերային արժեքների պահպանումը:

Ուսուցման անհատական թեստավորման մեթոդը՝ որպես տղաների և աղջիկների գենդերային հավակնությունները սահմանափակող խտրական մեթոդ:

Օգտապաշտության փիլիսոփայության ազդեցությունը մանկավարժության վրա գենդերային համատեքստում:

Գենդերային որոշակիությունների տարրալուծումը նեոպրագմատիզմի կողմից, փոփոխվող աշխարհին անհատի հարմարվելուն նպաստող, անձնական ուղղվածության մեթոդների քարտզումը:

Դպրոցի բարեփոխումները XX դ. կեսից, «մտավոր թեստավորման» վերացումը՝ որպես կրթության համակարգում գենդերային հավասարության դաստիարակության նախադրյալ: Արևմտյան երկրներում պետական պարտադիր միջնակարգ կրթություն մտցնելը, մասնագիտական և բարձրագույն կրթության մատչելիությունը՝ որպես տղամարդկանց և կանանց գենդերային ընտրության ընդլայնման պայման:

Համաշխարհային կրթական գործընթացի զարգացման միտումները XX դարի երկրորդ կեսին

Կրթության նկատմամբ սոցիալական պահանջարկի աճը: Կանանց բարձրագույն կրթության հնարավորությունների ընդլայնումը: Կրթությունը՝ որպես անհատի սոցիալական կարգավիճակի բարձրացման և գենդերային հավասարության հասնելու միջոց:

Կրթության ժողովրդավարացման սկզբունքը՝ որպես հասարակության գենդերային հարաբերությունների կարգավորման նախադրյալ:

Միջազգային ինտեգրացումը կրթության ոլորտում և նրա գենդերային հեռանկարները: Ինֆորմացիոն-տեխնիկական հասարակության

գենդերային դաստիարակության հիմնախնդիրները, կրթության և դաստիարակության ներդաշնակեցման հնարավորությունները: «Գլոբալ» դաստիարակությունը գենդերային հեռանկարում:

Ուսուցման նորարարական մեթոդների ու միջոցների հնարավորությունները գենդերային նոր մոդելների ձևավորման գործում:

Տղաների և աղջիկների գենդերային դաստիարակությունը՝ որպես ժողովրդավարական քաղաքացիական հասարակության կայացման նախադրյալ:

Խաղաղության մշակույթի հիմնախնդիրների ընդգրկումը կրթական ծրագրերում: Կանանց փորձը խաղաղության մշակույթի դաստիարակության ու արմատավորման գործում:

Աշխատանքային և մարզա-սպորտային դաստիարակությունը դպրոցներում՝ որպես անհատի գենդերային հավակնության ձևավորման միջոց:

Կրթության կազմակերպումը: Ուսուցման բովանդակությունը, ձևերն ու մեթոդները: Անընդհատ կրթության հայեցակարգը

Անընդհատ կրթության հայեցակարգի ընդհանուր սկզբունքների գենդերային չափումը, կրթության ուղղվածությունը դեպի անկրկնելի անհատականություն և մարդու պահանջմունքներ, յուրաքանչյուրի համար ցանկացած տեսակի կրթության մատչելիություն, կրթության համակարգի ճկունություն, կրթական ծառայությունների բազմատեսակությունը որպես անհատի ինքնագնահատականի և սոցիալական կարևորության անհրաժեշտ պայման:

Կրթական համակարգի կտրուկ միասնականացումը 70-ական թվականներից և դրա գենդերային հետևանքները: Այլընտրանքային դպրոցները՝ որպես ժողովրդավարական և գենդերային նոր իդեալների դաստիարակման միջավայր:

Ընտրախավային մասնավոր դպրոցները, ընտրախավային կրթությունը և բարձր գենդերային դերերը: Կրթության ժողովրդականացումը, ուսման վարձի իջեցումը կամ վերացումը, ապառիկ կրթությունը, տար-

բեր երկրների միջև ուսանողների փոխանակումը՝ որպես անհատի գեներալային հավակնությունների սանդղակի ընդլայնման գործոններ:

Ուսուցման եռաստիճան համակարգը

Ներդրումները տղաների և աղջիկների կրթության մեջ երրորդ մակարդակում: Հումանիտար հոսքում «Մարդու իրավունքներ», «Քաղաքացիական կրթություն», «Գեներալային գիտելիքների հիմունքներ» նոր ուսումնական դասընթացների ընդգրկումը՝ որպես հասարակության գեներալային մշակույթի ներդաշնակեցման միջոց:

Ուղղող - զարգացնող մանկավարժությունը՝ որպես զարգացման թերություններ ունեցող տղաների և աղջիկների գեներալային լիարժեքության դաստիարակության հիմք:

Ուսուցման ձևերի արդիականացումը

Գեներալային դաստիարակության ազդեցությունը աշակերտների մեջ ինքնավստահության, երևակայության և ստեղծագործական մտածողության, վերլուծության և սինթեզի ունակության, ինքնավերահսկողության զարգացման վրա:

Խաղային իրավիճակները կրթության մեջ՝ որպես տարատեսակ դերավարքային կատարումների ձևավորման, որոշակի դերակատարման պատրաստակամության ինքնաստուգման հնարավորություն:

Հետինդուստրիալ քաղաքակրթության կրթական քաղաքականությունը

*Կրթության զարգացման առանձնահատկությունները Ռուսաստանում
և ԽՍՀՄ-ում XX դարի սկզբին*

*Խորհրդային դպրոցական համակարգի ստեղծման
առանձնահատկությունները*

Խորհրդային կառավարության առաջին հռչակագրերը կրթության մասին. կրթության ղրղրտում տղամարդկանց և կանանց հավասար իրա-

վունքների հռչակումը: Կրթության աշխարհականացումը: Խտրականության բոլոր ձևերի վերացումը կրթական համակարգում: Անվճար կրթությունը, բանֆակները, անգրագիտության վերացման, գյուղերի դպրոցները, ֆաբրիկա-գործարանային յոթնամյակը, ֆաբրիկա-գործարանային ուսումնարանները՝ որպես կանանց ու տղամարդկանց կրթության խթանման գործոններ, նրանց գենդերային ինքնաիրացման և ինքնագնահատականի փոփոխման նախադրյալներ և հնարավորություններ:

Կրթության հաջորդականության ապահովման պետական քաղաքականությունը՝ որպես անհատի աստիճանական սոցիալական աճի երաշխիք: Կյանքի և կրթության միջև խզման վերացման, կյանքի վերափոխմանը մասնակցության, հասարակայնորեն օգտակար աշխատանքի հմտությունների դաստիարակման սկզբունքները՝ որպես գենդերակազմիկ գործոններ: Ն. Կ. Կրուպսկայայի, Ա. Վ. Լունաչարսկու, Մ. Ն. Պոկրովսկու, Ա. Պ. Պինկևիչի և այլոց մոտեցումները նոր դպրոցի ստեղծման մասին 20-ական թվականների մանկավարժական բանավեճերի նկատմամբ:

Գենդերային ընտրության ազատության սահմանափակումները մանկավարժության բիոսոցիալական տեսության՝ մանկագիտության մեջ և բանավեճերն այդ առիթով:

Գենդերային դաստիարակությունը մանկական և երիտասարդական կազմակերպություններում, պիոներների պալատում, մարզական դպրոցներում և սեկցիաներում, տարբեր խմբակներում և այլ արտադպրոցական հիմնարկներում:

Ս. Տ. Շագկու մանկավարժական գաղափարները կրթության համակարգում սոցիալական հմտությունների զարգացման անհրաժեշտության մասին: Սովորողների գենդերային դերացանկի ընդլայնումը ինքնուրույնության, ինքնակառավարման, ակտիվության, ստեղծագործական, աշխատանքային հմտությունների դաստիարակման միջոցով: Ուսուցման և դաստիարակության գենդերային սկզբունքները «Մանկական աշխատանք և հանգիստ» տիպի ընկերություններում և «Առույգ կյանք» ճամբարում:

Դպրոցը և կրթությունը XX դարի 30-90-ական թվականներին

Դպրոցական համակարգի բարեփոխումները: Ծրագրերի, դասագրքերի, մեթոդների ստանդարտացման և կրթության մեջ նորարարական գաղափարների ներդրման գեներալային հետևանքները: Համատեղ ուսուցումը՝ որպես տղաներին և աղջիկներին հավասար հնարավորություններ ընձեռող սոցիալական փորձարարություն:

Կրթության համակարգի կատարելագործումը՝ որպես ԽՍՀՄ-ում կանանց սոցիալական կարգավիճակի բարձրացման նախադրյալ:

Անտոն Մեմյոնովիչ Մակարենկոյի դաստիարակության համակարգի սոցիալական ուղղվածությունը: Կոլեկտիվ (հանրութային) կյանքի փորձը՝ որպես կառավարման ընդունակությունների, պատասխանատվության, փոխհամաձայնության և գեներալային վարքի զարգացման միջոց: Դաստիարակումը համատեղ աշխատանքով, վստահությամբ, փոխօգնությամբ, ստեղծագործությամբ: Համատեղ ինքնակառավարումը՝ որպես գեներալային մշակույթի դպրոց:

Վ. Ա. Սուխոմլինսկի: Երեխաների ուսուցումը՝ որպես ինքնակրթության և ինքնադաստիարակության գործընթաց: Վ. Ա. Սուխոմլինսկու ուսուցման սկզբունքների գեներալային բովանդակությունը: Բարոյակալությունը, գեղեցկությունը, մշակույթը՝ գեներալային դիտարկմամբ՝ որպես կրթության նպատակ:

Շ. Ա. Ամոնաշվիլու, Վ. Ֆ. Շատալովի, Մ. Պ. Շչեպիևի, Ս. Ն. Լիսենկովի նորարարական գաղափարների և պրակտիկաների գեներալային չափումները:

Կրթությունը Հայաստանում XX դարում

Գեներալային քաղաքականությունը Հայաստանի առաջին հանրապետությունում տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթության ոլորտներում: Կրթության և դաստիարակության համակարգում տղաների և աղջիկների հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների օրենսդրական ամրագրումը: Գեներալային կրթության ու դաստիարակության առանձնահատկություններն Ամերկոմի որբանոցներում:

Կրթությունը և դաստիարակությունը Խորհրդային Հայաստանում

Ժողովրդի կրթվածության մակարդակի աննախադեպ բարձրացումը: Երևանի պետհամալսարանի բացումը, ինստիտուտների, ուսումնարանների և տեխնիկումների լայն ցանցի ստեղծումը՝ որպես տղամարդկանց ու կանանց սոցիալական դերացանկի ընդլայնման հնարավորություն: Պարտադիր միջնակարգ կրթության մատչելիությունը երկու սեռերի համար: Համատեղ կրթության զարգացումը՝ որպես սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքում կանանց մասնակցության ընդլայնման նախադրյալ:

Սովետահայ մանկավարժների ներդրումը հայ մանկավարժական մտքի և կրթության կազմակերպման գործում:

Կրթական համակարգի ֆեմինացումը, դրա պատճառներն ու հետևանքները:

Գենդերային գիտելիքների ներդրումը «Մանկավարժության պատմություն» առարկայում ապագա մանկավարժ-մասնագետներին հնարավորություն կտա ձեռք բերելու գիտելիքներ.

- պատմական զարգացման տարբեր փուլերում դպրոցի, կրթության ու դաստիարակության զարգացման և դրա սոցիալական արդյունքների,
- նշանավոր մանկավարժների գործունեության և մանկավարժական հայացքների, գենդերային դաստիարակության նկատմամբ նրանց մոտեցումների,
- կանանց կրթության պետական կազմակերպման գաղափարի ծագման, կանանց և հասարակության համար դրա նշանակության,
- գենդերային կրթության և դաստիարակության պատմա-մանկավարժական հիմնահարցերի,
- գենդերային կրթության և դաստիարակության ժամանակակից վիճակի,
- միջազգային և ազգային փաստաթղթերի և նորմավորող հրահանգների, միասնական կրթական տարածության, գենդերային կրթության, կրթության բարեփոխումների, կրթության ժամանակակից

հայեցակարգի, տղամարդկանց ու կանանց համար կրթություն ստանալու և այն իրականացնելու հավասար իրավունքների ու հնարավորությունների,

- կրթության ու դաստիարակության կենսաբանացված, սոցիալականացված և կենսասոցիալականացված հայեցակարգերի տեսական և գործնական հիմքերի,
- կրթությունից հասարակության գենդերային սպասումների և կրթությանը գենդերային պատվերի բովանդակության պատմական պայմանավորվածության,
- մանկավարժության գենդերային չափումների լոկալ-պատմական առանձնահատկությունների մասին:

Մասնագետը պետք է տիրապետի.

- գենդերային հետազոտությունների տեսությանը և մեթոդաբանությանը, մանկավարժական տեսության ու պրակտիկայի գենդերային հայեցակետերին,
- մանկավարժության պատմության գենդերային վերլուծության ու գնահատման հմտություններին ու տեխնոլոգիաներին,
- հասարակության պահանջների և կրթության համակարգի փոխպայմանավորվածությունը և փոխադարձ կապը գենդերային տեսանկյունից դիտարկելու հմտություններին:

Մասնագետ - մանկավարժը պետք է կարողանա.

- հիմնավորել գենդերային կրթության անհրաժեշտությունը և նպաստել մանկավարժական պրակտիկայում նրա ներդրմանը,
- սովորողների մեջ հետաքրքրություն զարգացնել գենդերային հիմնախնդիրների նկատմամբ,
- կատարել կրթա-դաստիարակչական ոլորտին վերաբերող օրենքների, կարգավորող փաստաթղթերի ու հրահանգների գենդերային վերլուծություն և գնահատում,
- նպաստել գենդերային գիտելիքների տարածմանը՝ օգտագործել-

լով տեղեկատվական տեխնոլոգիաներ և նորարարական մեթոդներ,

- կառուցել գենդերային գիտելիքները՝ հաշվի առնելով մարդկային կոնկրետ պաշարները,
- կազմել ուսումնական պլաններ, ծրագրեր, կարգավորող փաստաթղթեր, երաշխավորություններ, դասախոսություններ, օրինակելի քեմատիկաներ՝ ուսումնադաստիարակչական գործընթացում ներառելով գենդերային բաղադրիչը,
- դիմակայել գենդերային կրթության ներդրմանը խոչընդոտող, գենդերային հավասարության ձևավորմանը խանգարող սուբյեկտիվ փորձերին, նպաստել դրանց հաղթահարմանը:

Մասնագետ – մանկավարժը պետք է ձեռք բերի.

- գենդերային հետազոտություններ կատարելու և գենդերը մանկավարժության տեսության մեջ ու պրակտիկայում ներդնելու,
- նորարարական մեթոդիկաների ներդրման, գենդերային հիմնախնդիրների ու իրադրությունների մոդելավորման ու լուծման,
- գենդերային տեսանկյունից համամշակութային և մանկավարժական հիմնախնդիրների փոխադարձ կապի քննարկման,
- մանկավարժական նորամուծությունների և կրթության այլընտրանքային մեթոդների գենդերային փորձաքննության,
- կրթության կազմակերպման և կառավարման մակարդակում գենդերային չափման ներդրման հմտություններ:

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԵՍԱԿԱՆ
ԳԻՏԵԼԻԲՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ
ՊԱՀԱՆՁՆԵՐ**

«ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ»

ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՄԱՐ

Հասարակության ժողովրդավարացումը և սոցիալական հարաբերությունների իրավական հիմքերի ամրապնդումը ենթադրում է նոր մոտեցումներ անհատի հոգեկան աշխարհի և քաղաքացիական դիրքորոշման ձևավորման, նրա մտավոր, հուզական, ֆիզիկական զարգացման նկատմամբ: Գենդերային սոցիալականացումն անհրաժեշտ է որպես հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հասարակության ձևավորման արդիական ռազմավարություն: Հասարակություն, որտեղ գենդերային մշակույթն ու գենդերային հավասարությունը դառնան հիմնարար ժողովրդավարական արժեքներ:

Անհատի սոցիալականացումը կրթության համակարգում նպատակաուղղված է աշխարհայացք ձևավորելուն, գիտելիքներ հաղորդելուն և ձեռք բերած գիտելիքները, հմտություններն ու կարողությունները զարգացնելուն: Այդպիսի մոտեցումը պահանջում է կրթության համակարգի անընդհատ զարգացում և կատարելագործում՝ կրթության բովանդակությունը գիտության վերջին նվաճումներով համալրելու, ժողովրդավարական հասարակությանը համապատասխանող գիտելիքներին, բարոյական արժեքներին ու նորմերին տիրապետող մանկավարժական կադրերի պատրաստման միջոցով:

Մանկավարժական բուհերի և համալսարանների շրջանավարտները պետք է պատրաստ լինեն գիտամանկավարժական, կառավարման և հասարակական գործունեությանը: Կրթության համակարգի կատարելագործումը նշված ուղղություններով կարևորում է «մանկավարժություն» առարկայի հատուկ տեղն ու նշանակությունը՝ որպես կրթության և դաստիարակության բովանդակությունը, ձևերն ու մե-

թողները որոշող դասընթացի, որը նպատակաուղղված է անհատի սոցիալականացմանը, նրա համապատասխանությանը ժամանակի պահանջներին:

Քաղաքացիական բարձր ակտիվություն և պատասխանատվություն, մարդու իրավունքների և հավասարության գիտելիքներ, սեփական իրավունքները պաշտպանելու, գենդերային իրավահավասարության հաստատմանը նպաստելու կարողություններ ու հմտություններ ունեցող կադրերի պատրաստման անհրաժեշտությունը արդիական է դարձնում մանկավարժություն առարկայում գենդերային մոտեցումների ներառման հիմնախնդիրները:

ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՆՊԱՏԱԿԸ

- Գենդերային գիտելիքների ընդգրկում «Մանկավարժություն» առարկայում հասարակության ժողովրդավարացման գործընթացների վրա մանկավարժական գիտության ազդեցության հնարավորությունների ընդլայնման նպատակով:
- Ապագա մանկավարժների էգալիտար գենդերային մշակույթի ձևավորում:
- Աճող սերնդի մեջ գենդերային հավասարության ըմբռնման ձևավորում:

ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Պատրաստել գենդերային գիտելիքների հիմունքներին տիրապետող և նոր սերնդի դաստիարակության գործընթացում դրանք կիրառելու ընդունակ մանկավարժ – մասնագետներ:
- Ուսանողների մեջ ձևավորել գենդերային իրավահավասարության՝ որպես ժողովրդավարական հասարակության առաջնային արժեքի դրական ընկալում:

- Մանկավարժական գիտության մեջ ներդնել կրթության և դաստիարակության հիմնախնդիրների ուսումնասիրման նորարարական մեթոդներ՝ հաշվի առնելով գենդերային գործոնը:
- Ընդլայնել մանկավարժական հասկացությունների ու կատեգորիաների մասին պատկերացումները՝ հաշվի առնելով հիմնախնդիրների և երևույթների գենդերային հայեցակետերը:
- Տարիքային տարբեր շրջաններում գենդերային զարգացման և գենդերային հարաբերությունների առանձնահատկություններն արտացոլող թեմաների ընդգրկում մանկավարժության մեջ:

Գենդերային մոտեցումների ինտեգրումը մանկավարժության մեջ կատարված է ուսումնական դասընթացի բաժիններին և բուհական ծրագրի կառուցվածքին համապատասխան:

I. ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Մանկավարժության հիմնական կատեգորիաները

Գենդեր, գենդերային համակարգ, գենդերային հարաբերություններ: Գենդերը՝ որպես նոր սոցիոմշակութային հարացույց և մանկավարժական գիտության բաղադրիչ: Գենդերային վերլուծությունը որպես մանկավարժության մեթոդական հնարք:

Մանկավարժական գործընթացների հիմնական ուղղությունների գենդերային բաղադրիչը. գենդերային խտրականությունը կրթության և դաստիարակության մեջ, միջանձնային հարաբերություններում, գենդերային նույնականացումը և դպրոցականների տարիքային շրջանաբաժանման գենդերային առանձնահատկությունները:

«Դաստիարակություն», «ուսուցում», «կրթություն» մանկավարժական ելակետային կատեգորիաների գենդերային հայեցակետերը: Մանկավարժության հիմնական կատեգորիաների գենդերային մեկնաբանումը:

Դաստիարակության ֆենոմենի օբյեկտիվ ծագման ու նշանակության հայեցակարգի գենդերային վերաիմաստավորում: Կանանց ու տղամարդկանց դաստիարակության մեթոդների առանձնահատկու-

թյունները: Սեռադերային տարբերությունների հաշվառումը դաստիարակության՝ որպես հասարակական երևույթի, արդյունավետության ու գործունեության չափանիշներ ընտրելիս:

Ինքնաձևավորման և ինքնագարգացման կատեգորիաների էության, բովանդակության, մեխանիզմի և ձևերի դրսևորման գենդերային հայեցակետերը:

Մանկավարժական գործունեությունը՝ որպես հիմնական հասկացություն գենդերի կառուցման գործում: Գենդերային մոտեցման հնարավորությունները դաստիարակության խնդիրների իրականացման գործում: Կրթություն և ուսուցում կատեգորիաների գենդերային վերլուծություն:

Գենդերային կրթության տարբերիչ գծերը: Գենդերային մեթոդների ինտեգրումն ամբողջական մանկավարժական գործընթացում: Կրթության նպատակների, խնդիրների և բովանդակության գենդերային չափումը: Տղաների և աղջիկների կողմից գիտելիքների, գիտելիքների նորացման մեթոդների և միջոցների յուրացման առանձնահատկությունները:

Դասագրքի դերը անհատի գենդերային սոցիալականացման գործում: Տղամարդկանց ու կանանց ընդունակությունների և կրթական նախասիրությունների վերաբերյալ կենսաբանականացված, սոցիալականացված և բիոսոցիալական հայեցակարգերը:

Մանկավարժության՝ որպես մարդու մասին գիտության, օբյեկտի, առարկայի և գործառությունների գենդերային վերաիմաստավորում:

Աճող սերնդի գենդերային սոցիալականացման առանձնահատկություններն՝ ըստ տարիքային շրջաբաժանման:

Գենդերային գիտելիքների հաղորդումը սոցիալականացման գործակալներին՝ ծնողներին, ուսուցիչներին, դաստիարակներին:

II. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Գենդերային մոտեցումը՝ որպես գիտական հետազոտությունների գործիք: Գիտական հետազոտությունների գենդերային մեթոդաբանու-

թյունը մանկավարժության մեջ, կանանց ու տղամարդկանց սոցիալական կարգավիճակների տարբերության նկարագրությունը, սեռային խտրականության վերլուծությունը: Իրավունքի, ազատության, սոցիալական մասնակցության հիմնախնդիրների գենդերային հայեցակետերը:

Գենդերը մանկավարժական արժեքների համակարգում:

Մանկավարժության հումանիստական մեթոդաբանության գենդերային չափումը:

Գենդերային գաղափարախոսություն, գենդերային արժեքաբանական համակարգ: Գենդերային կրթությունը՝ որպես գենդերային խտրականության, անհավասարության և անարդարության հաղթահարման պայման:

III. ԱՆՀԱՏԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ, ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՅՈՒՄԸ

Գենդերային մոտեցումը տղաների և աղջիկների զարգացման առանձնահատկություններն ուսումնասիրելիս: Անհատի դաստիարակության և ձևավորման սկզբունքների գենդերային հայեցակետերը: Անհատի գենդերային սոցիալականացման ինստիտուտները և գործակալները:

Գենդերային վարքի մոդելների ձևավորումը հասարակության մեջ: Տղամարդու և կնոջ վարքի հարաբերությունների, նորմերի, արժեքների, գենդերային կարծրատիպերի մոդելների յուրացումը: Մեռադերային սոցիալականացման երկու հիմնական փուլերը. հարմարում և ներայնացում:

Սոցիալականացման հիմնական գործակալներին, սոցիալական խմբերին ու համատեքստերին բնորոշ տարբերիչ գծերը: Մեռադերային սոցիալականացման մեխանիզմները. տարբերակված ուժեղացում, տարբերակված ընդօրինակում: Մեռադերային նույնացման թրեմինգը՝ որպես գենդերային սոցիալականացման և գենդերային բախման հաղթահարման միջոց:

IV. ՈՒՍՈՒՑՉԻ ԱՆՉԸ.**ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐ**

Տղամարդ և կին ուսուցիչների մասնագիտական հատկությունների ձևավորման առանձնահատկությունները: Ուսուցիչների դիդակտիկ, ակադեմիական, զգայական և այլ որակների գենդերային դիտարկում: Ուսուցիչների սեռադերային առանձնահատկությունները գործընկերների, ծնողների, աշակերտների հետ հաղորդակցման գործընթացում:

Տղամարդկային և կանացի մոդելների առանձնահատկությունները դասավանդման և հաղորդակցման գործընթացներում: Ուսուցչի գործունեության գենդերային բնութագրերը:

Ուսուցչի քաղաքացիական ինքնագիտակցությունը, քաղաքացիական դիրքորոշումը, քաղաքացիական դրսևորման անձնական օրինակը՝ որպես դպրոցականների ակտիվ քաղաքացիական դիրքորոշման գործոն:

Ուսուցչի անձի կարևորությունը հասարակության փոխակերպման և ժողովրդավարացման պայմաններում, նրա քաղաքացիական ինքնադրսևորումը:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Գենդերային մոտեցումը մանկավարժական հաղորդակցման՝ որպես գործունեության տեսակներից մեկի, նկատմամբ: Փոխազդեցության գենդերային բաղադրիչները, գենդերային հանդուրժողականությունը մանկավարժների և սովորողների փոխըմբռնման գործում:

Գենդերային վարքը ուսուցիչ(ուհի) - աշակերտ(ուհի), աշակերտ-աշակերտուհի համակարգերում: Տղաների և աղջիկների վարքի առանձնահատկությունները հաղորդակցման խնդրի լուծման տարբեր փուլերում. կողմնորոշում, ուշադրության հրավիրում սեփական անձի նկատմամբ, լեզվային հաղորդակցում և հետադարձ կապի կազմակերպում:

Սեռադերային նույնացումը մանկավարժական հաղորդակցման տարբեր փուլերում: Գենդերային զգայության, գենդերային կարծրատիպերի դրսևորումը հաղորդակցման տարբեր ձևերում:

ԴԻԴԱԿՏԻԿԱ

V. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ և ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Գենդերը՝ որպես սոցիալական արժեք: Կրթության բովանդակության էության բացահայտման գիտելիքային-անհատական ուղղվածություն ունեցող մոտեցմաների գենդերային հայեցակետերը: Կրթության՝ որպես սոցիալ-մշակութային փորձի բաղադրիչի և համամարդկային արժեքի, գենդերային չափումը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Անհատի գործունեության յուրահատկությունը՝ որպես կրթության բովանդակության որոշիչ: Ուսուցման և կրթության գործընթացներում գործունեության գենդերային առանձնահատկությունները:

Փորձի գենդերային հատկությունները՝ որպես կրթության բովանդակության որոշիչ գործոններ: Գենդերային կարծրատիպերի ազդեցությունը փորձի դրական և բացասական գնահատման վրա: Գենդերային վերլուծության մեթոդները՝ կրթության բովանդակության մեջ կարծրատիպերի բացահայտման և դրանց հաղթահարման համար:

Ընդհանուր, պոլիտեխնիկական և մասնագիտական կրթության բովանդակության գենդերային պայմանավորվածությունը: Անընդհատ, ընդհանուր և մասնագիտական կրթության գենդերային չափումները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Կրթության բովանդակության ընտրության գենդերային հայեցակետերը: Կոնկրետ ուսումնական առարկաների բովանդակության գենդերային վերակառուցում անհատի սոցիալական, բնական, օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկությունների հաշվառմամբ: Կրթության հումանիզացման մեթոդ և դպրոցականների գիտական աշխարհայացքի ձևավորման գենդերային բաղադրիչները:

Գենդերային բաղադրիչի հաշվառումը XXI դ. դպրոցի մոդելները կառուցելիս և հեղինակային ու նորարարական ծրագրերում:

VI. ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԱՍՔՈՂՋԱԿԱՆ ՍԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ուսուցման գենդերային նպատակաուղղվածությունը՝ որպես շրջակա իրականության գործընթացների ու երևույթների սոցիալական նշանակության գիտակցման հնարավորություն: Տղաների ու աղջիկների գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ձևավորման առանձնահատկությունները:

Ուսուցման դաստիարակիչ գործառույթի գենդերային հայեցակետը: Ուսուցիչների գենդերային տարբերակված և գենդերային զգայուն մոտեցումը տղաների և աղջիկների նկատմամբ՝ գիտական աշխարհայացքի, մտածողության, աշխատանքի ու կրթության նկատմամբ վերաբերմունքի դրդապատճառների ձևավորման բարոյական որակների, բնավորության կամային գծերի և գենդերային վարքի համապատասխան ձևերի դաստիարակման գործում:

Տղաների և աղջիկների անհատականության զգայական, հուզական-կամային, շարժողական և շարժառիթային-պահանջմունքային ոլորտների զարգացման առանձնահատկությունների նկատառումը՝ որպես գենդերային հիմնախնդիր:

Դասարանում, ուսումնական ուսուցման գործընթացում խմբում տղաների և աղջիկների փոխհարաբերությունների գենդերային հայեցակետը: Տղաների և աղջիկների նկատմամբ ուսուցիչների վերաբերմունքի առանձնահատկությունները ուսուցման գործընթացում:

Տարբեր սեռերի երեխաների գիտելիքների ըմբռնման, ընկալման, իմաստավորման, ընդհանրացման և կիրառման առանձնահատկությունները: Գենդերային կարծրատիպերը գիտելիքների յուրացման գործընթացում, դրանց հաղթահարման ուղիները:

Երեխաների սեռադերային նույնացման դաստիարակումն ուսուցման տարբեր ձևերի միջոցով:

**VII. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՕՐԻՆԱԶՈՒՓՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԿՁ-
ԲՈՒՆՔՆԵՐԸ**

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՕՐԻՆԱԶՈՒՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մարդու կյանքի ու գործունեության գենդերային համատեքստի ազդեցությունը մանկավարժական գործընթացում հակադրությունների միասնության և պայքարի օրինաչափության գործառնության վրա:

Տղաների և աղջիկների ինտեգրող անհատական բնութագրերի՝ համոզմունքների, դրդապատճառների, կանխադրույթների, գործունեության անհատական ոճի, կարողությունների, հմտությունների ձևավորումը քանակական փոփոխություններից որակական փոփոխությունների անցման օրենքի գործողության ազդեցությամբ:

Տղաների և աղջիկների անհատական և հոգեկան ձեռքբերումները բացասման բացասման օրենքի գործողության արդյունքում:

Գիալեկտիկական օրենքների գործողության նկատմամբ սովորողների պատասխան ռեակցիայի գենդերային տարբերությունները:

Գենդերային մշակույթի՝ որպես համամարդկային մշակույթի բաղադրիչի, դերը անհատականության զարգացման գործում:

Ուսուցչի գենդերային մշակույթը որպես նրա արդյունավետ մասնագիտական գործունեության անհրաժեշտ պայման:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Ուսուցչի գենդերային նախապատվությունների դրսևորումները, նրա գենդերային դիրքորոշման դերը գործընթացի կառուցման և օպտիմալացման գործում ուսուցման սկզբույթների նորացման միջոցով:

Քաղաքացիության սկզբունքը: Գպրոցականների սոցիալական պատասխանատվության, ակտիվության, հասունության, հոգևորի, քաղաքացիական ինքնագիտակցության ձևավորման առանձնահատկությունները: Անհատի սոցիալականացման գենդերային հայեցակետերը:

Գենդերային մեթոդաբանության կիրառումը անձի զարգացման տեսության մշակման ընթացքում:

Գիտականության սկզբունքը: Գենդերային գործոնի հաշվառումը

ուսումնական պլաններ, ծրագրեր, դասագրքեր, ձեռնարկներ և մեթոդական նյութեր կազմելիս: Ուսուցման գործընթացում աշխարհի կոնցեպտուալ պատկերի ձևավորման գենդերային առանձնահատկությունները:

Տարբերակված մանկավարժական ներգործությունը և տղաների ու աղջիկների փոխներգործությունը ճանաչողական գործունեության ընթացքում: Ճանաչողական ակտիվությունը, ստեղծագործությունը, տարածական (դիվերգենտ) մտածողությունը՝ որպես դպրոցականների աշխատանքի գիտական կազմակերպման ձևեր:

Դաստիարակող ուսուցման սկզբունքը: Գենդերային մշակույթը՝ որպես անհատի հիմնական մշակույթի տարր: Տղաների և աղջիկների մտավոր զարգացման առանձնահատկությունները դաստիարակության գործընթացում:

Գենդերային կրթությունը՝ որպես կրթության հումանիզացման և ուսուցման դաստիարակչական ազդեցության ուժեղացման գործոն: Ուսուցման գործընթացում կազմակերպվածության, տոկունության, աշխատասիրության, գործարարության, կարգապահության, իր և ուրիշների նկատմամբ պահանջկոտության ձևավորման գենդերային առանձնահատկությունների նկատառումը:

Անհատի նկատմամբ հարգալից վերաբերմունքի դաստիարակումը՝ որպես գենդերային կարծրատիպերի հաղթահարման հիմք: Դպրոցականների նկատմամբ ուսուցիչների հավասարողված (հավասարամետ), գենդերորեն հավասարակշռված, ներդաշնակ ներգործությունը՝ որպես ուսուցման դաստիարակչական ներուժի աճման պայման:

Ուսուցման հիմնարարության և կիրառական ուղղվածության սկզբունքը: Գենդերային մոդելավորումը և գիտելիքների տարածումը մարդու գործունեության վրա տնտեսության, քաղաքականության, մշակույթի ոլորտներում: Հիմնական սոցիալ-տնտեսական գործընթացներում կանանց՝ տղամարդկանց հետ հավասար մասնակցությունը՝ որպես փոխակերպման գործընթացում և քաղաքացիական հասարակության կայացման գործում հասարակության ողջ մտավոր ներուժի ընդգրկման գործոն: Ուսուցման գործընթացում տղաների և

աղջիկների գիտակցության և ինքնագիտակցության, վարքի և գործողությունների դրդապատճառների ձևավորման առանձնահատկությունները:

Խմբային և անհատական ուսուցման միասնության սկզբունքը:

Տղաների և աղջիկների ճանաչողական ակտիվության և ընդունակությունների ձևավորման առանձնահատկությունները խմբային, անհատական, համատեղ և առանձին ուսուցման ընթացքում: Հանրույթը՝ որպես գենդերային ներկայացման ու նույնացման անհրաժեշտ միջավայր: Գենդերորեն զգայուն և գենդերորեն տարբերակված մոտեցումն անհատի զարգացման նկատմամբ խմբային ուսուցման ընթացքում:

Տղաների և աղջիկների անբռնազբոս հաղորդակցման հմտությունների ձևավորումը խմբային ուսուցման ընթացքում: Խմբում դպրոցականների հաղորդակցման փորձը՝ որպես գենդերային անդրադարձման ինքնագիտակցության գործոն անհատի զարգացման (օնթոգենեզի) բոլոր փուլերում:

Ուսուցման անհատականացումը դպրոցականների կողմից գիտելիքների յուրացման աստիճանի և տեմպի նկատառումով՝ որպես գենդերային հիմնախնդիր:

Ուսուցման համապատասխանության սկզբունքը աշակերտների տարիքային և անհատական առանձնահատկություններին:

Դպրոցականների տարիքային շրջաբաժանման գենդերային բաղադրիչը: Տղաների և աղջիկների հոգեկան և անհատական զարգացման, դաստիարակվածության և սոցիալական հասունության առանձնահատկությունները:

Սովորողների գենդերային առանձնահատկությունների հաշվառումը, ուսումնական գործունեության նպատակները, խնդիրները, բովանդակությունը, ձևերն ու մեթոդներն ընտրելիս:

Տարիքային տարբեր խմբերի գենդերային առանձնահատկությունները և յուրահատկությունը հաշվի առնելը՝ որպես սովորողների շարժողական և հոգեֆիզիոլոգիական բնույթի և ուսուցման համապատասխանության կարևոր պայման: Կանաչիության և առնականության չա-

փանիշների ձևավորումը ուսուցման գործընթացում որպես սոցիալականացման գործոն:

Սովորողների գիտակցականության և ստեղծագործական ակտիվության սկզբունքը:

Տարբեր սեռերի սովորողների ակտիվության, ինքնուրույնության աստիճանի և մտածողության տարածականության (դիվերգենտության) դրսևորման առանձնահատկություններն ուսուցման գործընթացում: Մանկավարժական ռազմավարություններն այդ սկզբունքն իրականացնելիս:

Գենդերային մոտեցումն ուսուցման գործընթացում ինքնակառավարման հիմնախնդիրների նկատմամբ, գիտակցականության և ստեղծագործական ակտիվության զուգակցումը: Վարքի «տղամարդկային» և «կանացի» տեսակների կանոնակարգվածության և կարծրատիպերի հաղթահարումն ինքնակառավարման սկզբունքներն իրականացնելիս:

Ուսուցման մատչելիության սկզբունքը նրա բարդության բավարար մակարդակի դեպքում:

Տղաների և աղջիկների աշխատունակության և մտավոր, շարժողական ու հուզական հոգնածության դրսևորման առանձնահատկություններն ուսուցման գործընթացում: Ծանրաբեռնվածության ընդհանուր և յուրահատուկ ազդեցությունը հոգևոր և ֆիզիկական առողջության վրա: Գպրոցականների տարիքային և գենդերային առանձնահատկությունների հաշվառումը ուսուցման գործընթացում հոգևոր լարվածության հաղթահարման համար: Ուսուցչի կողմից գենդերային գիտելիքների տիրապետումը՝ որպես աշակերտների մտածողության խորացման և կատեգորացման համար անհրաժեշտ մեթոդական պատրաստականության գործոն:

Ձևականության սկզբունքը:

Ընկալման տեսակների կախվածությունը սովորողների սեռային պատկանելությունից: Գենդերային զգայնության և զգացմունքայնության նկատառումը զննողական ուսուցման ժամանակ:

Ուսուցման արդյունավետության և հուսալիության սկզբունքը:

Հիշողության տարբեր տեսակների ձևավորման գենդերային առանձնահատկությունները և գիտելիքների կայունության հիմնախնդիրը:

Գենդերային գործոնի հաշվառումը հիմնական գիտելիքների գիտակցված յուրացման գործընթացում՝ որպես դպրոցականների ճանաչողական գործունեության առանձնահատկությունների վրա հիմնված նորարարական մոտեցում:

VIII ՈՒՍՈՒՑՄԱՆ ՉԵՎԵՐԸ և ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ուսուցման մեթոդները

Գենդերային բաղադրիչի հաշվառումը ուսուցման մեթոդների դասակարգման ընթացքում: Ուսուցման մեթոդների ընտրությունը՝ կախված գենդերային նույնականացումից: Ուսուցման մեթոդները՝ որպես գենդերային զգայության և հանդուրժողականության, քննադատական մտածողության և ուրիշի կարծիքի նկատմամբ հարգանքի ձևավորման միջոց:

Ուսուցման կազմակերպչական ձևերը

Գենդերային մոտեցումն ուսուցման ձևերն ընտրելիս: Տղաների և աղջիկների ճանաչողական գործընթացների առանձնահատկությունների նկատառումը՝ ճակատային, խմբային ու անհատական ուսուցման ժամանակ: Տարբեր սեռերի սովորողների միջև գենդերորեն հանդուրժողական փոխհարաբերությունների ձևավորումն ուսուցման գործընթացում՝ դասի ժամանակ: Ուսումնական նյութերում կանանց ոչ նույնական ներկայացման հաղթահարումը դասի ժամանակ: Տղամարդ և կին ուսուցիչների դաս վարելու յուրահատկությունները: «Այրականի» և «կանացիի» պատկերացումների մանկավարժական կառուցումը ուսուցման ձևերում:

IX. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԻԴԱԿՏԻԿ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

Լ. Վ. Ջանկովի զարգացնող ուսուցման հայեցակարգի գենդերային չափումները: «Դժվարությունների բարձր մակարդակ» հասկացության կիրարկումը տարբեր սեռերի նկատմամբ: Տղաների և աղջիկների աշ-

խատանքի տեմպը: Գպրոցականների կողմից սովորելու գործընթացի գիտակցման սկզբունքի դրսևորման գենդերային տարբերությունները: Գպրոցականների մտածողական գործընթացների՝ համեմատության, վերլուծության և սինթեզի ձևավորման առանձնահատկությունները՝ կախված սեռից:

Գենդերային մոտեցումը հայեցողական ուսուցման դեպքում: Կրթական խնդիրների լուծման առանձնահատկությունները՝ պայմանավորված վերացական–տեսական մտածողության և վարքագծի անկաշկանդ կառավարման գենդերային տարբերություններով:

Գենդերային մոտեցումը դիդակտիկայում: Մեռադերային առանձնահատկությունների նկատառումներն ուսուցման գործընթացի կազմակերպման մեջ: Հոգեբանական հարմարվածությունը ուսուցման գործընթացում առաջադրվող պահանջներին: Անհատի հոգեբանական պրոֆիլի ձևավորման հնարավորությունները ուսուցման գործընթացում: Երեխաների օրգանիզմի վրա ուսումնական ծանրաբեռնվածության ազդեցության առանձնահատկությունները և աշակերտուհիների վերարտադրողական առողջությունը: Ուսուցման գործընթացի գենդերային վերափոխումը առանձին ուսուցման տեսության լույսի ներքո. դրական և բացասական կողմերը:

Մտավոր գործողությունների աստիճանական ձևավորման գենդերային վերլուծություն: Տղաների և աղջիկների համապատասխան մոտիվացիայի դրսևորման առանձնահատկությունները և նրանց կողմից գործունեության մոտավոր հիմքի սխեմայի գիտակցումը: Արտաքին և ներքին խոսքի ձևավորումը և դպրոցականների՝ գործողությունների ինտերիորիզացիան (ներայնացումը) սեռադերային առանձնահատկությունների նկատառումով:

Պրոբլեմային ուսուցման և ստեղծագործական մտածողության ձևավորման գենդերային հայեցակետերը: Տղաների և աղջիկների ընդունակությունների տարբերություններն ինքնուրույն ճանաչողական գործունեության ընթացքում: Ուսուցիչների և աշակերտների վարքագծի գենդերային առանձնահատկությունները պրոբլեմային ուսուցման ընթացքում:

Սոցիալապես հասուն և բազմակողմանիորեն զարգացած անհատի դաստիարակության մասին Մ. Մ. Ֆրիդմանի հայեցակարգի գենդերային տեսակետը: Գենդերային մոտեցումը դպրոցի և դասարանի կյանքում դպրոցականների դերային մասնակցության սկզբունքի նկատմամբ: Ուսումնական գործընթացում տղաների և աղջիկների պատասխանատվության ձևավորման առանձնահատկությունները: Գենդերային զգայնությունը հոգեբանական ապահովման սկզբունքը կիրառելիս: Ուսումնական գործընթացի հուզական կողմը և գենդերային շարժառիթների առանձնահատկություններն ուսուցման մեջ:

X. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

Դաստիարակությունը՝ որպես հասարակական երևույթ և դաստիարակության գործընթացը:

Դաստիարակության կապը արդյունաբերական աշխատանքի, արտադրական հարաբերությունների և տնտեսության ոլորտներում գենդերային դիրքորոշումների հետ:

Գենդերային կարծրատիպերի դրսևորման առանձնահատկությունները դաստիարակչական բառապաշարում: Գենդերային վարքը ձևավորող և կանոնակարգող լեզվական կարծրատիպերը:

Դաստիարակության և հասարակական գիտակցության ձևերի փոխադարձ կապը: Գաղափարների համակարգի, հայացքների, տեսությունների՝ որպես գիտակցության տարրերի, ձևավորման գենդերային հայեցակետերը: Դպրոցականների քաղաքական-քաղաքացիական կրթությունը, նրանց կողմից հասարակական կառուցվածքի հիմնական սահմանադրական սկզբունքների յուրացումը՝ որպես քաղաքացիական ակտիվ դիրքորոշման ձևավորման պայման: Քաղաքացիական ակտիվության գենդերային չափումը: Գենդերային տեսանկյունից հանդուրժողական քաղաքական մշակույթի ձևավորման առանձնահատկությունները դպրոցականների մոտ: Գենդերային քաղաքականությունը և գենդերորեն չեզոք քաղաքականությունը՝ որպես դաստիարակության տեսության հասկացություններ:

Իրավունքի գենդերային վերլուծություն: Իրավական գիտակցության դաստիարակությունը և վարքագծի նորմերի ձևավորումը՝ կախված սեռային պատկանելությունից: Գենդերային իրավահավասարությունը և կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում:

Բնական–սոցիալական միջավայրի հետ տղաների և աղջիկների փոխազդեցության առանձնահատկությունների նկատառումը դաստիարակության գործընթացում: Դաստիարակության դերը ինքնավերափոխման, սոցիալական կյանքի պայմաններին և արտադրությանը հարմարվելու գործում: Մարդ - բնություն - հասարակություն համակարգում փոխհարաբերությունների գենդերային դիտարկում: Դաստիարակության գործընթացում աշխարհի մասին պատկերացումների, սոցիալական կախվածությունների, հոգեկան հատկանիշների և մտածողության ձևավորման գենդերային չափումները:

Սեռադերային տարբերությունները երեխաների՝ որպես դաստիարակության օբյեկտների և սուբյեկտների, պահանջմունքների, հետաքրքրությունների, շարժառիթների, դիրքորոշումների հատկություններում: Երեխաների ֆիզիկական ու հոգևոր ուժերի, մտավոր ու հուզական որակների տարիքային տարբերությունների գենդերային առանձնահատկությունները: Դաստիարակության գործընթացի մասնակիցների վարքի գենդերային պայմանավորվածությունը:

Դաստիարակությունն ամբողջական մանկավարժական գործընթացում

Գենդերային կարծրատիպերը պետական իշխանության (Էտոկրատիա), տոհմային (պատրիմոնալ) և ազատական համակարգերում:

Անհատի ձևավորման ու զարգացման սեռադերային նպատակաուղղվածությունը: Գենդերային դաստիարակություն շարժընթացը հասարակության պատմական զարգացման ընթացքում: Գենդերային հարաբերությունների «կառուցվածքային մոդելները» մարդկային հասարակության պատմության մեջ:

Գենդերային մոտեցումները դաստիարակության տարբեր տեսություններում. այրականության ձևավորումը «ավտորիտար» դաստիա-

րակության տեսության մեջ, գենդերային հարմարվածությունը «ազատ» դաստիարակության տեսության մեջ:

Գենդերային առանձնահատկությունների նկատառումը՝ որպես հումանիստական դաստիարակության նպատակների ու խնդիրների լուծման կարևոր պայման: Անդրոգեն տիպի անհատի գործունի նկատառումը սոցիալականացման գործընթացում:

Պահանջմունքների կատեգորիան դաստիարակության մեջ, տղամարդկային և կանացի պահանջմունքներ: Անհատի դաստիարակության դրդապատճառների գենդերային վերլուծություն: Արժեքային կողմնորոշումները, նրանց արտացոլումը բարոյական իդեալներում:

Տղաների և աղջիկների մոտիվացիոն-արժեքային հարաբերությունների ձևավորման առանձնահատկությունները: Հայրիշխանական գենդերային կարծրատիպերի հաղթահարումը դաստիարակության գործընթացում:

XI. ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԶՄՓՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Անհատի հիմնական հատկությունների, մասնագիտական գիտելիքների ձևավորման առանձնահատկությունները դպրոցականների տարիքային տարբեր շրջաններում:

Կրթության համակարգի կադրային ներուժի գենդերային ներդաստիարակության անհրաժեշտությունը:

Բնահարմարության սկզբունքի գենդերային բաղադրիչները: Տղաների ու աղջիկների պատասխանատվության դաստիարակումը՝ իրենք իրենց և նոոսֆերայի զարգացման համար՝ որպես էկոլոգիական մշակույթի ձևավորման նախադրյալ: Տարիքային և սեռային տարբերակման նկատառումները դաստիարակության բովանդակությունը, մեթոդները և ձևերն ընտրելիս: Արտակարգ իրավիճակներում գոյատևելու և առողջ ապրելակերպի ձգտման արմատավորման գործընթացում տղաների և աղջիկների գենդերային մոտեցումների յուրահատկությունը:

Տղաների և աղջիկների պլանետար մտածողության զարգացման և

բնապահպանական վարքագծի դաստիարակության յուրահատկությունները գենդերային հետազոտությունների համատեքստում: Երկու սեռերի էկոլոգիական մտածողության և պատասխանատվության ձևավորման մեթոդները և առանձնահատկությունները:

Դաստիարակության մշակութային նպատակահարմարության սկզբունքի գենդերային համատեքստը: Գենդերային մարդաբանությունը բնության և մշակույթի աշխարհում կնոջ ու տղամարդու տեղի և դերի մասին: Գենդերի ըմբռնումը՝ որպես մշակութային խորհրդանիշ: Մանկավարժական փոխազդեցության անհատականացման անձնային մոտեցման գենդերային պայմանավորվածությունը: Անհատի ինքնագարգացման խթանման և դրսևորման գենդերային տարբերակումը:

Տղամարդ և կին ուսուցիչների կողմից մանկավարժական գործընթացը երկխոսության ձևով կառուցելու առանձնահատկությունները: Տղաների և աղջիկների ներքին դետերմինացված ակտիվության դրսևորումները դաստիարակության գործընթացում:

XII. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մանկավարժական գործընթացի և դաստիարակության մեթոդների երկմիասնական բնույթի գենդերային բովանդակությունը: Գենդերային գաղափարախոսությունը՝ որպես գիտակցության տարր: Երեխաների գիտակցության ձևավորման առանձնահատկությունները և դաստիարակության մեթոդի ընտրությունը՝ կախված սեռից:

Գենդերային մոտեցումները աշակերտների և աշակերտուհիների գործունեության և վարքագծի կազմակերպման նկատմամբ: Մովորեցնելու, վարժեցնելու, մանկավարժական պահանջկոտության մեթոդների փոփոխականությունը՝ կախված երեխայի տարիքից և սեռից:

Գենդերային հավասարակշռված վարքագծի ձևավորումը նորարարական մեթոդների կիրառմամբ:

Գենդերային վարքի խթանների ու շարժառիթների բնույթը: Գործունեության դրդապատճառների ձևավորումը՝ կախված անհատի սեռադերային նույնականացումից:

XIII. ՄԱՆԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՆՐՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏ և ՍՈՒՔՅԵԿՏ

Հանրությամբ անհատականության զարգացման գենդերային առանձնահատկությունները: Մանկավարժական հանրային կազմավորման գենդերոբեն զգայուն սկզբունքները: Մանկավարժական հանրային տիպերը՝ ըստ գենդերային հաշվեկշռի: Խմբային փոխարաբերությունների ազդեցությունը երեխաների ակտիվության և նրանց սեռադերային նույնականացման ձևավորման վրա: Տղաների և աղջիկների լիդերությունը հանրությամբ: Նրանց ակտիվության դրսևորման առանձնահատկություններն աշակերտական ինքնակառավարման մարմիններում:

Մանկական հանրային հետ կին և տղամարդ ուսուցիչների փոխարաբերությունների ոճի և ձևերի առանձնահատկությունները:

Հանրային սոցիալ-հոգեբանական հասունության գենդերային հայեցակետը. հասարակական բլոկ (սոցիալական ուղղվածություն, կազմակերպվածություն և այլն), անհատական բլոկ (մտավոր, հուզական և կամային հաղորդակցականություն), ընդհանուր բնութագրիչներ (ինտելեկտիվություն, ռեֆերենտություն, լիդերություն):

Ինքնագործ խմբերի և «ոչ ֆորմալ» միավորումների գենդերային առանձնահատկություններ: Այդ խմբերում և միավորումներում տղաների և աղջիկների դերային ներկայացվածությունը: Շփման փոքր խմբերում փոխարաբերությունների հոգեվերլուծության գենդերային չափումը:

Անձնականի և խմբայինի դիալեկտիկան: Անհատի ձևավորումը հանրությամբ՝ մարդասիրական մանկավարժության առաջատար գաղափար: Կանայք և տղամարդիկ՝ որպես հանրային դաստիարակության սուբյեկտներ: Լիդերության հիմնախնդիրը հանրությամբ: Տղամարդկանց և կանանց լիդերության առանձնահատկությունները, նրանց գործելակերպի տեսակները, ձևավորված կարծրատիպերը: Կանանց և տղամարդկանց դերը հանրությամբ ավանդույթների, բարոյական արժեքների ձևավորման, պահպանման ու փոխանցման գործընթացներում: Հանրությամբ գենդերային իրավահավասարության ձևավոր-

րումը դպրոցական ակտիվի և ինքնակառավարման օրգանների կայացման միջոցով:

XIV. ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՏԱԿԱՐԳԸ

Դպրոցականների իմաստասիրական - աշխարհայացքային պատրաստականությունը

Գենդերային գաղափարները, հայացքները, համոզմունքները, պատկերացումները, սկզբունքները՝ որպես մարդու աշխարհայացքային համակարգի տարրեր: Գենդերային գաղափարախոսությունը՝ որպես սոցիալական փոխհարաբերությունների նոր էզալիտար մշակույթի հիմք:

Գենդերային համոզմունքների կարգավորող գործառնությունը անհատի զարգացման մեջ: Դպրոցականների աշխարհայացքի ձևավորման սեռային և տարիքային հնարավորությունների նկատառումը: Տղաների և աղջիկների ինքնահաստատման ձգտման, սեփական անհատականության գիտակցման, փաստերի կուտակման, աշխարհի ժամանակակից պատկերի մասին հայեցակետերի ըմբռնման առանձնահատկությունները: Աշխարհայացք ձևավորող միջոցների գենդերային չափումը: Ուսուցչի գենդերային դիրքորոշումը՝ որպես աշակերտի գիտական աշխարհայացքի և քաղաքացիության ձևավորման գործոն:

Դաստիարակությունը և կրոնը. կնոջ կերպարը տարբեր կրոններում: Քրիստոնեական աստվածաբանության գենդերային բովանդակությունը: Կրոնական դաստիարակության գենդերային առանձնահատկությունները:

Քաղաքացիական դաստիարակություն

Գենդերային իրավահավասարությունը՝ որպես քաղաքացիական դաստիարակության հիմք: Հասարակական կյանքի երևույթների նկատմամբ արժեքային վերաբերմունքի ձևավորման առանձնահատկությունները տղաների և աղջիկների շրջանում: Քաղաքացիության ձևավորումը՝ որպես անհատն ամբողջացնող որակ:

Գենդերային լուսավորությունը՝ համամարդկային արժեքների և

հայրենասիրական դաստիարակության առաջնայնության սկզբունքներով՝ որպես հասարակության ժողովրդավարացման պայման:

Գենդերային մշակույթը՝ որպես հանդուրժողականության և ազգամիջյան հաղորդակցման ձևավորման պայման:

Գենդերային մշակույթը՝ որպես վարքի գենդերային կարծրատիպերը հաղթահարող իրավական մշակույթի ձևավորման հիմք: Տղաների և աղջիկների անհատականության ձևափոխման դրսևորման առանձնահատկությունները: Գենդերային իրավահավասարությունը մարդու իրավունքների համատեքստում: Իրավունքների և հնարավորությունների հավասարությունը: Գենդերային իրավահավասարությունը՝ որպես ժողովրդավարական քաղաքացիական հասարակության ձևավորման գործոն:

Քաղաքացիական ակտիվության ձևավորումը՝ գենդերային հայեցակարգի նկատառումով: Կանանց շարժումը՝ որպես հասարակական շարժում և քաղաքացիական ակտիվության դրսևորում: Կանանց շարժումը Հայաստանում: Պետության կառավարման և քաղաքացիական մասնակցության գենդերային հայեցակետերը: «Էգալիտար քաղաքականությունը»՝ որպես հիմնարար հասկացություն քաղաքացիական ակտիվության ձևավորման մեթոդների բացահայտման գործում:

Անհատի բարոյական մշակույթի հիմքերի ձևավորումը

Բարոյականություն հասկացության գենդերային հայեցակարգը: Տղամարդու և կնոջ վարքի կարծրատիպային նորմերը, ձևերը և բիմար հակադրությունները: Տղաների և աղջիկների բարոյական սկզբունքների, իդեալների, հասկացությունների ձևավորման առանձնահատկությունները:

Հումանիստական աշխարհայացքի գենդերային չափումը: Հումանիզմի ձևավորումը սեռերի փոխհարաբերությունների ընթացքում: Սեռի հատկանիշով խտրականությունը՝ որպես սոցիալական անարդարություն: Գենդերային անհավասարությունը՝ որպես մարդասիրության համամարդկային բնույթի ըմբռնմանն ու գնահատմանը խանգարող գործոն:

Տղաների և աղջիկների վարքի մշակույթի և գիտակցական կարգա-

պահության ձևավորման առանձնահատկությունները: Գենդերային կարծրատիպերի ազդեցությունը դպրոցականների վարքի և արարքների վրա: Կարգապահությունը անձի ազատության գաղափարի, ինքնակազմակերպման սուբյեկտիվ ընդունակության գենդերային համատեքստում:

Անհատի գենդերային մշակույթի կապը նրա վարքագծի մշակույթի հետ: Տղաների և աղջիկների վարքի գենդերային տարբերակումը: «Այրական» և «կանացի» հասկացությունները: Գենդերային նույնականացման ձևավորման մեխանիզմները:

Երեխաների սեռական դաստիարակությունը

«Գենդեր» և «սեռ» հասկացությունները, նրանց տարբերությունը և առանձնահատկությունները տղաների և աղջիկների դաստիարակության համատեքստում: Առանձին ուսուցման ու դաստիարակության գաղափարը: Կանանց և տղամարդկանց գենդերային դերերը հասարակության մեջ: Կանանց և տղամարդկանց վարքի հայրիշխանական կարծրատիպերը և դրանց հաղթահարման ուղիները: Փոխադարձ հարգանքի վրա հիմնված գենդերային փոխհարաբերությունները՝ որպես ժողովրդավարական արժեք:

Միջանձնային փոխհարաբերությունների գենդերային դիսփլեյը: Խտրականությունը սեռի հատկանիշով: ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան:

Տղաների և աղջիկների՝ որպես ապագա հայրերի և մայրերի, գենդերորեն զգայուն վարքի, հմտությունների և համոզմունքների ձևավորումը: Տղաների և աղջիկների՝ ամուսնա-ընտանեկան, սեռական, անձնական փոխհարաբերությունների պատրաստականության առանձնահատկությունները: Ընտանիքում ամուսինների գենդերային դերերը: Գենդերային բախումն ընտանիքում և դրա կանխումը աշակերտների գենդերային լուսավորության միջոցով:

Սեռական դաստիարակության հիմնախնդիրների նկատմամբ տղամարդկանց և կանանց մոտեցումների առանձնահատկությունները: Սեռական դաստիարակությունը՝ ազգային առանձնահատկությունների նկատառումով:

Գլխորդականների աշխատանքային դաստիարակությունը և մասնագիտական կողմնորոշումը

Մարդու աշխատանքային գործունեության գենդերային տարբերությունները: Աշխատանքային դաստիարակության կազմակերպման խնդիրների, նպատակների, ձևերի ու մեթոդների ընտրությունը գենդերային տարբերությունների նկատառումով: Աշխատանքի բաժանումը սեռային հատկանիշով: «Կնոջ» և «տղամարդու» աշխատանքի մասին պատկերացումները հասարակության զարգացման ժամանակակից փուլում: Մասնագիտական խտրարարությունը սեռի հատկանիշով: «Ապակյա առաստաղ» հասկացությունը:

Գլխորդականների մասնագիտական կողմնորոշման ձևերի ընտրության գենդերային նկատառումները:

Աշխատանքի գենդերային չափումը: Տղաների և աղջիկների վերաբերմունքը ուսումնական և հանրօգուտ հասարակական աշխատանքի նկատմամբ: Աշխատանքային դաստիարակության ընթացքում բարոյական հատկանիշների և սոցիալական հմտությունների՝ կոլեկտիվիզմի, փոխօգնության ձևավորման առանձնահատկությունները:

Գլխորդականների գեղագիտական մշակույթը

Գեղագիտական գիտակցության գենդերային բաղադրիչները: Տղաների և աղջիկների գեղարվեստական-գեղագիտական ընկալման ձևավորման առանձնահատկությունները: Գենդերային զգայնության նկատառումը՝ որպես գեղագիտական զգացմունքների ձևավորման պայման: Տարբեր սեռերի գլխորդականների գեղագիտական ապրումների առանձնահատկությունները: Երեխաների տարիքային և սեռադերային առանձնահատկությունների նկատառումը մանկական կյանքի գեղագիտության կազմակերպման գործում: Երեխաների գեղագիտական և ընդհանուր ֆիզիկական զարգացման (երևակայություն, պատկերավոր և տրամաբանական հիշողություն և այլն) միասնության գենդերային հոգեվերլուծությունը: Տարբեր տարիքի տղաների և աղջիկների գեղարվեստական-ստեղծագործական գործունեության առանձնահատկությունները:

Գենդերային մոտեցումը ուսուցման գործընթացում գեղագիտական

դաստիարակության խնդիրների լուծման նկատմամբ: «Կանանց պատմություն», «կանանց գրականություն», «կանանց մշակույթ» հասկացությունների իմաստի բացահայտումը ուսուցման ընթացքում: Գենդերային հանդուրժողականությունը՝ որպես ստեղծագործական անհատի ձևավորման գործոն:

Երեխաների գեղագիտական դաստիարակության տարբեր տեսությունների գենդերային հայեցակարգերը. վերացական-ձևական ուսուցում, ինքնաբերական գեղավերստա-գեղագիտական դրսևորում, օգտապաշտական-գործնական գեղագիտական զարգացում:

Ֆիզիկական դաստիարակություն

Ֆիզիկական մշակույթի զարգացնող, դաստիարակող, մարզող առողջարարական-հիգիենիկ, լուսավորական գործառույթների գենդերային բնութագրերը:

Ֆիզիկական դաստիարակության միջոցների՝ ֆիզիկական վարժությունների, բնության առողջարար ուժերի, հիգիենիկ գործոնի, ծանրաբեռնվածության չափավորման սեռա-գենդերային հայեցակետերը: Տղաների և աղջիկների ֆիզիկական զարգացման առանձնահատկությունների նկատառումը ֆիզիկական դաստիարակության գործընթացում: Առողջ ապրելակերպի, առողջության համար թմրադեղերի, ծխախոտի և ալկոհոլի վտանգավորության մասին պատկերացումների ձևավորումը: Կնոջ օրգանիզմը և վնասակար սովորությունները: Այրականությունը և ֆիզիկական կուլտուրան ու սպորտը: Ֆիզիկական առողջությունը և կառուցվածքը՝ որպես մարդկային գեղեցկության, առողջ մայրության և հայրության, սոցիալական ակտիվության և մասնագիտական հաջողության հիմք:

Գենդերային կարծրատիպերի դրսևորումները սպորտում և կանանց զբաղվելը «տղամարդկային մարզաձևերով»: Սեռադերային նույնականացումը սպորտում:

Ընտանեկան դաստիարակություն

Ամուսնությունը և ընտանիքը պատմական զարգացման ընթացքում: Ընտանեկան դաստիարակության էությունը, խնդիրները, բովանդակությունը արդի փուլում: Դպրոցի, ընտանիքի և հասարակու-

թյան կապը մարդասիրական դաստիարակության խնդիրների լուծման գործում: Ընտանիքը՝ որպես անհատի սոցիալականացման գործոն: Ընտանիքում կնոջ և տղամարդու սոցիալականացման առանձնահատկությունները: Ընտանիքում կնոջ և տղամարդու դերերի մասին հայրիշխանական կարծրատիպային պատկերացումները: Գենդերային իրավահավասարությունը ընտանիքում՝ որպես ընտանիքի ամրապնդման և երեխաների դաստիարակության գործոն: Ազգային ավանդույթներն ու ընտանիքի առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը երեխաների դաստիարակության վրա: Հայաստանում սոցիալական, տնտեսական, քաղաքական փոխակերպումների ազդեցությամբ ծնողների ավանդական դերերի և գենդերային վարքի փոփոխությունները և դրանց ազդեցությունը երեխաների դաստիարակության վրա:

XV. ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կառավարման էությունը և հիմնական գործառնությունները

Կրթական հաստատությունների սոցիալական կազմակերպման կառուցվածքը: Հասարակության և մշակույթի գենդերային շերտադասության ընդօրինակումը կրթական համակարգում:

Գլխորդական մանկավարժական հանրույթի գենդերային բնութագիրը և գենդերային հաշվեկշիռը: Գասավանդվող առարկաների տարբերակումը «տղամարդկանց» և «կանանց» չափանիշով: Գլխորդի ղեկավարի աշխատանքի «տղամարդկային» և «կանացի» ոճերը: Գենդերային հավասարության սկզբունքները դպրոցի կառավարման գործում: Գլխորդի ղեկավարների՝ տնօրենի, ուսմասվարի, կազմակերպչի գործառնությունների գենդերային չափումները: Կրթական համակարգի ֆեմինացումը և դպրոցում տղամարդկանց թույլ ներկայացվածության հիմնախնդիրը, ապահաշվեկշռվածության հետևանքները ուսումնադաստիարակչական գործընթացում: Գասի մանկավարժական վերլուծության գենդերային բաղադրիչները. դասի ընթացքում տղաների և աղջիկների վարքի, ակտիվության դրսևորման, մասնակցության առանձնահատկությունները:

Նորարարական գործընթացները կրթության մեջ:

Ուսուցիչների մասնագիտական – մանկավարժական մշակույթի զարգացում: Գենդերային կրթությունը՝ որպես ուսուցման մեջ նորարարական գործընթացի տարր: Գենդերային մշակույթը՝ որպես ուսուցիչների մասնագիտական-մանկավարժական մշակույթի անբաժանելի մաս:

«Մանկավարժություն» առարկայի շրջանակներում մասնագետ-մանկավարժը պետք է գիտենա

- գենդերային տեսության հիմնական հասկացությունների, կատեգորիաների, մեթոդների և հայեցակարգային հիմքերի,
- գենդերի՝ որպես սոցիոմշակութային կառույցի,
- գենդերային մշակույթի հիմնական արժեքային չափանիշների և բաղադրիչների,
- գենդերային կարծրատիպերի կայացման նախադրյալների և սկզբունքների,
- դպրոցականների տարիքային զարգացման տարբեր փուլերում գենդերի կառուցման առանձնահատկությունների,
- մարդասիրական դաստիարակության մեջ գենդերային հիմնախնդիրների տեղի,
- տղամարդու և կնոջ լիդերային առանձնահատկությունների, մանկական և մանկավարժական հանրություններում դրանց դրսևորումների,
- դպրոցական հանրության կառավարման կանաչի և տղամարդկային մեթոդների,
- դպրոցականների քաղաքացիական ակտիվության ձևավորման գործում գենդերային դաստիարակության դերի,
- դպրոցականների սոցիալականացման գործում գենդերային մոտեցման,
- մանկավարժական հիմնախնդիրների լուծման մեջ գենդերային մոտեցման նշանակության մասին:

Մանկավարժական գիտելիքների բնագավառում մասնագետ-մանկավարժը պետք է տիրապետի

- մանկավարժական գործունեության ընթացքում և ուսումնադաստիարակչական իրավիճակը վերլուծելիս գենդերային տեսության գիտելիքների կիրառման մեթոդներին ու հնարքներին:
- գենդերային հատկությունների նկատառումով սոցիալականացման մեթոդներին և միջոցներին:

Մասնագետ-մանկավարժը պետք է կարողանա

- առանձնացնել գենդերային տեսության կիրառական, տեսական և արժեքային տեսակետներն ինչպես մանկավարժական գործունեության մեջ, այնպես էլ առօրյա կյանքում,
- ունեցած գիտելիքները համապատասխանացնել նոր ժամանակի պահանջներին և փոփոխվող սոցիոմշակութային իրադրությանը,
- մասնագիտական, քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի երևույթների գենդերային վերլուծության հիման վրա ձևավորել քաղաքացիական դիրքորոշում,
- բացահայտել կրթության և դաստիարակության գործընթացում միջանձնային բոլոր հարաբերությունների՝ գենդերով պայմանավորված բնույթը:

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԵՍԱԿԱՆ
ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ
ՊԱՀԱՆՁՆԵՐ**

«ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Արդի հոգեբանությունը կոչված է օգնելու մարդուն կողմնորոշվելու բարդ սոցիալական կապերի և հակասությունների համակարգում, նկարագրելու և բացատրելու այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են մարդուն իր, այլ մարդկանց, սոցիալական ինստիտուտների և բարդ սոցիալական երևույթների հետ հարաբերությունների բազմազանությունն ընկալելիս:

Այն կոչված է բացահայտելու հոգեբանական և սոցիալական այն գործոնները, որոնք հաջողություն են ապահովում մարդու հարմարմանը ժամանակակից աշխարհին, և էական գործնական օգնություն ցույց տալու նրան արմատական սոցիալական փոխակերպումների պայմաններում անկայուն աշխարհում կողմնորոշվելու համար: Այս տեսանկյունից գենդերային հիմնախնդիրները պետք է արտացոլում գտնեն հոգեբանական կրթության համակարգում:

Անձի հարմարումը փոփոխվող պայմաններին, մարդկային ներուժի զարգացման հնարավորությունների ընդլայնումը և, ի վերջո, մարդու կյանքի որակի բարձրացումն անհնար են առանց սեռերի հավասարության ապահովման, առանց տղամարդկանց և կանանց համար ընտրության հնարավորությունների ընդլայնման: Արդի կրթությունը պետք է դառնա գենդերային հավասարության հասնելու հիմնական միջոց: Հատկապես կրթությունն է կոչված ապահովելու լուսավորական աշխատանքը, ինչպես նաև նպաստել գենդերային չափանիշների և դիրքորոշումների ձևավորմանը և կազմավորել ճիշտ պատկերացումներ գենդերային հավասարության մասին: Բարձրագույն դպրո-

ցում հոգեբանական կրթության կառուցվածքում և բովանդակության մեջ նպաստավոր է արտացոլել արդի հիմնախնդիրները և ժամանակակից գիտության նվաճումները գենդերային հետազոտությունների բնագավառում:

Տղամարդկանց և կանանց հոգեբանության և նրանց տարբերությունների ուսումնասիրումն անմիջականորեն առնչվում է ոչ միայն որոշակի մարդուն, այլև հասարակությանն ամբողջությամբ:

Մարդու սեռի առանձնահատկությունների և նրա հոգեբանական տարբերությունների հետ կապված հարցերը դասվում են արդի հասարակությունում առավել ակտիվ քննարկվող հարցերի շարքը, քանի որ տղամարդկանց և կանանց դերերը զգալի փոփոխություններ են կրում:

Գենդերային մոտեցման ներառումը գիտական հետազոտություններում հնարավորություն է տալիս խորացնելու մարդու պատկերացումներն իր մասին և նրան ավելի զգայուն է դարձնում սոցիալական ազդեցությունների նկատմամբ:

Գենդերային հետազոտությունների զարգացման ներկայիս մակարդակը Հայաստանում և արտասահմանում պայմաններ է ստեղծում դիտելու գենդերային մոտեցումը որպես սոցիալական գիտությունների նոր, արդիական տեսական ուղղություն, որը միտված է սոցիալական գործունեության տարբեր ոլորտներում մարդու ինքնադրսևորման հավասար, անկախ սեռից, հնարավորությունների ձևավորմանը:

Այնհայտ է, որ գենդերային հետազոտությունները կդառնան հոգեբանական գիտության անբաժանելի մասը: Հոգեբանության տարբեր բնագավառներում, միջանձնային գործողությունները, զգայական և իմացական ոլորտները, սեռական տարբերակումը, նույնականացումը և սոցիալականացումն ուսումնասիրելիս գենդերային հայեցակետի առանձնացումն արդիական հիմնախնդիր է և անհրաժեշտություն:

Հոգեբանության մեջ գենդերային մոտեցումը պետք է ուղղված լինի ընտանեկան և մասնագիտական ոլորտներում տղամարդկանց և կանանց անձնային ինքնադրսևորման հնարավորությունների վրա նրանց

սեռական տարբերակման և նրանց միջև ձևավորվող հարաբերություններում ստորակարգության հետևանքների վերլուծությանը:

Բարձրագույն դպրոցում հոգեբանության դասավանդման մեջ գենդերային գիտելիքների ներառումը պետք է իրականացվի.

- մասնագիտական ընդհանուր հոգեբանական գիտակարգերում գենդերային բաղադրիչի ներառման,
- գենդերային հիմնախնդիրների հոգեբանական հայեցակետերին նվիրված հատուկ դասընթացների մշակման,
- ուսանողների գիտահետազոտական գործունեության,
- ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով:

Չափորոշիչի նպատակն է մասնագետ հոգեբանների պատրաստման կրթական գործընթացում գենդերային գիտելիքի ներառումը, որն ուղղված է ավանդական «անսեռ» հոգեբանությանը բնորոշ միակողմանիության հաղթահարմանը, սեռական տարբերությունների հաշվառմամբ դիտարկվող բազմապիսի հոգեբանական հատկանիշների բացահայտմանը, գենդերային մոտեցման ներմուծումը ուսանողներին հոգեբանական հետազոտությունների այնպիսի առաջնահերթ ուղղություններին ծանոթացնելիս, ինչպիսիք են՝

- տղամարդկանց և կանանց հոգեբանական բնութագրերի և վարքի առանձնահատկությունների նմանությունների ուսումնասիրումը,
- գենդերային կարծրատիպերը հաղթահարելու համար տղամարդկանց և կանանց վարքի արդյունավետ ռազմավարությունների և մարտավարությունների ուսումնասիրումը,
- մասնագիտական ոլորտում կանանց և ընտանեկան ոլորտում տղամարդկանց հաջող ինքնադրսևորման անձնային նախադրյալների ուսումնասիրումը,
- տղամարդկանց և կանանց իրական հարաբերությունների, ոչ թե տարածված գենդերային կարծրատիպերի ուսումնասիրումը,
- կյանքի ուղենիշների և գործունեության տարբեր ձևերի ընտրության

վրա առնականության/կանացիության ազդեցության ուսումնասիրումը, տղամարդկանց և կանանց սեքսուալության զարգացումը:

Գենդերային գիտելիքների ներառումը հոգեբանական ընդհանուր մասնագիտական շարքի առարկաների դասավանդման մեջ նախատեսում է հետևյալ խնդիրների լուծումը.

- գենդերի հայեցակարգի բովանդակության բացահայտում և տղամարդկանց ու կանանց կենսագործունեության սոցիալ-մշակութային և հոգեբանական տարբերությունների մեկնաբանում,
- ծանոթացում գենդերի կատեգորիաներին հոգեբանական հասկացությունների կառուցվածքում և գենդերային հարաբերությունների հետազոտման մեթոդներին,
- ուսանողների մեջ զարգացած, անձնային ինքնադրսևորումը դժվարացնող սեռադերային կարծրատիպերից գերծ գենդերային գիտակցության ձևավորում,
- գենդերային հիմնախնդիրների ընդգրկում հոգեբանական փորձարարական հետազոտություններում ուսանողների գիտահետազոտական աշխատանքը կազմակերպելիս:

Ներածական մաս

Ընդհանուր գիտելիքներ գենդերային տեսությունից

- Մեռ և գենդեր հասկացությունների տարբերակումը: «Գենդերը»՝ որպես սոցիալական հասկացություն, որպես շերտադասական կատեգորիա: Առնականության և կանացիության չափանմուշները:
- «Գենդերը»՝ որպես մշակութաբանական հասկացություն: Գենդերային չափանիշների կախվածությունը մշակույթից, ազգային ավանդույթներից և սովորույթներից, կրոնից, պատմությունից, հասարակության քաղաքակրթվածության աստիճանից:
- Գենդերային կարծրատիպեր: Կարծրատիպերի գործառույթները:

Գենդերային նախապաշարմունքներ: Նախապաշարմունքների աղբյուրները, դրանց բացասական դերը: Գենդերային դիրքորոշումներ:

- Գենդերային սոցիալականացում. փուլերը, ինստիտուտները, գործակալները, տեխնոլոգիաները:
- Հասարակության գենդերային կազմակերպման մոդելները՝ մայրիշխանություն, հայրիշխանություն, գիլանիա:
- Կանանց շարժում: Ֆեմինիզմ:
- Կանանց իրավունքները մարդու իրավունքների համատեքստում:
- Գենդերային փորձաքննությունը և վերլուծությունը ժամանակակից գիտական հետազոտություններում և գործնականում:

I. Ընդհանուր հոգեբանության հիմունքներ

1.1. Ընդհանուր հոգեբանության հետազոտման առարկան և նրա մեջ գենդերային հիմնախնդիրների բացահայտումը

Հոգեբանական հետազոտությունների մեթոդաբանությունը՝ գենդերային տարբերությունների հաշվառմամբ: Գենդերային հետազոտությունների մեթոդները և մեթոդիկաները. դիտում, հարցազրույց, ազատ զրույց, ֆոկլուս խումբ, հարցում, փորձարարական հետազոտություններ, միջմշակութային հետազոտություններ, կոնտենտ-վերլուծություն, անձնական փաստաթղթերի վերլուծություն, կենսագրական մեթոդ, ասոցիատիվ և պրոեկտիվ մեթոդիկաներ, սեմանտիկական դիֆերենցիալ, մետա վերլուծություն:

Սեռի հոգեբանության բնագավառում գիտական հետազոտությունների պատմական ակնարկ:

Ճանաչողական գործընթացներում, հոգեշարժողության մեջ, անձի հատկություններում և հուզական վիճակներում գենդերային տարբերությունների հետազոտման մեթոդները:

Բնության մեջ երկու սեռերի առկայության նպատակահարմարությունը և կենսաբանական նախորդումը: Տարբերակման հիմնախնդիր-

րը և սեռական տարբերակման կենսաբանական մեխանիզմները: Սեռական սոցիալականացման հիմնական սուբյեկտները:

Գենդերային դերեր, գենդերային համակարգ, գենդերային կարծրատիպեր և գենդերային դիրքորոշումներ:

Երեխաների սեռադերային սոցիալականացման վրա հոր և մոր ազդեցության առանձնահատկությունները:

Գենդերային տարբերությունների հետազոտումը: Գենդերը և ուղեղի ֆունկցիոնալ անհամաչափությունը: Ուղեղի ֆունկցիոնալ անհամաչափության դրսևորումները՝ կապված սեռի հետ:

Գենդերային տարբերությունները և մանությունները հոգեշարժողական զարգացման տեմպերում և նյարդային համակարգի հատկանիշների ու խառնվածքի դրսևորումներում, նյարդային համակարգի ուժեղության, շարժունակության և նյարդային գործընթացների հաշվեկշռի, խառնվածքի առանձնահատկություններում, բնավորության շեշտադրվածության տիպերի տարածվածության մեջ:

1.2. Անձնային զարգացման գործընթացի գենդերային ուղեկցումը

Անձի հիմնախնդիրը հոգեբանության մեջ: Իզական և արական սեռի անձանց ինքնագնահատականը: Ինքնահարգանք: Անձի ինքնագնահատականների համապատասխանությունը: Արտաքինի, սեփական տարիքի արհեստավարժության ինքնագնահատականը:

Գենդերային տարբերությունները տղամարդ և կին անձի հատկություններում (ագրեսիվություն, հարմարվողականություն, ապրումակցում, ոչ խոսքային վարք), մոտիվացիոն ոլորտում (պահանջմունքների մակարդակ), կամային որակների դրսևորման մեջ:

Գենդերը և հույզերը: Սեռական տարբերությունները հիմնարար հույզերի (զայրույթ, տխրություն, տագնապ և վախ, ուրախություն) գերիշխանության մեջ: Տղամարդկանց և կանանց էքսպրեսիվությունը, գենդերային տարբերությունները հուզական տիպերի դրսևորման մեջ (ամաչկոտություն, ապրումակցություն, մեղք և խղճամտություն, տագնապախռովություն, պրոբլեմային մտահոգություն, նախանձոտություն, խանդ):

Հուզական վիճակների գենդերային առանձնահատկությունները: Հուզական հիշողություն, ուշադրություն: Հուզական խանգարումներ (ընկճվածություն, կոնֆլիկտայնություն, գրգռվածություն, կասկածամտություն, ագրեսիվություն):

Գենդերային տարբերությունները իմացական ոլորտում: Գենդերը և ուշադրությունը, գենդերը և հիշողությունը, տղամարդկանց և կանանց զգայական ընկալման ընդունակությունները: Տեսողական-տարածական, մաթեմատիկական ընդունակություններ: Կանացի մտածողության, «կանացի տրամաբանության» առանձնահատկությունները, իզական և արական սեռի անձանց կրեատիվությունը: Բանականության գործակիցը: Տղամարդկանց և կանանց լեզվական (վերբալ ընդունակություններ, խոսքի խանգարումներ), գեղարվեստական և երաժշտական ընդունակությունները:

Տղամարդկանց և կանանց նմանություններն ու տարբերությունները կանխատեսումային կոմպետենտության, ընդհանուր իմացունակության, վերացական մտածողության տեսանկյունից:

Հոգեկան առողջության գենդերային տեսակետները: Գենդերային ժողովրդագրություն: Տղամարդկանց և կանանց վալեոլոգիկ մտածողության կայացումը: Չափազրված մոտեցումը և երկակի չափորոշիչը հոգեկան առողջության ոլորտում: Անդրոկենտրոն, մասկուլինային և անդրոգեն մոտեցումները հոգեկան առողջությանը: Չափազրված մոտեցումը՝ որպես այլընտրանք: Մասնագետների գենդերային կանխակալ կարծիքները:

II. Սոցիալական հոգեբանություն

Գենդերային մոտեցման ուրույն առանձնահատկությունները սոցիալական հոգեբանության մեջ

Սոցիալ-հոգեբանական հետազոտությունները և դրանց քննադատությունը գենդերային հետազոտությունների տեսանկյունից: Վարկածի, հետազոտության նպատակների, խնդիրների ձևակերպումը: Հե-

տագոտության առարկայի, օբյեկտների և մեթոդների ընտրությունը: Արդյունքների վիճակագրական մշակումը և մեկնաբանությունը:

Գենդերային հարաբերությունների հետազոտման մեթոդները սոցիալական հոգեբանության մեջ, հոգեբանական ինքնակենսագրություն, ասոցիատիվ, պրոեկտիվ մեթոդիկաներ, իմաստաբանական դիֆերենցիալ և այլն:

Մեռերի հաղորդակցման և փոխգործողության օրինաչափությունները: Հաղորդակցման կարևորությունը տղամարդկանց և կանանց համար: Սոցիալական ընկալման առանձնահատկությունները: Հաղորդակցման տղամարդկանց և կանանց ոճերը, գենդերային տարբերությունները ընկերության և սիրո վերապրումներում:

Սոցիալական հարաբերությունները և գենդերը: Գենդերային նախապաշարմունքներ, կարծրատիպեր, դիրքորոշումներ: Մեռադերային կարծրատիպերի բովանդակությունը: Գենդերային կարծրատիպերի պաշտպանական-արդարացուցիչ, կարգավորիչ, վերահաղորդիչ գործառույթները: Տղամարդկանց և կանանց պատկերացումները միմյանց և իրենց մասին: Գենդերը և հարմարվողականությունը, կոնֆլիկտը և հաշտեցումը: Ազգային բնավորությունը էթնիկական կարծրատիպերում:

Անձի սոցիալ-հոգեբանական բնութագիրը: Գենդերային դերերը և իդեալները: Գենդերային սոցիալականացման հասկացությունները: Մեռադերային սոցիալականացման հոգեբանական մեխանիզմները. սոցիալական ակնկալիքներ և ամրացումներ, սեռադերային սոցիալականացման գիտակցումը, նույնացման գործընթացը: Էթնոսի դերը անձի սոցիալականացման գործում:

Անձի վարքի գենդերային մեխանիզմները:

Տղամարդկանց և կանանց վարքային ռազմավարությունները կյանքի տարբեր իրավիճակներում: Տղամարդկանց և կանանց վարքի ձևերի տիպական տարբերությունների վերլուծություն: Տղամարդկանց և կանանց վարքի առանձնահատկությունները. այլասիրական վարք, ագրեսիվ և հակահասարակական վարք: Վերաբերմունքը նորաձևության նկատմամբ՝ որպես տղամարդկանց և կանանց վարքի ուրույն ձև:

Լիդերության գենդերային հիմնադրույթները: Վարքի լիդերային և գենդերային ոճերի ուսումնասիրում:

Ավանդական տեսական մոտեցումները՝ կոգնիտիվիզմ, բիհեվիորիզմ, ֆրոյդիզմ: Լիդերության ժամանակակից տեսությունները (Ջ.Հոմանս, Գ. Քելլի, Ռ. Քեթթել, Ռ. Բեյլզ և այլք): Կանանց լիդերությունը՝ որպես սոցիալ-հոգեբանական երևույթ:

Սեքսուալ վարքի գենդերային առանձնահատկությունները: Սեքսուալ կուլտուրայի հոգեբանական առումները: Սեքսուալ դիրքորոշումների գենդերային տարբերությունների ազդեցությունը վարքի վրա: Սեռական տարբերությունները սեքսուալ վարքում: Տղամարդու և կնոջ սեքսուալ զարգացման շեղումները: Հոմոգենդերային սեքսուալ հարաբերություններ:

Միջխմբային հարաբերությունների գենդերային վերլուծություն: Միջանձնային և միջխմբային փոխգործողության տարբերությունը: Սոցիալական դիրքորոշումների և սոցիալական կարծրատիպերի տարբերությունը:

Ընտանեկան հարաբերություններում սեռադերային տարբերական հիմնախնդիրը:

Սեռադերային դիրքորոշումների ազդեցությունը «ամուսին-կին» հարաբերությունների համակարգի վրա: Ամուսնական փոխգործողություն, ամուսնության տիպ, սեռային դերեր, սեքսուալություն, արյունապղծություն:

Ծնողականությունը՝ որպես սոցիալ-մշակութային երևույթ: Մայրություն և հայրություն: Մոր և հոր վարքի ոճերը: «Ծնողներ-զավակներ» հարաբերությունների համակարգի վրա գենդերային դիրքորոշումների ազդեցության ազգային առանձնահատկությունները: Դիսֆունկցիոնալ ընտանիքներ: Ընտանեկան բռնություն: Ժամանակակից հայ ընտանիքի վիճակը և ներընտանեկան բռնության հիմնախնդիրները:

Եկեղեցու՝ որպես սոցիալական ինստիտուտի, վերաբերմունքը սեռերի անհավասարության հարցերին:

Խմբային գիտակցության հիմնախնդիրը. զանգվածային շարժումներ: Ֆեմինիստական շարժման տարբեր ուղղությունները՝ որպես հա-

սարակական շարժման տարբերակներ (ամազոն-ֆեմինիզմ, մշակութային ֆեմինիզմ, անջատողականություն, արմատական ֆեմինիզմ, մարդասիրական կամ ինտելեկտուալ ֆեմինիզմ): Կանանց շարժման զարգացումը Հայաստանում:

Էթնոհոգեբանության սոցիալ-հոգեբանական հայեցակետերը: Գենդերային դերերի կախվածությունը մշակույթից և դարաշրջանից:

Միջխմբային և միջանձնային հարաբերությունները էթնոսի ներսում: Այդ հարաբերությունների գենդերային հայեցակետերը: Միջէթնիկական հարաբերությունների գենդերային հայեցակետերը:

Միգրացիայի հիմնախնդիրը և դրա հոգեբանական առանձնահատկությունները: Մուտքը նոր միջավայր, տղամարդկանց և կանանց դերեր:

III. Տարիքային հոգեբանություն: Չարգացման հոգեբանություն

Սեռային դերի յուրացման տեսությունները և սեռադերային սոցիալականացման մեխանիզմները: Ավանդական հոգեվերլուծական հայեցակարգը (նույնացման տեսությունը), իմացական զարգացման տեսությունը: Սոցիալական ուսուցման (սոցիալական տիպականության) տեսությունը: Իմացական ոլորտում տղամարդկանց և կանանց տարբերությունների վերաբերյալ Է. Մաքքորթի և Ք. Ջեքլինի հետազոտությունների արդյունքները: Կենսաբանական և սոցիալական գործոնների ազդեցությունը տղամարդկանց և կանանց ընդունակությունների վրա:

Տղամարդկանց և կանանց տարիքային ճգնաժամերի հոգեբանություն և դրա ազգային առանձնահատկությունները:

Գենդերային սոցիալականացումը մանկական տարիքում:

Սեռական տարբերակման հայեցակարգերը: Սեռական երկակիությունը և սեռական սիմվոլիզմը՝ որպես սեռական տարբերությունների ուսումնասիրման հիմնական մոտեցումներ: Սեռական տարբերակման

կենսաբանական հայեցակետերը, Վ. Ա. Գյոդակյանի սեռական երկակիության տեսությունը:

Աշխատանքի բովանդակության տարբերությունների մասին կարծրատիպի տարածումը: Տ. Պարսոնսի և Ռ. Բեյլզի տեսությունը սեռերի «բնական» փոխընդհանուր մասին: Ինստրուկցիոնալությունը և էքսպրեսիվությունը՝ որպես տղամարդկանց և կանանց վարքի հիմնական ոճեր:

Գենդերային սոցիալականացման անհամաչափությունը մանկական տարիքում: Մեռային դերի յուրացման դիմամիկան մանկական տարիքում: Իրեն և ուրիշներին ընկալումը: Գենդերային սխեմաների զարգացումը:

Մեռադերային զարգացման բնույթը մանկության հիմնական տարիքային փուլերում: Գենդերային տարբերությունները և նմանությունները տղաների և աղջիկների սոցիալականացման, իմացական և մոտիվացիոն ոլորտներում, բարոյականության ոլորտում:

Գարրոցական դասագրքերի և ՋԼՄ-ների ազդեցությունը մանկական տարիքում գենդերային սոցիալականացման վրա: Կանանց և տղամարդկանց կերպարների ներկայացվածությունը դարձողական դասագրքերում: Ուսուցիչների վարքի առանձնահատկությունները: Գենդերային սոցիալականացումը դեռահասության և պատանեկության տարիքում: Մեռական նույնականացման զարգացումը՝ կապված դիրքորոշումների, վարքի, հարաբերությունների փոփոխության հետ: Մեռական տարբերությունները սեքսուալության դրսևորումներում: Գենդերային նախապատվությունները մասնագիտություն ընտրելիս:

Գենդերային սոցիալականացումը չափահաս տարիքում: Մեռադերային կարծրատիպերի բովանդակությունը, գենդերային կարծրատիպերի գործառույթները՝ պաշտպանական-արդարացուցիչ, կարգավորիչ, վերահաղորդիչ: Աշխատանքային գործունեությունը սեռական տարբերությունների տեսանկյունից:

Ընտանեկան հարաբերությունների գենդերային հիմնախնդիրները: Գերային սպասումները և «կյանքի որակի» հայեցակարգը: Հոգեբանական սեռական տարբերությունները՝ որպես սեռադերային կոնֆլիկտների և սթրեսների աղբյուր: Բռնությունն ընտանիքում: Ավանդաբար կա-

նանց և ավանդաբար տղամարդկանց գենդերային դերերով կանխորոշված սահմանափակումների ազգային առանձնահատկությունները:

Մասնագիտական հարաբերությունների գենդերային հիմնախնդիրները: Խտրականության տեսությունները: Կանանց զբաղվածության գործոնները և հիմնախնդիրները: Մասնագիտական ոլորտում տղամարդկանց և կանանց նկատմամբ խտրականության պատճառները՝ առնականության և կանացիության կարծրատիպերը, պատկերացումները գենդերային դերերի մասին, մասնագիտական ընդունակությունների կարծրատիպերը:

Կանայք գործարար աշխարհում: Մասնագիտական խտրարարություն: Գենդերային խտրականության և խտրարարության հաղթահարման եղանակները: Գենդերային հավասարության հեռանկարը: Հոգեբանական ախտորոշիչ ընթացակարգերի առավելություններն ու բացթողումները մասնագիտական կողմնորոշման և տարբեր սեռերի կարգերի ընտրության գործում:

Գենդերային սոցիալականացումը տարեց հասակում: Համաշխարհային փորձը և ազգային առանձնահատկությունները: Տարեց մարդկանց խմբերի սոցիալ-ժողովրդագրական վերլուծությունը:

Տղամարդկանց և կանանց ինքնադրսևորման եղանակները տարեց հասակում, ինքնադրսևորմանը խոչընդոտող գործոնները: Գենդերային կարծրատիպերի ազդեցությունը ծեր մարդկանց կյանքի որակի վրա: Վերաբերմունքը տարեցների նկատմամբ հայ հասարակությունում:

Ֆիզիկական և հոգեբանական առողջության հիմնախնդիրների տարիքային և գենդերային հայեցակետերը:

IV. Անձի հոգեբանություն

Անձի կառուցվածքի գենդերային բաղադրիչը և դրա ուսումնասիրման տարբեր մեթոդական մոտեցումները հոգեբանության մեջ (կանանց ֆեմինիստական հոգեբանություն, սոցիալական կոնստրուկտիվիզմ):

Մեռի կատեգորիան հոգեբանական հասկացությունների կառուց-

վածքում, կենսաբանականի և սոցիալականի հարաբերակցությունը հոգեբանության մեջ մինչև հոգեվերլուծության շրջանը:

Գենդերի հիմնախնդիրը Ֆրոյդի հոգեվերլուծությունում: Մեռի էությունը և կենսաբանական ֆունդամենտալիզմը: Ավանդական ֆրոյդիզմի գաղափարները (երկսեքսուալության, էրիպյան բարդության և ներքինացման բարդության)՝ որպես սեռական նույնականացման գործընթացի վերլուծության հայեցակարգեր: Կնոջ՝ որպես թերի տղամարդու զարգացման ախտանշանությունը: Մեռի և գենդերի փոխադարձ փոխակերպումները, սոցիալական գործոնի փոխգործողությունը: Հոգեվերլուծության առաջացրած փոփոխությունները հասարակական կարծիքում:

Մեռը Կարլ Յունգի վերլուծական հոգեբանության մեջ: Անիմայի և ամիմոսի նախնատիպերը՝ որպես տղամարդկանց և կանանց հոգեկանի «ստվերային» բաղադրիչներ: Աշխատանքն այս նախնատիպերի հետ անհատականացման ճանապարհին՝ որպես մարդու հոգեբանական զարգացման նպատակներ:

Միջսեռային հարաբերությունների վերլուծությունը Ա. Ադլերի անհատական հոգեբանության մեջ և սեռերի փոխլրացման գաղափարները: Մեռային դերերի տարբերակման պատճառները: Մեռային դերերի ստորակարգությունը և տղամարդկանց գերիշխումը: Տղաների և աղջիկների սոցիալականացման առանձնահատկությունները: Կոնֆլիկտը սեռերի միջև և դրա պատճառները:

Կարեն Հորնիի՝ կնոջ պոզիտիվ հոգեվերլուծությունը: Հոգեվերլուծության «արականության» քննադատությունը: Հոգեբանական անդրոգենություն հասկացությունը: Կ. Հորնիի՝ կնոջ հոգեբանության տեսությունը՝ որպես տղամարդկանց և կանանց տարբերությունների վերաբերյալ նոր հայացքների արտացոլում սոցիոմշակութային ազդեցությունների համատեքստում: Դերային հակադրությունները և դրանց դերը տղամարդկանց և կանանց հարաբերություններում:

Մարգարետ Միդի ուսումնասիրությունները: Ազգագրական բուժը: Կին ազգաբանների երևան գալը: Մեռերի գլխավոր տարբերությունների որոնումները: Գենդերային կառուցվածքի տարբերությունները տարբեր ժողովուրդների մեջ: Անդրադարձ սեփական մշակույթին. գեն-

դերը՝ որպես հոգեբանական հիմնախնդիրների պատճառ: Մեռերի գլխավոր տարբերությունների որոնում. վերաբերմունքը վերարտադրողական գործընթացներին:

Ֆեմինիստական հայեցակարգերը հոգեբանության մեջ: Հոգեվերլուծական կողմնորոշում. ընտանիքը Նենսի Խողորովի հետազոտություններում: Քերոլ Գիլլիգան. տղամարդկանց և կանանց բարոյական և էթնիկական հիմնախնդիրների ուսումնասիրում: Գեյլ Ռուբինը սեռ և գենդեր համակարգերի վերարտադրության մասին: Հետմոդեռնիզմը ֆեմինիզմում: Նոր տեսությունների յուրացումը: Պ. Դրեփեր. էթնոհոգեբանությունը գենդերային դերերում: Ջ. Բատլերի կողմից Ֆրոյդի, Լականի, Ռիվիերի հայեցակարգերի վերլուծությունը. գենդերը՝ որպես նույնականությունների դիմակահանդես:

Վիզոտսկու հիմնադրույթը. սոցիալական գործոնի գերակայություն: Մարքսիստական կողմնորոշման առանձնահատկությունները: Անհետացած սեռը: Էդ. Սիմփսոնը Վիզոտսկու հայեցակարգում «ուրիշի» դիրքորոշման վերլուծության և ՄակԶիննոնի և Ջ. Սիդի հետազոտությունների հետ դրա հատման կետերի մասին: Երեխայի գենդերային սոցիալականացումը՝ որպես նշանային միջնորդավորման ազդեցության ներքնայնացման գործընթաց:

Գենդերային հիմնախնդիրները փորձարարական հոգեբանական հետազոտություններում: Հետազոտության ազդեցությունը հետազոտողի և փորձարկվողների վրա: Հետազոտողների կանխակալության հաղթահարումը և կանխարգելումը: Մետավերլուծություն և գենդերային հոգեբանություն:

«Հոգեբանություն» մասնագիտության ուսանողների գենդերային տեսության գիտելիքների մակարդակի պահանջներ

Ապագա մասնագետ-հոգեբանը պետք է յուրացնի հետևյալ գիտելիքները.

– արդի գենդերային տեսության հիմնական հասկացությունների, մո-

- տեցումների ու հիմնադրույթների և գենդերային հետազոտությունների յուրահատկությունը,
- հոգեբանության գենդերային դիսկուրսի և հոգեբանական հասկացությունների կառուցվածքում գենդերի տեղը,
 - հոգեբանական հասկացությունների կառուցվածքում գենդերի սահմանման չափանիշները,
 - գենդերային գործոնի հաշվառմամբ մարդու հոգեբանության ճանաչման ժամանակակից գիտական մեթոդների հնարավորությունները,
 - սեռական տարբերակման հոգեբանական և կենսաբանական մեխանիզմները,
 - հոգեշարժողական զարգացման տեմպերի և նյարդային համակարգի հատկությունների դրսևորման գենդերային տարբերությունները և նմանությունները,
 - ճանաչողական, հուզական և մոտիվացիոն ոլորտների և անձի հատկությունների գենդերային տարբերությունները,
 - սոցիալական ընկալման առանձնահատկությունները, տղամարդկանց և կանանց հաղորդակցման ոճերը, գենդերային նախապաշարմունքները, կարծրատիպերը, դիրքորոշումները,
 - անձի վարքի գենդերային մեխանիզմները,
 - ժամանակակից սեռադերային տեսությունները,
 - տղամարդկանց և կանանց կյանքի հիմնական տարիքային հատվածներում գենդերային սոցիալականացումը:

Ուսանողը պետք է կարողանա.

- բացահայտել գենդերի հիմնախնդիրները փորձարարական հոգեբանական հետազոտություններում,
- կիրառել գենդերային վերլուծության մեթոդաբանությունը հոգեբանական պրակտիկայում,
- տիրապետել տղամարդկանց և կանանց սեռադերային առանձնահատկությունների ուսումնասիրման մեթոդներին,
- պետք է կարողանա նպատակ դնել, ձևակերպել խնդիրներ և կա-

տարել հետազոտություններ՝ առանց գենդերային կանխակալությունների,

- պատրաստ լինել համագործակցության գենդերային հետազոտության հարակից ոլորտների մասնագետների՝ սոցիոլոգների, փիլիսոփաների, իրավագետների և այլոց հետ:

Ուսանողը պետք է գիտակցի գենդերային հիմնախնդիրների էությունը, ունենա սեռադերային կարծրատիպերից զերծ, զարգացած գենդերային ինքնագիտակցություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Введение в гендерные исследования. Под редакцией Жеребкиной. Харьков, 2001.*
2. *Берн Ш., Гендерная психология. М., 2004.*
3. *Бендас Т. В., Гендерная психология. Изд. «Питер» / СПб, 2005.*
4. *Ильин Е. П., Дифференциальная психофизиология мужчины и женщины. Изд. «Питер» / СПб, 2003.*
5. *Палуди М., Секреты женщин в психологии. М., 2003.*
6. *Хорни К., Женская психология. Изд. «Питер» / СПб, 2003.*
7. *Майерс Д., Социальная психология. Изд. «Питер» / СПб, 2001.*
8. *Хьелл Л., Зиглер Д., Теории личности. Изд. «Питер» / СПб, 1999.*
9. *Крайг Г., Психология развития. Изд. «Питер» / СПб, 2000.*
10. *Брант Г., Природа женщины. Екатеринбург, 1999.*
11. *Смелзер Н., Социология. М., 1998г.*
12. *Кон И., Введение в сексологию. М., 1988г.*
13. *Фрейд З., Очерки по психологии сексуальности. М., 1990.*
14. *Попова Л., Гендерные аспекты самореализации личности. Уч. пособие. М., 1996.*
15. *Алешина Ю., Волович А., Проблемы усвоения ролей мужчин и женщин // Вопросы психологии, 1991, №4.*
16. *Клецина И., От психологии пола к гендерным исследованиям в психологии // Вопросы психологии. М., 2003, №1.*
17. *Мид М., Культура и мир детства. М., 1988.*
18. *Агеев В., Психологические и социальные функции полоролевых стереотипов // Вопросы психологии, М., 1987, №2.*
19. *Агеев В., Межгрупповое взаимодействие. М., 1990.*

20. Мацумото Д., Психология и культура. Изд. «Питер» / СПб, 2002.
21. Варданян Е., Введение в гендерные исследования, Ереван, 2002.
22. Бабаян С., Гендер и дискриминация, Ереван, 2002.
23. Налчаджян К., Семья и внутрисемейные конфликты, Ереван, 2001.
24. Петушин В., Валеология. М., 2004.
25. Налчаджян А., Этнопсихологическая самозащита и агрессия. Ереван, 2000.
26. Налчаджян А., Этническая характерология. Ереван, 2001.
27. Նալչաջյան Ա. Էթնիկական հոգեբանություն: Եր., 2001:
28. Նալչաջյան Կ. Ընտանեկան կյանքի փակ էջերը: Եր., 2003:
29. Սովետական հոգեբանություն: Ընտիր էջեր: Եր. 1988:
30. Մազմանյան Մ. Հայ հոգեբանական մտքի պատմություն: Սովետահայ հոգեբանություն: Եր., 1988:
31. Խուրդյան Ս. Անձի զարգացման ճգնաժամային տարիքները: Եր., 2004:
32. Հարությունյան Ս. Մարդու հոգեսեռական զարգացման հիմունքները: Եր., 2004:
33. Սկրտովյան Մ. Արտակարգ պայմաններից մարդկանց կենսագործունեության և հոգեկան առողջության պահպանման առանձնահատկությունները: Եր., 1999:
34. Նալչաջյան Կ. Սոցիալ-հոգեբանական ադապտացիան փոխակերպվող հայ հասարակության մեջ. գենդերային մոտեցում: Կանայք զարգացման մեջ: Եր., 1999:
35. Նալչաջյան Կ. Կարեն Հորնիի հոգեվերլուծության ուսմունքի կանացի հոգեբանության մասին // Գենդերային հետազոտություններ: Եր., 2001, դ4:
36. Սահակյան Ն. Նախատիպերը որպես գենդերային խորհրդանիշներ Կ.Գ.Յունգի տեսության մեջ // Գենդերային հետազոտություններ: Եր., 2001, դ4:

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ մակարդակ

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԶՆԵՐԻ ԵՎ
ՀՏՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ**

«ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ»

ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՄԱՐ

**ՆԱԽԱԳԻԾԸ ՄՇԱԿՈՂ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ**

Կարինե Բազեյան, Գյումրիի Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու

Յուրի Սկրտովյան, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ելենա Վարդանյան, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԶՆԵՐԻ ԵՎ
ՀՏՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ**

«ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ»

ԱՌԱՐԿԱՅԻ ՀԱՄԱՐ

Ժամանակակից գյուղատնտեսական գործընթացները մարդկությանը ստիպեցին առավել մեծ ուշադրություն դարձնել էթնիկության հիմնախնդրի վրա, որը դարձավ ժողովրդավարական քաղաքական արժեքների գերակայությունն ընդունող ժամանակակից հասարակությունների զարգացման էական գործոն: Ժողովրդավարության դիտարկումը էթնիկության ու էթնոմշակույթի տեսանկյունից ընդլայնում է դեմոկրատական այնպիսի արժեքների ձևավորման մեթոդներն ու մեխանիզմները, ինչպիսիք են մարդու իրավունքներն ու իրավահավասարությունը, այդ թվում նաև գենդերային իրավահավասարությունը:

Էթնոմշակութային ավանդույթների, մշակութային փորձի փոխակերպման ձևերի ու մարդու կողմից այլէթնիկ սոցիոմշակութային տարածքի յուրացման եղանակների ուսումնասիրությունը ավելի դյուրին է դարձնում հասարակության ժողովրդավարացման գործընթացն ուղեկցող սոցիալական, տնտեսական, քաղաքական, սոցիոմշակութային երևույթների ընկալման գործընթացը և կարող է նպաստել հասարակության գենդերային մշակույթի ձևավորմանը:

Ազգագրագետ մասնագետի գործունեության լայն շրջանակը՝ սկսած գիտահետազոտական, կրթադաստիարակչական և կազմակերպական-կառավարականից մինչև փորձագիտական-խորհրդատվական, մշակութային-լուսավորական ու տեղեկատվական-օրենսդրականը, պահանջում է նոր գիտական մեթոդների ու տեխնոլոգիաների իմացություն և կիրառում՝ վերլուծելու ավանդական և ժամանակակից մշակույթներում մարդու մտածողության ու վարքի առանձնահատկությունները: Ժամանակակից հասարակագիտության մեջ այդպիսի մեթոդներից է գենդերային մոտեցումը, որը հնարավորություն է տալիս բացահայտելու գենդերային վարքի բազմազանությունը և դրա դրսևորումները յուրաքանչյուր, այդ թվում նաև հայ հասարակության սոցիա-

լական ու էթնոմշակութային միջավայրում: Դրանով է պայմանավորված «Հայ ազգագրություն» առարկայի մեջ գենդերի ինտեգրման անհրաժեշտությունը:¹

Չափորոշիչի նպատակն է՝

- գիտելիքների հաղորդում ազգագրության հասկացությունների, հիմնախնդիրների և երևույթների գենդերային չափման մասին.
- ձևավորել գենդերային մոտեցումների ու մեթոդների կիրառման հմտություններ ազգագրական հետազոտություններում և ժամանակակից էթնոմշակութային հիմնախնդիրները վերլուծելիս.
- նպաստել գենդերային իրավահավասարության կառուցման գործում էթնոմշակութային ավանդույթների հնարավորությունների գիտակցմանը.
- ձևավորել պատկերացումներ ժողովրդավարացման գործընթացում էթնոմշակութային արժեքների տեղի ու դերի մասին.
- նպաստել սեռերի գենդերային աստիճանակարգության հաղթահարման վրա հիմնված ժամանակակից հայ հասարակության գենդերային մշակույթի ձևավորմանը.

Չափորոշիչի խնդիրն է՝

- ցույց տալ, թե ինչպես է էթնոմշակութային երևույթների գենդերային վերլուծությունը փոխում պատմության ըմբռնման ընդհանուր հայեցակետը և հնարավորություն տալիս կառուցելու սոցիալ-մշակութային իրականության զարգացման նոր մոդել.
- բացահայտել հայկական էթնոմշակույթում կանանց և տղամարդկանց սոցիալական կարգավիճակների ու ենթամշակույթների փոխպայմանավորվածությունը.

¹ Չափորոշիչը նախատեսում է գենդերային բաղկացուցչի ինտեգրումը «Հայ ազգագրություն» առարկայի հետևյալ բաժիններում. «Հայ ժողովրդի առաջնային արտադրության մշակույթը», «Հայ ժողովրդի կենսապահովման մշակույթը», «Հայ ժողովրդի սոցիոնորմատիվ մշակույթը», «Հայ ժողովրդի հումանիտար մշակույթը» և «Էթնոմշակութային գործընթացները Հայաստանում XIX-XX դդ.»։ Առարկան դասավանդվում է Երևանի պետական համալսարանում:

- սեռերի սոցիալական դերերի զարգացման գենդերային վերլուծության միջոցով ներկայացնել հասարակության մեջ իշխանության և ենթակայության հայրիշխանական հարաբերությունների փոփոխման հնարավորությունները.
- դիտարկել ժամանակակից հասարակության էթնոմշակույթը գենդերի տեսանկյունից, համեմատելով կանանց և տղամարդկանց ավանդական ու արդի դերերն ու գործառույթները.
- բացահայտել գենդերային իրավահավասարության կախվածությունը էթնոմշակույթային ավանդույթների ազդեցության տակ ձևավորվող մենթալությունից:

ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն

Գենդերը և գենդերային մոտեցումը հումանիտար հետազոտություններում: Գենդեր հասկացության ձևավորումն ու առաջացումը, հարացույցի փոփոխություն՝ ֆեմինիզմից դեպի գենդեր: Գենդերային տեսության հիմնական հասկացությունները. գենդերային շերտադասություն, գենդերային դերեր, գենդերային կարծրատիպեր, գենդերային իրավահավասարություն, խտրականություն և զգայնություն: Գենդերային տեսությունը՝ որպես միջդիսցիպլինար բնույթի միջառարկայական համալիր երևույթ: Գենդերային հայեցակարգը՝ որպես հասարակագիտական նոր հետազոտական մեթոդ:

Գենդերային մոտեցումները ազգագրության մեջ.

Սեռերի սոցիալական դերերի ու կարգավիճակների տնտեսամշակութային պայմանավորվածությունը

Սեռային խորհրդանիշեր, կանացիության և այրականության կերպարները մշակույթի, գաղափարախոսության և առօրյա գիտակցության մեջ:

Տնտեսավարման ձևերը, դրանցում առկա աշխատանքի սեռատարիքային բաժանումները և համապատասխան գենդերային հարաբերությունները:

Գենդերային կարգը որսորդների և հավաքիչների մշակույթում. սիմեոտրիա, թե՞ հավասարություն:

Կանանց բարձր դերը բրիչային երկրագործների մշակույթում:

Հայրիշխանական հարաբերությունների հաստատագրումը և ամբարանդումը քոչվոր անասնապահների և գութանային երկրագործների և անասնապահների մշակույթներում:

Հասարակության սոցիալական ինստիտուտների գենդերային դիտարկումը:

Սոցիալ-կառուցվածքային գենդերային շերտադասություն. տղամարդկանց և կանանց դերեր, գործունեություն և կարգավիճակ: Սեռահասակային խմբերը որպես մինչդասակարգային հասարակությունների սոցիալական կազմակերպման ձևեր: Նվիրագործման ծեսը՝ որպես գենդերային սոցիալականացման և գենդերային նույնականության ձևավորման հիմնական միջոց:

Տղամարդկանց և կանանց միությունները՝ որպես մայրական տոհմից հայրականին անցման փուլում ձևավորված հասարակական ինստիտուտներ: Տղամարդկանց միությունները՝ հասարակության մեջ գերիշխող դիրք գրավելու համար պայքարի կազմակերպություններ և հայրիշխանության հաստատման մեխանիզմներ: Կանանց միությունները՝ որպես տղամարդկանց միությունների հակակշիռ:

Գասակարգերի առաջացումը և գենդերային հարաբերությունների տարբերակումները. սեռադերային հարաբերությունների առանձնահատկությունները ժողովրդական և վերնախավային մշակույթներում:

Համայնքը՝ որպես մինչկապիտալիստական հասարակարգերի համար բնորոշ ինքնակառավարվող արտադրական և սոցիալ-կենցաղային կոլեկտիվ: Գենդերային հարաբերությունների տարբերակումները վաղնախնադարյան, ուշնախնադարյան և գյուղական համայնքներում. մայրական իրավունքի վրա հիմնված կանանց բարձր սոցիալական դերակատարումից մինչև հայրիշխանությունով ամրագրված կանանց ենթակայության ու իրավազրկության կարգավիճակ:

Ամուսնության ու ընտանիքի ձևերը և սեռերի փոխհարաբերությունները:

Մեռային նույնականության ձևավորման, սեռական հասունացման, ամուսնության հետ կապված ծեսեր ու սովորույթներ:

Ջույզընտանիքը՝ որպես մինչդասակարգային հասարակության ընտանիքի ամենատարածված տիպ, որտեղ գերիշխող էր սեռերի իրավահավասարությունը: Ամուսինների սոցիալ-տնտեսական հավասարության դրսևորումները ինչպես վիրիլոկալ, այնպես էլ ուկտորիլոկալ ամուսնության դեպքում:

Նահապետական ընտանեկան համայնքը մասնավոր սեփականության առաջացման և դասակարգային հասարակության պայմաններում. գենդերային դերերի, կարգավիճակների և հարաբերությունների ձևափոխումները: Հայրիշխանության ինստիտուտների ամրապնդումը և դրանց դրսևորումները ամուսնաընտանեկան հարաբերություններում. գնմամբ և առևանգմամբ ամուսնությունը, ազգամիջյան ամուսնությունը, բազմակնությունը՝ որպես ամուսնա-ընտանեկան հարաբերություններում կանանց իրավագրկության վկայություն:

Սեռերի սոցիալական դերերի, կարգավիճակների ու հարաբերությունների խնդիրը ազգագրության պատմության մեջ: Ազգագրական դպրոցների (Էվոլյուցիոնիստական, սոցիոլոգիական, էթնոհոգեբանական և այլն) ներկայացուցիչների դիտարկումները սեռերի սոցիալական դերերի և գործառույթների մասին: Ազգագրական փաստերն ու ազգաբանական ուսումնասիրությունները՝ որպես գենդերային հետազոտությունների սկզբնաղբյուր:

Գենդերային հիմնախնդիրների արծարծումը հայ ազգագրության մեջ. Վ.Հացունի՝ «Հայուհին պատմության առջև», Խ.Սամվելյան «Մայրական իրավունք»: Խորհրդային ազգագրագետների ուսումնասիրություններում գենդերային հարցերի դիտարկումները. Է.Կարապետյան «Հայկական ընտանեկան համայնք», «Օժիտը հայոց մեջ», Ա. Տեր-Սարկիսյանց «Ժամանակակից ընտանիքը հայոց մեջ»: Գենդերը Ա. Սարգսյանի, Լ.Աբրահամյանի, Ս. Պողոսյանի, Մ. Գաբրիելյանի արդի ազգաբանական հետազոտություններում:

ԲԱԺԻՆ I

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Ավանդական տնտեսական հարաբերությունների գենդերային դիտարկումը:

Տնտեսավարման ձևերը, տնտեսական ավանդույթը, համատեղ ու անհատական աշխատանքը, կենցաղը՝ որպես ազգի գենդերային պատկերացումների ու դերերի վերարտադրության միջոց:

Փակ բնատնտեսությունը և աշխատանքի սեռատարիքային բաժանումը՝ պայմանավորված դրանով: Կանանց և տղամարդկանց տնտեսական իրավունքներն ու պարտականությունները:

Կանանց ու տղամարդկանց աշխատանքների բաժանումը հայ ժողովրդի հիմնական տնտեսական զբաղմունքներում: Երկրագործական աշխատանքները և դրանց առանձին փուլերին կանանց և տղամարդկանց մասնակցության գենդերային առանձնահատկությունները: Վարն ու ցանքը և անասնապահությունը որպես առաջնային նշանակություն ունեցող արտադրական գործունեություն և տղամարդկանց մենաշնորհ, իսկ մթերքի վերամշակումը՝ երկրորդական համարվող և կանանց հատկացված ոլորտ: Կանանց և տղամարդկանց համամասնակցությունը այգեգործական և բանջարաբոստանային աշխատանքներին:

Գենդերային շերտադասությունը օժանդակ տնտեսաձևերում: Որսորդությունը և ձկնորսությունը որպես տղամարդկանց, իսկ հավաքչությունը և շերամապահությունը՝ կանանց զբաղմունքներ:

Տնայնագործության և արհեստների գենդերային տարաբաժանումը: Տնայնագործությունը՝ որպես կանանց՝ մասնավոր-ընտանեկան բնույթի աշխատանքային ոլորտ, իսկ արհեստները՝ տղամարդկանց յուրահատուկ հասարակական արտադրություն: Աշխատանքային գործիքները՝ որպես սեռային խորհրդանիշեր:

Հայ ժողովրդի տնտեսական կենցաղում կանանց նկատմամբ կիրառվող արգելքները՝ որպես տնտեսության և տնտեսավարման մեջ սեռերի

իրավունքներն ու պարտականությունները նորմավորող համակարգ: Դրանց երկակի բնույթը, արգելքը որպես խտրականության դրսևորում և որպես կնոջ առողջության պահպանության գործոն:

ԲԱԺԻՆ II

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵՆՍԱՊԱՀՈՎՍԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Կենսապահովման մշակույթ հասկացությունը, դրա բաղադրիչների գենդերային սիմվոլիկան: Կենսապահովման մշակույթի տարրերը որպես էթնիկական նշաններ և դրանցով պայմանավորված սեռային սիմվոլներ:

Հայկական ավանդական բնակարանի ներքին տարածքի ֆունկցիոնալ բաժանումը և դրանում գենդերային բաղադրիչների դրսևորումները: Նահապետական հարաբերությունների արտահայտությունը բնակարանի հարգարժան և ոչ հարգարժան հատվածներում. թոնրատունը և գլխատունը՝ որպես կանանց տարածք, իսկ գոմի օդան՝ տղամարդկանց: Նորապսակների և հատկապես նորահարսի համար առանձնացված անկյունը՝ որպես ընտանիքում նրա տեղի ու դերի սահմանափակության գործոն և ազատ տեղաշարժման իրավունքի բացակայության բնորոշ օրինակ:

Կահկարասու գենդերային պատկանելությունը:

Տնտեսական արտադրական կառույցները (ջրաղաց, հնձան, դարբնոց և այլն) և դրանցում կանանց աշխատանքների արգելքը:

Հագուստը՝ որպես գենդերային տարբերակման ցուցիչ: Կանացիության և այրականության կերպարների դրսևորումները հագուստի համալիրում. գլխարկը՝ տղամարդու պատվի և կարգավիճակի նշան, գլխի հարդարանքը՝ կնոջ հնազանդության և պարկեշտության նշան: Կանանց՝ տղամարդու հագուստ կրելու արգելքը և այդ արգելքի վերացումը արտակարգ պայմաններում: Ավանդական հագուստի համալիրը՝ որպես կնոջ և տղամարդու սոցիալական և սեռատարիքային կարգա-

վիճակի ցուցիչ: Քթկալը՝ կնոջ ազատ հաղորդակցման իրավունքի սահմանափակման վառ դրսևորում:

Հագուստի գունային սիմվոլիկան գենդերային տեսանկյունից:

Չարդեր կրելու սովորույթը գենդերային դիտարկմամբ: Չարդերի սոցիալական և սեռատարիքային պատկանելության նշանները: Չարդերը՝ որպես կանանց մենաշնորհի և դրանց կրելու արգելքը տղամարդկանց նկատմամբ:

Հայոց ավանդական ուտեստի ու հացկերույթի գենդերային առումները: Մորթելու և սննդի որոշ տեսակներ ուտելու արգելքները կանանց նկատմամբ և դրանց բացատրությունները ժողովրդական պատկերացումներում: Կանանց՝ տղամարդկանցից առանձին և նրանցից հետո հաց ուտելու սովորույթը՝ որպես ավանդական նահապետական հարաբերություններով ամրագրված կանանց ստորադասության և ենթակայության դրսևորումներից մեկը ավանդական մշակույթում:

ԲԱԺԻՆ III

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՍՈՑԻՈՆՈՐՄԱՏԻՎ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Ավանդական հայ հասարակության բնութագիրը: Էթնոմշակութային փոխհարաբերությունները և այլէթնիկ ազդեցությունները հայ ժողովրդի գենդերային հարաբերությունների ձևավորման վրա պատմական զարգացման ընթացքում:

Ավանդական հասարակությունը «սահմանափակող» տիպին պատկանող հայոց մշակույթի համակարգում: Ավանդական սովորութային իրավունքի գենդերային բովանդակությունը: Տղամարդկանց և կանանց սեփականության և ժառանգության իրավունքը՝ որպես հայ հասարակության հայրիշխանական բնույթի հիմնական գործոն:

Ավանդական հայ հասարակության սոցիալական կառուցվածքը. գյուղական համայնք, նահապետական ընտանեկան համայնք-գերդաստան, ազգակցական համակարգ:

Գենդերային շերտադասությունը հայ հասարակության մեջ. կանանց և տղամարդկանց դերերը, գործունեությունը և կարգավիճակը: Կանանց և տղամարդկանց հասարակական և ընտանեկան վարքը կարգավորող նորմեր: Արգելքները և մենաշնորհը որպես իրավական նորմերի յուրահատուկ ձևեր:

Կնոջ ազատության սահմանափակության մեխանիզմները ընտանիքում. խտրականությունը սեփականության, ժառանգության, ամուսնության և ամուսնալուծության իրավունքի մեջ՝ որպես դրա դրսևորումներ: Գենդերային հարաբերությունները գյուղական համայնքում և համայնքի գործերին կանանց ուղղակի մասնակցության սահմանափակ իրավունքները: Կանանց ձայնի և վկայություն տալու իրավունքի բացակայությունը՝ որպես խտրականության արտահայտություն հասարակական հարաբերություններում: Ազգակցական հարաբերությունները և տոնածխական համակարգը՝ որպես հասարակական կյանքում կնոջ ներգրավման ուղի:

Մեռատարիքային փոխհարաբերությունները նահապետական գերդաստանում: Կնոջ հիմնական դերային գործառույթները և իդեալական կնոջ կերպարը հայոց մեջ: Իգական սեռի ազատության թույլատրելի սահմանները ընտանիքում: Ազատությունը որպես խիստ բացասական, իսկ պասիվությունը որպես կանանց բնորոշ և հասարակայնորեն գնահատելի որակ ու կանացիության նշան:

Կնոջ կարգավիճակի փոփոխությունները՝ կապված հասակային տարբեր փուլերի հետ. նորահարսի և երիտասարդ կանանց գրեթե բացարձակ իրավագրկություն և նահապետին գրեթե հավասար, մեծ իրավունքներ ու հեղինակություն տարիքային բարձր խմբերը ներկայացնող մեծ մոր համար: Տանտիկինը՝ ավանդական հայկական ընտանիքում կին-լիդերի կերպար: Աշխատանքի ու պարտականությունների գենդերային բաժանումը ընտանիքում: Կանանց մեջ առկա սոցիալ-հասակային շերտադասությունն ու աստիճանակարգը որպես հայ ժողովրդի գենդերային համակարգի յուրահատուկ հակասական երևույթ: Այրի կնոջ և չամուսնացած աղջիկների կարգավիճակը ընտանիքում և հասարակության մեջ:

Տարբեր սեռերի երեխաների նկատմամբ գենդերային տարբերակված վերաբերմունքը: Երեխաների սոցիալականացման ավանդական ինստիտուտները և դրանց դերը գենդերային նույնականացման դաստիարակության գործում: Մեռա-հասակային խմբերը որպես երիտասարդների մեջ գենդերային կարծրատիպեր ու գենդերային անհամաձայնությունը ձևավորող գործոն:

Հայոց ամուսնական և հարսանեկան ծեսերում կանանց ու տղամարդկանց դերերն ու գործառույթները, դրանց մեջ առկա մայրական իրավունքի հետքերը որպես մասնավոր-ընտանեկան ոլորտում կանանց բարձր դերի վկայություն:

Հայրիշխանական կարծրատիպերի և գենդերային դերերի ու գործառույթների հստակ դրսևորումը հուղարկավորման ծեսում:

ԲԱԺԻՆ IV

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀՈՒՍԱՆԻՏԱՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Հումանիտար մշակույթի բաղադրիչները և դրանցում առկա այրականության ու իզականության մասին ժողովրդական պատկերացումները, դրանց դրսևորումները բանավոր ստեղծագործության մեջ:

Գենդերային կարծրատիպերի արտացոլումը հայ ժողովրդական բանահյուսության մեջ. լեգենդներում, առասպելներում, էպոսում, հեքիաթներում:

Կնոջ տեղն ու դերը հայ ժողովրդի արժեքային համակարգում՝ ըստ անեծքների ու օրհնանքների: Կնոջ-մոր-դստեր կերպարի ընկալումը և դրսևորումները առածներում, ասացվածքներում, հանելուկներում: Տղաաղջիկ, կին-տղամարդ, հայր-մայր հարաբերությունները և նրանց կարգավիճակի, տեղի ու դերի մասին ժողովրդական պատկերացումները բանավոր ստեղծագործության մեջ: Կնոջ նկատմամբ երկակի-հակասական (որպես չարի և բարու կրողի) վերաբերմունքը հայոց մեջ և դրան համապատասխան գենդերային կարծրատիպերի ձևավորումը:

Հայկական ժողովրդական երաժշտական մշակույթի գենդերային տարբերակումը: Օրորոցային, լիրիկական և աշխատանքային երգերը որպես կանանց, իսկ ռազմական երգերն ու հորովելները՝ տղամարդկանց հատուկ երաժշտական ստեղծագործություններ:

Կանանց և տղամարդկանց մասնակցության և վարքի առանձնահատկությունները ժողովրդական պարերում, թատերական ներկայացումներում և խաղերում: Մեռատարիքային տարբեր խմբերի մասնակցությունը պարերին. կանանց և տղամարդկանց պարեր, խառը խմբային պարեր և անհատական մենապարեր:

Ժողովրդական թատերական ներկայացումներում կանանց մասնակցության արգելքը՝ որպես ազատության սահմանափակության վկայություն: Սովերային տիկնիկային թատրոն-դարագյոզը՝ որպես տղամարդկանց մշակույթ:

Արական և իգական սկզբի դրսևորումները հայոց հնագույն հավատալիքներում, բնության երևույթները՝ երկնային լուսատուներ, հող, կրակ, ջուր և այլն, որպես գենդերային խորհրդանիշեր:

Հայկական հեթանոսական դիցարանի գենդերային տեսանկյունները: Արական և իգական աստվածությունների տեղը, դերը, գործառույթներն ու աստիճանակարգը հայոց ընկալմամբ: Հայոց ավանդական հավատալիքները և կրոնաժխսական համակարգը որպես գենդերային մշակույթի վերարտադրության մեխանիզմ: Հայուհին՝ որպես ժողովրդական հնագույն հավատալիքների և կրոնաժխսական ավանդույթների կրող, պահպանող և փոխանցող: Ընտանիքի հոգևոր կենսապահովումը՝ կնոջ հիմնական ծիսական գործառույթների շրջանակում:

Հայ կնոջ տեղն ու դերն ըստ քրիստոնեական հավատի: Քրիստոնեական եկեղեցին և հավատքը որպես ավանդական գենդերային հարաբերությունները վերահսկող և կանոնակարգող ինստիտուտ:

ԲԱԺԻՆ V

ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XIX-XX ԴԴ.

Քաղաքը՝ որպես սոցիալ-մշակութային միջավայր:

XIX դ. վերջի–XX դ. սկզբի քաղաքային բնակչության սոցիալական շերտերը և դրանցում առկա գենդերային հարաբերությունների առանձնահատկությունները:

Գենդերային հարաբերությունները արհեստավորական խավում: Նահապետական հարաբերությունների և ավանդական գենդերային կարգի հստակ դրսևորումները. կնոջ ավանդական գործառույթների գերակայություն, կնոջ հասարակական մասնակցության արգելք: Իդեալական կնոջ և իդեալական տղամարդու կերպարները արհեստավորական ընտանիքում. ավանդական հագուստի և զարդահամալիրի պահպանություն, տղամարդու՝ որպես ընտանիքը կերակրողի բարձր հեղինակություն և անսահմանափակ իշխանություն, կանանց նկատմամբ սահմանափակումների կիրառում:

Կանանց և տղամարդկանց արհեստները: Կանանց զբաղմունքների մի մասի վերածումը տղամարդկանց արհեստների: Կանանց և տղամարդկանց մասնակցությունը քաղաքային տնտեսության համակարգում (արհեստավորական միություններ, առևտուր, սպասարկում): Սպասարկումը (տնային ծառայություն, դայակություն, լվացարարություն և այլն)՝ գերազանցապես կանանց գործունեության բնագավառ: Միջնորդ կանայք և նրանց սոցիալական-հասարակական գործառույթները: Համքարությունները՝ որպես տղամարդկանց արտադրական-հասարակական կազմակերպություններ:

Մեծահարուստ առևտրա-արդյունաբերական խավը և կանանց ու տղամարդկանց կարգավիճակները: Բարձրաշխարհիկ կանանց կրթությունը և դրանով պայմանավորված հասարակական ակտիվ մասնակցությունը. բարեգործություն, մշակութային, կրթական, քաղաքական-հեղափոխական գործունեություն: Արևմտաեվրոպական և ռուսական

մշակութային արժեքների ազդեցությունը կանացիության ու այրականության նոր կերպարների ձևավորման վրա (նորաձև հագուստ, վարվեցողության նոր կանոններ, ընտանիքում և հասարակության մեջ կանանց դերի բարձրացում):

Էթնոմշակութային ձևափոխումները Խորհրդային Հայաստանում

Սոցիալ-քաղաքական համակարգի փոփոխությունը և արժեքային նոր համակարգի ձևավորումը: Ավանդական մշակույթի արմատական վերափոխման գործընթացը նոր սոցիալ-տնտեսական հարաբերությունների համատեքստում:

Խորհրդային իշխանության գենդերային քաղաքականությունը: Ինդուստրացման և կոլեկտիվացման գործընթացների ազդեցությունը հասարակական-արտադրական կյանքում կանանց ներգրավման վրա: Ավանդական «անիրավազուրկ» ու նոր՝ «ազատագրված» կնոջ կերպարների հակադրությունը և դրանց հասարակական ընկալումները: Էթնոմշակութային գենդերային ավանդույթների համահարթեցումը խորհրդային պետական քաղաքականության մեջ: Ազգային ավանդույթների և խորհրդային գաղափարախոսության բախումն ու երկխոսությունը:

Քաղաքների աճը Հայաստանում և փոքր ընտանիքների տարածումը. կանանց ու տղամարդկանց նոր դերերի, գործառույթների ու կարգավիճակի առանձնահատկությունները նոր սոցիոմշակութային պայմաններում: «Աշխատող-մայր» կնոջ ձևավորումը և նրա երկակի ծանրաբեռնվածությունը ընտանիքներում: Հայ հասարակության վերաբերմունքը դրա նկատմամբ:

Կազմակերպված գենդերային սոցիալականացման նոր ինստիտուտները. նախակրթարան, դպրոց, բուհ, սպորտային և մշակութային հիմնարկներ: Ժողովրդի զանգվածային կրթության քաղաքականության գենդերային չափումները:

Խորհրդային իշխանության քաղաքականությունը հասարակական-քաղաքական գործունեության ոլորտում կանանց ներգրավման ուղղությամբ: Կոմկուսը, պիոներական և կոմերիտական ՝ որպես կինլիդերների պատրաստման դպրոց:

Գենդերային կարգի փոփոխությունը և կանանց դերի բարձրացումը: Ավանդական գենդերային կարծրատիպերի ձևափոխությունները հայրենական պատերազմի տարիներին: Մասնավորապես հասարակության մեջ այրի կանանց և չամուսնացած աղջիկների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը:

Կանանց լայն ներգրավումը հասարակական-քաղաքական, մշակութային և գիտության ոլորտներում հետպատերազմյան տարիներին: Նոր մասնագիտությունների առաջացումը և դրանց գենդերային տարբերակումը: Կրթության բնագավառի ֆեմինացումը:

Այրականության և կանացիության նոր կերպարների ձևավորումը: Խորհրդային կնոջ և տղամարդու վարքի առանձնահատկությունները և նոր գենդերային կարծրատիպերի ձևավորումը: Ամուսնա-ընտանեկան հարաբերություններն ու կենցաղը, ժառանգության և սեփականության իրավունքը խորհրդային ժամանակաշրջանում:

Ավանդական մշակույթի փոփոխությունը և դրա ազդեցությունը նոր գենդերային հարաբերությունների ու կարծրատիպերի ձևավորման վրա: Ազգային հագուստի արտամոդանը կենցաղից XX դարում: Կնոջ հագուստի այրականացում: Նորաձևության ազատականացումը՝ 1960 թ-ից տաքատ հագնող, 1970-ական թթ. կարճափեշ (մինի) հագնող կանայք և տղամարդկանց կարծրատիպային վերաբերմունքը:

1980-ական թթ. վերջերին կանանց ակտիվության աճը և նրանց մասնակցությունը արցախյան շարժմանն ու Հայաստանի անկախացման գործընթացին:

Արդի էթնոմշակութային գործընթացները Հայաստանում

Նորանկախ Հայաստանի սոցիալ-տնտեսական վերափոխումները և դրա հետևանքները հայ հասարակության սոցիալ-հասակային տարբեր խմբերի վրա: Նախկինում արմատացած կենսաձևի մեջ կատարվող էական փոփոխությունները նոր իրավիճակում: XX դարավերջում կնոջ փոփոխված կենսաձևն ու ինքնագիտակցությունը և նրա «դուրս գալը» բաց սոցիոմշակութային տարածություն: Խորհրդային արժեքային համակարգի փլուզումը:

Շուկայական հարաբերությունների առանձնահատկությունները և նոր տնտեսական իրավիճակը: Հասարակության շերտավորումը, աղքատության մեծացումը. գենդերային չափում: Աղքատության նկատմամբ հասարակության վերաբերմունքի փոփոխությունը:

Մեփականաշնորհման քաղաքականությունը, անցումը փակ բնատնտեսության և դրա հետ կապված գենդերային նոր հարաբերությունների ձևավորումը: Կանանց և տղամարդկանց սոցիալական դերերը նոր պայմաններում:

Արտակարգ իրավիճակը և հայ կինը: Կանայք՝ նոր տնտեսավարման նախաձեռնող. մաքրքային առևտուր, վերավաճառք և այլն:

Գենդերային խտրականության դրսևորումները աշխատանքի շուկայում: Գործազրկության և զբաղվածության գենդերային հայեցակետերը ժամանակակից Հայաստանում:

Նոր արժեքների ձևավորման հիմնախնդիրը. ազգային նոր գաղափարախոսության պետական հայեցակարգի բացակայություն, հոգևոր մշակույթի նկատմամբ անվերահսկողություն, անընդհատ փոփոխվող և անկայուն կրթական համակարգ: Չանգվածային մշակույթը և դրա ազդեցությունը էթնիկ գենդերային նույնականացման նոր դրսևորումների ձևավորման վրա: Հաղորդակցության նոր ձևերը և էթնոմշակութային ավանդույթի պահպանման հարցը: Կենցաղային խորհրդանիշերի, լեզվի, ժողովրդական բանահյուսության, արվեստի, գրականության գենդերային չափումների կտրուկ ձևափոխումները:

Ժամանակակից էթնոմշակութային գործընթացները, արևմտյան արժեքային համակարգի տարրերի ներթափանցումը հայոց մշակութային համալիր և դրանց դրական ու բացասական հետևանքները: Արդի գենդերային հարաբերություններում առկա հակասական երևույթները. կանանց հասարակական մասնակցության ակտիվացում մի կողմից և տնտեսական դաշտում, քաղաքական որոշումներ կայացնելու գործընթացներում նրանց նկատմամբ դրսևորվող խտրականություն՝ մյուս կողմից:

Նոր սոցիալ-տնտեսական հարաբերությունների ազդեցությունը ներընտանեկան և ազգակցական հարաբերությունների վրա: Ընտանիքի գենդերային բնութագիրը: Կնոջ և տղամարդու ավանդական դերա-

յին գործառույթների փոփոխությունները: Գենդերային կարծրատիպերի վերափոխումները՝ կապված գործազրկության և տնտեսական միգրացիայի հետ: Ջանգվածային արտագաղթի էթնոմշակութային տեսանկյունները և դրա գենդերային հետևանքները:

Կնոջ նոր կերպարի ձևավորումը: Ժամանակակից ազատականացված վարքի նոր դրսևորումները. կանայք՝ մեքենայի դեկին, կանայք և ծխախոտը: Կանանց և տղամարդկանց հագուստի փոփոխությունները՝ որպես գենդերային հավասարության դրսևորման միտումներ: Կանանց հագուստի այրականացում՝ կապված սեռային դերերի փոխառման հետ: XX դարի վերջից տղամարդկանց որոշակի սոցիալ-տարիքային խմբերում զարդեր կրելու սովորույթն իբրև տղամարդկանց ֆեմինացման արտահայտություն:

«Հայ ազգագրություն» առարկայից ուսանողների գենդերային գիտելիքների մակարդակին ներկայացվող պահանջները

Ուսանողը պետք է գիտենա՝

- ի՞նչ է նշանակում «գենդեր» հասկացությունը.
- գենդերի տեղը էթնոսի մշակույթում.
- էթնոմշակույթի գենդերային առանձնահատկությունները.
- գենդերային դերակատարությունների ձևավորման մեխանիզմները էթնոմշակույթում.
- գենդերային դերերի ու գործառույթների էթնոմշակութային բազմազանությունը.
- գենդերային մշակույթի փոփոխականությունը էթնոսի զարգացման ընթացքում.
- գենդերային կարծրատիպերի ձևավորման սկզբունքները որոշակի սոցիոմշակութային համակարգում և դրանց ձևափոխումները նոր արժեքների համապատասխան.
- գենդերային խտրականության առաջացման պատճառները և դրանց հաղթահարման ուղիները.
- տարբեր սոցիոմշակութային համակարգերում սեռերի համակեցության իմաստը, էությունը և նշանակությունը.

- ազգագրությունում գենդերային մոտեցման կառուցողական հնարավորությունները ժողովրդավարացման և գենդերային հավասարության հաստատման հիմնախնդիրների լուծման գործընթացում:

Ուսանողը պետք է հասկանա

- մարդկային կեցության պատմականությունը, էթնո- և սոցիոմշակութային պրոցեսների բազմազանությունը, դրանցում կանանց ու տղամարդկանց դերերի ու գործառույթների տարբերակվածության պատճառները.
- պատմության և էթնոմշակույթի «աքսիոլոգիական» (արժեհամակարգային) բնույթը և դրա գենդերային առանձնահատկությունները.
- էթնոմշակութային և գլոբալացման գործընթացների փոդկախվածությունը.
- էթնոմշակութային ավանդույթների տեղը և դերը հասարակության գենդերային մշակույթի ձևավորման գործընթացում:

Ուսանողը պետք է կարողանա.

- կիրառել գենդերային մոտեցումները ու մեթոդները ազգագրական հետազոտություններում և ժամանակակից էթնոմշակութային հիմնախնդիրների վերլուծման մեջ.
- կիրառել գենդերային մեթոդաբանությունը սոցիոմշակութային երևույթների և հարաբերությունների վերլուծության ժամանակ.
- կազմել գենդերային հետազոտական ծրագրեր՝ մարդու վրա վերափոխիչ ազդեցություն գործելու և նրա փոխազդեցությունը շրջակա բնական և սոցիալական միջավայրի հետ օպտիմացնելու նպատակով.
- իրականացնել գենդերային սոցիալականացման ծրագրերի պրակտիկ կիրառում՝ հաշվի առնելով էթնոմշակութային առանձնահատկությունները և արդի դարաշրջանի պահանջները:

ԲԱԺԻՆ 4

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐՐՈՐԴ ՍԱԿԱՐԴԱԿ

«ԳԵՆԴԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ»,

«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ
ԴԻՍԿՈՒՐՍԸ»,

«ԳԵՆԴԵՐԸ ԵՎ ՍԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ»

ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՆԱԽԱԳԻԾ**«ԳԵՆԴԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ»**

**ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՅԻ
ՆԱԽԱԳԻԾԸ ՄՇԱԿՈՂ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ**

Ջենմա Հասրաթյան, Երևանի «Ինտերլինգվա» համալսարանի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի գեներայից հետազոտությունների կենտրոնի ղեկավար, խմբի ղեկավար

Գյուլնարա Հովհաննիսյան, Երևանի տնտեսագիտական ինստիտուտի դասախոս, տնտեսագիտության թեկնածու

Հարություն Մարգարյան, Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական բաժանմունքի փոխղեկ, տնտեսագիտության թեկնածու

«ԳԵՆԴԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ»

ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՅ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԵՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Սոցիալական կողմնորոշմամբ ժամանակակից շուկայական տնտեսության կայացմանն ու զարգացմանը նվիրված վերլուծություններում զուտ տնտեսագիտական մոտեցումը (կողմնորոշումը դեպի արդյունավետությունը, ռեսուրսների առավել ռացիոնալ օգտագործումը) անհրաժեշտաբար պետք է զուգակցվի սոցիալական արդարության հասարակայնորեն ընդունելի մակարդակի ապահովման հիմնախնդիրների լուծման հետ:

Սոցիալական արդարության անհրաժեշտ պայմաններից մեկը տնտեսական ոլորտում սեռի հատկանիշով խտրականության վերացումն է, ինչը ժամանակակից պայմաններում կայուն մարդկային զարգացման և աղքատության դեմ պայքարի ցանկացած կենսունակ ռազմավարության հաջողության երաշխիքն է:

Գենդերային տարբերությունների ուսումնասիրությունը հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովման հարցում վկայում է, որ գենդերային անհավասարության հիմքը տնտեսական ոլորտում կանանց և տղամարդկանց անհավասար վիճակն է և հասարակության մեջ գենդերային դերերի պահպանվող և նույնիսկ ամրապնդվող ավանդական բաժանումը:

Սոցիալ-տնտեսական կյանքում կանանց և տղամարդկանց ներուժի և հնարավորությունների հավասարաչափ օգտագործումից է կախված տվյալ երկրի զարգացման ամբողջ ընթացքը: Տնտեսագիտության գենդերային դիսկուրսը կարող է համակարգվել «Գենդերը և տնտեսագիտությունը» հարացույցով, որը կձևավորի նոր պատկերացումներ սոցիալ-տնտեսական գործընթացներում կանանց և տղամարդկանց դերերի մասին:

Այդ տեսանկյունից տնտեսագիտության մեջ առանձնակի կարևորություն է ձեռք բերում գենդերային հիմնախնդիրը՝ որպես սոցիալական արդարության հիմնահարցի հարաբերականորեն առանձնացված բաղադրիչ: Տնտեսագիտական դասընթացների շրջանակներում գենդերային հիմնախնդիրների ուսումնասիրումը կոչված է ապագա տնտեսագետներին զինելու այնպիսի մի հայեցակարգի գիտելիքներով և հմտություններով, որն ունի ինչպես լայն աշխարհայացքային, համահումամիտար նշանակություն, այնպես էլ անմիջական գործնական կիրառություն:

Այն միտված է ուսումնասիրելու հասարակության մեջ և սոցիալ-տնտեսական կյանքում կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների անհավասարության աստիճանը, որը պայմանավորված է ոչ միայն մշակութային ավանդույթներով ու սոցիալ-տնտեսական իրավիճակով, այլև իրականացվող քաղաքականության մեջ գենդերային բաղադրիչի անտեսմամբ: Այդ բաղադրիչի հաշվառումը նոր մոտեցում է և նոր հարացույց, որը որոշում է հասարակության զարգացման գործընթացներում երկու սեռերի դերակատարումները:

Ակնհայտ է, որ վերջին տասնամյակում աշխարհում ավելի լայն տարածում են գտնում գենդերային բաղադրիչի հաշվառմանը միտված մոտեցումները: Կառավարությունները, գործարար շրջանները, արհմիությունները և բազմաթիվ հասարակական կազմակերպություններ մեծ ուշադրություն և էներգիա են հատկացնում հասարակության մեջ և տնտեսական կյանքում արմատացած խտրական կարծրատիպերի հաղթահարմանը: Սակայն սոցիալ-տնտեսական կյանքում նախկինի պես գոյություն ունեն գենդերային բնույթի իրական խոչընդոտներ և հիմնախնդիրներ, որոնք հատկապես սրվում են այսօր՝ տնտեսության գլոբալացման պայմաններում:

Ներկայումս, չնայած գենդերային խտրականությունը տնտեսության մեջ և հատկապես աշխատանքի շուկայում ընդունում և լրջորեն քննարկում են փորձագետ-տնտեսագետները, դրա բազմաթիվ ձևերն ու դրսևորումները մնում են ստվերում և անհրաժեշտ խորությամբ վերլուծության չեն ենթարկվում:

Արդյունքում գենդերային հիմնախնդիրները, որպես կանոն, չեն դի-

տարկվում և չեն արտացոլվում զարգացման ծրագրեր և բյուջեներ մշակելիս: Մինչդեռ գենդերային հիմնախնդիրները պետք է լինեն *հստակ արտահայտված*, գենդերային հեռանկարները պետք է լինեն ակնառու, նվաճումները գենդերային հավասարության ոլորտում պետք է լինեն չափելի: Իսկ դա ենթադրում է մոնիտորինգի այնպիսի մեխանիզմների ստեղծում և զարգացում, որոնք էական նշանակություն ունեն սոցիալ-տնտեսական ծրագրերում գենդերային հիմնախնդիրների հաշվառման աստիճանը գնահատելու և վերլուծելու համար:

«Գենդերը և տնտեսագիտությունը» դասընթացն ուսումնասիրում է սոցիալ-տնտեսական հարաբերություններում կանանց և տղամարդկանց դերերի տարբերությունների պատճառները, բնույթը, մասշտաբները, դրսևորման ձևերն ու դրանց հաղթահարման ուղիները: Այն նպատակ ունի ապահովելու միասնական մոտեցում տնտեսության պետական կարգավորմանն ուղղված քաղաքականության, զարգացման ծրագրերի և բյուջեների մշակման գործընթացներում գենդերային գործոնի հաշվառման, գենդերային հարաբերությունների և գենդերային բաղադրիչի ինտեգրման, գենդերային փորձաքննության անցկացման, տնտեսական գործունեության մեջ գենդերային մոտեցումների կիրառման, սոցիալական ու ժողովրդավարական փոխակերպումների գործընթացներում նրանց ակտիվ ընդգրկման խնդրում:

Գենդերային տնտեսագիտությունը ներառում է երեք խոշոր հիմնախնդիրներ, որոնցից յուրաքանչյուրն ունի հետազոտման ենթակա հարցերի իր ուրույն շրջանակը: Դրանք են.

- 1) տեսական մոդելներ, որոնք ներկայացնում են կանանց և տղամարդկանց տարբեր դերակատարումները սոցիալ-տնտեսական կյանքում,
- 2) կանանց և տղամարդկանց սոցիալ-տնտեսական իրավիճակների ընդհանրությունը և տարբերությունները պարզաբանող էմպիրիկ հետազոտություններ,
- 3) գենդերային կտրվածքով տնտեսական քաղաքականության վերլուծություն և օրենսդրության գենդերային փորձաքննության իրականացում:

Չափորոշիչի նպատակը

Գենդերային մոտեցումների կիրառումը տնտեսագիտության մեջ նախատեսում է կանանց և տղամարդկանց կենսագործունեության սոցիալ-մշակութային տարբերությունների վերլուծությունն ընդգրկող հայեցակարգի բովանդակության պարզաբանում:

Սույն չափորոշիչը նպատակաուղղված է ուսանողների՝ կանանց ու տղամարդկանց հավասարությունն ապահովող ինստիտուցիոնալ բարեփոխումների, տնտեսական ռազմավարությունների և ակտիվ քաղաքական միջոցառումների մշակման և իրականացման վերաբերյալ գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, ինչպես նաև բազմաբնույթ հիմնախնդիրներ վերլուծելու ունակությունների ձևավորմանը: Այն խնդիր է դնում իրականացնել տվյալ ոլորտի ավելի խորացված ուսումնասիրություն՝ գենդերային տեսական և կիրառական գիտելիքների հաղորդման ու գենդերային մեթոդաբանության օգտագործման միջոցով: Այն կնպաստի գենդերային աշխարհընկալման ձևավորմանը, գենդերային զգայնության դաստիարակմանը, տնտեսագիտության մեջ գենդերի տեղի ու դերի բացահայտմանը:

Սոցիալ-տնտեսական առաջընթացի վերաբերյալ ժամանակակից հայեցակարգերում ելակետային հիմնադրույթն այն է, որ տնտեսական աճը նշանակություն ունի, բայց բավարար չէ հավասարության, սոցիալական առաջընթացի ապահովման և աղքատության հաղթահարման համար: Այդ առումով, գենդերային հիմնախնդիրների անտեսումն ու դրանց հաղթահարման ուղղությամբ կոնկրետ միջոցառումների բացակայությունը լուրջ խոչընդոտ կարող է դառնալ հենց կայուն տնտեսական աճի ապահովման համար:

Սոցիալական առաջընթացի և տնտեսական աճի միջև կապերի ուժեղացման համար առանձնակի նշանակություն և իմաստ է ստանում աշխատանքի ոլորտում մարդու իրավունքների հիմնարար սկզբունքների և ազատությունների պահպանման երաշխիքը, քանի որ այն հնարավորություն է տալիս շահագրգիռ անձանց՝ կանանց և տղամարդ-

կանց ազատորեն և հավասար պայմաններով պահանջելու իրենց իսկ մասնակցությամբ ստեղծված հարստության արդարացի մասը, ինչպես նաև լիովին իրացնելու իրենց մարդկային ներուժը: Այդ նպատակով անհրաժեշտ է կատարելագործել ընդհանուր բարիքների ստեղծման գործում կանանց և տղամարդկանց դերերի գնահատման մեթոդաբանությունը և գործնական կառուցակարգը:

«Գենդերը և տնտեսագիտությունը» դասընթացի ուսումնասիրումը հնարավորություն կընձեռի զարգացնելու տնտեսագիտական մտածողության ոչ ավանդական եղանակները, նորովի ընկալելու և լուսաբանելու տնտեսագիտական բարդ հիմնախնդիրները, հայտնաբերելու և գործնականում կիրառելու այս կամ այն տնտեսական մշակույթի թաքնված արժեքները: Դա էականորեն կնպաստի սոցիալ-տնտեսական առաջընթացի գենդերային հիմնախնդիրների նկատմամբ հետագա հետաքրքրությունների ձևավորմանը, կզարգացնի վիճելի տնտեսագիտական հիմնախնդիրների շուրջ բանավիճելու ունակությունը, կարմատավորի ու կկատարելագործի տնտեսագիտության մեջ գենդերային թեմաներով հետազոտական աշխատանքներ կատարելու հմտությունները:

Չափորոշիչի խնդիրները

«Գենդերը և տնտեսագիտությունը» դասընթացի չափորոշիչն ապահովում է տնտեսագիտական կրթության բովանդակության համակարգվածությունը և հաջորդականությունը, գնահատում ուսումնական գործընթացը, ուսուցման արդյունքները և ուսանողների գիտելիքներն ու հմտությունները:

Տնտեսագիտության մեջ գենդերային կրթության հիմնական խնդիրներն են.

- ծանոթացնել ուսանողներին ժամանակակից գենդերային տեսության հիմնական հասկացություններին, մոտեցումներին և հայեցակարգերին,

- բացահայտել կանանց և տղամարդկանց սոցիալ-տնտեսական վիճակի առանձնահատկությունները,
- նպաստել ուսանողների շրջանում տնտեսական գործունեության մեջ մարդու դերի մասին ամբողջական համակարգված պատկերացման զարգացմանը՝ գենդերային մոտեցումներից առաջացող նոր հիմնախնդիրների, տեսական կառուցակարգերի և ոչ ստանդարտ մոտեցումների հաշվառմամբ,
- ուսումնասիրել գենդերային անհամապատասխանությունները մարդու հիմնական տնտեսական իրավունքների ոլորտում, ռեսուրսների և տնտեսական հնարավորությունների մատչելիության հարցում,
- բացահայտել տնտեսության ոլորտում սեռի հատկանիշով խտրականության և գենդերային խտրարարության առաջացման դրսևորումները, դրանց պատճառները, և տալ դրանց հաղթահարման ուղիները,
- դիտարկել տնտեսագիտական հիմնախնդիրները գենդերային հետազոտությունների մեթոդների օգտագործմամբ և ընդլայնել տնտեսական զարգացման գործընթացների յուրահատկությունների ուսումնասիրությունները,
- վեր հանել գենդերային զարգացումները հասարակության սոցիալ-տնտեսական կյանքում և տնտեսական քաղաքականության գենդերային հիմնախնդիրները,
- ցույց տալ, որ գենդերային իրազեկությունը նպաստում է տնտեսության մեջ առկա գենդերային կարծրատիպերի փոփոխությանը,
- նպաստել գենդերային վերլուծության և գենդերային փորձաքննության անցկացման հմտությունների ձևավորմանը, որոնք կնպաստեն ինչպես բուն տնտեսագիտական հիմնահարցերի ժամանակակից մեկնաբանմանը, այնպես էլ՝ զարգացման իրատեսական ծրագրերի մշակմանը,
- պարզորոշել, որ գենդերային իրավահավասարությունը նպաստում է՝
- աշխատանքի բաժանման մեջ գոյություն ունեցող գենդերային կարծրատիպերի հաղթահարմանը,

- մարդկային կապիտալում հավասար ներդրումների խթանմանը,
- մրցակցային շուկաների ձևավորման միջոցով խտրականության նվազեցմանը,
- տնտեսական զարգացման խթանմանը:

Չափորոշիչի բովանդակությունը

Գենդերային տեսության ընդհանուր հիմունքներ

Կենսաբանական դետերմինիզմ և սեռի սոցիալական մեկնաբանություն (գենդերային մոտեցում):

«Սեռ» և «գենդերային դերեր» հասկացությունների տարբերությունները: Կենսաբանական սեռից դեպի սոցիալական սեռը: Գենդերային դերերի էվոլյուցիան և սոցիալ-տնտեսական զարգացումը:

Գենդերը՝ որպես մշակութաբանական և սոցիալական հասկացություն: Գենդերային նորմատիվների կախվածությունը մշակույթից, ազգային ավանդույթներից ու սովորույթներից, կրոնից, պատմությունից, աշխարհաքաղաքականությունից, հասարակության զարգացման մակարդակից: Գենդերային կարծրատիպերի կենսունակությունը և գենդերային դերերի բազմազանությունը տարբեր մշակույթներում:

Գենդերային տեսության հիմնական հասկացությունները, մոտեցումները, ուղղությունները: Գենդերը՝ որպես շերտադասական կատեգորիա:

Գենդերային սոցիալականացումը և դրա առանձնահատկությունները կանանց և տղամարդկանց համար: Գենդերային գաղափարախոսության արժեքային համակարգը: Գենդերային սոցիալականացման հետևանքները: Կանանց և տղամարդկանց միջև տնտեսական տարբերությունների առաջացման պատճառները, չափերը և մեխանիզմները:

Հասարակության գենդերային կազմակերպման տիպերը և ձևերը: Հայրիշխանությունը՝ որպես արդի հասարակության գերիշխող մոդել: Գենդերային կարծրատիպեր: Գենդերային անհամաչափությունը հասարակության և տնտեսության մեջ:

Գենդերային դերերի ավանդական ընկալումը հասարակության մեջ և ընտանիքում: Բռնությունն ընտանիքում՝ որպես տղամարդու իշխանության հաստատման միջոց: Գենդերային հարաբերություններն ընտանիքում: Հավասար իրավունքների, հավասար հնարավորությունների և հավասար արդյունքների հիմնախնդիրները:

Գենդերային մշակույթի զարգացումը որպես զուգակշռված ժողովրդավարության անհրաժեշտ պայման: Գենդերային դերերի բեռնացվածության հաղթահարման միջոցները, ձևերն ու եղանակները:

Գենդերային տարբերությունների ուսումնասիրությունը կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման ոլորտում: Գենդերային անհավասարության հիմքը տնտեսական ոլորտում, կանանց և տղամարդկանց անհավասար վիճակը և հասարակության մեջ գենդերային դերերի պահպանվող և ամրապնդվող ավանդական բաժանումը:

Գենդերը՝ որպես աշխատանքի բաժանման հիմք: Կանանց և տղամարդկանց կենսաբանական սեռերի տարբերությունների սոցիալ-մշակութային արտացոլումը, հասարակական կյանքում կնոջ և տղամարդու զբաղեցրած կարգավիճակի կապը նրանց կենսաբանական դերերի և սոցիալական ավանդույթների հետ:

Հասարակության մեջ ավանդական սեռային դերերի, առաջին հերթին կնոջ կարգավիճակի ձևափոխումը և դրա ազդեցությունը տղամարդու սոցիալական կարգավիճակի վրա:

Գենդերային տնտեսագիտության ելակետային հասկացությունները

Տնտեսական երևույթների գենդերային հիմնախնդիրները և դրանց մեկնաբանումը տարբեր տնտեսագիտական տեսություններում: Գենդերի սոցիալական կառուցման տեսությունը: Տնտեսական երևույթների բացահայտման, մեկնաբանման և վերլուծության գենդերային տեսությունները:

Կանանց և տղամարդկանց տնտեսական վիճակի ավանդական տարբերությունները և երկու սեռերի տնտեսական դերերը: Սեռական դերերը և սեռային դերերը տնտեսության մեջ և համապատասխան գենդերային կարծրատիպերի ձևավորումը: Գենդերային անհամաչափության տնտեսական գործոնները: Գենդերային զարգացումները հասարակության սոցիալ-տնտեսական կյանքում:

Տնտեսական ոլորտում գենդերային խտրականության առաջացման պատճառները, ձևերը և հետևանքները: Գենդերային դերերը բնատնտեսության մեջ: Ապրանքա-փողային հարաբերությունների ազդեցությունը կանանց և տղամարդկանց վիճակի վրա:

Սեռը՝ որպես իռացիոնալ գին ունեցող ապրանք: Մարմնավաճառությունը՝ որպես եկամտի աղբյուր: Մարմնավաճառության տնտեսական, սոցիալական և բարոյահոգեբանական հետևանքները:

Արդյունաբերության մեջ կապիտալիզմի զարգացման երեք փուլերը (պարզ կոոպերացիա, մանուֆակտուրա և խոշոր մեքենայական արտադրություն) և երկու սեռերի տնտեսական դերերի փոփոխությունները:

Հասարակության պահանջմունքների դասակարգման գենդերային տեսանկյունները: Տնտեսական ռեսուրսները, դրանց բաշխումը և օգտագործումը սեռի հատկանիշով:

Ընտրության տնտեսագիտական հիմնախնդիրը կանանց և տղամարդկանց համար: Այլընտրանքի գին և երկընտրանք:

Մասնավոր սեփականությունը, անձնական շահը և մրցակցությունը՝ որպես գենդերային կարծրատիպերի ձևավորման գործոններ: Տնտեսության մեջ պետության միջամտության դերը՝ որպես սեռերի իրավական հավասարության ապահովման պայման:

Տնտեսական պատմության գենդերային հիմնահարցերը

Տնտեսական պատմության գենդերային պարբերականացումը: Աշխատանքի բնական և հասարակական բաժանումը, սեփականության

ձևերը և դրանց զարգացումը: Գենդերային անհավասարության արմատները նահապետական տնտեսության մեջ: Անուսնաընտանեկան հարաբերությունների և կանանց ու տղամարդկանց սոցիալականացումը:

Կանանց և տղամարդկանց տնտեսական դերերը ստրկատիրական տնտեսակարգի պայմաններում: Ստրկության «արևելյան» և «արևմտյան» տիպերը:

Հին աշխարհի տնտեսական վերափոխումները և գենդերային հիմնախնդրի սրումը: «Արևմտյան» և «արևելյան» ֆեոդալիզմ:

Տնտեսական վերածնունդը միջնադարում և «Էմանսիպացիայի» շարժումը:

Կապիտալիստական տնտեսակարգը: Կապիտալի նախասկզբնական կուտակումը, տեխնոլոգիական հեղաշրջումը և դրա ազդեցությունը կանանց ու տղամարդկանց տնտեսական դերերի վրա:

Գաղութացման գենդերային հետևանքները: Տնտեսապես զարգացած և թույլ զարգացած երկրներում երկու սեռերի կարգավիճակների տարբերությունները:

Սոցիալիստական վերափոխումները և տնտեսության մեջ կանանց ու տղամարդկանց մասնակցության վերաբերյալ նոր մոտեցումները:

Գենդերային հիմնախնդիրները հետինդուստրիալ հասարակություններում:

Գենդերը տնտեսագիտական մտքի պատմության մեջ

Գենդերային մոտեցումների տարրերը Հին Արևելքի և անտիկ աշխարհի տնտեսագիտական ուսմունքներում: Կոնֆուցիուսի, Պլատոնի, Արիստոտելի իրավատնտեսագիտական դրույթների գենդերային հայեցակետերը:

Կանոնականների տնտեսագիտական գաղափարները հասարակության մեջ կանանց ու տղամարդկանց տեղի մասին: Գենդերային մոտեցումների արդիականացումը Նոր դարաշրջանի տնտեսագիտական քաղաքական մտքում:

Գենդերային հիմնախնդիրների վերահանումն ու մեկնաբանումը մարքսիստական տեսության մեջ:

Մասնավոր սեփականության և կնոջ տնտեսական կախվածության կապը: Կապիտալիզմի և հայրիշխանության դերը կանանց շահագործման հարցում:

«Տնտեսական մարդու» վարքի մեկնաբանության նեոդասական մոտեցումը և դրա հետագա զարգացումը «մարդկային կապիտալի» տեսության մեջ: Շուկայական ոլորտի էգոիզմի և ընտանեկան ոլորտի ալտրուիզմի հակասությունը:

Ինստիտուտների դերը գենդերային հավասարության ապահովման գործում: Ինստիտուցիոնալիզմի ներդրումը գենդերային հիմնախնդիրների մեկնաբանման հարցում:

Տնտեսական զարգացման գենդերային չափումները

Զարգացման ընկալումը գենդերային վերլուծության արդի հայեցակարգերի հաշվառմամբ:

Գենդերային համաչափությունը՝ որպես տնտեսական աճի գործոն: Տնտեսական աճի և մարդկային զարգացման փոխադարձ կապի գենդերային բաղադրիչը:

Մարդկային զարգացման համաթվերի համակարգը. մարդկային զարգացման համաթիվը, դրա կառուցվածքը, մարդկային զարգացման համաթիվը՝ գենդերային գործոնների հաշվառմամբ, կանանց հնարավորությունների ընդլայնման համաթիվը և դրա բաղադրիչները, բնակչության աղքատության համաթիվը և դրա հաշվարկման առանձնահատկությունները:

Երկրների դասակարգումն ըստ մարդկային զարգացման համաթվերի:

Գենդերային վերլուծությունները ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, Աշխատանքի միջազգային կազմակերպության և այլ միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակվող զեկույցներում:

Գենդերային անհավասարության դրսևորումները ՀՀ-ում. կանանց և տղամարդկանց մասնակցությունը քաղաքական և տնտեսական կյանքում, վաստակած եկամուտներում, ինչպես նաև որոշումների ընդունման գործընթացներում գնահատող ցուցանիշները՝ հանրապետության գենդերային զարգացման համաթիվը և կանանց հնարավորությունների ընդլայնման ցուցանիշը: Կանանց հնարավորությունների ընդլայնմանը խոչընդոտող պատճառները:

Տնտեսության գլոբալացման գենդերային հայեցակետերը

Տնտեսության գլոբալացման գենդերային հայեցակետերը բնապահպանության և կայուն զարգացման տեսանկյուններից:

Փոփոխություններն աշխատանքի գենդերային բաժանման միջազգային համակարգում: Առևտրատնտեսական գործունեության մեջ կանանց հնարավորությունների ընդլայնումը:

Գլոբալացման տեխնոլոգիաները (տնտեսության ինքնատիպ, հապաղող, կրկնվող, անկլավային մոդեռնացում, ազատ տնտեսական գոտիների ձևավորում, վերագգային ընկերությունների գերիշխանությունը և այլն) և դրանց գենդերային առումները:

Գլոբալացումը և տնտեսական գործունեության ձևերի վերաբաշխումը կանանց և տղամարդկանց միջև: Գենդերային դերերի փոփոխությունները, ընտանեկան իշխանության վերաբաշխում: Տնտեսության գլոբալացման և գենդերային հավասարության հարաբերակցությունը. գենդերային անհամաչափության խորացումը:

Ինտեգրման, շահագործման և լուսանցման կանխադրույթները գենդերային անդրադարձմամբ:

Գլոբալացման հետևանքները զարգացած, զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում, տնտեսության գլոբալացման գենդերային առումները:

Տնային տնտեսության գենդերային վերլուծություն

Տնային տնտեսությունը որպես գենդերային վերլուծության ելակետ: Գենդերային դերերի ավանդական ընկալումն ընտանիքում:

Ընտանիքը և տնային տնտեսությունը՝ որպես տնտեսական վերլուծության օբյեկտ: Ներընտանեկան բաշխման գործընթացները: Բեկկերի այլասիրական մոդելը: Ընտանիքի բանակցային մոդելները: Աշխատանքի բաժանումն ընտանիքում: Ընտանիքում տղամարդ-կերակրողի և կին-տնային տնտեսուհու դերերի մասին գոյություն ունեցող կարծրատիպերը: Ամուսնական հարաբերությունների տնտեսագիտական վերլուծությունը: Տղամարդկանց և կանանց չվարձատրվող տնային աշխատանքը: Տնային տնտեսությունում կանանց կրկնակի զբաղվածությունը: Տնային տնտեսությունների գործունեության գնահատումը:

Աշխատանքի առաջարկի վերաբերյալ ամուսնու և կնոջ կողմից համատեղ ընդունվող որոշումները: Երեք ընտրություն՝ աշխատանքի շուկա, աշխատանք տնային տնտեսությունում և ազատ ժամանակ:

Տնային տնտեսությունում բարիքների արտադրության մոդելը: Ընտանեկան գործունեության ոլորտի, տնային տնտեսությունում արտադրական գործառույթների, տնային տնտեսությունում աշխատանքի հաշվառման և գնահատման, դրա տնտեսական արժևորության, վերարտադրողական վարքագծի, աշխատանքի և զբաղվածության, ձեռնարկատիրական գործունեության, մասնավոր ոլորտի, ոչ ֆորմալ տնտեսության գենդերային վերլուծություն:

Աշխատանքի բաժանումը տնային տնտեսությունում: Եկամուտների գործառական, անձնական և ներընտանեկան բաշխումը: Դրա գենդերային հետևանքները:

Ժամանակի տնտեսական արժեքն ընտանիքում: Ընտանեկան (ամուսնական) կապիտալ: Շուկայական կապիտալի և սոցիալական կապիտալի ձևավորումն ընտանիքում:

Սպառողի նախասիրությունները և անձնական սպառողական ծախսումների կառուցվածքը գենդերային դերերի հաշվառմամբ:

Աշխատանքի շուկա, զբաղվածություն և գործազրկություն

Աշխատաշուկայի գենդերային հայեցակետերը. աշխատուժի որակ և աշխատողի որակավորում, աշխատանքային կարիերա, աշխատուժի մեջ ընդգրկվածության և աշխատաժամանակի տևողության միտումները, աշխատանքի երկակի շուկայի մոդել, գենդերային անհամաչափությունը աշխատանքի շուկայում, ոչ լրիվ զբաղվածությունը և դրա գենդերային հետևանքները, վարձու աշխատանքի անցնելու վերաբերյալ որոշումների ընդունման տեսություն, եկամտի էֆեկտը և փոխարինման էֆեկտը աշխատավարձի բարձրացման դեպքում:

Խտրականությունը և հնարավորությունների անհավասարությունը աշխատանքային հարաբերությունների ոլորտում: Աշխատանքի շուկա. հավասար հնարավորությունների քաղաքականությունը՝ նվաճումներ և խոչընդոտներ:

Խտրականության տնտեսագիտական տեսությունը: Վիճակագրական խտրականություն: Խտրականությունն ու խտրարարությունը աշխատանքի շուկայում: Խտրականություն՝ կապված կանանց և տղամարդկանց հմտությունների և ունակությունների սխալ գնահատման հետ: Հորիզոնական և ուղղահիվ խտրարարությունը զբաղվածության ոլորտում:

Մեռային խտրականությունը աշխատանքային հարաբերություններում: Մեռի հատկանիշով խտրականության բնույթը. սեռի հատկանիշով խտրականությունը զբաղվածության և դրա չափման եղանակների հարցում, խտրականությունը աշխատավարձի մեջ, անհավասար հնարավորություններն աշխատանքի ընդունման գործընթացում կամ զբաղվածության ոլորտում, խտրականությունը կրթության ոլորտում, խտրականություն նախապաշարմունքների հիման վրա, խտրականություն՝ հիմնված մենիշխանության վրա:

Աշխատանքի վարձատրության տարբերություններն ըստ սեռերի: Կրթական հավասար մակարդակ ունեցող կանանց և տղամարդկանց աշխատավարձի տարբերակումը: Զբաղվածության «կանացի» ոլորտներ: Կանանց դուրսմղումը բարձր վարձատրություն ունեցող ոլորտներից:

Գենդերային խտրարարություն՝ խտրարարության և աշխատավարձի փոխադարձ կապը, մասնագիտական խտրարարությունը՝ «գերհագեցած շուկայի» մոդելը, արտադրական գործունեության վերլուծությունը՝ հորիզոնական և ուղղահիգ խտրարարության տեսանկյունից, հորիզոնական խտրարարության բաղադրիչները՝ ճյուղային, մասնագիտական, միջկազմակերպական, միջոլորտային խտրարարությունը, ուղղահիգ խտրարարության դիտարկման մակարդակներ՝ առանձին կազմակերպության մակարդակ, տնտեսության ճյուղեր, տնտեսությունն ամբողջությամբ:

Խտրականության տնտեսական հետևանքները և հակախտրական քաղաքականությունը:

Հանրապետությունում գրանցված գործազրկության «կանացի դեմքը»: Կանանց և տղամարդկանց թաքնված զբաղվածությունը ոչ ֆորմալ տնտեսության մեջ:

Գործազրկությունը և դրա գենդերային հետևանքները գործազրկության հպանցիկ (ֆրիկցիոն), կառուցվածքային, սեզոնային, ցիկլային տարատեսակների և ավելցուկային առաջարկի գործազրկության գենդերային հայեցակետերը, աշխատանք փնտրելու տեսություն, գործազրկության բնական մակարդակը և դրա գենդերային որոշիչները, գործազրկության գենդերային հետևանքները և մակրոտնտեսական ցուցանիշները, պետության քաղաքականությունը գործազրկության կրճատման ուղղությամբ:

Մշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում գենդերային խտրականության դրսևորումների վերացման ու տնտեսական գործունեության մեջ կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորությունների ապահովման կապը:

Ներդրումներ մարդկային կապիտալում

Ներդրումները մարդկային կապիտալում. կրթության պահանջարկը, կրթության մեջ կատարվող ներդրումների օգուտներն ու ծախսերը,

ընտրության ձևական մոդելը և դրա հետևանքները, կողմնորոշում դեպի ներկան, աշխատավարձերի տարբերությունը, մարդկային կապիտալում կատարվող ներդրումների շահութաբերությունը: Վճարովի կրթության և առողջապահության մեջ կատարվող ներդրումների գենդերային հետևանքները:

Գենդերային կրթությունը՝ որպես ժողովրդավարական հասարակության կայացման, հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հասնելու նախադրյալ:

Մարդկային ներուժի զարգացման գենդերային տեսանկյունները և գենդերային բաղադրիչի ինտեգրումը առողջապահական և կրթական ծրագրերում:

Կրթության մեջ արված ներդրումների գենդերային տեսանկյունները: Կրթական մակարդակի և սերնդի ներուժի զարգացման հիմնահարցերը: Կանանց ընդգրկվածությունը կրթական տարբեր համակարգերում: Կանանց և տղամարդկանց կրթական մակարդակի և նրանց զբաղվածության միջև գոյություն ունեցող կապը:

Առողջապահության ոլորտը Հայաստանում և այն բնութագրող գենդերային ցուցիչների՝ ժողովրդագրական իրավիճակի, բնակչության հիվանդացության մակարդակի և սանիտարա-համաճարակային վիճակի հաշվառումը առողջապահության զարգացման ռազմավարության և գերակայությունների մշակման գործընթացներում:

Գենդերային բաղադրիչի ինտեգրումն առողջապահության ոլորտում իրականացվող քաղաքականության մեջ: Կանանց և երեխաների առողջության հիմնահարցերի գերակայությունն ազգային մակարդակով:

Առողջապահության համակարգի բարեփոխումներում գենդերային բաղադրիչի ներառումը և բժշկական ծառայությունների արդյունավետության բարձրացումը:

Ձեռնարկատիրական գործունեության գենդերային հիմնահարցերը

Գենդերային իրավիճակը ձեռնարկատիրության մեջ: Փոքր և միջին գործարարության մեջ կանանց զբաղվածության վերլուծություն: Ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ընդլայնումը կանանց և տղամարդկանց համար: Գենդերային իրավահավասարության հասնելու նպատակով ձեռնարկատիրության իրավական կարգավորման անհրաժեշտությունը: Գործարարության զարգացման փուլերը (ինքնազբաղվածությունը, միկրոձեռնարկությունը և փոքր ձեռնարկությունը, կանանց և տղամարդկանց ձեռնարկատիրական գործունեության մեջ):

Փոքր և միջին ձեռնարկատիրություն. փոքր և միջին ձեռնարկատիրության գենդերային առանձնահատկությունները: Կանանց զբաղվածությունը փոքր և միջին ձեռնարկատիրության մեջ, ինքնազբաղվածություն, ընտանեկան ձեռնարկատիրության գենդերային հայեցակետերը, պետության դերը կանանց ձեռնարկատիրությանն աջակցելու գործում:

Ոչ ֆորմալ տնտեսական գործունեության գենդերային հայեցակետերը. ոչ ֆորմալ տնտեսություն հասկացությունը և դասակարգումը, կանանց աշխատանքի հայեցակարգումը, տնտեսության ոչ ֆորմալ ոլորտի գենդերային հատվածավորումը, կանանց զբաղվածությունը Հայաստանի տնտեսության ոչ ֆորմալ ոլորտում:

Մենեջմենթի և մարքետինգի գենդերային տեսանկյունները

Գենդերը և հանրային կառավարման համակարգը: Կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցությունը հանրային կառավարմանը: Կանանց մասնակցությունն իշխանական կառույցներին և քաղաքականությանը: Հայաստանում իրականացվող կադրային քաղաքականությունը և կանայք: Կադրերի հավաքագրման և ընտրության գործընթացներում առկա գենդերային հիմնախնդիրները:

Կանանց մասնակցությունը կառավարչական որոշումների ընդունման գործընթացներին:

Կարիերայի կառավարման հիմնախնդիրների գենդերային տեսանկյունները: Կանանց և տղամարդկանց մոտիվացիոն համակարգերը սեփական կարիերիայի կայացման գործընթացներում: Գենդերային հիմնախնդիրները պետական և տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններում:

Մենեջմենթի համակարգի ռազմավարական և մարտավարական պլանները և դրանց գենդերային հետևանքները, կադրային քաղաքականության և անձնակազմի կառավարման գենդերային հայեցակետերը, գործունեության մոտիվացիայի գենդերային հայեցակետը մենեջմենթում, խմբերի դինամիկան և կանանց լիդերությունը մենեջմենթի համակարգում, մարդու (տղամարդու և կնոջ) և թիմի կառավարումը, կոնֆլիկտները մենեջմենթում և դրա գենդերային հետևանքները, շուկայավարման ռազմավարության և մարտավարության մշակումը գենդերային գործոնների հաշվառմամբ, սեռային հատկանիշի օգտագործումը մրցակցության մեթոդներում և գովազդում՝ որպես հաջողության գործոն, կանանց և տղամարդկանց ընդգրկվածությունը մարքետինգային ծառայություններում:

Պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության գենդերային հիմնախնդիրները

Սոցիալ-տնտեսական վերափոխումների ազդեցությունը հասարակության գենդերային համակարգի վրա: Սոցիալ-տնտեսական քաղաքականության վերլուծության անդրադարձը կանանց և տղամարդկանց վրա: Կանանց և տղամարդկանց սոցիալական կարգավիճակի տարբերությունները շուկայական տնտեսությանն անցման շրջանում:

Պետական քաղաքականության՝ խտրականության և խտրարարության վրա ներազդելու հնարավորությունները. կադրերի հավաքագրումը և ընտրությունը պետական ծառայության համակարգում, պաշտոն-

նեական առաջխաղացում, որոշումների կայացում տնտեսական ոլորտներում մասնակցության վերաբերյալ, գործատուներին հարկային արտոնությունների տրամադրում, նոր աշխատատեղերի ստեղծում:

Գենդերային անհավասարության և կոռուպցիայի զուգորդվածությունը և դրանց համատեղ հաղթահարմանն ուղղված պետական քաղաքականության լծակները:

Գենդերը և բյուջետային քաղաքականությունը: Կանանց և տղամարդկանց կարծիքների հաշվառումը պետական բյուջեի մշակման գործընթացներում՝ գենդերային հաշվեկշռված մասնակցություն:

Բյուջեի միջոցների բաշխումը սոցիալական և գենդերային տեսանկյուններից արդարացի հիմունքներով: Գենդերը և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեները:

Սոցիալական քաղաքականությունը և գենդերային հարաբերությունները: Կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը սոցիալական ապահովության ոլորտում:

Գենդերային իրավահավասարության երաշխավորման սոցիալական ապահովության ոլորտի իրավական, տնտեսական և սոցիալական խթանները: Կանանց սոցիալական ապահովության համակարգի բարելավման հիմնախնդիրը: Սոցիալական ապահովության համակարգի գենդերային չեզոքության ապահովումը: Հասարակական կառուցվածքներում գենդերային դերերի փոփոխությունների ազդեցությունը Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության համակարգի վրա:

Կենսաթոշակային բարեփոխումների գենդերային հիմնախնդիրները Հայաստանում: Գենդերային հիմնախնդիրների առաջացումը՝ կապված հանրապետությունում իրականացվող կենսաթոշակային բարեփոխումների հետ և դրա գենդերային հետևանքները:

Ըստ սեռերի կենսաթոշակների տարբերակման անհրաժեշտությունը՝ կապված վարքագծի գոյություն ունեցող գենդերային կարծրատիպերի, զբաղվածության ոլորտում և աշխատանքի շուկայում կանանց և տղամարդկանց ունեցած հնարավորությունների հետ: Տնային տնտե-

սուբյամբ զբաղված կանանց և տղամարդկանց կենսաթոշակային ապահովության համակարգի զարգացումը:

Սոցիալական աջակցության ծրագրերի գենդերային առումները: Գենդերային բաղադրիչի ինտեգրման ուղիները սոցիալական ապահովության համակարգում:

Անցումային տնտեսության ընդհանուր հիմնախնդիրների գենդերային հայեցակետերը

Կանայք և տղամարդիկ Խորհրդային Միության փլուզումից հետո: Գենդերային հիմնախնդիրը տնտեսական համակարգի արդի փոխակերպման պայմաններում: Սոցիալ-տնտեսական վերափոխումների ազդեցությունը գենդերային համակարգի վրա: Կանանց և տղամարդկանց սոցիալ-տնտեսական կարգավիճակի տարբերությունները անցումային շրջանում, դրանց աղբյուրները, չափերը և մեխանիզմները: Ֆեմինացված աղքատություն: Առնականության ճգնաճամ: Անցումային վերափոխումների գենդերային գինը:

Անցումային շրջանի հիմնախնդիրները գենդերային հետևանքների տեսանկյունից. ունեցվածքի սեփականաշնորհման և շուկայական այլ վերափոխումների, բաց և ստվերային տնտեսության, ընտանեկան ձեռնարկատիրության ու կառուցվածքային փոփոխությունները տնտեսության մեջ և դրանց գենդերային հետևանքները:

Անցումային շրջանում միգրացիայի և ժողովրդագրական տեղաշարժերի գենդերային հայեցակետերը: Կանանց աշխատանքային միգրացիան տնտեսական ինտեգրման պայմաններում:

Չվարձատրվող աշխատանքը անցումային տնտեսության պայմաններում:

Գենդերային անհավասարության և աղքատության փոխադարձ կապը:

Կանանց և տղամարդկանց մասնագիտական ռազմավարությունները տնտեսական վերափոխումների շրջանում. երկակի հարմարումը,

սոցիալական և կրթական կապիտալի կիրառումը, սոցիալական կապերի օգտագործումը, մասնագիտական ունակությունների նորացումը, կրթական կապիտալի ինտենսիվ նորացումը:

Գենդերային վերլուծության և գենդերային փորձաքննության անցկացման տեխնոլոգիաները

Գենդերային փորձաքննության նշանակությունը, նպատակները և իրականացման ընթացակարգերը:

Գենդերային փորձաքննության իրականացման միջազգային փորձը: Փորձաքննության իրականացման շվեդական և կանադական ընթացակարգեր: Գենդերային փորձաքննության իրականացման փուլերը (ութ քայլերը)՝

1. հիմնախնդրի ուսումնասիրություն, դրա հստակեցում, ձևակերպում և գնահատում,
2. գերակայությունների ընտրություն, ցանկալի արդյունքների և սպասվելիք նպատակների որոշում,
3. անհրաժեշտ տեղեկատվության և խորհրդատվության ստացում,
4. գենդերային հիմնախնդրի լուծման նպատակով հետազոտության անցկացում,
5. հիմնախնդրի հնարավոր լուծման տարբերակների մշակում և դրանց գնահատում, համապատասխան օրենքների և հանձնարարականների նախագծերի մշակում,
6. լավագույն տարբերակի ընտրություն,
7. հաղորդակցության ռազմավարության մշակում,
8. փորձաքննության որակի և արդյունքների գնահատում:

Գենդերը և բյուջետային քաղաքականությունը: Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքի գենդերային վերլուծություն: Բյուջեի ձևավորման գործընթացում դրսևորվող թաքնված խտրականությունը, բյուջետային քաղաքականության իրականացման ընթացքում կիրառվող տնտեսական մոտեցումները և գենդերային բաղադրիչի

ինտեգրման մեխանիզմները բյուջեի մշակման նախնական փուլերում:

Գենդերային վերլուծության տեղեկատվական ապահովումը և կազմակերպումը, վիճակագրական տեղեկատվության աղբյուրները գենդերի տեսանկյունից, պետական բյուջեի, սոցիալական ոլորտում վերափոխումների, սոցիալ-տնտեսական զարգացման գենդերային վերլուծության մաթեմատիկական մեթոդները, Մոզերի հարվարդյան վերլուծական մոդելը, հասարակության մեջ հավասարության և անհատի դերի բարձրացման հարցերի վերլուծության Լոնգվիի շրջանակաձև ղեկավարումը, կանանց իշխանական հնարավորությունների ընդլայնման վերլուծական մոդելը, գենդերային վերլուծության մատրիցաներ:

Գենդերային գործոնների հաշվառումը պետական բյուջեի և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների մշակման գործընթացներում: Հայաստանի պետական բյուջեի ծախսերի առանձին խմբերի գենդերային փորձաքննության իրականացում՝ «Առողջապահության» և «Կրթության» խմբերի ծախսերի օրինակով: Պետական բյուջեի գենդերային փորձաքննություն. գենդերային հավասարության ապահովմանն ուղղված պետական ծախսերը, հիմնական ծախսերի գենդերային ազդեցությունը, բյուջեի մշակման գործընթացին մասնակցող խմբերի թիվը և կազմը:

Ուսանողների գիտելիքների և հմտությունների մակարդակին ներկայացվող պահանջները

Ուսանողը պետք է պատկերացում ունենա՝

- տնտեսական զարգացման և գենդերային հավասարության կապի,
- գենդերային տնտեսագիտության հիմնական հասկացությունների ու հայեցակարգերի,
- կանանց և տղամարդկանց հնարավորությունների զարգացման վրա գլոբալացման ազդեցությունների,

- շուկայական տնտեսության գենդերային հետևանքների, սոցիալական երաշխիքների գենդերային հայեցակետերի,
- անցումային շրջանի տնտեսական զարգացման հիմնական միտումների և գենդերային հետևանքների,
- ունեցվածքի սեփականաշնորհման և ստվերային տնտեսության գենդերային առումների,
- մարդկային զարգացման գենդերային գործոնների,
- սոցիալ-տնտեսական երևույթների գենդերային վերլուծության,
- տնտեսության պետական կարգավորմանն ուղղված քաղաքականության, զարգացման ծրագրերի և բյուջեների մշակման գործընթացների գենդերային փորձաքննության,
- աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում խտրականության ու խտրարարության ցանկացած ձևի բացահայտման և վերացման ուղիների,
- զբաղվածության և գործազրկության գենդերային չափումների,
- մարդու իրավունքների համատեքստում կանանց իրավունքների պաշտպանության գենդերային մոտեցումների,
- գենդերային իրավահավասարության օրենսդրական դաշտի վերաբերյալ:

Ուսանողը, օգտագործելով տեսական գիտելիքները, պետք է ունենա հետևյալ հմտությունները՝

- առանձնացնել գենդերային գիտելիքների տեսական և կիրառական տեսանկյունները և դրանց արժեքային հայեցակետերը, որոնք վերաբերում են մասնագիտական ոլորտին,
- բացահայտել սոցիալ-տնտեսական հարաբերությունների՝ գենդերով պայմանավորված բնույթը,
- սոցիալ-տնտեսական երևույթների գենդերային վերլուծության հիման վրա ներկայացնել սեփական դիրքորոշումը,
- կայացնել համապատասխան որոշումներ գենդերային հիմնախնդիրների լուծման վերաբերյալ,

- գենդերային հավասարության ապահովման դիրքերից հիմնավորել ընդունված որոշումները,
- օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաները, վեր հանել գենդերային հիմնախնդիրների լուծման հնարավորությունները և մշակել գենդերային հավասարության հասնելու ռազմավարական ուղղությունները,
- գնահատել ներդրումները մարդկային կապիտալում՝ կանանց և տղամարդկանց տնտեսական դերակատարման դիրքերից,
- բացատրել գլոբալացման և գենդերային զարգացումների ուժեղացման կապը՝ պայմանավորված տնտեսական դրդապատճառներով,
- կրթության անընդհատության ապահովմամբ ձեռք բերել նոր գենդերային գիտելիքներ ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործմամբ:

Ուսանողը պետք է կարողանա՝

- ինքնուրույն հետազոտել գենդերային տեսության և մեթոդաբանության նոր մոտեցումները և գործնականում կիրառել դրանք,
- վերլուծել գենդերային տեսության հիմնական հասկացությունները, մոտեցումները, գաղափարախոսությունը, տնտեսական երևույթների գենդերային հիմնախնդիրները և զարգացումները,
- սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում կիրառել գենդերային բաղադրիչի ներդրման մեթոդները,
- կատարել պետական բյուջեի, սոցիալական ոլորտի տեղաշարժերի և զարգացման ծրագրերի գենդերային վերլուծություն,
- տիրապետել գենդերային գիտելիքների կիրառման հնարներին տնտեսական որոշումների պատրաստման գործընթացներում,
- անձնական վերաբերմունք դրսևորել գենդերային հիմնախնդիրների լուսաբանման և դրանց լուծման ուղիների կանխատեսման հարցերում,
- բացահայտել զարգացման տարբեր ծրագրերում գենդերային բաղադրիչի ինտեգրման հնարավորությունները, աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում առկա գենդերային խտրականու-

թյունն ու խտրարարությունը, տալ դրանց լուծման հնարավոր ուղիները,

- գենդերային հավասարության իրավական և տնտեսական հիմքերի հիման վրա բացահայտել մարդկային ներուժի զարգացման գենդերային տեսանկյունները,
- վեր հանել սոցիալական և կենսաթոշակային ապահովության գենդերային հիմնախնդիրները, իշխանական կառույցներում և կառավարչական որոշումների ընդունման գործընթացներում կանանց և տղամարդկանց մասնակցության հնարավորությունները,
- գործնականում կիրառել օրենսդրության, տնտեսության պետական կարգավորման քաղաքականության և զարգացման ծրագրերի գենդերային փորձաքննության իրականացման ընթացակարգերը:

«ԳԵՆԴԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ»

ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՀԱՄԱՐ

Թեմա 1. Դասընթացի առարկան, խնդիրները և բովանդակությունը

«Մեռ» և «գենդերային դերեր» հասկացությունների տարբերությունները: Կենսաբանական սեռից դեպի սոցիալական սեռը: Գենդերային դերերի էվոլյուցիան և մարդկային զարգացումը:

Գենդերը որպես մշակութաբանական և սոցիալական հասկացություն: Գենդերային նորմատիվների կախվածությունը մշակույթից, ազգային ավանդույթներից ու սովորույթներից, կրոնից, պատմությունից, աշխարհաքաղաքականությունից, հասարակության զարգացման մակարդակից: Գենդերային կարծրատիպերի կենսունակությունը և գենդերային դերերի բազմազանությունը տարբեր մշակույթներում:

Գենդերային տեսության հիմնական հասկացությունները, մոտեցումները, ուղղությունները: Գենդերը՝ որպես շերտադասական կատեգորիա:

Գենդերային սոցիալականացումը և դրա առանձնահատկությունները տղամարդկանց և կանանց համար: Գենդերային գաղափարախոսության արժեքային համակարգը: Գենդերային սոցիալականացման հետևանքները: Կանանց և տղամարդկանց միջև տնտեսական տարբերությունների առաջացման պատճառները, չափերը և մեխանիզմները:

Հասարակության գենդերային կազմակերպման տիպերը և ձևերը: Հայրիշխանությունը՝ որպես արդի հասարակության գերիշխող մոդել: Գենդերային կարծրատիպեր: Գենդերային անհամաչափությունը հասարակության և տնտեսության մեջ:

Գենդերային դերերի ավանդական ընկալումը հասարակության մեջ և ընտանիքում: Բռնությունն ընտանիքում՝ որպես տղամարդու իշխանության հաստատման միջոց: Գենդերային հարաբերություններն ընտանիքում: Հավասար իրավունքների, հավասար հնարավորությունների և հավասար արդյունքների հիմնախնդիրները:

Գենդերային մշակույթի զարգացումը՝ որպես զուգակշռված ժողովրդավարության անհրաժեշտ պայման: Գենդերային դերերի բևեռացվածության հաղթահարման միջոցները, ձևերն ու եղանակները:

Գենդերային տարբերությունների ուսումնասիրությունը կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման ոլորտում: Գենդերային անհավասարության հիմքը տնտեսական ոլորտում, կանանց և տղամարդկանց անհավասար վիճակը և հասարակության մեջ գենդերային դերերի պահպանվող և ամրապնդվող ավանդական բաժանումը:

Գենդերը՝ որպես աշխատանքի բաժանման հիմք: Կանանց և տղամարդկանց կենսաբանական սեռերի տարբերությունների սոցիալ-մշակութային արտացոլումը, հասարակական կյանքում կնոջ և տղամարդու զբաղեցրած կարգավիճակի կապը նրանց կենսաբանական դերերի և սոցիալական ավանդույթների հետ:

Հասարակության մեջ ավանդական սեռային դերերի, առաջին հերթին կնոջ կարգավիճակի փոխակերպումը և դրա ազդեցությունը տղամարդու սոցիալական կարգավիճակի վրա:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Ներկայացնել «Գենդերը և տնտեսագիտությունը» դասընթացի առարկան:
2. Բնութագրել «սեռ» և «գենդեր» հասկացությունների էությունը և դրանց տարբերությունները:
3. Որո՞նք են գենդերային անհավասարություն առաջացնող պատճառները:
4. Ներկայացնել գենդերային դերակատարումը աշխատանքի բաժանման հարցում:
5. Ի՞նչ կապ գոյություն ունի գենդերային և մարդկային զարգացման միջև:
6. Ինչպե՞ս է կնոջ կարգավիճակի փոխակերպումն ազդում տղամարդու սոցիալական կարգավիճակի վրա:
7. Ներկայացնել գենդերային դերերի բևեռացվածության հաղթահարման միջոցները, ձևերն ու եղանակները:

Թեմա 2. Գենդերային տնտեսագիտության ելակետային հասկացությունները

Տնտեսական երևույթների գենդերային հիմնախնդիրները և դրանց մեկնաբանումը տարբեր տնտեսագիտական տեսություններում: Գենդերի սոցիալական կառուցման տեսությունը: Տնտեսական երևույթների բացահայտման գենդերային տեսությունները տնտեսագիտական դպրոցներում:

Կանանց և տղամարդկանց տնտեսական վիճակի ավանդական տարբերությունները և երկու սեռերի տնտեսական դերերը: Սեռական դերերը և սեռային դերերը տնտեսության մեջ և համապատասխան գենդերային կարծրատիպերի ձևավորումը: Գենդերային անհամաչափության տնտեսական գործոնները: Գենդերային զարգացումները հասարակության սոցիալ-տնտեսական կյանքում:

Տնտեսական ոլորտում գենդերային խտրականության առաջացման պատճառները, ձևերը և հետևանքները: Գենդերային դերերը բնատնտեսության մեջ: Ապրանքա-փողային հարաբերությունների ազդեցությունը կանանց և տղամարդկանց վիճակի վրա:

Մեռը՝ որպես իռացիոնալ զին ունեցող ապրանք: Մարմնավաճառությունը՝ որպես եկամտի աղբյուր: Մարմնավաճառության տնտեսական, սոցիալական և բարոյահոգեբանական հետևանքները:

Արդյունաբերության մեջ կապիտալիզմի զարգացման երեք փուլերը (պարզ կոոպերացիա, մանուֆակտուրա և խոշոր մեքենայական արտադրություն) և երկու սեռերի տնտեսական դերերի փոփոխությունները:

Հասարակության պահանջումների դասակարգման գենդերային տեսանկյունները: Տնտեսական ռեսուրսները, դրանց բաշխումը և օգտագործումը սեռի հատկանիշով:

Ընտրության տնտեսագիտական հիմնախնդիրը կանանց և տղամարդկանց համար: Այլընտրանքի զին և երկընտրանք:

Մասնավոր սեփականությունը, անձնական շահը և մրցակցությունը՝ որպես գենդերային կարծրատիպերի ձևավորման գործոններ: Տնտե-

սության մեջ պետության միջամտության դերը՝ որպես սեռերի իրավահավասարության ապահովման պայման:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Որո՞նք են տնտեսական երևույթների գենդերային հիմնախնդիրները:
2. Ներկայացնել կանանց և տղամարդկանց տնտեսական վիճակի ավանդական տարբերությունները և երկու սեռերի տնտեսական դերերը:
3. Որո՞նք են գենդերային անհամաչափության տնտեսական գործոնները:
4. Բնութագրել տնտեսական ոլորտում գենդերային խտրականության առաջացման պատճառները, ձևերը և հետևանքները:
5. Ինչպիսի՞ տնտեսական, սոցիալական և բարոյահոգեբանական հետևանքներ կարող է ունենալ մարմնավաճառությունը:
6. Որո՞նք են հասարակության պահանջմունքների դասակարգման գենդերային տեսանկյունները:
7. Ի՞նչ առանձնահատկություններ ունի ընտրության տնտեսագիտական հիմնախնդիրը կանանց և տղամարդկանց համար: Այլընտրանքի գինը և երկրնտրանքը:
8. Ի՞նչ դեր պետք է ունենա պետությունը տնտեսության մեջ սեռերի իրավահավասարության ապահովման գործում:

ԹԵՄԱ 3. Տնտեսական պատմության գենդերային հիմնահարցերը

Տնտեսական պատմության գենդերային պարբերականացումը: Աշխատանքի բնական և հասարակական բաժանումը, սեփականության ձևերը և դրանց զարգացումը: Գենդերային անհավասարության արմատները նահապետական տնտեսության մեջ: Ամուսնաընտանեկան հարաբերությունների և կանանց ու տղամարդկանց սոցիալականացումը:

Կանանց և տղամարդկանց տնտեսական դերերը ստրկատիրական

տնտեսակարգի պայմաններում: Ստրկության «արևելյան» և «արևմտյան» տիպերը:

Հին աշխարհի տնտեսական վերափոխումները և գենդերային հիմնախնդրի սրումը: «Արևմտյան» և «արևելյան» ֆեոդալիզմ:

Տնտեսական վերածնունդը միջնադարում: Քաղաքների տնտեսությունը, կոմունալացիան և «Էմանսիպացիայի» շարժումը:

Կապիտալիստական տնտեսակարգը: Կապիտալի նախասկզբնական կուտակումը, տեխնոլոգիական հեղաշրջումը և դրա ազդեցությունը կանանց ու տղամարդկանց տնտեսական դերերի վրա:

Գաղութացման գենդերային հետևանքները: Տնտեսապես զարգացած և թույլ զարգացած երկրներում երկու սեռերի կարգավիճակների տարբերությունները:

Սոցիալիստական վերափոխումները և տնտեսության մեջ տղամարդկանց ու կանանց մասնակցության վերաբերյալ նոր մոտեցումները:

Գենդերային հիմնախնդիրները հետինդուստրիալ հասարակություններում:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Ներկայացնել տնտեսական պատմության գենդերային պարբերականացումը:
2. Որո՞նք են կանանց և տղամարդկանց տնտեսական դերերի առանձնահատկությունները նահապետական տնտեսության մեջ, ստրկատիրական տնտեսակարգի և ֆեոդալիզմի պայմաններում:
3. Բնութագրել կապիտալի նախասկզբնական կուտակումը, տեխնոլոգիական հեղաշրջումը և դրա ազդեցությունը կանանց ու տղամարդկանց տնտեսական դերերի վրա:
4. Որո՞նք են տնտեսապես զարգացած և թույլ զարգացած երկրներում երկու սեռերի կարգավիճակների տարբերությունները:
5. Ինչպե՞ս են լուծվել գենդերային հիմնահարցերը իրական սոցիալիզմի պայմաններում:

Թեմա 4. Գենդերային մոտեցումները տնտեսագիտական մտքի պատմության մեջ

Գենդերային մոտեցումների տարրերը Հին Արևելքի և անտիկ աշխարհի տնտեսագիտական ուսմունքներում: Կոնֆուցիուսի, Պլատոնի, Արիստոտելի իրավատնտեսագիտական դրույթների գենդերային հայեցակետերը:

Կանոնականների տնտեսագիտական գաղափարները հասարակության մեջ կանանց ու տղամարդկանց տեղի մասին: Գենդերային մոտեցումների արդիականացումը նոր դարաշրջանի տնտեսագիտական-քաղաքական մտքում:

Գենդերային հիմնախնդիրների վերհանումն ու մեկնաբանումը մարքսիստական տեսության մեջ:

Մասնավոր սեփականության և կնոջ տնտեսական կախվածության կապը: Կապիտալիզմի և հայրիշխանության դերը կանանց շահագործման հարցում:

«Տնտեսական մարդու» վարքի մեկնաբանության նեոդասական մոտեցումը և դրա հետագա զարգացումը «մարդկային կապիտալի» տեսության մեջ: Շուկայական ոլորտի էզոիզմի և ընտանեկան ոլորտի ալտրոիզմի հակասությունը:

Ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների դերը գենդերային հավասարության ապահովման գործում: Ինստիտուցիոնալիզմի ներդրումը գենդերային հիմնախնդիրների մեկնաբանման հարցում:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Բնութագրել գենդերային մոտեցումների տարրերը Հին Արևելքի և անտիկ աշխարհի տնտեսագիտական ուսմունքներում:
2. Ի՞նչ դեր ունեն գենդերային մոտեցումները նոր դարաշրջանի տնտեսագիտական-քաղաքական ուսմունքներում:
3. Ինչպե՞ս են մեկնաբանվում գենդերային հիմնախնդիրները մարքսիստական տեսության մեջ:
4. Ներկայացնել կապիտալիզմի և հայրիշխանության դերը կանանց շահագործման հարցում:

5. Ո՞րն է «տնտեսական մարդու» վարքի մեկնաբանության նեոդասական մոտեցումը:
6. Ի՞նչ դեր ունեն ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտները գենդերային հավասարության ապահովման գործում:

Թեմա 5. Տնային տնտեսության գենդերային վերլուծություն

Տնային տնտեսությունը՝ որպես գենդերային վերլուծության ելակետ: Գենդերային դերերի ավանդական ընկալումն ընտանիքում:

Ընտանիքը և տնային տնտեսությունը՝ որպես տնտեսական վերլուծության օբյեկտ: Ներընտանեկան բաշխման գործընթացները: Բեկկերի ալյասիրական մոդելը: Ընտանիքի բանակցային մոդելները: Աշխատանքի բաժանումն ընտանիքում: Ընտանիքում տղամարդ կերակրողի և կին տնային տնտեսուհու դերերի մասին կարծրատիպերը: Ամուսնական հարաբերությունների տնտեսագիտական վերլուծությունը: Կանանց և տղամարդկանց չվարձատրվող տնային աշխատանքը: Տնային տնտեսությունում կանանց կրկնակի զբաղվածությունը: Տնային տնտեսությունների գործունեության գնահատումը:

Աշխատանքի առաջարկի վերաբերյալ ամուսնու և կնոջ կողմից համատեղ ընդունվող որոշումները: Երեք ընտրություն՝ աշխատանքի շուկա, աշխատանք տնային տնտեսությունում և ազատ ժամանակ:

Տնային տնտեսությունում բարիքների արտադրության մոդելը: Ընտանեկան գործունեության ոլորտի, տնային տնտեսությունում արտադրական գործառույթների, տնային տնտեսությունում աշխատանքի հաշվառման և գնահատման, դրա տնտեսական արժեքության, վերարտադրողական վարքագծի, աշխատանքի և զբաղվածության, ձեռնարկատիրական գործունեության, մասնավոր ոլորտի, ոչ ֆորմալ տնտեսության գենդերային վերլուծություն:

Աշխատանքի բաժանումը տնային տնտեսությունում: Եկամուտների ֆունկցիոնալ, անձնական և ներընտանեկան բաշխումը: Դրա գենդերային հետևանքները:

Ժամանակի տնտեսական արժեքն ընտանիքում: Ընտանեկան (ամուսնական) կապիտալ: Շուկայական կապիտալի և սոցիալական կապիտալի ձևավորումն ընտանիքում:

Սպառողի նախասիրությունները և անձնական սպառողական ծախսումների կառուցվածքը գենդերային դերերի հաշվառմամբ:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Ինչու՞ է առաջանում տնային տնտեսությունում կանանց չվարձատրվող աշխատանքի գնահատման և չափման հիմնախնդիրը:
2. Բնութագրել տնային տնտեսությունում կանանց կրկնակի զբաղվածության յուրահատկությունները:
3. Ներկայացնել շուկայական կապիտալի և սոցիալական կապիտալի ձևավորման յուրահատկություններն ընտանիքում:
4. Գենդերային տեսանկյուններից վերլուծել ընտանիքը և տնային տնտեսությունը:

Թեմա 6. Աշխատանքի շուկա, զբաղվածություն և գործազրկություն

Աշխատաշուկայի գենդերային առումները՝ աշխատուժի որակ և աշխատողի որակավորում, աշխատանքային կարիերա, աշխատուժի մեջ ընդգրկվածության և աշխատաժամանակի տևողության միտումները, աշխատանքի երկակի շուկայի մոդել, գենդերային անհամաչափությունը աշխատանքի շուկայում, ոչ լրիվ զբաղվածությունը և դրա գենդերային հետևանքները, վարձու աշխատանքի անցնելու վերաբերյալ որոշումների ընդունման տեսություն, եկամտի էֆեկտը և փոխարինման էֆեկտը աշխատավարձի բարձրացման դեպքում:

Խտրականությունը և հնարավորությունների անհավասարությունը աշխատանքային հարաբերությունների ոլորտում: Աշխատանքի շուկա. հավասար հնարավորությունների քաղաքականությունը՝ նվաճումներ և խոչընդոտներ:

Խտրականության տնտեսագիտական տեսությունը: Վիճակագրական խտրականություն: Խտրականությունն ու խտրարարությունը աշխատանքի շուկայում: Խտրականություն՝ կապված կանանց և տղամարդկանց հմտությունների և ունակությունների սխալ գնահատման հետ: Հորիզոնական և ուղղահիվ խտրարարությունը զբաղվածության ոլորտում:

Մեռային խտրականությունը աշխատանքային հարաբերություններում: Սեռի հատկանիշով խտրականության բնույթը. սեռի հատկանիշով խտրականությունը զբաղվածության և դրա չափման եղանակների հարցում, խտրականությունը աշխատավարձի մեջ, անհավասար հնարավորություններն աշխատանքի ընդունման գործընթացում կամ զբաղվածության ոլորտում, խտրականությունը կրթության ոլորտում, խտրականություն նախապաշարմունքների հիման վրա, խտրականություն՝ հիմնված մենատիրական իշխանության վրա:

Աշխատանքի վարձատրության տարբերություններն ըստ սեռերի: Կրթական հավասար մակարդակ ունեցող կանանց և տղամարդկանց աշխատավարձի տարբերակումը: Ջրաղվածության «կանացի» ոլորտներ: Կանանց դուրսնումը բարձր վարձատրություն ունեցող ոլորտներից:

Գենդերային խտրարարություն. խտրարարության և աշխատավարձի փոխադարձ կապը, մասնագիտական խտրարարությունը՝ «գերհագեցած շուկայի» մոդելը, արտադրական գործունեության վերլուծությունը հորիզոնական և ուղղահիվ խտրարարության տեսանկյունից, հորիզոնական խտրարարության բաղադրիչները՝ ճյուղային, մասնագիտական, միջկազմակերպական, միջոլորտային խտրարարությունը, ուղղահիվ խտրարարության դիտարկման մակարդակներ՝ առանձին կազմակերպության մակարդակ, տնտեսության ճյուղեր, տնտեսությունն ամբողջությամբ:

Խտրականության տնտեսական հետևանքները և հակախտրական քաղաքականությունը:

Հանրապետությունում գրանցված գործազրկության «կանացի դեմքը»: Կանանց և տղամարդկանց թաքնված զբաղվածությունը ոչ ֆորմալ տնտեսության մեջ:

Գործազրկությունը և դրա գենդերային հետևանքները. գործազրկու-

թյան հպանցիկ (ֆրիկցիոն), կառուցվածքային, սեզոնային, ցիկլային տարատեսակների և ավելցուկային առաջարկի գործազրկության գենդերային հայեցակետերը, աշխատանք փնտրելու տեսություն, գործազրկության բնական մակարդակը և դրա գենդերային որոշիչները, գործազրկության գենդերային հետևանքները և մակրոտնտեսական ցուցանիշները, պետության քաղաքականությունը գործազրկության կրճատման ուղղությամբ:

Աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում գենդերային խտրականության դրսևորումների վերացման ու տնտեսական գործունեության մեջ կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորությունների ապահովման կապը:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Ինչպիսի՞ն է կանանց ընդգրկվածությունն աշխատանքի շուկայում:
2. Աշխատանքի շուկայում կանանց նկատմամբ իրականացվող խտրականության և խտրարարության ի՞նչ ձևեր կան:
3. Ներկայացնել կանանց գործազրկության մակարդակը Հայաստանում:
4. Ինչպե՞ս են արտահայտվում աշխատանքի վարձատրության տարբերություններն ըստ սեռերի:
5. Բնութագրել արտադրական գործունեության վերլուծությունը հորիզոնական և ուղղաձիգ խտրարարության տեսանկյունից:
6. Ինչպիսի՞ն է աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում գենդերային խտրականության դրսևորումների վերացման ու տնտեսական գործունեության մեջ կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորությունների ապահովման կապը:

Թեմա 7. Ներդրումներ մարդկային կապիտալում

Ներդրումները մարդկային կապիտալում. կրթության պահանջարկը, կրթության մեջ կատարվող ներդրումների օգուտներն ու ծախսերը,

ընտրության ձևական մոդելը և դրա հետևանքները, կողմնորոշում դեպի ներկան, աշխատավարձերի տարբերությունը, մարդկային կապիտալում կատարվող ներդրումների շահութաբերությունը: Վճարովի կրթության և առողջապահության մեջ կատարվող ներդրումների գենդերային հետևանքները:

Գենդերային կրթությունը՝ որպես ժողովրդավարական հասարակության կայացման, հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հասնելու նախադրյալ:

Մարդկային ներուժի զարգացման գենդերային տեսանկյունները և գենդերային բաղադրիչի ինտեգրումը առողջապահական և կրթական ծրագրերում:

Կրթության մեջ արված ներդրումների գենդերային տեսանկյունները: Կրթական մակարդակի և սերնդի ներուժի զարգացման հիմնահարցերը: Կանանց ընդգրկվածությունը կրթական տարբեր համակարգերում: Կանանց և տղամարդկանց կրթական մակարդակի և նրանց զբաղվածության կապը:

Առողջապահության ոլորտը Հայաստանում և այն բնութագրող գենդերային ցուցիչների՝ ժողովրդագրական իրավիճակի, բնակչության հիվանդացության մակարդակի և սանիտարա-համաճարակային վիճակի հաշվառումը առողջապահության զարգացման ռազմավարության և գերակայությունների մշակման գործընթացներում:

Գենդերային բաղադրիչի ինտեգրումն առողջապահության ոլորտում իրականացվող քաղաքականության մեջ: Կանանց և երեխաների առողջության հիմնահարցերի գերակայությունն ազգային մակարդակով:

Առողջապահության համակարգի բարեփոխումներում գենդերային բաղադրիչի ներառումը և բժշկական ծառայությունների արդյունավետության բարձրացումը:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Ներկայացնել կրթության մեջ արված ներդրումների արդյունավետության գենդերային տեսանկյունները:

2. Ի՞նչ կապ գոյություն ունի կնոջ կրթական մակարդակի և նրա զբաղվածության միջև:
3. Որո՞նք են կրթության զարգացման ծրագրի գենդերային նպատակները Հայաստանում:
4. Որո՞նք են առողջապահության ոլորտը բնութագրող հիմնական ցուցիչները գենդերային տեսանկյունից:
5. Ներկայացնել առողջապահության ոլորտում իրականացվող գենդերային քաղաքականության հիմնախնդիրները:
6. Ինչպե՞ս ինտեգրել գենդերային բաղադրիչը առողջապահական ծրագրերը մշակելիս:

Թեմա 8. Ձեռնարկատիրական գործունեության գենդերային հիմնահարցերը

Գենդերային իրավիճակը ձեռնարկատիրության մեջ: Փոքր և միջին գործարարության մեջ կանանց զբաղվածության վերլուծություն: Ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ընդլայնումը կանանց և տղամարդկանց համար: Գենդերային իրավահավասարության հասնելու նպատակով ձեռնարկատիրության իրավական կարգավորման անհրաժեշտությունը: Գործարարության զարգացման փուլերը (ինքնազբաղվածություն, միկրոձեռնարկություն և փոքր ձեռնարկություն) կանանց և տղամարդկանց ձեռնարկատիրական գործունեության մեջ:

Փոքր և միջին ձեռնարկատիրություն. փոքր և միջին ձեռնարկատիրության գենդերային առանձնահատկությունները: Կանանց զբաղվածությունը փոքր և միջին ձեռնարկատիրության մեջ, ինքնազբաղվածություն, ընտանեկան ձեռնարկատիրության գենդերային առումները, պետության դերը կանանց ձեռնարկատիրությանն աջակցելու գործում:

Ոչ ֆորմալ տնտեսական գործունեության գենդերային հայեցակետերը. ոչ ֆորմալ տնտեսություն հասկացությունը և դասակարգումը, կանանց աշխատանքի հայեցակարգումը, տնտեսության ոչ ֆորմալ

ուրրտի գենդերային հատվածավորումը, կանանց զբաղվածությունը Հայաստանի տնտեսության ոչ ֆորմալ ոլորտում:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Կանանց ձեռնարկատիրական գործունեության ի՞նչ հնարավորություններ կարող եք նշել:
2. Ինչպե՞ս կարելի է խթանել կանանց ձեռնարկատիրական գործունեությունը:
3. Ներկայացնել փոքր և միջին ձեռնարկատիրության գենդերային առանձնահատկությունները:
4. Բնութագրել կանանց զբաղվածությունը փոքր և միջին ձեռնարկատիրության մեջ:
5. Որո՞նք են ոչ ֆորմալ տնտեսական գործունեության գենդերային առումները:

Թեմա 9. Մենեջմենթի և մարքետինգի գենդերային տեսանկյունները

Գենդերը և հանրային կառավարումը: Կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցությունը հանրային կառավարմանը: Կանանց մասնակցությունն իշխանական կառույցներին և քաղաքականությանը: Հայաստանում իրականացվող կադրային քաղաքականությունը և կանայք: Կադրերի հավաքագրման և ընտրության գործընթացներում առկա գենդերային հիմնախնդիրները:

Կանանց մասնակցությունը կառավարչական որոշումների ընդունման գործընթացներին:

Կարիերայի կառավարման հիմնախնդիրների գենդերային տեսանկյունները: Կանանց և տղամարդկանց մոտիվացիոն համակարգերը սեփական կարիերիայի կայացման գործընթացներում: Գենդերային հիմնախնդիրները պետական և տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններում:

Մենեջմենթի համակարգի ռազմավարական և մարտավարական պլանները և դրանց գենդերային հետևանքները, կադրային քաղաքականության և անձնակազմի կառավարման գենդերային առումները, գործունեության մոտիվացիայի գենդերային հայեցակետը մենեջմենթում, խմբերի դինամիկան և կանանց լիդերությունը մենեջմենթի համակարգում, մարդու (կնոջ և տղամարդու) և թիմի կառավարումը, կոնֆլիկտները մենեջմենթում և դրանց գենդերային հետևանքները, շուկայավարման ռազմավարության և մարտավարության մշակումը գենդերային գործոնների հաշվառմամբ, սեռային հատկանիշի օգտագործումը մրցակցության մեթոդներում և գովազդում՝ որպես հաջողության գործոն, կանանց և տղամարդկանց ընդգրկվածությունը մարքետինգային ծառայություններում:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Ինչպե՞ս կարող է կադրային քաղաքականությունն ազդել գենդերային անհամաչափության խորացման վրա:
2. Ինչպիսի՞ն է կանանց մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացներում:
3. Մոտիվացիայի բովանդակային տեսություններում ներկայացնել պահանջմունքների հիերարխիան և դրանց դասակարգումը:
4. Բնութագրել զբաղվածության ոլորտում կանանց մասնակցության մոտիվացիոն կառավարումը:
5. Որո՞նք են կանանց կարիերայի կառավարման հիմնախնդիրները և փուլերը:
6. Որո՞նք են մենեջմենթի և մարկեթինգի համակարգի ռազմավարական և մարտավարական պլանների գենդերային հետևանքները:

Ռեֆերատների, կուրսային և մագիստրական թեզերի թեմաներ

1. Տնտեսական երևույթների բացահայտման գենդերային տեսությունները տնտեսագիտական դպրոցներում:

2. Գենդերային զարգացումները հասարակության սոցիալ-տնտեսական կյանքում:
3. Մարդկային ներուժի զարգացման կայունության հիմնահարցերում ուսումնասիրության գենդերային տեսանկյունները:
4. Կրթության մեջ արված ներդրումների գենդերային տեսանկյունները:
5. Կնոջ կրթական մակարդակի և զբաղվածության կապը:
6. Կանայք և աշխատանքի շուկան. հնարավորություններ և խոչընդոտներ:
7. Կանանց զբաղվածության հիմնախնդիրները և խտրականությունն աշխատանքի շուկայում:
8. Հորիզոնական և ուղղաձիգ խտրարարություն զբաղվածության ոլորտում:
9. Մեռային խտրականությունը աշխատանքային հարաբերություններում:
10. Աշխատանքի վարձատրության տարբերություններն՝ ըստ սեռերի:
11. Կրթական հավասար մակարդակ ունեցող կանանց և տղամարդկանց աշխատավարձի տարբերակումը:
12. Կրթության մեջ արված ներդրումների արդյունավետությունը գենդերային տեսանկյուններից:
13. Աշխատավարձի գենդերային տեսանկյունները:
14. Տնային տնտեսությունում կանանց չվարձատրվող աշխատանքը:
15. Գենդերային իրավիճակը ձեռնարկատիրության մեջ:
16. Կանանց ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ընդլայնումը:
17. Կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը սոցիալական ապահովության ոլորտում:
18. Գենդերային իրավահավասարության երաշխավորման իրավական, տնտեսական և սոցիալական խթանները սոցիալական ապահովության ոլորտում:
19. Գենդերը և հանրային կառավարման համակարգը:

20. Կանանց մոտիվացիոն համակարգերը սեփական կարիերայի կայացման գործընթացներում:
21. Գենդերը և բյուջետային քաղաքականությունը:

Գրականություն

1. Доклад о развитии человека за 2002 год. Углубление демократии в разобщенном мире. Нью-Йорк, Оксфорд, 2002.
2. ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը և սննդամթերքի սպառումը 1999, 2001 և 2002թթ.: Վիճակագրական ժողովածու: Երևան, 2003:
3. Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ, ՀՀ ԱՎԾ: Երևան, 2004:
4. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր: Երևան, 2003:
5. ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին հռչակագիրը:
6. Կանայք և զարգացումը. իրավունքներ և հնարավորություններ (2-րդ միջազգային խորհրդածողովի նյութեր), Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա: Երևան, 1998.
7. Социальный мониторинг ЮНИСЕФ, 2002.
8. Կանանց և երեխաների անօրինական փոխադրումները Հայաստանի Հանրապետությունից. ուսումնասիրություն, IOM, Երևան, 2001.
9. Զեկույց կանանց իրավիճակի մասին, Հյաստան, 1999.
10. Պեկինյան գործողությունների ծրագիրը Հայաստանում. իրականություն և հեռանկարներ, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Երևան, 2000.
11. Հարաբյան Ջ. Գենդերային հավասարություն. Կանանց քաղաքացիական և քաղաքական մասնակցություն // Գենդերային հետազոտություններ, թիվ 3: Երևան, 2001:
12. Гендерные проблемы и развитие. Стимулирование развития через гендерное равенство в правах, в доступности ресурсов и возможности выразить свои интересы. Изд.-во “Весь Мир”. Москва, 2002.
13. Гендер и экономика: мировой опыт и экспертиза российской практики. Москва, 2002.
14. Гендерный баланс в политике безопасности Европы в XXI веке. Москва, 2002.
15. Корчагин В.П. и Найговзина Н.Б. Социально-экономические проблемы реформирования здравоохранения в России. М., 1998.
16. Рональд Дж. Эренбергэ Роберт С. Смит, Современная экономика труда. Теория и государственная политика. М., 1996.

17. *Как живется в странах бывшего СССР. - Аргументы и факты, 2001, N 27.*
18. *Антосенков Е., Кокин Ю., Реформа заработной платы - ожидания и реальность. - Экономист, 1997, №4.*
19. *Новикова К., Действенная поддержка, основанная на уважении к человеку. - Человек и труд, 2002, №2, стр. 56.*
20. *Социальная политика. Учебник, под. общ. ред. Н.А.Волгина, М., 2002.*
21. *Жеребин В. М., Романов А.Н. Уровень жизни населения. М., 2002.*
22. *Ованесян С., Мкртчян А. и др., Системы здравоохранения в переходный период, Армения 2001г. Европейская обсерватория по системам здравоохранения, observatory.dk, 2001.*
23. *Отчет о мировом развитии-1993. Инвестиции в здравоохранение. Всемирный Банк, Вашингтон.*
24. *Румянцева Е.Е. Стратегия преодоления бедности., Мн. "Армита-Маркетинг, Менеджмент", 2001.*
25. *Шведова Н.А. Просто о сложном: гендерное просвещение (пособие). Москва, 2002.*
26. *Женское предпринимательство в экономике России и СНГ. Москва, 2001.*
27. *Հարարթյան Ջ., Օսիպով Վ., Հովհաննիսյան Գ. Օրենսդրության գենդերային փորձաքննություն/Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն: Երևան, 2004, 66 էջ:*
28. *Հովհաննիսյան Գ. Գենդերը և տնտեսագիտությունը: Ուսումնական ձեռնարկ/Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գենդերային հետազոտությունների կենտրոն: Երևան, 2004, 200 էջ:*

«ԳԵՆԴԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ»

ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՀԱՄԱՐ

Թեմա 1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՆ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Մեռ» և «գենդերային դերեր» հասկացությունների տարբերությունները: Կենսաբանական սեռից դեպի սոցիալական սեռ: Գենդերային դերերի էվոլյուցիան և մարդկային զարգացումը:

Գենդերը՝ որպես մշակութաբանական և սոցիալական հասկացություն: Գենդերային նորմատիվների կախվածությունը մշակույթից, ազգային ավանդույթներից ու սովորույթներից, կրոնից, պատմությունից, աշխարհաքաղաքականությունից, հասարակության զարգացման մակարդակից: Գենդերային կարծրատիպերի կենսունակությունը և գենդերային դերերի բազմազանությունը տարբեր մշակույթներում:

Գենդերային տեսության հիմնական հասկացությունները, մոտեցումները, ուղղությունները: Գենդերը՝ որպես շերտադասական կատեգորիա:

Գենդերային սոցիալականացումը և դրա առանձնահատկությունները տղամարդկանց և կանանց համար: Գենդերային գաղափարախոսության արժեքային համակարգը: Գենդերային սոցիալականացման հետևանքները: Կանանց և տղամարդկանց միջև տնտեսական տարբերությունների առաջացման պատճառները, չափերը և մեխանիզմները:

Հասարակության գենդերային կազմակերպման տիպերը և ձևերը: Հայրիշխանությունը՝ որպես արդի հասարակության գերիշխող մոդել: Գենդերային կարծրատիպեր: Գենդերային անհամաչափությունը հասարակության և տնտեսության մեջ:

Գենդերային դերերի ավանդական ընկալումը հասարակության մեջ և ընտանիքում: Բռնությունն ընտանիքում՝ որպես տղամարդու իշխանության հաստատման միջոց: Գենդերային հարաբերություններն ընտանիքում: Հավասար իրավունքների, հավասար հնարավորությունների և հավասար արդյունքների հիմնախնդիրները:

Գենդերային մշակույթի զարգացումը՝ որպես զուգակշռված ժողովրդավարության անհրաժեշտ պայման: Գենդերային դերերի բևեռացվածության հաղթահարման միջոցները, ձևերն ու եղանակները:

Գենդերային տարբերությունների ուսումնասիրությունը կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների իրացման ոլորտում: Գենդերային անհավասարության հիմքը տնտեսական ոլորտում, կանանց և տղամարդկանց անհավասար վիճակը և հասարակության մեջ գենդերային դերերի պահպանվող և ամրապնդվող ավանդական բաժանումը:

Գենդերը որպես աշխատանքի բաժանման հիմք: Կանանց և տղամարդկանց կենսաբանական սեռերի տարբերությունների սոցիալ-մշակութային արտացոլումը, հասարակական կյանքում կնոջ և տղամարդու զբաղեցրած կարգավիճակի կապը նրանց կենսաբանական դերերի և սոցիալական ավանդույթների հետ:

Հասարակության մեջ ավանդական սեռային դերերի, առաջին հերթին կնոջ կարգավիճակի փոխակերպումը և դրա ազդեցությունը տղամարդու սոցիալական կարգավիճակի վրա:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Ներկայացնել «Գենդերը և տնտեսագիտությունը» դասընթացի առարկան:
2. Բնութագրել «սեռ» և «գենդեր» հասկացությունների էությունը և դրանց տարբերությունները:
3. Որո՞նք են գենդերային անհավասարություն առաջացնող պատճառները:
4. Ներկայացնել գենդերային դերակատարումը աշխատանքի բաժանման հարցում:
5. Ի՞նչ կապ գոյություն ունի գենդերային և մարդկային զարգացման միջև:
6. Ինչպե՞ս է կնոջ կարգավիճակի փոխակերպումն ազդում տղամարդու սոցիալական կարգավիճակի վրա:
7. Ներկայացնել գենդերային դերերի բևեռացվածության հաղթահարման միջոցները, ձևերն ու եղանակները:

ԹԵՄԱ 2. Տնտեսական զարգացման զենդերային չափումները

Ձարգացման ընկալումը՝ զենդերային վերլուծության արդի հայեցակարգերի հաշվառմամբ:

Գենդերային համաչափությունը՝ որպես տնտեսական աճի գործոն: Տնտեսական աճի և մարդկային զարգացման փոխադարձ կապի զենդերային բաղադրիչը:

Մարդկային զարգացման համաթվերի համակարգը. մարդկային զարգացման համաթիվը, դրա կառուցվածքը, մարդկային զարգացման համաթիվը՝ զենդերային գործոնների հաշվառմամբ, կանանց հնարավորությունների ընդլայնման համաթիվը և դրանց բաղադրիչները, բնակչության աղքատության համաթիվը և դրա հաշվարկման առանձնահատկությունները:

Երկրների դասակարգումն՝ ըստ մարդկային զարգացման համաթվերի:

Գենդերային վերլուծությունները ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, Աշխատանքի միջազգային կազմակերպության և այլ միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակվող զեկույցներում:

Գենդերային անհավասարության դրսևորումները ՀՀ-ում. կանանց և տղամարդկանց մասնակցությունը քաղաքական և տնտեսական կյանքում, վաստակած եկամուտներում, ինչպես նաև որոշումների ընդունման գործընթացներում գնահատող ցուցանիշները. հանրապետության զենդերային զարգացման համաթիվը և կանանց հնարավորությունների ընդլայնման ցուցանիշը: Կանանց հնարավորությունների ընդլայնումը խոչընդոտող պատճառները:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Ինչպե՞ս կարող է զենդերային համաչափությունը նպաստել տնտեսական աճին:
2. Ներկայացնել տնտեսական աճի և մարդկային զարգացման փոխադարձ կապի զենդերային բաղադրիչը:

3. Բնութագրել մարդկային զարգացման համաթվերի համակարգը՝ մարդկային զարգացման համաթիվը, մարդկային զարգացման համաթիվը գենդերային գործոնների հաշվառմամբ, կանանց հնարավորությունների ընդլայնման համաթիվը, բնակչության աղքատության համաթիվը:
4. Ինչպիսի՞ փոփոխականներ են օգտագործվում կանանց հնարավորությունների ընդլայնման ցուցանիշը հաշվարկելիս:
5. Ներկայացնել գենդերային անհավասարության դրսևորումները ՀՀ-ում:

ԹԵՄԱ 3. Տնտեսության գլոբալացման գենդերային հայեցակետերը

Տնտեսության գլոբալացման գենդերային հայեցակետերը բնապահպանության և կայուն զարգացման տեսանկյուններից:

Փոփոխություններն աշխատանքի գենդերային բաժանման միջազգային համակարգում: Առևտրատնտեսական գործունեության մեջ կանանց հնարավորությունների ընդլայնումը:

Գլոբալացման տեխնոլոգիաները (տնտեսության ինքնատիպ, հապաղող, կրկնվող, անկլավային մոդեռնացում, ազատ տնտեսական գոտիների ձևավորում, վերազգային ընկերությունների գերիշխանությունը և այլն) և դրանց գենդերային հայեցակետերը:

Գլոբալացումը և տնտեսական գործունեության ձևերի վերաբաշխումը կանանց և տղամարդկանց միջև: Գենդերային դերերի փոփոխությունները, ընտանեկան իշխանության վերաբաշխում: Տնտեսության գլոբալացման և գենդերային հավասարության հարաբերակցությունը. գենդերային անհամաչափության խորացումը:

Ինտեգրման, շահագործման և լուսանցման կանխադրույթները գենդերային անդրադարձմամբ:

Գլոբալացման հետևանքները զարգացած, զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում, տնտեսության գլոբալացման գենդերային առումները:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Որո՞նք են տնտեսության գլոբալացման գենդերային հայեցակետերը բնապահպանության և կայուն զարգացման տեսանկյուններից:
2. Ներկայացնել գլոբալացման տեխնոլոգիաները և դրանց գենդերային առումները:
3. Ինչպե՞ս է իրականացվում գլոբալացման պայմաններում տնտեսական գործունեության ձևերի վերաբաշխումը կանանց և տղամարդկանց միջև:
4. Ինչպիսի՞ն է տնտեսության գլոբալացման և գենդերային հավասարության հարաբերակցությունը:
5. Ինչու՞ է խորանում գենդերային անհամաչափությունը:
6. Որո՞նք են գլոբալացման հետևանքները զարգացած, զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում, ներկայացնել դրանց գենդերային հայեցակետերը:

ԹԵՄԱ 4. Պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության գենդերային հիմնախնդիրները

Սոցիալ-տնտեսական վերափոխումների ազդեցությունը հասարակության գենդերային համակարգի վրա: Սոցիալ-տնտեսական քաղաքականության վերլուծության անդրադարձը կանանց և տղամարդկանց վրա: Տղամարդկանց և կանանց սոցիալական կարգավիճակի տարբերությունները շուկայական տնտեսության անցման շրջանում:

Պետական քաղաքականության՝ խտրականության և խտրարարության վրա ներազդելու հնարավորությունները. կադրերի հավաքագրումը և ընտրությունը պետական ծառայության համակարգում, պաշտոնեական առաջխաղացում, մասնակցություն տնտեսական ոլորտներում որոշումների կայացմանը, գործատուներին հարկային արտոնությունների տրամադրում, նոր աշխատատեղերի ստեղծում:

Գենդերային անհավասարության և կոռուպցիայի զուգորդվածու-

թյունը և դրանց համատեղ հաղթահարմանն ուղղված պետական քաղաքականության լծակները:

Գենդերը և բյուջետային քաղաքականությունը: Տղամարդկանց և կանանց կարծիքների հաշվառումը պետական բյուջեի մշակման գործընթացներում. գենդերային հաշվեկշռված մասնակցություն:

Բյուջեի միջոցների արդարացի բաշխումը սոցիալական և գենդերային տեսանկյուններից: Գենդերը և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեները:

Սոցիալական քաղաքականությունը և գենդերային հարաբերությունները: Կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը սոցիալական ապահովության ոլորտում:

Գենդերային իրավահավասարության երաշխավորման իրավական, տնտեսական և սոցիալական խթանները սոցիալական ապահովության ոլորտում: Կանանց սոցիալական ապահովության համակարգի բարելավման հիմնախնդիրը: Սոցիալական ապահովության համակարգի գենդերային չեզոքության ապահովումը: Հասարակական կառուցվածքներում գենդերային դերերի փոփոխությունների ազդեցությունը Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության համակարգի վրա:

Կենսաթոշակային բարեփոխումների գենդերային հիմնախնդիրները Հայաստանում: Գենդերային հիմնախնդիրների առաջացումը՝ կապված հանրապետությունում իրականացվող կենսաթոշակային բարեփոխումների հետ և դրա գենդերային հետևանքները:

Ըստ սեռերի կենսաթոշակների տարբերակման անհրաժեշտությունը՝ կապված վարքագծի գենդերային կարծրատիպերի, զբաղվածության ոլորտում և աշխատանքի շուկայում կանանց և տղամարդկանց ունեցած հնարավորությունների հետ: Տնային տնտեսությամբ զբաղված կանանց և տղամարդկանց կենսաթոշակային ապահովության համակարգի զարգացումը:

Սոցիալական աջակցության ծրագրերի գենդերային հայեցակետերը: Գենդերային բաղադրիչի ինտեգրմանն ուղիները սոցիալական ապահովության համակարգում:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Որո՞նք են գենդերային հիմնախնդիրների լուծմանն ուղղված պետական քաղաքականության ուղղությունները:
2. Ի՞նչ է նշանակում տնտեսական քաղաքականության գենդերային հիմնախնդիր:
3. Ինչպե՞ս կարող է մակրոտնտեսական քաղաքականությունն ազդել գենդերային քաղաքականության ձևավորման վրա:
4. Որո՞նք են գենդերային հավասարության իրավական հիմքերը:
5. Ներկայացնել սոցիալական ապահովության գենդերային հիմնախնդիրները:
6. Որո՞նք են կանանց և տղամարդկանց սոցիալական ապահովության տարբերությունները:
7. Ներկայացնել հանրապետության կենսաթոշակային ապահովության համակարգի գենդերային տեսանկյունները:
8. Ինչպե՞ս են կենսաթոշակի իրավունքի ձեռքբերման տարիքը և ապահովագրական ստաժն ազդում կանանց և տղամարդկանց կենսաթոշակի չափերի վրա:
9. Ներկայացնել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի հիմնադրույթների ազդեցությունը կանանց և տղամարդկանց հնարավորությունների իրացման վրա:

ԹԵՄԱ 5. Անցումային տնտեսության ընդհանուր հիմնախնդիրների գենդերային հայեցակետերը

Կանայք և տղամարդիկ Խորհրդային Միության փլուզումից հետո: Գենդերային հիմնախնդիրը տնտեսական համակարգի արդի փոխակերպման պայմաններում: Սոցիալ-տնտեսական վերափոխումների ազդեցությունը գենդերային համակարգի վրա: Կանանց և տղամարդկանց սոցիալ-տնտեսական կարգավիճակի տարբերությունները անցումային շրջանում, դրանց աղբյուրները, չափերը և մեխանիզմները: Ֆեմինացված աղքատություն: Առնականության ճգնաժամ:

Անցումային շրջանի հիմնախնդիրները գենդերային հետևանքների տեսանկյունից. ունեցվածքի սեփականաշնորհման և շուկայական այլ վերափոխումների, բաց և ստվերային տնտեսության, ընտանեկան ձեռնարկատիրության ու կառուցվածքային փոփոխությունները տնտեսության մեջ և դրանց գենդերային հետևանքները:

Անցումային շրջանում միգրացիայի և ժողովրդագրական տեղաշարժերի գենդերային առումները: Կանանց աշխատանքային միգրացիան գյոքալացման պայմաններում:

Չվարձատրվող աշխատանքը անցումային տնտեսության պայմաններում:

Գենդերային անհավասարության և աղքատության փոխադարձ կապը:

Կանանց և տղամարդկանց մասնագիտական ռազմավարությունները տնտեսական վերափոխումների շրջանում. երկակի հարմարումը, սոցիալական և կրթական կապիտալի կիրառումը, սոցիալական կապերի օգտագործումը, մասնագիտական ունակությունների նորացումը, կրթական կապիտալի ինտենսիվ նորացումը:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Ինչպիսի՞ն է գենդերային հիմնախնդիրը տնտեսական համակարգի արդի փոխակերպման պայմաններում:
2. Ներկայացնել տնտեսական վերափոխումների ազդեցությունը գենդերային համակարգի վրա:
3. Որո՞նք են կանանց և տղամարդկանց սոցիալ-տնտեսական կարգավիճակի տարբերություններն անցումային շրջանում, դրանց աղբյուրները, չափերը և մեխանիզմները:
4. Բնութագրել անցումային շրջանում միգրացիայի և ժողովրդագրական տեղաշարժերի գենդերային առումները:
5. Յույց տալ գենդերային անհավասարության և աղքատության փոխադարձ կապը:

ԹԵՄԱ 6. Գենդերային վերլուծության և գենդերային փորձաքննության անցկացման տեխնոլոգիաները

Գենդերային փորձաքննության նշանակությունը, նպատակները և իրականացման ընթացակարգերը:

Գենդերային փորձաքննության իրականացման միջազգային փորձը: Փորձաքննության իրականացման շվեդական և կանադական ընթացակարգեր: Գենդերային փորձաքննության իրականացման փուլերը (ութ քայլերը)՝

1. հիմնախնդրի ուսումնասիրություն, դրա հստակեցում, ձևակերպում և գնահատում,
2. գերակայությունների ընտրություն, ցանկալի արդյունքների և սպասվելիք նպատակների որոշում,
3. անհրաժեշտ տեղեկատվության և խորհրդատվության ստացում,
4. գենդերային հիմնախնդրի լուծման նպատակով հետազոտության անցկացում,
5. հիմնախնդրի հնարավոր լուծման տարբերակների մշակում և դրանց գնահատում, համապատասխան օրենքների և հանձնարարականների նախագծերի մշակում,
6. լավագույն տարբերակի ընտրություն,
7. հաղորդակցության ռազմավարության մշակում,
8. փորձաքննության որակի և արդյունքների գնահատում:

Գենդերը և բյուջետային քաղաքականությունը: Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքի գենդերային վերլուծություն: Բյուջեի ձևավորման գործընթացում դրսևորվող թաքնված խտրականությունը, բյուջետային քաղաքականության իրականացման ընթացքում կիրառվող տնտեսական մոտեցումները և գենդերային բաղադրիչի ինտեգրման մեխանիզմները բյուջեի մշակման նախնական փուլերում:

Գենդերային վերլուծության տեղեկատվական ապահովումը և կազմակերպումը, վիճակագրական տեղեկատվության աղբյուրները գենդերի տեսանկյունից, պետական բյուջեի, սոցիալական ոլորտում վերափոխումների, սոցիալ-տնտեսական զարգացման գենդե-

րային վերլուծության մաթեմատիկական մեթոդները. Մոզերի հարվարդյան վերլուծական մոդելը, հասարակության մեջ հավասարության և դերի բարձրացման հարցերի վերլուծության Լոնգվիլի շրջանակաձև դեկավարումը, կանանց իշխանական հնարավորությունների ընդլայնման վերլուծական մոդելը, գենդերային վերլուծության մատրիցաներ:

Գենդերային գործոնների հաշվառումը պետական բյուջեի և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների ու եռամյա ծրագրերի մշակման գործընթացներում: Հայաստանի պետական բյուջեի ծախսերի առանձին խմբերի գենդերային փորձաքննության իրականացում՝ «Առողջապահության» և «Կրթության» խմբերի ծախսերի օրինակով: Պետական բյուջեի գենդերային փորձաքննություն. գենդերային հավասարության ապահովմանն ուղղված պետական ծախսերը, հիմնական ծախսերի գենդերային ազդեցությունը, բյուջեի մշակման գործընթացին մասնակցող խմբերի թիվը և կազմը:

Հարցեր ինքնաստուգման համար

1. Ներկայացնել օրենսդրության և պետական քաղաքականության գենդերային փորձաքննության նպատակներն ու խնդիրները:
2. Ի՞նչ փուլերից է բաղկացած գենդերային փորձաքննությունը:
3. Ինչպե՞ս կարելի է գնահատել փորձաքննության արդյունքները:
8. Բնութագրել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման նպատակով նպաստավոր հասարակական կարծիքի ձևավորման գործընթացը:
9. Ներկայացնել ՀՀ պետական բյուջեի «Առողջապահություն» և «Կրթություն» խմբերի ծախսերի գենդերային փորձաքննության արդյունքները:

Ուեֆերատների, կուրսային և մագիստրական թեզերի թեմաներ

1. Տնտեսական երևույթների բացահայտման գենդերային տեսությունները տնտեսագիտական դպրոցներում:
2. Գենդերային զարգացումները հասարակության սոցիալ-տնտեսական կյանքում:
3. Տնտեսական քաղաքականության գենդերային հիմնախնդիրները:
4. Մարդկային ներուժի զարգացման կայունության հիմնահարցերում ուսումնասիրության գենդերային տեսանկյունները:
5. Կրթության մեջ արված ներդրումների գենդերային տեսանկյունները:
6. Կնոջ կրթական մակարդակի և նրա զբաղվածության միջև գոյություն ունեցող կապը:
7. Առողջապահության վիճակը Հայաստանում և այն բնութագրող գենդերային ցուցիչները:
8. Կանայք և աշխատանքի շուկան. հնարավորություններ և խոչընդոտներ:
9. Կանանց զբաղվածության հիմնախնդիրները և խտրականությունն աշխատանքի շուկայում:
10. Հորիզոնական և ուղղաձիգ խտրարարություն զբաղվածության ոլորտում:
11. Սեռային խտրականությունը աշխատանքային հարաբերություններում:
12. Աշխատանքի վարձատրության տարբերություններն՝ ըստ սեռերի:
13. Կրթական հավասար մակարդակ ունեցող կանանց և տղամարդկանց աշխատավարձի տարբերակումը:
14. Կրթության մեջ արված ներդրումների արդյունավետությունը գենդերային տեսանկյուններից:
15. Աշխատավարձի գենդերային տեսանկյունները:
16. Տնային տնտեսությունում կանանց չվարձատրվող աշխատանքը:
17. Գենդերային իրավիճակը ձեռնարկատիրության մեջ:
18. Կանանց ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ընդլայնումը:

19. Կանանց և տղամարդկանց համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը սոցիալական ապահովության ոլորտում:
20. Գենդերային իրավահավասարության երաշխավորման իրավական, տնտեսական և սոցիալական խթանները սոցիալական ապահովության ոլորտում:
21. Կենսաթոշակային բարեփոխումների գենդերային հիմնախնդիրները Հայաստանում:
22. Կանանց մասնակցությունն իշխանական կառույցներում և կառավարչական որոշումների ընդունման գործընթացներում:
23. Հայաստանում իրականացվող կադրային քաղաքականությունը և կանայք:
24. Գենդերը և հանրային ծառայությունը:
25. Կանանց մասնակցությունը կառավարչական որոշումների ընդունման գործընթացներին:
26. Կարիերայի կառավարման հիմնախնդիրների գենդերային տեսանկյունները:
27. Կանանց մոտիվացիոն համակարգերը սեփական կարիերայի կայացման գործընթացներում:
28. Գենդերային հիմնախնդիրները պետական և տարածքային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններում:
29. Գենդերային փորձաքննության իրականացման ընթացակարգերը:
30. Օրենսդրության, պետական քաղաքականության և զարգացման ծրագրերի գենդերային փորձաքննության նշանակությունը, նպատակները և իրականացման ընթացակարգերը:
31. Գենդերը և բյուջետային քաղաքականությունը:
32. Գենդերային գործոնների հաշվառումը պետական բյուջեի և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների ու եռամյա ծրագրերի մշակման գործընթացներում:
33. ՀՀ պետական բյուջեի գենդերային փորձաքննության իրականացում:

Գրականություն

1. ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագիր (8 սեպտեմբերի, 2000թ.): Երևան, 2001:
2. Доклад о развитии человека за 2002 год. Углубление демократии в раз-
общенном мире. Нью-Йорк, Оксфорд, 2002.
3. Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում: Մարդկային զար-
գացման զեկույց: Հայաստան, 2001, էջ 160-161:
4. ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը և սննդամթերքի սպառումը 1999,
2001 և 2002թթ.: Վիճակագրական ժողովածու, Երևան, 2003:
5. Հայաստանի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ, ՀՀ ԱՎԾ,
Երևան, 2004:
6. Հայաստանի վիճակագրական տարեգիրք-2002, 2003, 2004./ ՀՀ ԱՎԾ:
7. Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր: Երևան, 2003:
8. ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին
հռչակագիր:
9. Human Development Report, UNDP, 2003.
10. «2004թ. ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքը:
11. Социальный мониторинг ЮНЕСКО, 2002.
12. Կանանց և երեխաների անօրինական փոխադրումները Հայաստանի
Հանրապետությունից. ուսումնասիրություն, IOM, Երևան, 2001.
13. Զեկույց կանանց իրավիճակի մասին, Հյաստան, 1999.
14. Պեկինյան գործողությունների ծրագիրը Հայաստանում. իրականություն և
հեռանկարներ, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Երևան,
2000.
15. Նարարային Ջ. Գենդերային հավասարություն: Կանանց քաղաքացիական և
քաղաքական մասնակցություն/Գենդերային հետազոտություններ, թիվ 3:
Երևան, 2001:
16. Гендерные проблемы и развитие. Стимулирование развития через
гендерное равенство в правах, в доступности ресурсов и возможности
выражать свои интересы. Москва, 2002.
17. Гендер и экономика: мировой опыт и экспертиза российской практики.
Москва, 2002.
18. Гендерный баланс в политике безопасности Европы в XXI веке. Москва, 2002.
19. Корчагин В.П. и Найговзина Н.Б. Социально-экономические проблемы
реформирования здравоохранения в России. М., 1998.
20. Рональд Дж. Эренберг, Роберт С. Смит “Современная экономика тру-
да. Теория и государственная политика”. М., 1996.
21. Как живется в странах бывшего СССР. - Аргументы и факты, 2001, N
27, (Международное издание).
22. Антосенков Е., Кокин Ю. Реформа заработной платы - ожидания и
реальность. - Экономист, 1997, N 4.
23. Новикова К., Действенная поддержка, основанная на уважении к
человеку. - Человек и труд, 2002, N 2, стр.56.

24. Социальная политика. Учебник, под. общ. ред. Н.А.Волгина, М., 2002.
25. Жеребин В. М., Романов А.Н., Уровень жизни населения.М., 2002.
26. Отчет о мировом развитии -1993. Инвестиции в здравоохранение. Всемирный Банк, Вашингтон.
27. Румянцева Е.Е. Стратегия преодоления бедности., Мн."Армита-Маркетинг, Менеджмент, 2001.
28. Шведова Н.А. Просто о сложном: гендерное просвещение (пособие). Москва, 2002.
29. Женское предпринимательство в экономике России и СНГ. Москва, 2001.
30. Հարարթյան Ջ., Օսիպով Վ., Հովհաննիսյան Գ. Օրենսդրության գեներային փորձարկումներ/Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գեներային հետազոտությունների կենտրոն: Երևան, 2004: 66 էջ:
31. Հովհաննիսյան Գ. Գեներրը և տնտեսագիտությունը: Ուսումնական ձեռնարկ/Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա, Գեներային հետազոտությունների կենտրոն: Երևան, 2004: 200 էջ:

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՆԱԽԱԳԻԾ

**«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ
ԴԻՍԿՈՒՐՍԸ»**

**ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՅԻ
ՆԱԽԱԳԻԾԸ ՄՇԱԿՈՂ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ**

Ջենմա Չասրաթյան, Երևանի «Ինտերլինգվա» համալսարանի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, Չամալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի գենդերային հետազոտությունների կենտրոնի ղեկավար, խմբի ղեկավար

Ելենա Վարդանյան, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու

Արթուր Նիկողոսյան, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի դասախոս

Սիրանուշ Խաչկալյան, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնի դասախոս

Կարինե Բազեյան, Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու

«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍԸ»

ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՑ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԵՄԱԿԱՆ ԳԻՏԵԼԻԶՆԵՐԻ ԵՎ ՀՏՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Արդի դարաշրջանի մարտահրավերները, կապված հասարակական ոլորտում կանանց ավելի ու ավելի ակտիվ ներկայացվածության հետ, պահանջում են նորովի նայել այդ երևույթների պատմական արմատներին, ինչի հետ կապված ձևավորվել է որակապես նոր մոտեցում պատմական իրադարձությունների, փաստերի, ինչպես նաև ավանդական պատմական աղբյուրների նկատմամբ: Այն սահմանվում է որպես պատմության գենդերային դիսկուրս և հիմնված է գենդերային վերլուծության, պատմության գենդերային դիսփլեյի որոշման, նրա գենդերային հայեցակետերի և խնդիրների վրա:

Հայաստանի ժողովրդավարացման և միջազգային հանրությանը ինտեգրվելու խնդիրները հրատապ են դարձնում նրա պատմության ուսումնասիրությունը գենդերային տեսանկյունից: «Հայոց պատմության գենդերային դիսկուրս» հատուկ դասընթացը նպատակաուղղված է ժողովրդավարական քաղաքական վարչակարգի (ռեժիմի) ձևավորման հիմնախնդիրների ուսումնասիրությանը, մի վարչակարգի, որը ենթադրում է քաղաքացիական հասարակության գործառնություն սոցիալական բոլոր ռեսուրսների, այդ թվում կանանց ակտիվ քաղաքացիական և քաղաքական մասնակցության պայմաններում: Գենդերային դիսկուրսը թելադրված է հասարակության գենդերային մշակույթի ձևավորման նախադրյալների ու հնարավորությունների հիմնավորման անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով պատմական փորձը, ազգային մշակույթի արժեքները, հայկական սփյուռքի գոյության գործոնը և գլոբալացման պայմանները:

Պատմության դիտարկումը գենդերային դիսկուրսի դիրքերից հնա-

րավորություն է տալիս ձևավորելու այն ըմբռնումը, որ հայոց պատմության տարբեր շրջաններին հատուկ է որոշակի գենդերային կարգ, որը համապատասխանում է տվյալ ժամանակաշրջանի հասարակական կյանքի և մշակույթի ձևավորման պայմաններին: Հայաստանի հարուստ և բազմակողմանի փորձը, որ ներկայանում է նրա պատմության մեջ, կարող է դառնալ ժամանակակից երիտասարդության, մասնագետների գենդերային սոցիալականացման էական գործոն, որը և մասնակցելու է ժողովրդավարական հասարակության ձևավորմանը:

Չափորոշիչի նպատակները

1. Նպաստել պատմական գիտելիքների խորացմանը, պատմական իրադարձությունների, փաստերի և հասարակական հարաբերությունների վերաբերյալ պատկերացումների ընդլայնմանը գենդերային դիսկուրսի ներառման ուղիով:
2. Նպաստել կրթության հումանիզացմանը և ժողովրդավարացմանը Հայոց պատմության սոցիոմշակութային խնդիրների գենդերային չափմամբ նոր ընկալում ձևավորելու միջոցով:
3. Նպաստել գենդերային հանդուրժողականության, գենդերային իրավահավասարության և զուգակշռված ժողովրդավարության սկզբունքների վրա հիմնված աշխարհայացքի ձևավորմանը՝ օգտագործելով պատմական իրադարձությունների դիտարկման նոր մեթոդները՝ հենվելով պատմական փաստերի գենդերային վերլուծության վրա:

Չափորոշիչի խնդիրները

1. «Հայոց պատմություն» առարկան լրացնել գենդերային պատմությամբ՝ բացահայտելով նրա սոցիալ-քաղաքական բովանդակությունը:
2. Ներկայացնել Հայոց պատմության այն փաստերը, իրադարձությունները և աղբյուրները, որոնք բնորոշում են գենդերային հարաբերությունները տարբեր պատմական շրջափուլերում, և դրանց վերլուծությունը գենդերային իրավահավասարության ժամանակակից պատկերացումների տեսանկյունից:

3. Ձևավորել պատմական աղբյուրների և վավերագրերի գեներալային վերլուծության հմտություններ:
4. Յույց տալ հայ հասարակության գեներալային մշակույթի փոփոխությունները ինչպես սփյուռքում՝ զանազան օտար էթնիկական գեներալային համակարգերի ազդեցությամբ, այնպես էլ Հայաստանում:
5. Բարձրացնել հասարակության գեներալային մշակույթի մասին իրագեկությունը պատմության գեներալային դիսկուրսի վերաբերյալ ճիշտ պատկերացումների ձևավորման միջոցով:

Հայոց պատմության գեներալային դիսկուրսը դիտարկվում է գեներալային մեթոդաբանության ներգրավման հիման վրա՝ պատմական ուսումնասիրությունների մեթոդների համադրմամբ:

«Հայոց պատմության գեներալային դիսկուրս» առարկայի ներածություն

«Գեներներ» հասկացության և գեներալային ուսումնասիրությունների առաջացման նախադրյալները, պատմությունը, էությունը: Գեներները որպես պատմամշակութային կատեգորիա: Հասարակության գեներալային հարաբերությունների դինամիկայի պատմական պայմանավորվածությունը:

Գեներալային ուսումնասիրություններ և դրանց մեթոդները: Պատմության գեներալային դիսկուրսը, գեներալային վերլուծությունը, գեներալային փորձաքննությունը որպես պատմագիտական ուսումնասիրությունների կատեգորիաներ, նորարարական մոտեցումներ և մեթոդներ:

Բաժին I. Հայոց պատմության հին շրջանի հասարակական հարաբերությունների գեներալային հայեցակետերը

Հայկական լեռնաշխարհի նախնադարյան հասարակության սեռադերալային հարաբերությունները և գեներալային շերտադասությունը (ստրատիֆիկացիան):

Հնագիտական և ազգագրական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի հնադարյան բնակիչների գենդերային հարաբերությունների և գենդերային պատկերացումների մասին: Սեռադերային տարբերակման արտացոլումը ժայռապատկերներում, նյութական մշակույթի առարկաներում, հավատալիքներում (Մայր աստվածուհու/աստվածուհի մոր պաշտամունքը): Միջսեռային հարաբերությունները Հայկական լեռնաշխարհի տոհմացեղային համայնքներում պալեոլիթի և մեզոլիթի դարաշրջաններում (հին և միջին քարի դար): Անցում էնդոգամիայից էկզոգամիայի: Մայրական իրավունքի, մայրագծային ազգակցության և մայրատեղային ամուսնության ծագումը: Գույքային հարաբերությունները՝ որպես գենդերային համաչափության (սիմետրիայի) հիմք նեոլիթի դարաշրջանում: Խեթական (Մուպիլուլիմնա, Մուրսիլ) և ասորական (Թգլաթպալասար) աղբյուրները Հայաստան-Ազգի, Թոգարմա/Թեգարմա, Նաիրի, Արմե-Շուբրիա տոհմացեղային կազմավորումների սեռադերային հարաբերությունների մասին:

Գենդերային տարբերակման (դիֆերենցման) և շերտադասման սկիզբը Հայկական լեռնաշխարհի առաջին պետական կազմավորումներում: Հայրիշխանության առաջացման գործընթացի առանձնահատկությունները հին հայերի մեջ: Գենդերային պատկերացումները և դերակատարումները վաղ դասակարգային հայ հասարակության մեջ:

Ուրարտական պետության գենդերային կառուցվածքը և գենդերային հարաբերությունները:

Ուրարտական հասարակության հայրիշխանական բնույթը: Տղամարդկանց ռազմական-ուժային հատկությունների գերազանցությունը՝ որպես հայրիշխանության հիմք:

Հայրիշխանական հարաբերությունների արտացոլումը դիցարանում: Աստվածների և աստվածուհիների կարգավիճակը:

Առաջին հայկական պետությունների գենդերային մշակույթը

Արական և իգական աստվածությունների ազդեցության ոլորտները:

Վաղ հայկական դիցարանի (Հայկի դիցարանի) գեղերային հիմքը: Հայերի և հարևան ժողովուրդների գեղերային մշակույթների փոխազդեցությունը հայ ժողովրդի կազմավորման և էթնոմշակութային ավանդույթների հաստատման ժամանակաշրջանում:

Երվանդունիների պետության գեղերային կառուցվածքը: Հին հայկական դիցարանի (Արամազդի դիցարան) գեղերային վերլուծություն:

Գեղերային հարաբերությունները Արտաշիսյանների կառավարման ժամանակաշրջանում, հասարակական-քաղաքական, տնտեսական, իրավական հարաբերությունների գեղերային չափում(ներ)ը: Հելլենիզմի ազդեցությունը Հայաստանում գեղերային հարաբերությունների ձևավորման վրա: Դասային տարբերակման և խտրականության գեղերային քաղկացուցիչը: Ամուսնա-ընտանեկան հարաբերությունների չկարգավորվածությունը և Տիգրան Մեծի քաղաքականության գեղերային չափումը:

Գեղերային հարաբերությունները Արշակունիների օրոք

Հայկական և պարթևական գեղերային համակարգերի փոխներգործությունը: Ամուսնա-ընտանեկան, իրավական, տնտեսական հարաբերությունները: Տղամարդկանց և կանանց մասնավոր և հասարակական կյանքի կարգավորումը վարքի կրոնապաշտամունքային նորմերով և սովորութային իրավունքով:

Վաղ քրիստոնեությունը և արմատական փոփոխությունները հայ հասարակության գեղերային համակարգում:

Կանանց դերը Հայաստանում քրիստոնեության ընդունման մեջ: Վաղ քրիստոնեական համայնքները՝ որպես գեղերային իրավահավասարության մոդելներ: Հայ եկեղեցու գեղերային քաղաքականության փոխակերպումը: Գեղերային հարաբերությունների նորմերի ծագումը և ամրագրումը պետական և եկեղեցական վավերագրերում: Հայ առաքելական եկեղեցու գեղերային հարացույցի վերջնական ձևավորումը Աշտիշատի, Շահապիվանի, Դվինի ժողովների որոշումներով: Ամուսնաընտանեկան հարաբերությունների կարգավորումը և

հայկական ընտանիքի ուժեղացումը արյունապղծության և բազմակնության արգելման միջոցով:

Բաժին II. Վաղ միջնադարյան Հայաստանի գենդերային համակարգը և գենդերային հարաբերությունները

Հայերի գենդերային հարաբերությունների առանձնահատկությունները բյուզանդական և սլավոնական տիրապետության օրոք:

Հայկական էթնոսի գենդերային համակարգի փոփոխությունները պետականության կորստի և Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև Հայաստանի բաժանման պայմաններում: V-VI-րդ դարերի մտածողները՝ Մեսրոպ Մաշտոցը, Մովսես Խորենացին, Եղիշեն, Եզնիկ Կողբացին, Փավստոս Բուզանդը, հայ հասարակության գենդերային մշակույթի և պետության, հասարակության մեջ, ընտանիքում կանանց դերի մասին: Կանանց սոցիալ-իրավական դրությունը: Ազգային-ազատագրական պատերազմների գենդերային հայեցակետերը. կանանց մասնակցության ազդեցությունը գենդերային ստերեոտիպերի խախտման գործում:

Բյուզանդիայի քաղաքական-տնտեսական շահերը Հայաստանում: Հուստինիանոսի բարեփոխումները և կանանց ժառանգական իրավունքներ տրամադրելու մասին դրույթի գենդերային հայեցակետը: Հայ հասարակության մեջ բյուզանդական գենդերային արժեքների ներթափանցման հետևանքները:

Հայաստանը Արաբական խալիֆաթի տիրապետության տակ: Իսլամի գենդերային բաղկացուցիչ դերը Հայաստանում արաբ նվաճողների քաղաքականության մեջ և դրա հետևանքները:

Գենդերային իրավահավասարությունը՝ որպես պավլիկյանների սոցիալական հավասարության գաղափարախոսության բաղկացուցիչ: Թոնդրակեցիների գենդերային մոդելները. համայնքներում սոցիալական հավասարության հաստատման պրակտիկան:

Կանանց մասնակցությունը հակաարաբական շարժումներին՝

որպես ազգային ինքնության և անկախության պահպանման համար տղամարդկանց հետ հավասար պատասխանատվության դրսևորում:

Բաժին III. Հայկական պետությունների զենդերային համակարգերը IX-XIV դդ.

Պետականության վերականգնումը՝ որպես Հայաստանի զենդերային մշակույթի զարգացման գործոն IX-XI դարերում:

Պետականության վերականգնման գործոնի ազդեցությունը հայ հասարակության զենդերային կառուցվածքի վրա Բագրատունիների օրոք: Հայ հասարակության զենդերային մշակույթի կախվածությունը տարբեր դասերի կանանց սոցիալ-իրավական դրությունից: Կանանց մասնակցությունը սոցիալ-քաղաքական կյանքին: Թագուհիների դերը սոցիալական խնդիրների լուծման մեջ: Կանանց մասնակցությունը հայկական մշակույթի և պետականության կայացման մեջ: Դինաստիական ամուսնությունների նշանակությունը միջպետական առնչություններում և Հայաստանի ներքին քաղաքականության մեջ:

Նվաճողական պատերազմների ազդեցությունը Հայաստանի զենդերային համակարգի վրա XI-XIV դարերում

Տղամարդկանց և կանանց զենդերային դերերի փոփոխությունը հայ հասարակության մեջ թուրք-սելջուկների նվաճումների ազդեցությամբ:

Հայ հասարակության զենդերային նախապատվությունների արտացոլումը Մխիթար Գոշի «Դատաստանագրքում»: Կանանց և տղամարդկանց իրավունքների և պարտականությունների օրենսդրական ամրագրումը «Դատաստանագրքում» և դրանց ազդեցությունը հասարակական կյանքի վրա:

Չաքարյանների քաղաքականության և հայ-վրացական համագոր-

ծակցության ազդեցությունը գենդերային իրադրության և գենդերային հարաբերությունների հումանիզացման վրա:

Մոնոլոլական տիրապետության բացասական ազդեցությունը Հայաստանի գենդերային հարաբերությունների վրա:

Կիլիկիայի հայկական պետության (XI-XIV դդ.) գենդերային համակարգի կայացման առանձնահատկությունները:

Գենդերային հարաբերությունները Ռուբինյանների կառավարման շրջանի պատմամշակութային և քաղաքական պայմաններում:

Հեթումյանների դերը քաղաքականության, մշակույթի, կրթության, միջազգային հարաբերությունների հարցերի հանդեպ գենդերային մոտեցումների և պատկերացումների ձևավորման մեջ: Քաղաքականության վրա կանանց անմիջական և միջնորդավորված ազդեցության ուժեղացում: Մարիամ թագուհու կառավարումը (1373-1375 թթ.): Արևմտաեվրոպական և հայկական գենդերային կարգերի փոխադարձ ազդեցությունը Կիլիկյան Հայաստանում: Գենդերային պատկերացումների արտացոլումը Կիլիկյան Հայաստանի օրենսդրական վավերագրերում (Սմբատ Գունդստաբլ, Ներսես Լամբրոնացի):

Բաժին IV. Հայ հասարակության գենդերային հիմնախնդիրները պետականության կորստի և անկախության համար պայքարի պայմաններում

Հայաստանի գենդերային մշակույթը XV-XVIII դդ.

Հայկական պետականության կորուստը թուրք-պարսկական պատերազմների արդյունքում և տղամարդկանց ու կանանց սոցիալական կարգավիճակի փոփոխությունը: Ազգային գենդերային ինքնության պահպանման խնդիրը օտար մշակութային ազդեցությունների պայմաններում:

Հայ գենդերային մշակույթը՝ ենթակա նվաճողների ազդեցության (թուրք-սելջուկներ, մոնղոլներ):

Հայաստանի բաժանումների անդրադարձը XVI դ. հասարակության գենդերային հարաբերություններում

Գենդերային հարաբերությունները և գենդերային ստերեոտիպերը Արևմտյան Հայաստանում (Օսմանյան կայսրություն): Հայ եկեղեցու և մշակույթի դերը նախընթաց շրջանում ձևավորված ավանդական հայկական գենդերային արժեքների և հարաբերությունների պահպանման և զարգացման մեջ պետականության բացակայության պայմաններում: Կաթողիկոսության վերահաստատումը Հայաստանում և կանանց մասնակցությունը կաթողիկոսի ընտրություններին՝ որպես հայության համար բախտորոշ որոշումների իրագործման մեջ տղամարդկանց և կանանց հավասարության ճանաչման գործոն:

Գենդերային հարաբերությունները Պարսկաստանի կազմում գտնվող Արևելյան Հայաստանի սոցիալական իրականության մեջ:

Կանանց մասնակցությունը հայ ազգային-ազատագրական շարժմանը՝ որպես գենդերային հավասարության տարր:

Արևելյան եւ Արեւմտյան Հայաստանի կանանց ավանդը հայ ազգամշակութային ինքնության եւ գենդերային ավանդույթների պահպանման գործում:

Արևմտանվորտպական լուսավորչական գաղափարների ազդեցությունը հայ լուսավորիչների հայացքների վրա

Հովսեփ Էմինը, Մովսես Բաղրամյանը հայ ժողովրդի ազատագրական նպատակների, նրա ազատության և իրավունքների մասին: Հովսեփ Արղությանը, Շահամիր Շահամիրյանը տղամարդկանց և կանանց իրավունքների հավասարության՝ որպես արդար հասարակության կայացման գործոնի մասին: Շ. Շահամիրյանի սահմանադրության նախագծի գենդերային ասպեկտները: Շ. Շահամիրյանի աշխատությունների նշանակությունը հայերի մեջ նոր ազատական գաղափարախոսության ձևավորման համար:

Բաժին V. Հայ հասարակության գենդերային հարաբերությունների և գենդերային կարգի փոփոխությունը XIX դարում

Գենդերային հարաբերությունները Արևելյան Հայաստանում

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու գենդերային հետևանքները: Հայ եկեղեցու գործունեության մասին 1836 թ. «Կանոնադրությունը» («Պոլոժենիեն») և նրա ազդեցությունը Արևելյան Հայաստանի գենդերային իրողությունների վրա:

Գենդերային հարաբերությունների՝ որպես հասարակական հարաբերությունների ձևավորման առանձնահատկությունները քաղաքներում և գյուղերում: Գենդերային պատկերացումների և հարաբերությունների յուրօրինակությունը Ռուսաստանի հայկական բնակավայրերում և ռուսական խոշոր քաղաքներում (Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Թիֆլիս և Բաքու):

Գենդերային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում

Հայերի ներգրավվածությունը Օսմանյան կայսրության հասարակական-քաղաքական գործընթացներում և մշակութային կյանքում, սոցիալ-տնտեսական խնդիրների նկատմամբ հայերի գենդերային մոտեցումների տարբերությունները գավառներում և մայրաքաղաքում (Կոստանդնուպոլիս): Օսմանյան և արևմտաեվրոպական գենդերային արժեքների և պատկերացումների ազդեցությունը Արևմտյան Հայաստանի հայության կյանքի վրա:

Գենդերային հիմնախնդիրների արժարժույթը հայ հասարակական-քաղաքական մտքում

Սոցիալական խնդիրների գենդերային հայեցակետը կղերա-պահպանողական ուղղության առաջնորդներ Գ. Այվազովսկու, Մ. Սներյանցի, Ա. Արարատյանի հայացքներում:

Գենդերային բաղկացուցիչը ազգային-պահպանողական հոսանքի ներկայացուցիչներ Ռ. Պատկանյանի, Մ. Խրիմյանի, Գ. Սրվանձտյանի հայացքներում:

Լիբերալ գաղափարախոսության ներթափանցումը հայկական միջավայր, տղամարդկանց և կանանց ինքնագիտակցության բարձրացումը, գենդերային հարաբերությունների փոփոխությունը և նահապետական գենդերային պատկերացումների թուլացումը:

Գենդերային պատկերացումները Ս. Նազարյանցի, Գ. Արծրունու, Գ. Օտյանի, Ն. Ռուսինյանի լիբերալ-դեմոկրատական հայացքներում: Իրավական նորմերի նկատմամբ գենդերային մոտեցումները արևմտահայության Ազգային սահմանադրության նախագծում:

Գենդերային իրավահավասարության խնդիրները հայ հեղափոխական դեմոկրատներ Մ. Նալբանդյանի, Հ. Սվաճյանի, Մ. Մամուրյանի ծրագրերում:

Ռուսաստանի՝ XIXդ. 60-70-ական թթ. բարեփոխումների ազդեցությունը Արևելյան Հայաստանի ներքին կյանքի և գենդերային հարաբերությունների ազատականացման վրա:

Կանանց հասարակական կազմակերպությունների ի հայտ գալը. դրանց բնույթը և գործունեության ուղղությունները: Կանանց մամուլի և կանանց շարժման սկիզբը: Կանանց կրթության ձևավորման սկիզբը:

Մարքսիզմի տարածումը Արևելյան Հայաստանում և կանանց մասնակցությունը հայկական սոցիալ-դեմոկրատական շարժման ձևավորմանը: Կանանց քաղաքական մասնակցության և կանանց լիդերության ընկալումը: Կանայք քաղաքական կուսակցություններում՝ լիդերներ/դեկավար և շարքային կուսակցականներ:

Հայ հասարակության գենդերային կառուցվածքի փոփոխությունը Արևմտյան Հայաստանում XIX դարի վերջին

Գենդերային իրադրությունը հայաբնակ վիլայեթներում՝ կապված ազգային-ազատագրական շարժման վերելքի հետ: Արևմտահայ մտավորականությունը (Ս. Տյուսաբ, Սիամանթո և այլն) կանանց իրավունքների և հնարավորությունների մասին: Կանանց բարեգործական և լուսավորական գործունեությունը Արևմտյան Հայաստանում:

Հայ հասարակության գենդերային մշակույթի փոփոխությունը XIX դարում, կանայք արվեստի և գրականության ասպարեզում:

Յեղասպանության քաղաքականությունը հայերի նկատմամբ Արդուլ Համիդի իշխանության օրոք, դրա ազդեցությունը ազգային-ազատագրական շարժման վերելքի վրա: Ազատագրական շարժման գենդերային ասպեկտները, կանանց մասնակցությունը ֆիդայական շարժմանը:

Բաժին VI. Հայաստանի սոցիալ-քաղաքական զարգացման գենդերային ասպեկտները XX դարում

Հայաստանի գենդերային մշակույթի ձևավորման քաղաքական և սոցիալական գործոնները XX դարի սկզբին

Գենդերային կարգի փոփոխությունը Արևելյան Հայաստանում Ռուսաստանի 1905-1907 թթ. հեղափոխության ազդեցությամբ:

Երիտթուրքերի գաղափարների և քաղաքականության ազդեցությունը հայ ժողովրդի գենդերային իրողությունների վրա: 1912-1913 թթ. բարենորոգումների գենդերային ասպեկտները:

Առաջին համաշխարհային պատերազմը և հայ հասարակության գենդերային պատկերացումների փոփոխությունը:

Պատերազմական իրադարձությունների ազդեցությունը հայոց հասարակական կյանքի վրա Արևելյան և Արևմտյան Հայաստանում: Ազգային-ազատագրական շարժման վերելքը և կանանց մասնակցությունը:

Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում և դրա գենդերային հետևանքները սոցիալական, ժողովրդագրական, էթնոմշակութային ոլորտներում:

1917 թվականի հեղափոխությունները Ռուսաստանում և հայերի ազգային ու քաղաքական հիմնախնդիրների գենդերային ասպեկտները

Փետրվարյան հեղափոխության լիբերալ/ազատական գաղափարների ազդեցությունը Հայաստանի գենդերային հարաբերությունների

վրա: ՕՋԱԿումի ստեղծումը և նրա զենդերային քաղաքականությունը:

Բոլշևիկյան հեղափոխությունը և հասարակության զենդերային ստերեոտիպերի խորտակումը: Սոցիալ-քաղաքական խնդիրների լուծման զենդերային մոտեցումները հայ բոլշևիկների, Անդրկովկասյան կոմիսարիատի և Ազգային խորհրդի ծրագրերում և գործողություններում:

Հայաստանի առաջին հանրապետության զենդերային համակարգը

Գենդերային համակարգի դեմոկրատացման փորձեր: Հասարակական արժեքների վերագնահատում և ժողովրդավարական կարգերի հաստատում հասարակական ոլորտում կանանց ներգրավմամբ: Քաղաքական և քաղաքացիական իրավունքների տրամադրում կանանց: Ազգային ժողովի առաջին կին պատգամավորները: Սոցիալական և բարեգործական գործունեության ասպարեզում կանանց պահանջվածության քաղաքական, սոցիալ-տնտեսական նախադրյալները: Կանանց դերը կրթության համակարգի ձևավորման գործում: Կրթական նոր համակարգի զենդերային կառուցվածքը:

Գենդերային փոխակերպումները խորհրդային իշխանության ամրապնդման շրջանում 1920-1922թթ.:

Քաղաքացիական իրավունքների տրամադրումը կանանց՝ որպես իշխանության ժողովրդավարացման գործոն: Կանանց ներգրավումը հասարակական ոլորտում կրթության, սոցիալական ապահովման և այլ խնդիրների լուծման համար: Հասարակական կյանքի տղամարդկանց և կանանց ոլորտների նոր մոդելի կազմավորում:

Գենդերային հարաբերությունների փոփոխությունը հասարակական-քաղաքական փոփոխությունների ազդեցությամբ, տղամարդկանց և կանանց քաղաքացիական և քաղաքական ակտիվության բարձրացման նախադրյալները: Հայաստանում զենդերային հարաբերությունների կառուցումը կանանց հարցի նկատմամբ մարքսիստական մոտեցումների հիմքի վրա: Կանայք արտադրության մեջ և գյուղում՝ տնտեսության վերականգնման պայմաններում: Հակասությունները ավանդական զենդերային հարաբերությունների և հասարակության մեջ տղամարդկանց և կանանց սոցիալական նոր դերակատարումների միջև:

Դաստիարակչական հիմնարկների և կազմակերպությունների ցանցի զարգացումը կանանց մասնակցությամբ: Կանանց դերը Ամերկոմի գործունեության կազմակերպման մեջ:

Պետական գենդերային քաղաքականությունը ԽՍՀՄ-ում և ՀԽՍՀ-ում 1922-1940 թթ.

Պետական գենդերային քաղաքականության իրավական հիմքերը:

Պետական գենդերային քաղաքականության արտացոլումը ԽՍՀՄ 1924 և 1936 թթ. սահմանադրություններում ու Հայկական ԽՍՀ սահմանադրություններում և հասարակության գենդերային համակարգի ձևավորումը: Սահմանադրական նորմերը՝ որպես հասարակության նոր գենդերային մշակույթի հիմք:

Ինդուստրացումը արդյունաբերության ոլորտում՝ նոր գենդերային մոդելների կառուցման գործում:

Կանանց սոցիալական կարևորության և հասարակական ակտիվության բարձրացումը ինդուստրացման շրջանում:

Կանանց ներգրավումը արտադրության մեջ՝ որպես ինդուստրացման կարևոր աշխատանքային ռեսուրս: Հասարակության մեջ նոր գենդերային դերերի կազմավորումը պետության հովանավորության տակ: Հայաստանի ինդուստրացման գենդերային քաղկացուցիչը: Կանանց կրկնակի զբաղվածության ձևավորումը:

Կոլեկտիվացումը և գյուղական համայնքի գենդերային կառուցվածքի վերափոխումը

Հայաստանում պետական քաղաքականությունը կանանց նկատմամբ գյուղատնտեսության կոլեկտիվացման պայմաններում:

Ավանդական նահապետական տնտեսությունների ավերումն ու ոչնչացումը գյուղում: Ընտանեկան տնտեսությունից անցում կոլեկտիվ տնտեսության: Գենդերային պատկերացումների և սովորույթների փոփոխություն: Կանանց ներգրավումը գյուղի հասարակական ոլորտում կոլեկտիվացման գործընթացում, կոլեկտիվ աշխատանքը և կանայք: Գենդերային դերերի ընկալման փոփոխությունը ընտանիքում:

Քաղաքական բռնադատումների և դրանց հետևանքների գենդերային չափումը:

Հասարակության գենդերային համակարգի խաթարումը բռնադատումների հետևանքով: Բռնադատումների քաղաքականության տարածումը դատապարտվածների կանանց և ընտանիքի անդամների վրա: Քաղաքական բռնադատումների գենդերային հետևանքները, դրանց ազդեցությունը երկրի ժողովրդագրական և սոցիոմշակութային իրադրության վրա: Բռնադատված քաղաքացիների գենդերային հավակնությունների սահմանափակում:

Խորհրդային Հայաստանում մշակույթի զարգացման ժողովրդավարական սկզբունքները՝ որպես գենդերային իրավահավասարության նախադրյալ

Մշակույթի նվաճումների հավասար մատչելիությունը բոլոր քաղաքացիների՝ տղամարդկանց և կանանց համար: Ընդհանուր ռազմական ուսուցումը՝ որպես կրթության ոլորտում տղամարդկանց և կանանց նկատմամբ հավասար վերաբերմունքի գործելակերպ: Կրթական նոր համակարգը և նրա դերը գենդերային իրավահավասարության ձևավորման մեջ: Նոր ժողովրդավարական կրթական քաղաքականության նշանակությունը հասարակության գենդերային մշակույթի ձևավորման մեջ:

Սոցիալ-դասակարգային մոտեցումը բարձրագույն կրթության համակարգի ձևավորման նկատմամբ և բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունների ստեղծումը կանանց համար: Տղամարդկանց և կանանց համար կրթվածության մակարդակների հավասարեցման նախադրյալների ստեղծում: Կանայք մասնագիտական գործունեության ոչ ավանդական ոլորտներում՝ արդյունաբերության մեջ, տրանսպորտում և այլն:

Հասարակական-քաղաքական հարաբերությունների գենդերային չափումը

Հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքի փոփոխություն: Պետական «կանացի» քաղաքականության հիմնական ուղ-

դությունները, կանանց և տղամարդկանց իրավահավասարության օրենսդրական ապահովում, լայնորեն ներգրավում արտադրության մեջ, ներգրավում պետական գործերում, իրավահավասարության ապահովում կրթություն ստանալու գործում: Գենդերի պետական կառուցման դրական և բացասական հետևանքները սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում:

Հայկական սփյուռքի գենդերային մշակույթի յուրօրինակությունը

Սփյուռքահայերի գենդերային մշակույթի և գենդերային հարաբերությունների ձևավորման կախվածությունը իրենց ապրած երկրների մշակութային և սոցիալ-տնտեսական ազդեցությունից: Եվրոպայի, Ամերիկայի, արաբական երկրների հայկական գաղթօջախները: Գենդերային մշակույթի ձևավորման առանձնահատկությունները Սփյուռքում՝ ազգային ավանդույթներ և օտար մշակութային ազդեցություն: Սփյուռքահայ կնոջ դերը ազգային ինքնության, մշակութային ավանդույթների, լեզվի, կրթության պահպանման գործում: Կանանց բարեգործական կազմակերպություններ և միություններ, նրանց գործունեությունը սփյուռքահայ կյանքի սոցիալական, կրթական, դաստիարակչական և մշակութային ոլորտներում:

Հայ հասարակության գենդերային կարգի փոփոխությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին

Պետական քաղաքականության կառուցումը գենդերային գործոնի հաշվառմամբ. կանանց մասնագիտական և մտավոր ռեսուրսների և գործունեության բոլոր ոլորտներում կանանց լայն ներգրավման վրա հենվելը: Կանայք և պատերազմը. ռազմաճակատ և թիկունք:

Արտադրական և հասարակական-քաղաքական ոլորտներում կանանց մասնակցության ընդլայնումը պատերազմական ժամանակի պայմաններում: Կանանց դերը դպրոցական և բարձրագույն կրթության համակարգի պահպանման գործում պատերազմի տարիներին:

Հանրապետության գիտական ներուժի ընդլայնումը և կանանց մասնակցությունը գիտական հաստատությունների ստեղծմանն ու գործունեությանը:

Կանանց գործունեությունը մշակույթի, գրականության, արվեստի ոլորտում:

Կանանց նոր փորձեր քաղաքի և գյուղի կառավարման մարմիններում: Կանայք՝ ճակատայիններին, վիրավորներին և նվաճողներից ազատագրված շրջանների բնակիչներին շեֆական օգնության կազմակերպիչներ. հայրենասիրական արշավների, միջոցների հավաքման, թիկունքում և ռազմաճակատում ճակատայինների հետ հանդիպումների կազմակերպում:

Հայ կանանց մասնակցությունը մարտական գործողություններին Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում (զինծառայողներ, բուժաշխատողներ և այլն):

Պետական գենդերային քաղաքականությունը ԽՍՀՄ-ում և ՀԽՍՀ-ում հետպատերազմյան ժամանակաշրջանում (1945-1991)

Գենդերային հարաբերությունների փոփոխությունը հասարակության մեջ, պատերազմի տարիներին կանանց ակտիվության և մասնակցության հաշվի առնելը:

Նոր մոտեցումներ հասարակության ժողովրդագրական խնդիրների նկատմամբ: Հայրիշխանական քաղաքականությունը կանանց նկատմամբ՝ արտոնությունների քաղաքականություն մասնագիտական զբաղվածության հետ մայրության զուգակցման համար:

Բարձրագույն կրթությամբ քաղաքացիների մակարդակով Հայաստանի՝ առաջին տեղերից մեկը գրավելը ԽՍՀՄ-ում և կանանց բաժինը՝ որպես տվյալ գործընթացի որոշիչ գործոն: Կանանց ներկայացվածության ընդլայնում տնտեսության ոլորտում: Տեխնիկական մտավորականության գենդերային կազմը՝ որպես Հայաստանի ինդուստրիալ պետության վերափոխվելու գործընթացի արտահայտություն: Կանայք գիտության մեջ և գիտական հիմնարկներում, կրթության և առողջապահության համակարգում: Կանանց ներկայացվածությունը ստեղծագործական միություններում, գրականության մեջ և արվեստում և նրանց ազդեցությունը հայ հասարակության մշակույթի ձևավորման վրա: XX դարի կեսի հայ կնոջ կերպարը:

Կանանց մասնակցությունը հասարակական կյանքին կուսակցական, արհմիութենական, կոմերիտական և այլ կազմակերպություններում: Կանանց հանրապետական խորհուրդը և նրա դերը երկրի հասարակական կյանքում: Քվոտաների համակարգի կիրառումը որոշումների ընդունման տարբեր մակարդակներում կանանց ներկայացվածության ընդլայնման համար: Կանայք կուսակցական և խորհրդային մարմիններում: Հայ կնոջ նոր կերպարը և գենդերային հարաբերությունները քաղաքական և հասարակական կյանքում:

Հայկական ԽՍՀ 1950-80-ական թթ. գենդերային համակարգը և գենդերային հարաբերությունները. ազգային ավանդույթները և սոցիալիստական գաղափարախոսության ազդեցությունը, իրական մվաճումները և հնարավորությունների իրականացման սահմանափակ բնույթը հասարակական ոլորտում կանանց ինքնահաստատման համար:

Կանանց համար արտոնությունների ընդլայնման քաղաքականությունը, արձակուրդի երկարացումը երեխայի խնամքի համար՝ որպես խորհրդային տնտեսության ճգնաժամային զարգացման հետևանք և կանանց հասարակական սուբյեկտայնության սահմանափակման քաղաքականություն:

Սոցիալ-տնտեսական քաղաքականության ազդեցությունը ընտանիքի կառուցվածքի և ընտանեկան հարաբերությունների փոփոխման վրա. միասերունդ ընտանիք և «աշխատող մայր» գենդերային պայմանագիր հայկական սովորույթների և ավանդույթների ֆոնի վրա:

1946 թվականի հայրենադարձությունը և հայրենադարձների ու տերի հայերի գենդերային դիսփոլեյների հակամարտությունը: Հայրենադարձների գենդերային ավանդույթները և ստերեոտիպերը և դրանց բեկումը հայկական նոր իրականության մեջ: Այլ երկրների մշակութային արժեքների ներմուծումը հայկական իրականության մեջ:

Հայկական սփյուռք. կանանց կազմակերպություններ, Հայաստանի հետ մշակութային կապեր: Հայաստանի հետ սփյուռքի համագործակցության ընդլայնում և երկու հայկական մշակույթների փոխներգործություն:

**Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականությունը
և գենդերային հարաբերությունները (1991-2004)**

Գենդերային հարաբերությունները համազգային վերելքի և ազգային ինքնորոշման պայմաններում 1988-1991թթ.՝ հավասարակշռություն և գենդերային հանդուրժողականություն: Արմատական-ֆեմինիստական ռազմավարությունների հայտնվելը հասարակական-քաղաքական ոլորտում 1988-1990թթ.:

Կանանց ակտիվությունը անկախ հայկական պետության կառուցման նոր պայմաններում:

Հանրապետության տնտեսության, ենթակառուցվածքի փլուզումը որպես ԽՍՀՄ փլուզման հետևանք և այդ գործընթացի ազդեցությունը տղամարդկանց և կանանց սոցիալական դրության վրա: Գործազրկությունը, միգրացիան և սոցիալական և աշխատանքային նոր կարգավիճակները: Աղքատության ֆեմինիզացիա: Կանանց պահանջվածության սահմանափակում հասարակական ոլորտում: Կանանց քաղաքացիական մասնակցության վերելքներ և անկումներ: Իշխանության կոշտ հայրիշխանական հարաբերությունների ձևավորում, «Շամիրամի» ֆեմոմենը և կանանց դուրսնորմը քաղաքականությունից XX դարի 90-ական թվականներին:

Կանանց շարժման ձևավորման նոր փուլի սկիզբը. կանանց նոր տեսակի հասարակական կազմակերպությունների ձևավորում:

**«Հայոց պատմության գենդերային դիսկուրս» հատուկ դասընթացը
հնարավորություն կտա պատմության մասնագետներին/պատմաբաններին**

Իմանալու՝

- ի՞նչ է «գենդերը» որպես սոցիոմշակութային կառույց,
- ի՞նչ է նշանակում պատմության գենդերային դիսկուրս,
- գենդերային տարբերակման և շերտադասության առանձնահատկությունները Հայկական լեռնաշխարհի նախնադարյան հասարակություններում,

- գենդերային ստերեոտիպերի ծագման նախադրյալները և դրանց արտացոլումը կրոնում և հավատալիքներում,
- հայ հին և միջնադարյան շրջանի պետությունների գենդերային մոդելները,
- գենդերային հիմնախնդիրները և պատկերացումները հայկական իրավական ակտերում և պատմական աղբյուրներում,
- Հայաստանի տարածքային բաժանումների և նվաճումների գենդերային հետևանքները,
- հայ ազգային-ազատագրական շարժման գենդերային բաղկացուցիչները,
- հայ ազատագրական մտքի գենդերային բովանդակությունը,
- Հայաստանում կանանց շարժման առաջացման պատմությունը,
- կանանց քաղաքացիական և քաղաքական ակտիվության ձևավորման նախադրյալները Հայաստանում նոր և նորագույն շրջանում,
- գենդերի կառուցման առանձնահատկությունները Հայաստանում խորհրդային ժամանակաշրջանում,
- գենդերային քաղաքականության առանձնահատկությունները ժամանակակից Հայաստանում,

կարողանալու՝

- սահմանել հասարակության պատմության գենդերազգայուն հայեցակետերը,
- տարբերել «գենդերային պատմությունը» «կանանց պատմությունից»,
- բացահայտել պատմական իրադարձություններին կանանց մասնակցության ձևերը, նշանակությունը և հետևանքները,
- հիմնավորել հայ ազգային ավանդույթների առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը հասարակության գենդերային ստերեոտիպերի ձևավորման վրա,
- հիմնավորել ժամանակակից հասարակության ժողովրդավարական գենդերային մշակույթի ձևավորման անհրաժեշտությունը,

տիրապետելու՝

- պատմական աղբյուրների գենդերային վերլուծության և գենդերային փոքրամասնության մեթոդներին,
- պատմական իրադարձությունների և փաստերի գենդերային ուսումնասիրության մեթոդներին,
- պատմության դասավանդման մեջ գենդերի ինստիտուցիոնալացման մեթոդներին,
- պետական քաղաքականության մեջ գենդերի ինստիտուցիոնալացման մեթոդներին,
- պատմագիտական ուսումնասիրությունների միջոցով գենդերային իրավահավասարության ձևավորման մեթոդներին:

«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍԸ»

ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՅԻ ԾՐԱԳԻՐ

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՀԱՄԱՐ

«Հայոց պատմության գենդերային դիսկուրս» հատուկ դասընթացը գենդերային մոտեցման՝ իբրև արդի հումանիտար հետազոտությունների արդիական ուղղություններից մեկի, մեթոդաբանության և սկզբունքների վրա հիմնված նորամուտ դասընթաց է:

Հայաստանի ժողովրդավարացման և միջազգային հանրությանը ինտեգրվելու խնդիրները հրատապ են դարձնում նրա պատմության ուսումնասիրությունը գենդերային տեսանկյունից: «Հայոց պատմության գենդերային դիսկուրս» հատուկ դասընթացն ուղղված է ժողովրդավարական քաղաքական վարչակարգի (ռեժիմի) ձևավորման խնդիրների ուսումնասիրությանը, մի վարչակարգի, որը ենթադրում է քաղաքացիական հասարակության գործառնություն սոցիալական բոլոր ռեսուրսների, այդ թվում կանանց ակտիվ քաղաքացիական և քաղաքական մասնակցության պայմաններում: Սրա հետ կապված անհրաժեշտություն է ծագում հիմնավորելու հասարակության գենդերային մշակույթի ձևավորման նախադրյալներն ու հնարավորությունները՝ հաշվի առնելով պատմական փորձը, ազգային մշակույթի արժեքները, հայկական սփյուռքի գոյության գործոնը և գլոբալացման պայմանները: Դրանց ըմբռնումը և հիմնավորումը կապված է այդ երևույթների պատմական արմատների, պատմական իրադարձությունների, փաստերի, ավանդական պատմական ուսումնասիրությունների հանդեպ նոր մոտեցումների հետ: Գենդերային ուսումնասիրություններում գործնականում նման մոտեցման համար կիրառվում է պատմության գենդերային դիսկուրսը՝ հիմնված գենդերային վերլուծության, պատմության գենդերային դիսփլեյի որոշման, նրա գենդերային ասպեկտների և հիմնախնդիրների վրա:

Պատմության դիտարկումը գենդերային դիսկուրսի դիրքերից թույլ է

տալիս ձևավորել այն ըմբռնումը, որ հայոց պատմության տարբեր շրջաններին հատուկ է որոշակի գենդերային կարգ, որը համապատասխանում է տվյալ ժամանակաշրջանի հասարակական կյանքի և մշակույթի ձևավորման պայմաններին: Հայաստանի հարուստ և բազմակողմանի փորձը, որ ներկայանում է նրա պատմության մեջ, կարող է դառնալ ժամանակակից երիտասարդության, մասնագետների գենդերային սոցիալականացման էական գործոն, որոնք մասնակցելու են ժողովրդավարական հասարակության ձևավորմանը:

Դասընթացի նպատակը

1. Նպաստել պատմական գիտելիքների խորացմանը, պատմական իրադարձությունների, փաստերի և հասարակական հարաբերությունների մասին պատկերացումների ընդլայնմանը գենդերային դիսկուրսի ներառման միջոցով:
2. Նպաստել կրթության հումանիզացմանը և ժողովրդավարացմանը Հայոց պատմության սոցիոմշակութային խնդիրների գենդերային չափմամբ նոր ընկալում ձևավորելու միջոցով:
3. Նպաստել գենդերային հանդուրժողականության, գենդերային իրավահավասարության և գուգակշռված ժողովրդավարության վրա հիմնված աշխարհայացքի ձևավորմանը՝ օգտագործելով պատմական իրադարձությունների քննության նոր մեթոդներ, հենվելով պատմական փաստերի գենդերային վերլուծության վրա:

Հատուկ դասընթացը նախատեսվում է պատմության ֆակուլտետների ուսանողների համար: Հաշվի առնելով ժամանակակից համալսարանական ուսումնական ծրագրերի եռաստիճան կառուցվածքը՝ առաջարկում ենք հատուկ դասընթացը ներառնել մագիստրատուրայի ծրագրերում: Սակայն այն կարող է առաջարկվել նաև բակալավրիատի ուսանողներին՝ որպես էլիատիվ (ընտրովի) դասընթաց: Առաջարկվող դասընթացը առավել արդյունավետ յուրացնելու համար ցանկալի է, որ

ուսանողները նախապես ծանոթացած լինեն գենդերային գիտելիքների հիմունքներին հասարակագիտական գիտակարգերի (դիսցիպլինների) շրջանակում: Հատուկ դասընթացն ուսումնասիրելիս նպատակահարմար է օգտագործել ինտերակտիվ մեթոդիկաները, իսկ որպես ինքնուրույն աշխատանք ուսանողներին հանձնարարել էսսե-ռեֆերատներ: Այս ամենը հնարավորություն կտա հասնելու ապագա մասնագետների գենդերային սոցիալականացման:

Ներածական դասախոսություն

Առարկայի ներածություն: «Հայոց պատմության գենդերային դիսկուրս» դասընթացի հասկացությունները, կատեգորիաները և խնդիրները:

«Գենդեր» հասկացության առաջացման նախադրյալները և զարգացման պատմությունը: Գենդերային մոտեցման՝ որպես ուսումնասիրության մեթոդի, էությունը: Գենդերը՝ որպես պատմամշակութային կատեգորիա: Հասարակության գենդերային հարաբերությունների դինամիկայի պատմական պայմանավորվածությունը:

Պատմական ֆեմինոլոգիան և նրա տեղը պատմության հայրիշխանական հայեցակարգում: «Կանացի պատմություն» և «կանանց պատմություն» հասկացությունները: Գենդերային ստերեոտիպերը (կարծրատիպերը) պատմության մեջ: Գենդերային պատմագրության ծագումը և պատմության գենդերային դիսկուրսի ձևավորումը:

Գենդերային ուսումնասիրություններ և նրանց մեթոդները: Պատմության գենդերային դիսկուրսը, գենդերային վերլուծությունը, գենդերային փորձաքննությունը՝ որպես պատմագիտական ուսումնասիրությունների կատեգորիաներ, ինովացիոն մոտեցումներ և մեթոդներ:

Հիմնահարց քննարկման և քանակեճի համար՝ «Հայրիշխանական և գենդերային պատմագրություն. հատման կետեր»:

ԲԱԺԻՆ I

**ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ
ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ**

**ԹԵՄԱ I. Սեռադերային հարաբերությունները և
գենդերային ստրատիֆիկացիան Հայկական լեռնաշխարհի
նախնադարյան հասարակության մեջ**

Հնագիտական և ազգագրական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի հնադարյան բնակիչների գենդերային հարաբերությունների և գենդերային պատկերացումների մասին: Սեռադերային տարբերակումների արտացոլումը ժայռապատկերներում և քարանձավային նկարներում, նյութական մշակույթի առարկաներում, հավատալիքներում (Մայր աստվածուհու/աստվածուհի մոր պաշտամունքը): Միջսեռային հարաբերությունները Հայկական լեռնաշխարհի տոհմացեղային հասարակություններում պալեոլիթի և մեզոլիթի դարաշրջանում (հին և միջին քարի դար): Անցում էնդոգամիայից էկզոգամիայի: Մայրական իրավունքի, մայրական գծի և մայրական տեղայնության (լուկայության) ծագումը: Գույքային հարաբերությունները՝ որպես գենդերային համաչափության (սիմետրիայի) հիմք նեոլիթի դարաշրջանում: Խեթական (Մուպպիլուլիմմա, Մուրսիլ) և ասորական (Թգլաթպալասար) աղբյուրները Հայաստան-Ազգի, Թոգարմա/Թեգարմա, Նաիրի, Արմե-Շուրբիա տոհմացեղային կազմավորումների սեռադերային հարաբերությունների մասին:

Գենդերային տարբերակման (դիֆերենցման) և շերտադասության սկիզբը Հայկական լեռնաշխարհի առաջին պետական կազմավորումներում: Հայրիշխանության առաջացման գործընթացի առանձնահատկությունները հին հայերի մոտ: Գենդերային պատկերացումները և դերակատարումները հայ վաղ դասակարգային հասարակության մեջ:

Հիմնահարց քննարկման և բանավեճի համար՝ «Մայրիշխանություն»

նը և հայրիշխանությունը Հայկական լեռնաշխարհի նախնադարյան հասարակություններում. դրսևորումների յուրահատկությունը»:

ԹԵՄԱ II. Հին հայկական պետությունների հասարակական հարաբերությունների գենդերային հայեցակետերը

Ուրարտական պետության գենդերային կառուցվածքը և գենդերային հարաբերությունները:

Ուրարտական հասարակության հայրիշխանական բնույթը: Տղամարդկանց ռազմական-ուժային հատկությունների գերակայությունը (առաջնությունը, գերազանցությունը)՝ որպես հայրիշխանության հիմք:

Գենդերային հարաբերությունների արտացոլումը կրոնական պատկերացումներում: Իգական և արական աստվածությունների, աստվածների և աստվածուհիների կարգավիճակը և նրանց հայրիշխանական ստորակարգությունը (նվիրապետությունը):

Առաջին հայկական պետությունների գենդերային մշակույթը

Արական և իգական աստվածությունների տիրապետության ոլորտները: Վաղ հայկական պանթեոնի (Հայկի պանթեոնի) գենդերային հիմքը: Հայերի և հարևան ժողովուրդների գենդերային մշակույթների փոխազդեցությունը հայ ժողովրդի էթնոգենեզի (ծննդաբանական) և էթնոմշակութային ավանդույթների հաստատման ժամանակաշրջանում:

Երվանդունիների պետության գենդերային կառուցվածքը: Գենդերային պատկերացումների և իրականության արտացոլումը հին հայկական պանթեոնում (Արամազդի պանթեոն): Վաղ հայկական պանթեոնի (դիցարան) աստվածությունների գենդերային դերակատարությունները:

Հայ հասարակության գենդերային կառուցվածքը Արտաշիսյանների կառավարման ժամանակաշրջանում, հասարակական-քաղաքական, տնտեսական, իրավական հարաբերությունների գենդերային չափումներ: Հելլենիզմի ազդեցությունը Հայաստանում գենդերային հա-

րաբերությունների ձևավորման վրա: Դասային տարբերակման և խտրականության գենդերային բաղկացուցիչը: Հայկական գենդերային համակարգի փոխազդեցությունը պարթևական և հռոմեական գենդերային համակարգերի հետ: Ամուսնա-ընտանեկան հարաբերությունների չկարգավորվածությունը և Տիգրան Մեծի քաղաքականության գենդերային չափումը:

Գենդերային հարաբերությունները Արշակունիների օրոք:

Հայ հասարակության գենդերային իրողությունները Արշակունիների կառավարման ժամանակաշրջանում: Հայկական և պարթևական մշակույթների փոխգործակցության գենդերային համատեքստը:

Ամուսնա-ընտանեկան, իրավական, տնտեսական հարաբերություններ: Տղամարդկանց և կանանց մասնավոր և հասարակական կյանքի կարգավորումը վարքի կրոնամշակութային նորմերով և սովորական իրավունքի կանոններով: Հեթանոսություն և գենդեր: Զրադաշտականություն և գենդեր:

Վաղ քրիստոնեությունը և փոփոխությունները հայ հասարակության գենդերային համակարգում:

Վաղ քրիստոնեության գենդերային բաղկացուցիչը և իր ազդեցությունը Հայաստանի սոցիալական հարաբերությունների վրա:

Հայաստանում քրիստոնեության տարածման և ընդունման գործում կանանց ակտիվ մասնակցության սոցիալական նախադրյալները: Վաղ քրիստոնեական համայնքները որպես գենդերային իրավահավասարության մոդելներ:

Հայ եկեղեցու գենդերային քաղաքականության տրանսֆորմացիան (փոխակերպություն, ձևափոխություն, կերպարանափոխություն): Գենդերային հարաբերությունների նորմերի ծագումը և հաստատագրումը (կայացումը) պետական և եկեղեցական փաստաթղթերում (վավերագրերում): Հայ առաքելական եկեղեցու գենդերային հարացույցի վերջնական ձևավորումը Աշտիշատի, Շահապիվանի, Դվինի ժողովների որոշումներով: Ամուսնաընտանեկան հարաբերությունների կարգավոր-

րումը և հայկական ընտանիքի ուժեղացումը ինցեստի և բազմակնություն արգելման միջոցով:

Հարցեր կրկնության և քննարկման համար.

1. Ի՞նչ է ընկած մ.թ.ա. V դ. մինչև մ.թ. V դարի հայկական պետությունների գենդերային հարաբերությունների դիմամիկայի հիմքում:
2. Ինչպե՞ս են գենդերային հարաբերությունները և գենդերային խնդիրներն արտացոլվում հայկական պանթեոնի (դիցարանի) աստվածների և աստվածուհիների կերպարներում և դերերի մեջ:
3. Ո՞րն է հելլենիզմի դերը հայ հասարակության գենդերային շերտադասության մեջ:
4. Գենդերային հավասարության վաղաքրիստոնեական գաղափարները ի՞նչ ազդեցություն ունեցան Հայաստանում քրիստոնեության ընդունման վրա:
5. Ինչպե՞ս և ի՞նչ ուղղությամբ ազդեցին Աշտիշատի, Շահապիվանի և Դվինի ժողովների որոշումները հայ հասարակության գենդերային հարաբերությունների վրա:

ԲԱԺԻՆ II

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԹԵՄԱ III. Հայերի գենդերային հարաբերությունների յուրօրինակությունը բյուզանդական և պարսկական տիրապետության օրոք

Հայկական էթնոսի գենդերային համակարգի փոփոխությունները պետականության կորստի և Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև Հայաստանի բաժանման պայմաններում:

V-VI դարերի մատենագիրները (Մեսրոպ Մաշտոց, Մովսես Խորե-

նացի, Եղիշե, Եզնիկ Կողբացի, Փավստոս Բուզանդ) հայ հասարակության գենդերային մշակույթի և պետության, հասարակության մեջ, ընտանիքում կանանց դերի մասին: Հասարակական հարաբերությունները, հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքը և կանանց սոցիալ-իրավական կացությունը:

Ազգային-ազատագրական պատերազմների գենդերային հայեցակետերը. կանանց մասնակցության ազդեցությունը գենդերային ստեբեոտիպերի խախտման վրա:

Բյուզանդիայի քաղաքական-տնտեսական շահերը Հայաստանում: Հուստինիանոսի բարեփոխումները և կանանց ժառանգական իրավունքներ տրամադրելու մասին դրույթի գենդերային հայեցակետերը: Հայ հասարակության մեջ բյուզանդական գենդերային արժեքների ներթափանցման հետևանքները:

Իսլամի գենդերային բաղկացուցիչ դերը Հայաստանում արաբ նվաճողների քաղաքականության մեջ և դրա հետևանքները:

Գենդերային իրավահավասարությունը՝ որպես պավլիկյանների սոցիալական հավասարության գաղափարախոսության բաղկացուցիչ: Թոնդրակեցիների գենդերային մոդելները. համայնքներում սոցիալական հավասարության հաստատման փորձը:

Կանանց մասնակցությունը հակաարաբական շարժումներին՝ որպես ազգային ինքնության և անկախության պահպանման համար տղամարդկանց հետ հավասար պատասխանատվության դրսևորում:

Հարցեր կրկնության և քննարկման համար

1. Ի՞նչ տեղ և դեր էր հատկացվում հայ կանանց հասարակության մեջ վաղ միջնադարում:
2. Ինչպե՞ս էր կանանց սոցիալ-իրավական վիճակը ազդում գենդերային հարաբերությունների վրա:
3. Որո՞նք են ազգային-ազատագրական շարժումներին կանանց մասնակցության պատճառները և նշանակությունը:
4. Ի՞նչ ազդեցություն ունեցավ բյուզանդական տիրապետությունը հայ հասարակության գենդերային հարաբերությունների վրա: Ինչպե՞ս

եք գնահատում Հուստինիանոսի բարեփոխումների գենդերային բաղկացուցիչը:

5. Ի՞նչ ազդեցություն ունեցավ իսլամը հայոց գենդերային հարաբերությունների վրա արաբական նվաճումների ժամանակաշրջանում:
6. Ի՞նչ է ընկած պավլիկյանների և թոնդրակեցիների գենդերային իրավահավասարության քարոզչության հիմքում:

ԲԱԺԻՆ III

IX-XIV դդ. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

ԹԵՄԱ IV. IX-XIV դդ. հայկական պետությունների գենդերային համակարգերը

IX-XI դարերում պետականության վերականգնումը՝ որպես Հայաստանի գենդերային մշակույթի զարգացման գործոն

Պետականության վերականգնման գործոնի ազդեցությունը հայ հասարակության գենդերային կառուցվածքի վրա Բագրատունիների հարստության իշխանության ժամանակամիջոցում: Հայ հասարակության տարբեր դասերի գենդերային մշակույթի ստրատիֆիկացիա: Կանանց մասնակցությունը սոցիալ-քաղաքական կյանքին: Թագուհիների դերը սոցիալական խնդիրների լուծման մեջ: Կանանց մասնակցությունը հայկական մշակույթի և պետականության կայացման մեջ: Դինաստիական ամուսնությունների նշանակությունը Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականության մեջ:

XI-XIV դարերում քոչվոր նվաճողների ազդեցությունը Հայաստանի գենդերային մշակույթի վրա

Տղամարդկանց և կանանց գենդերային դերերի փոփոխությունը հայ հասարակության մեջ թուրք-սելջուկների նվաճումների ազդեցությամբ:

Հայ նահապետական ընտանիքի գենդերային ներդաշնակությունը՝ որպես ազգային գենդերային կարգի պահպանման երաշխիք:

Հայ հասարակության գենդերային նախապատվությունների արտացոլումը Մխիթար Գոշի «Դատաստանագրքում»: Կանանց և տղամարդկանց իրավունքների և պարտականությունների օրենսդրական ամրագրումը «Դատաստանագրքում» և դրանց ազդեցությունը հասարակական կյանքի վրա:

Չաքարյանների քաղաքականության և հայ-վրացական համագործակցության ազդեցությունը գենդերային իրադրության վրա:

Մոնոլոլական տիրապետության բացասական ազդեցությունը Հայաստանի գենդերային հարաբերությունների վրա:

Կիլիկիայի հայկական պետության (XI-XIV դդ.) գենդերային համակարգի կայացման առանձնահատկությունները

Ռուբինյանների կառավարման շրջանի պատմամշակութային և քաղաքական պայմանների գենդերային չափում:

Քաղաքականության, մշակույթի, կրթության, միջազգային հարաբերությունների հարցերի հանդեպ Հեթումայանների մոտեցումների գենդերային բաղկացուցիչը: Կանանց անմիջական և միջնորդավորված ազդեցության ուժեղացումը քաղաքականության վրա: Մարիամ թագուհու կառավարումը (1373-1375թթ.): Արևմտաեվրոպական և հայկական գենդերային կարգերի փոխադարձ ազդեցությունը Կիլիկյան Հայաստանում: Գենդերային պատկերացումների արտացոլումը Կիլիկյան Հայաստանի օրենսդրական վավերագրերում (Սմբատ Գունդստաբլ, Ներսես Լամբրոնացի):

Հարցեր կրկնության և քննարկման համար

1. Բագրատունիների օրոք պետականության վերականգնումը ինչպե՞ս ազդեց հասարակության գենդերային մշակույթի ձևավորման վրա:
2. Ինչպե՞ս էին կանանց սոցիալ-իրավական դրությունը և կարգավիճակը արտահայտվում գենդերային հարաբերություններում:
3. Ինչպե՞ս էին գենդերային գործոնները նպաստում հայ ժողովրդի

ազգային ինքնության և մշակույթի պահպանմանը նվաճումների ժամանակաշրջանում:

4. Ինչպիսի՞ գենդերային հիմնահարցեր առավել մեծ չափով արտացոլվեցին միջնադարյան Հայաստանի իրավական փաստաթղթերում:
5. Ո՞րն է Կիլիկիայի հայկական պետության գենդերային հարաբերությունների ինքնատիպությունը:
6. Ի՞նչ դեր ուներ եկեղեցին ավանդական գենդերային արժեքների ամրապնդման մեջ IX-XIV դդ.:

Գործնական պարապմունք. Միջնադարյան հայկական «Դատաստանագրքերի» գենդերային վերլուծություն:

ԲԱԺԻՆ IV

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆՈՒՄ XV-XVIII դդ.

ԹԵՄԱ V. Հայ հասարակության գենդերային խնդիրները պետականության քաղաքացիության և անկախության համար պայքարի շրջանում

Պետականության կորստի և Հայաստանի բաժանումների գենդերային հետևանքները:

Հայկական պետականության կորուստը թուրք-պարսկական պատերազմների արդյունքում և տղամարդկանց և կանանց սոցիալական կարգավիճակի փոփոխությունը: Ազգային գենդերային ինքնության պահպանման խնդիրը օտար մշակութային ազդեցությունների պայմաններում:

Հայ գենդերային մշակույթի ենթարկվածությունը նվաճողների ազդեցությանը (թուրք-սելջուկներ, մոնղոլներ, ակ-կոյունլու, կարա-կոյունլու):

Գենդերային հարաբերությունները և գենդերային ստերեոտիպերը

Արևմտյան Հայաստանում (Օսմանյան կայսրություն): Հայ եկեղեցու և մշակույթի դերը պետականության բացակայության նախընթաց շրջանում ձևավորված ավանդական հայկական գենդերային արժեքների և հարաբերությունների պահպանման և զարգացման մեջ: Էջմիածնի ժողովը և կաթողիկոսության վերահաստատումը Հայաստանում: Կանանց մասնակցությունը կաթողիկոսի ընտրություններին՝ որպես նրանց սոցիալական կարևորության ցուցանիշ և հայ հասարակության բախտորոշ խնդիրների լուծման գործում տղամարդկանց և կանանց հավասարության ճանաչման գործում:

Գենդերային հարաբերությունները Արևելյան Հայաստանի սոցիալական իրականության մեջ Պարսկաստանի կազմում:

Կանանց մասնակցությունը հայ ազգային-ազատագրական շարժմանը՝ որպես գենդերային հավասարության տարր:

Արևելյան և Արևմտյան Հայաստանի կանանց ավանդը հայկական ազգա-մշակութային ինքնության և գենդերային ավանդույթների պահպանման գործում:

ԹԵՄԱ VI. Հայ լուսավորիչների գաղափարների գենդերային հայեցակետը

Արևմտաեվրոպական լուսավորականության գաղափարների ազդեցությունը Հովսեփ Էմինի, Մովսես Բաղրամյանի հայ ժողովրդի ազատագրական նպատակների, նրա ազատության և իրավունքների վերաբերյալ հայացքների վրա: Հովսեփ Արղությանը, Շահամիր Շահամիրյանը տղամարդկանց և կանանց իրավունքների հավասարության՝ որպես արդար հասարակության կայացման գործոնի մասին: Շ. Շահամիրյանի սահմանադրության նախագծի գենդերային հայեցակետերը: Շ. Շահամիրյանի աշխատությունների մշանակությունը հայերի մեջ նոր ազատամտական գաղափարախոսության ձևավորման համար:

Հարցեր կրկնության և քննարկման համար

1. Պետականության կորուստը և Հայաստանի բաժանումներն ինչպե՞ս ազդեցին տղամարդկանց և կանանց գենդերային կարգավիճակի վրա:
2. Ի՞նչ ավանդական գենդերային արժեքներ և ինչպե՞ս նպաստեցին ազգային ինքնության պահպանմանը:
3. Ինչպիսի՞ն է հայ լուսավորիչների գենդերային հայացքների ձևավորման վրա ազգային մշակույթի և արևմտանվորական լիբերալ գաղափարների ազդեցության հարաբերակցությունը:

ԲԱԺԻՆ V

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԻՆԱՄԻԿԱՆ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՄԵՋ XIX ԴԱՐՈՒՄ**

**ԹԵՄԱ VII. Փոփոխությունները հայ հասարակության
գենդերային հարաբերություններում և գենդերային կարգում
XIX դարում**

Գենդերային հարաբերությունները Արևելյան Հայաստանում:

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու գենդերային հետևանքները: Հայ եկեղեցու գործունեության մասին 1836 թ. «Կանոնադրությունը» («Պոլոժենիեն») և նրա ազդեցությունը Արևելյան Հայաստանի գենդերային իրողությունների վրա:

Գենդերային հարաբերությունների՝ որպես հասարակական հարաբերությունների մասի, ձևավորման առանձնահատկությունները քաղաքներում և գյուղերում: Գենդերային պատկերացումների և հարաբերությունների յուրօրինակությունը Ռուսաստանի հայկական բնակավայրերում և ռուսական խոշոր քաղաքներում (Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Թիֆլիս և Բաքու):

Գենդերային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում:

Հայերի ներգրավվածությունը Օսմանյան կայսրության հասարակական-քաղաքական գործընթացներում և մշակութային կյանքում, սոցիալ-տնտեսական խնդիրների նկատմամբ հայերի գենդերային մոտեցումների տարբերությունները գավառներում և մայրաքաղաքում (Կոստանդնուպոլիս): Օսմանյան և արևմտաեվրոպական գենդերային արժեքների և պատկերացումների ազդեցությունը Արևմտյան Հայաստանի հայության կյանքի վրա:

ԹԵՄԱ VIII. Գենդերային խնդիրների արտացոլումը հայ հասարակական-քաղաքական մտքի մեջ

Սոցիալական խնդիրների գենդերային ասպեկտը կդերա-պահպանողական ուղղության առաջնորդներ Գ. Այվազովսկու, Մ. Մսերյանցի, Ա.Արարատյանի հայացքներում:

Գենդերային բաղկացուցիչը ազգային-պահպանողական հոսանքի ներկայացուցիչներ Ռ.Պատկանյանի, Մ. Խրիմյանի, Գ. Սրվանձտյանի հայացքներում:

Լիբերալ գաղափարախոսության ներթափանցումը հայկական միջավայր, տղամարդկանց և կանանց ինքնագիտակցության բարձրացումը, գենդերային հարաբերությունների փոփոխությունը և նահապետական գենդերային պատկերացումների թուլացումը:

Գենդերային պատկերացումները Ս. Նազարյանի, Գ. Արծրունու, Գ. Օտյանի, Ն. Ռուսինյանի լիբերալ-դեմոկրատական հայացքներում: Իրավական նորմերի նկատմամբ գենդերային մոտեցումները արևմտահայության Ազգային սահմանադրության նախագծում (1863 թ.):

Գենդերային իրավահավասարության խնդիրները հայ հեղափոխական դեմոկրատներ Մ. Նալբանդյանի, Հ. Սվաճյանի, Մ. Մամուրյանի ծրագրերում:

ԹԵՄԱ IX. Արևելյան և Արևմտյան Հայաստանի հայ հասարակության գենդերային կառուցվածքի փոփոխության առանձնահատկությունները XIX դարի վերջին

Ռուսաստանի 60-70-ական թվականների բարեփոխումների ազդեցությունը ներքին կյանքի և գենդերային հարաբերությունների ազատականացման վրա Արևելյան Հայաստանում:

Կանանց հասարակական կազմակերպությունների ի հայտ գալը, դրանց բնույթը և գործունեության ոլորտները: Կանանց մամուլի և կանանց շարժման սկիզբը: Կանանց կրթության ձևավորման սկիզբը:

Հայ քաղաքական կուսակցությունների առաջացումը: Նրանց ծրագրերի գենդերային բաղկացուցիչը: Մարքսիզմի տարածումը Արևելյան Հայաստանում և կանանց մասնակցությունը հայկական սոցիալ-դեմոկրատական շարժման ձևավորմանը: Կանանց քաղաքական մասնակցության և կանանց լիդերության ընկալումը: Կանայք քաղաքական կուսակցություններում՝ ղեկավար և շարքային կուսակցականներ:

Գենդերային իրադրությունը հայաբնակ վիլայեթներում ազգային-ազատագրական շարժման վերելքի առնչությամբ: Արևմտահայ մտավորականությունը (Ս. Տյուսաբ, Սիամանթո և այլն) կանանց իրավունքների և հնարավորությունների մասին: Բարեգործական և լուսավորչական գործունեությունը Արևմտյան Հայաստանում:

Հայ հասարակության գենդերային մշակույթի փոփոխությունը XIX դարում, կանայք արվեստի և գրականության ասպարեզում:

Յեղասպանության քաղաքականությունը հայերի նկատմամբ Աբդուլ Համիդի իշխանության օրոք, նրա ազդեցությունը ազգային-ազատագրական շարժման վերելքի վրա: Ազատագրական շարժման գենդերային հայեցակետերը, կանանց մասնակցությունը ֆիդայական շարժմանը:

Հարցեր կրկնության համար

1. Ի՞նչ գենդերային հետևանքներ ունեցավ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին:

2. Ինչպե՞ս էր անդրադառնում հայ կյանքի վրա օսմանյան և եվրոպական գեոդերային արժեքների ազդեցությունը:
3. Ո՞րն է XIX դարի հայ հասարակական-քաղաքական մտքի գեոդերային գաղափարների յուրօրինակությունը:
4. Որո՞նք են հայ կանանց շարժման պատճառները և յուրօրինակությունը Արևմտյան Հայաստանում:
5. Ինչպե՞ս էր ազգային-ազատագրական շարժումն ազդում կանանց հասարակական և քաղաքական ակտիվության զարգացման վրա:
6. Ինչո՞վ էին արտահայտվում հայ հասարակության գեոդերային մշակույթի փոփոխությունները XIX դարում:

ԲԱԺԻՆ VI

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ԲԱՂԱՔԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ XX ԴԱՐՈՒՄ

ԹԵՄԱ X. Հայաստանի գեոդերային մշակույթի ձևավորման քաղաքական և սոցիալ-տնտեսական գործոնները XX դարասկզբին

Ռուսաստանի և Թուրքիայի հեղափոխական իրադարձությունները՝ որպես հայերի քաղաքական ակտիվության բարձրացման գործոններ:

Գեոդերային կարգի փոփոխությունը Արևելյան Հայաստանում Ռուսաստանի 1905-1907 թթ. հեղափոխության ազդեցությամբ:

Երիտթուրքերի գաղափարների և քաղաքականության ազդեցությունը հայ ժողովրդի գեոդերային իրողությունների վրա: Արևմտահայ մտավորականությունը և գեոդերը: 1912-1913 թթ. բարենորոգումների գեոդերային հայեցակետը:

Առաջին համաշխարհային պատերազմը և հայ հասարակության գեոդերային պատկերացումների և իրողությունների փոփոխությունը:

Պատերազմական գործողությունների ազդեցությունը հայոց հասարակական կյանքի վրա Արևելյան և Արևմտյան Հայաստանում: Ազգային-ազատագրական շարժման վերելքը և կանանց մասնակցությունը:

Հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում և դրա զենդերային հետևանքները սոցիալական, ժողովրդագրական, էթնոմշակութային ոլորտներում:

1917 թվականի հեղափոխությունները Ռուսաստանում և հայերի ազգային ու քաղաքական խնդիրների զենդերային հայեցակետերը:

Փետրվարյան հեղափոխության ազատական գաղափարների ազդեցությունը Հայաստանի զենդերային հարաբերությունների վրա: Օգակոմի ստեղծումը և նրա զենդերային քաղաքականությունը:

Բոլշևիկյան հեղափոխությունը և հասարակության զենդերային ստերեոտիպերի խորտակումը: Սոցիալ-քաղաքական խնդիրների լուծման զենդերային մոտեցումները հայ բոլշևիկների, Անդրկովկասյան կոմիսարիատի և Ազգային խորհրդի ծրագրերում և գործողություններում:

Հարցեր կրկնության համար

1. Ինչո՞ւ էին կանայք դառնում հեղափոխական իրադարձությունների ակտիվ մասնակիցներ և ինչպե՞ս դա արտահայտվեց նրանց սոցիալական կարգավիճակի վրա:
2. Ինչպե՞ս էին հեղափոխական գաղափարախոսությունը և հեղափոխական իրադարձություններն ազդում զենդերային հարաբերությունների փոփոխության վրա:
3. Ինչպիսի՞ զենդերային հետևանքներ ունեցավ 1915 թ. հայոց ցեղասպանությունը:

ԹԵՄԱ XI. Հասարակության զենդերային համակարգը Հայաստանի առաջին հանրապետության ժամանակաշրջանում

Հայաստանի անկախության հռչակումը և զենդերային համակարգի

դեմոկրատացման փորձերը: Հասարակական արժեքների վերագնահատում և ժողովրդավարական կարգերի հաստատում հասարակական ոլորտում կանանց ներգրավմամբ: Քաղաքական և քաղաքացիական իրավունքների տրամադրում կանանց: Ազգային ժողովի առաջին կին պատգամավորները: Սոցիալական և բարեգործական գործունեության ասպարեզում կանանց պահանջվածության քաղաքական, սոցիալ-տնտեսական նախադրյալները: Կանանց դերը կրթության համակարգի ձևավորման գործում: Կրթական նոր համակարգի գենդերային կառուցվածքը:

Հարցեր կրկնության համար

1. Ինչո՞վ էր պայմանավորված քաղաքական և քաղաքացիական իրավունքների տրամադրումը կանանց Առաջին հանրապետությունում:
2. Ինչպե՞ս էր կանանց ակտիվությունն ազդում հայ հասարակության գենդերային մշակույթի ձևավորման վրա 1918-1920 թթ.:

ԹԵՄԱ XII. Գենդերային գործոնը Հայաստանի խորհրդային հանրապետության հասարակական-քաղաքական վերափոխումներում 1920-1922 թթ.

Գենդերային փոխակերպումները խորհրդային իշխանության անրապնդման շրջանում 1920-1922 թթ.: Հայաստանի խորհրդայնացումը և կանանց քաղաքացիական իրավունքների տրամադրումը՝ որպես իշխանության ժողովրդավարացման գործոն: Կանանց ներգրավումը հասարակական ոլորտում կրթության, սոցիալական ապահովման և այլ խնդիրների լուծման համար: Հասարակական կյանքի տղամարդկանց և կանանց ոլորտների նոր մոդելի կառուցում:

Գենդերային հարաբերությունների փոփոխությունը հասարակական-քաղաքական փոխակերպումների ազդեցությամբ, տղամարդկանց և կանանց քաղաքացիական և քաղաքական ակտիվության բարձրացման նախադրյալները: Հայաստանում գենդերային հարաբե-

րությունների կառուցումը կանանց հարցի նկատմամբ մարքսիստական մոտեցումների հիմքի վրա: Կանայք արտադրության մեջ և գյուղում տնտեսության վերականգնման պայմաններում: Հակասությունները ավանդական գենդերային հարաբերությունների և հասարակության մեջ տղամարդկանց և կանանց սոցիալական նոր դերակատարումների միջև:

Դաստիարակչական հիմնարկների և կազմակերպությունների ցանցի զարգացումը կանանց մասնակցությամբ: Կանանց դերը Ամերկոմի գործունեության կազմակերպման մեջ:

ԹԵՄԱ XIII. Պետական գենդերային քաղաքականությունը ԽՍՀՄ-ում և ՀԽՍՀ-ում 1922-1940 թթ.

1922-1940 թթ. ԽՍՀՄ և Հայկ. ԽՍՀ պետական գենդերային քաղաքականության իրավական հիմքերը:

Պետական գենդերային քաղաքականության արտացոլումը ԽՍՀՄ 1924 և 1936 թվականների սահմանադրություններում և Հայկական ԽՍՀ սահմանադրություններում և հասարակության գենդերային համակարգի ձևավորումը: Սահմանադրական նորմերը՝ որպես հասարակության նոր գենդերային մշակույթի հիմք:

Ինդուստրացումը՝ որպես արդյունաբերության ոլորտում նոր գենդերային մոդելի կառուցման գործոն:

Տղամարդկանց և կանանց սոցիալական կարևորության և հասարակական ակտիվության բարձրացումը:

Կանանց ներգրավումը արտադրության մեջ որպես ինդուստրացման կարևոր աշխատանքային ռեսուրս: Հասարակության մեջ նոր գենդերային դերերի կառուցումը պետության հովանավորության տակ: Հաստատանի ինդուստրացման գենդերային բաղկացուցիչը: Կանանց կրկնակի զբաղվածության ձևավորումը:

Կոլեկտիվացումը և գյուղական համայնքի գեոդերալիս կառուցվածքի վերափոխումը:

Հայաստանում պետական քաղաքականությունը կանանց նկատմամբ գյուղատնտեսության կոլեկտիվացման պայմաններում:

Ավանդական նահապետական տնտեսությունների ավերումն ու ոչնչացումը գյուղում: Ընտանեկան տնտեսությունից անցում կոլեկտիվ տնտեսության: Գեոդերալիս պատկերացումների և սովորույթների փոփոխություն: Գյուղում կոլեկտիվացման գործընթացում կանանց մուտքը հասարակական ոլորտ, կոլեկտիվ աշխատանքը և կանայք: Գեոդերալիս դերերի ընկալման փոփոխությունը ընտանիքում:

Քաղաքական բռնադատումների և դրանց հետևանքների գեոդերալիս չափումը:

Հասարակության գեոդերալիս համակարգի խաթարումը բռնադատումների հետևանքով: Բռնադատումների քաղաքականության տարածումը դատապարտվածների կանանց և ընտանիքի անդամների վրա: Քաղաքական բռնադատումների գեոդերալիս հետևանքները, դրանց ազդեցությունը երկրի ժողովրդագրական և սոցիոմշակութային իրադրության վրա: Բռնադատված քաղաքացիների գեոդերալիս հավակնությունների սահմանափակում:

Մշակույթի զարգացման ժողովրդավարական սկզբունքները Խորհրդային Հայաստանում՝ որպես գեոդերալիս իրավահավասարության նախադրյալ:

Մշակույթի նվաճումների հավասար մատչելիությունը բոլոր քաղաքացիների՝ տղամարդկանց և կանանց համար: Ընդհանուր ռազմական ուսուցումը՝ որպես կրթության ոլորտում տղամարդկանց և կանանց նկատմամբ հավասար վերաբերմունքի դրսևորում: Կրթական նոր համակարգը և նրա դերը գեոդերալիս իրավահավասարության ձևավորման մեջ: Նոր ժողովրդավարական կրթական քաղաքականության նշանակությունը հասարակության գեոդերալիս մշակույթի ձևավորման մեջ:

Սոցիալ-դասակարգային մոտեցումը բարձրագույն կրթության հա-

մակարգի ձևավորման նկատմամբ և բարձրագույն կրթության հնարավորությունների ստեղծումը կանանց համար: Տղամարդկանց և կանանց համար կրթվածության մակարդակների հավասարեցման նախադրյալների ստեղծումը: Կանայք մասնագիտական գործունեության ոչ ավանդական ոլորտներում՝ արդյունաբերության մեջ, տրանսպորտում և այլն:

Հասարակական-քաղաքական հարաբերությունների գենդերային չափումը:

Հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածքի փոփոխությունը: Պետական «կանացի» քաղաքականության հիմնական ուղղությունները, կանանց և տղամարդկանց իրավահավասարության օրենսդրական ապահովում, լայնորեն ներգրավում արտադրության մեջ, ներգրավում պետական գործերում, իրավահավասարության ապահովում կրթություն ստանալու գործում: Գենդերի պետական կառուցման դրական և բացասական հետևանքները սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում:

Հայկական սփյուռքի գենդերային մշակույթի յուրօրինակությունը

Սփյուռքահայերի գենդերային մշակույթի և գենդերային հարաբերությունների ձևավորման կախվածությունը իրենց ապրած երկրների մշակութային և սոցիալ-տնտեսական ազդեցությունից: Եվրոպայի, Ամերիկայի, արաբական երկրների հայկական գաղթօջախները: Գենդերային մշակույթի ձևավորման առանձնահատկությունները Սփյուռքում. ազգային ավանդույթներ և օտար մշակութային ազդեցություն: Սփյուռքահայ կնոջ դերը ազգային ինքնության, մշակութային ավանդույթների, լեզվի, կրթության պահպանման գործում: Կանանց բարեգործական կազմակերպություններ և միավորումներ, նրանց գործունեությունը սփյուռքահայ կյանքի սոցիալական, կրթական, դաստիարակչական և մշակութային ոլորտներում:

Հարցեր քննարկման համար

1. Ինչո՞վ է արտահայտվում մարքսիստական մոտեցումը կանանց հարցի նկատմամբ և ինչպե՞ս այն ազդեց գենդերի կառուցման վրա

սոցիալիստական հարաբերությունների հաստատման ժամանակաշրջանում:

2. Ինչպե՞ս էին խորհրդային սահմանադրություններն ազդում հասարակության գեներային կարգի ձևավորման վրա:
3. Առանձնացրեք պետական գեներային քաղաքականության դրական և բացասական հետևանքները ինդուստրացման և կոլեկտիվացման ժամանակաշրջանում:
4. Ինչպիսի՞ գեներային հետևանքներ ունեցավ «կուլտուրական հեղափոխության» քաղաքականությունը:
5. Ամբողջատիրական վարչակարգի հաստատումը ինչպե՞ս ազդեց հասարակության գեներային հարաբերությունների վրա: Որո՞նք են ստալինյան բռնադատումների գեներային հետևանքները:
6. Ինչպիսի՞ն է ազգային ավանդույթների նշանակությունը սփյուռաքահայության գեներային հարաբերությունների ձևավորման մեջ:

ԹԵՄԱ XIV. Հայ հասարակության գեներային կարգի փոփոխությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին

Պետական քաղաքականության կառուցումը գեներային գործոնի հաշվառմամբ. կանանց մասնագիտական և մտավոր ռեսուրսների և գործունեության բոլոր ոլորտներում կանանց լայն ներգրավման վրա հենվելը: Կանայք և պատերազմը. ռազմաճակատ և թիկունք:

Արտադրական և հասարակական-քաղաքական ոլորտներում կանանց մասնակցության ընդլայնումը պատերազմական ժամանակի պայմաններում: Կանանց դերը դպրոցական և բարձրագույն կրթության համակարգի պահպանման գործում պատերազմի տարիներին:

Հանրապետության գիտական ներուժի ընդլայնումը և կանանց մասնակցությունը գիտական հաստատությունների ստեղծմանն ու գործունեությանը:

Կանանց գործունեությունը մշակույթի ոլորտում՝ գրականություն, արվեստ:

Կանանց նոր փորձեր քաղաքի և գյուղի կառավարման մարմիններում: Կանայք ճակատայիններին, վիրավորներին և նվաճողներից ազատագրված շրջանների բնակիչներին շեֆական օգնության կազմակերպիչներ. հայրենասիրական արշավների, միջոցների հավաքման, հանրապետությունում և ռազմաճակատում ճակատայինների հետ հանդիպումների կազմակերպում:

Հայ կանանց մասնակցությունը մարտական գործողություններին Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում՝ զինծառայողներ, բուժաշխատողներ և այլն:

Հարցեր կրկնության համար

1. Պատերազմն ինչպե՞ս ազդեց հասարակական կյանքի տարբեր ոլորտներում կանանց ակտիվության ընկալման վրա:
2. Պատերազմին կանանց մասնակցությունը ինչպե՞ս ազդեց կանանց նկատմամբ պետական քաղաքականության վրա:
3. Գեներալային հարաբերությունների ոլորտում ի՞նչ փոփոխությունների հանգեցրեց Երկրորդ համաշխարհային պատերազմը:

Բանավեճի թեմա. «Տղամարդիկ, կանայք և պատերազմը»:

ԹԵՄԱ XV. Պետական գեներալային քաղաքականությունը ԽՍՀՄ-ում և ՀԽՍՀ-ում հետպատերազմյան ժամանակաշրջանում (1945-1991)

Գեներալային հարաբերությունների փոփոխությունները հասարակության մեջ՝ պատերազմի տարիներին կանանց ակտիվության ու մասնակցության բարձրացման հետևանքով:

Նոր մոտեցումներ հասարակության ժողովրդագրական խնդիրների նկատմամբ և կանայք: Հայրիշխանական քաղաքականությունը կանանց նկատմամբ. արտոնությունների քաղաքականություն մասնագիտական զբաղվածության հետ մայրության գույակցման համար:

Բարձրագույն կրթությամբ քաղաքացիների մակարդակով Հայաստանի գրավումը առաջին տեղերից մեկը ԽՍՀՄ-ում և կանանց բաժինը՝ որպես տվյալ գործընթացի որոշիչ գործոն: Կանանց ներկայացվածության ընդլայնում տնտեսության ոլորտում: Տեխնիկական մտավորականության զենդերային կազմը՝ որպես Հայաստանի արդյունաբերական պետության վերափոխման գործընթացի դրսևորում: Կանայք գիտության մեջ և գիտական հիմնարկներում, կրթության և առողջապահության համակարգում: Կանանց ներկայացվածությունը ստեղծագործական միություններում, գրականության մեջ ու արվեստում և նրանց ազդեցությունը հայ հասարակության մշակույթի ձևավորման վրա: XX դարի կեսի հայ կնոջ կերպարը:

Կանանց մասնակցությունը հասարակական կյանքին կուսակցական, արհմիութենական, կոմերիտական և այլ կազմակերպություններում: Կանանց հայկական խորհուրդը և նրա դերը երկրի հասարակական կյանքում: Քվոտաների համակարգի կիրառումը որոշումների ընդունման տարբեր մակարդակներում կանանց ներկայացվածության ընդլայնման համար: Կանայք կուսակցական և խորհրդային մարմիններում: Հայ կնոջ նոր կերպարը և զենդերային հարաբերությունները քաղաքական և հասարակական կյանքում:

Հայկական ԽՍՀ 1950-80-ական թթ. զենդերային համակարգը և զենդերային հարաբերությունները. ազգային ավանդույթները և սոցիալիստական գաղափարախոսության ազդեցությունը, իրական նվաճումները և հնարավորությունների իրականացման սահմանափակ բնույթը հասարակական ոլորտում կանանց ինքնահաստատման համար:

Կանանց համար արտոնությունների ընդլայնման քաղաքականությունը, արձակուրդի երկարացում երեխայի խնամքի համար՝ որպես խորհրդային տնտեսության ճգնաժամային զարգացման հետևանք: Դրա ազդեցությունը կանանց հասարակական սուբյեկտայնության վրա:

Սոցիալ-տնտեսական քաղաքականության ազդեցությունը ընտանիքի կառուցվածքի և ընտանեկան հարաբերությունների փոփոխման վրա. միասերունդ ընտանիք և «աշխատող մայր» զենդերային պայմանագիր հայկական սովորույթների և ավանդույթների ֆոնի վրա:

1946 թվականի հայրենադարձությունը և հայրենադարձների ու տեղի հայերի գենդերային դիսփլեյների հակամարտությունը: Հայրենադարձների գենդերային ավանդույթները և ստերեոտիպերը և դրանց բեկումը հայկական նոր իրականության մեջ: Այլ երկրների մշակութային արժեքների ներմուծումը հայկական իրականության մեջ:

Հայկական սփյուռք. կանանց կազմակերպություններ, Հայաստանի հետ մշակութային կապեր: Հայաստանի հետ սփյուռքի համագործակցության ընդլայնում և տարբեր հայկական մշակույթների փոխներգործություն:

Հարցեր կրկնության և քննարկման համար

1. Ինչպիսի՞ փոփոխություններ տեղի ունեցան հայ հասարակության գենդերային համակարգում հետպատերազմյան շրջանում:
2. Որո՞նք են պետական գենդերային քաղաքականության հիմնական ուղղությունները հետպատերազմյան շրջանում:
3. Մահմանեք հետպատերազմյան շրջանում մշակույթի զարգացման գենդերային պարամետրերը (կրթություն, գիտություն, գրականություն, արվեստ):
4. Վերլուծեք և համեմատեք Հայաստանի և սփյուռքի գենդերային հարաբերությունները: Ի՞նչն է ընդհանուր և ո՞րն է տարբերությունների պատճառը:

ԹԵՄԱ XVI. Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականությունը և գենդերային հարաբերությունները (1991-2004)

Գենդերային հարաբերությունները համազգային վերելքի և ազգային ինքնորոշման պայմաններում 1988-1991 թթ.՝ հավասարակշռություն և գենդերային հանդուրժողականություն: Արմատական-ֆեմինիստական ռազմավարությունների երևան գալը հասարակական-քաղաքական ոլորտում 1988-1990 թթ.:

Կանանց ակտիվությունը անկախ հայկական պետության կառուցման նոր պայմաններում:

Հանրապետության տնտեսության, ենթակառուցվածքի փլուզումը ԽՍՀՄ փլուզման հետևանքով և դրա ազդեցությունը տղամարդկանց և կանանց սոցիալական դրության վրա: Գործազրկությունը, միգրացիան և սոցիալական ու աշխատանքային նոր կարգավիճակները: Աղքատության ֆեմինացում: Կանանց պահանջվածության սահմանափակում հասարակական ոլորտում: Կանանց քաղաքացիական մասնակցության վերելքներ և անկումներ: Իշխանության կոշտ հայրիշխանական հարաբերությունների ձևավորում, «Շամիրամի» ֆեմոններ և կանանց դուրսմղումը քաղաքականությունից XX դարի 90-ական թվականներին:

Արդի Հայաստանի քաղաքական համակարգի գենդերային բնութագիրը: Կանանց շարժման ձևավորման նոր փուլի սկիզբը. կանանց նոր տեսակի հասարակական կազմակերպությունների ձևավորում:

Հարցեր կրկնության և քննարկման համար

1. Ինչո՞ւ կանայք դարձան ազգային ինքնորոշման հասնելու գործընթացի ակտիվ մասնակիցներ:
2. Ի՞նչ գործոններ են բնորոշում գենդերային իրադրությունը ժամանակակից Հայաստանում:
3. Ո՞րն է Հայաստանի քաղաքական համակարգի գենդերային պարամետրերի յուրահատկությունը:
4. Ո՞րն է կանանց հասարակական շարժման դերը և ինչպե՞ս է այն ազդում ժամանակակից Հայաստանի գենդերային մշակույթի ձևավորման վրա:

Թեմաներ ռեֆերատների և կուրսային աշխատանքների համար

«Հայոց պատմության գենդերային դիսկուրս» հատուկ դասընթացի ամփոփումը

Պատմության գենդերային մոտեցումը. «կանանց պատմությունից»՝ «գենդերային պատմության»:

Գենդերային տարբերակման և ստրատիֆիկացիայի առանձնահատկությունները Հայկական լեռնաշխարհի նախնադարյան բնակավայրերում:

Գենդերային ստերեոտիպերի արտացոլումը հին հայկական պետությունների կրոնում և հավատալիքներում:

Հայ ազգային ավանդույթները և դրանց ազդեցությունը հասարակության գենդերային ստերեոտիպերի ձևավորման վրա:

Միջնադարյան Հայաստանի հայկական պետությունների գենդերային մոդելները:

Գենդերային խնդիրները և պատկերացումները հայկական իրավական ակտերում և պատմական աղբյուրներում:

Կանանց սոցիալ-իրավական դրությունը միջնադարյան Հայաստանում:

Հայաստանի բաժանումների և նվաճումների գենդերային հետևանքները

Կանանց մասնակցությունը ազգային-ազատագրական շարժման մեջ:

XVIII դարի հայ ազատագրական մտքի գենդերային բովանդակությունը:

Շ. Շահամիրյանի սահմանադրության նախագծի գենդերային ասպեկտները:

Կանանց սոցիալ-իրավական դրությունը Արևմտյան Հայաստանում XIX դարում:

Հայաստանում կանանց շարժման առաջացման նախադրյալները և առանձնահատկությունները Հայաստանում:

Կանանց քաղաքացիական և քաղաքական ակտիվությունը X դարի սոցիալ-քաղաքական վերափոխումների համատեքստում:

Գենդերի կառուցման առանձնահատկությունները Հայաստանում խորհրդային ժամանակաշրջանում:

Կանայք և պատերազմը: Հայ կանայք Հայրենական մեծ պատերազմի տարիներին:

Կանանց նկատմամբ պետության քաղաքականությունը պատերազմի շրջանում:

XX դարակեսի հայ կնոջ կերպարը:

Գենդերային քաղաքականության առանձնահատկությունները ժամանակակից Հայաստանում:

Գենդերային դրության դիմամիկան ժամանակակից Հայաստանում:

Ժամանակակից հասարակության գենդերային մշակույթի ձևավորման հիմնախնդիրները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավագյան Ռ.Հ. Հայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. IX դ. – մ.թ. XIX դ.) հ.1-2: Եր., 2001, (Հատորում ներկայացված են իրավունքի հուշարձաններ՝ Ուրարտու-Արարատյան թագավորության շրջանի սեպագիր արձանագրությունները, Թադեոս Առաքյալի, Գրիգոր Լուսավորչի, Աշտիշատի ժողովի կանոնները, Շահապիվանի «Դատաստանագիրքը», Աղվանից արքա Վաչագանի «Կանոնական սահմանադրությունը», Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը», Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքերը, Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառացը», «Ռուսական կայսրության Հայ-Գրիգորյան Լուսավորչական քրիստոնյաների հոգևոր ուժերի կառավարման մասին» կանոնադրությունը (1836 թ. Ռուսահայոց «Պոլոժենիեն») և 1863թ. «Հայոց ազգային սահմանադրությունը»):
2. Բազեյան Կ. Գենդերի էթնոմշակութային առումները/Գենդերային հետազոտություններ, 2002, N9:
3. Գրիգորյան Գ. Հայկական իրավաբանական որոշ հուշարձանների գենդերային փորձաքննությունը/Գենդերային հետազոտություններ, 2005, N 21:
4. Հայ ժողովրդի պատմություն, հ. 1-8: Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատարակություն:
5. Հացունի Վ. Հայտնի պատմության առջև: Վենետիկ, Ս.Ղազար, 1936:
6. Հարությունյան Ա., Կանանց շարժման սկզբնավորումը Հայաստանում, Համալսարանական կրթությամբ կանայք, 1999, N12: Հայ կանանց շարժումը XIX դարում և XX դարի սկզբին/Գենդերային հետազոտություններ: Երևան, 2001, N2:
7. Սահակյան Ա. Կինը հայոց դիցաբանական, առասպելական մտածողության համակարգում/Գենդերային հետազոտություններ: Երևան, 2001, N3:
8. Զաքարյան Լ. Գենդերային հիմնախնդիրները XIX դարի երկրորդ կեսի և XX դարակեսի հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ/Գենդերային հետազոտություններ: Երևան, 2001, N4:
9. Նիկողոսյան Ա. Պատմության գենդերային դիսկուրսը/Գենդերային հետազոտություններ, 2003, N 15:
10. Ֆեմինիզմի տեսություն և պատմություն. Խմբագրությամբ Ի.Ա.Տերերկինայի: Խարկովի Գենդերային հետազոտությունների կենտրոն, Ֆ-Պրես, 1996 (հայերեն)- Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գենդերային հետազոտությունների կենտրոն, Եր. 1999):

11. Айвазова С. Гендерное равенство в контексте прав человека. М., 2001.
12. Алексеев В., Перишц А. История первобытного общества. М., 1999.
13. Бок Г. История, история женщин, история полов, Хрестоматия к курсу “Основы гендерных исследований”, М., 2001.
14. Вардиман Е. Женщина в Древнем мире. М., “Наука”, 1990.
15. Гендерная реконструкция политических систем. Ред.-сост. Н.М.Степанова и Е.В.Кочкина. СПб.: Алетейя, 2004.
16. Женщины в развитии: гендерные проблемы современного общества (по результатам социологического опроса)/Центр гендерных исследований Ассоциации женщин с университетским образованием. Ереван, 1999.
17. Историческая наука в XX веке. Историография нового и новейшего времени стран Европы и Америки. Под ред. И.П.Дементьева, А.И. Патрушева. М.: Простор, 2002.
18. Келли Дж. Женщины, история и теория, Хрестоматия к курсу “Основы гендерных исследований”, М.: МЦГИ – МВШСЭН – МФФ, 2001.
19. Концептуальные основы государственной политики в области гендерного образования: принципы и стратегии / Ассоциация женщин с университетским образованием. Центр гендерных исследований. Ереван, Асогик. 2004.
20. Женщины. История. Общество, Сборник научных статей под общей редакцией В.И.Успенской. Вып.2. Тверская область, Книжно-журнальное издательство, 2002.
21. Пушкарева Н. Гендерный подход в исторических исследованиях. Вопросы истории. 1998. N 6; Гендерные исследования и исторические науки, Гендерные исследования, Харьковский центр гендерных исследований, 1999, N3; Гендерная проблематика в исторических исследованиях. ч.1: Учебное пособие. Под ред. И.А.Жеребкиной. Харьков, ХЦГИ, 2001; Проблема институционализации гендерного подхода в системе исторических наук и исторического образования. Женщины. История. Общество, Сборник научных статей под общей редакцией В.И.Успенской. Вып.2.-ОГУП Тверская обл. Книжно-журнальное издательство, 2002. Պոլշարյոյս Ն., Գենդերային հետազոտություններ. ծնունդ, կայացումը, մերողները և հեռանկարները սլավոնական գիտությունների համակարգում: Գենդերային հետազոտություններ, Երևան, 2001, N1:
22. Репина Л.П. Женщины и мужчины в истории: новая картина европейского прошлого. М., 2001; История женщин и гендерные исследования: от социальной к социокультурной истории. В кн. “Новая историческая наука и социальная история”, М., 1998.
23. Стайтс Р. Женское освободительное движение в России: феминизм, нигилизм, большевизм, 1860-1930. (пер с англ.) М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2004.
24. Шартье Р. История сегодня: сомнения, вызовы, предложения. М., 1995.
25. Хрестоматия к курсу “Основы гендерных исследований”, М.: МЦГИ – МВШСЭН – МФФ, 2001.

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՆԱԽԱԳԻԾ

«ԳԵՆԴԵՐԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ»

**ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՅԻ
ՆԱԽԱԳԻԾԸ ՄՇԱԿՈՂ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ**

Ջենմա Հասրաթյան, Երևանի «Ինտերլինգվա» համալսարանի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի գենդերային հետազոտությունների կենտրոնի ղեկավար, խմբի ղեկավար

Սոֆյա Բաբայան, Վանաձորի Գ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու

Վիգեն Քոչարյան, Երևանի պետական համալսարանի ավագ դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու

Մելինե Հարությունյան, Գյումրիի Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ամբիոնի դասախոս

Լիլիթ Սիմոնյան, Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական համալսարանի դասախոս, ՀՀ Սահմանադրական դատարանի անդամի օգնական

**«ԳԵՆԴԵՐԸ ԵՎ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ»
ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՑ**

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՏԵՍԱԿԱՆ
ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ
ՊԱՀԱՆՁՆԵՐ**

Հայաստանի ինտեգրացումը գլոբալացման գործընթացներում բերում է նոր հրամայականներ, որոնց թվում հատուկ տեղ են գրավում ժողովրդավարական մշակույթի ձևավորումը, մարդու իրավունքների պաշտպանությունը, օրենքի առջև բոլորի հավասարությունը և զուգակշռված ժողովրդավարության հաստատումը, որի անհրաժեշտ պարամետրերն են՝

- հավասար իրավունքների և հնարավորությունների առկայությունը՝ հասարակական կյանքին և քաղաքականությանը, անկախ սեռից, բոլոր քաղաքացիների մասնակցության համար.
- տղամարդկանց և կանանց զուգակշռված ներկայացվածությունը ընտրություններում և նշանակովի պաշտոններում.
- կանանց զուգակշռված մասնակցությունը օրենսդրական գործընթացին:

Ձևական իրավաբանական խոչընդոտների վերացումը, այսինքն՝ ընտրական իրավունքի տրամադրումը, կրթության, մասնագիտական կարիերայի հավասար մատչելիությունը արդյունք չտվեցին: Գործնականում զոյություն ունի ՀՀ Սահմանադրության դրույթներին և Հայաստանի ստանձնած միջազգային-իրավական պարտավորություններին համարժեք իրավահավասարության հասնելու թաքնված խոչընդոտների մի ամբողջ համալիր:

Վերջին տասնամյակների ընթացքում միջազգային կազմակերպությունները նշանակալի ջանքեր գործադրեցին գենդերային անհավասարության հաղթահարման համար. ընդունվել են միջազգային-իրավական փաստաթղթեր, որոնք բովանդակում են ոչ միայն իրավահավասարության և խտրականության հաղթահարման սկզբունքներ, այլև պե-

տությունների՝ միջազգային հանրության կողմից վերահսկվող կոնկրետ պարտավորությունները:

«Գենդերը և մարդու իրավունքները» հատուկ դասընթացը նպատակ ունի ուսանող-իրավաբաններին ծանոթացնել տարբեր մակարդակների նորմատիվ-իրավական ակտերին, գործողությունների ալգորիթմներին և դրանց իրականացման կոնկրետ տեխնոլոգիաներին՝ հասնելու համար գենդերային իրավահավասարության:

Գ-ասընթացի առանցքային գաղափարն այն է, որ տղամարդկանց և կանանց հավասար իրավունքներն ու հնարավորությունները երաշխավորող ազգային և միջազգային օրենքներին հետևելը քաղաքացիական հասարակության ձևավորման անհրաժեշտ նախապայման է, կանանց իրավունքների իրականացումը՝ իրավական և սոցիալական պետության կայացման անհրաժեշտ նախադրյալ, որն ստեղծում է հավասար հնարավորություններ բոլոր քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրականացման համար:

Հատուկ դասընթացի նպատակները

- Նպաստել մասնագետների գենդերային իրազեկության և գենդերային զգայնության բարձրացմանը՝ հասարակության հմտությունների ձեռքբերման, ըստ սեռական հատկանիշի խտրականության և խտրարարության բացահայտման և կանխարգելման համար,
- Ձևավորել գենդերային գործոնը օրինաստեղծ և իրավագործադրման պրակտիկայում հաշվի առնելու հմտություններ,
- Նպաստել մասնագետների մեջ գենդերային մտածողության մշակույթի ձևավորմանը և իրավագիտակցության բարձրացմանը:

Հատուկ դասընթացի խնդիրները

- Ուսանողներին ծանոթացնել գենդերային տեսության հիմունքներին,
- Գիտելիքներ հաղորդել մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմների մասին՝ հիմնված գենդերային իրավահավասարության սկզբունքների վրա,

- Ծանոթացնել կանանց իրավունքների պաշտպանության հիմնական միջազգային փաստաթղթերին:
- Ուսուցանել նորմատիվ-իրավական ակտերի գենդերային վերլուծության մեթոդներ:
- Ուսուցանել իրավակիրարկման պրակտիկայի գենդերային մոնիտորինգի մեխանիզմները՝ ըստ միջազգային չափորոշիչների:

Թեմա 1. Գենդերային տեսության հիմնական հասկացությունները

Գենդերը՝ որպես սոցիալական և մշակութաբանական հասկացություն: «Սեռ» և «գենդեր» հասկացությունների տարբերությունները:

Գենդերային տեսության հիմնական հասկացությունները, մոտեցումները և ուղղությունները:

Գենդերը՝ որպես սոցիալական վարքի ռազմավարություն: Գենդերային նորմատիվների կախվածությունը մշակույթից, ազգային ավանդույթներից և սովորույթներից, էթնոհոգեբանությունից, կրոնից, աշխարհաքաղաքականությունից:

Գենդերային նորմատիվների պատմական փոփոխականությունը և տեղային պայմանավորվածությունը:

Գենդերային սոցիալականացման հիմնական գործակալները և հաստատությունները:

Գենդերային համակարգ հասկացությունը:

Պետության դերը գենդերային համակարգի և տղամարդկանց ու կանանց սոցիալ-իրավական կարգավիճակների ձևավորման գործում: Սոցիալական քաղաքականության ազդեցությունը գենդերային համակարգի վրա:

Սոցիալ-տնտեսական և քաղաքական գործընթացների գենդերային վերլուծության մեթոդները և պարամետրերը.

- աշխատանքի բաժանում ըստ գենդերային հատկանիշի, ուղղաձիգ

- և հորիզոնական սեգրեգացիա (խտրարարության),
- ռեսուրսների մատչելիություն և ռեսուրսների վերահսկողություն,
- գենդերային հավասարություն՝ de jure և de facto,
- որոշումների ընդունման ոլորտի մատչելիություն,
- մշակութային խորհրդանիշներ և կարծրատիպեր,
- օրենսդրության և բյուջետային քաղաքականության գենդերային փորձաքննություն:

Գենդերային հիմնախնդիրները ընտանեկան, տնտեսական և քաղաքական ոլորտներում. աղբյուրները, մասշտաբները, ցուցիչները, միտումները (կրկնակի բեռնվածություն ընտանիքում, ընտանեկան պարտականությունների անհավասարաչափ բաշխում, աշխատանքի արտադրողական և վերարտադրողական տեսակների հարաբերակցություն, ունեցվածքի բաժանում, հողօգտագործում, հրապարակային ոլորտի մատչելիության սահմանափակություն, կնոջ լիզերության անընկալունակություն, կնոջ բնական նախասահմանության հայեցակարգի գերակայություն և այլն):

Էզալիտար գենդերային մշակույթի ձևավորում՝ որպես իրավական հասարակության զարգացման անհրաժեշտ գործոն:

Թեմա 2. Մարդու իրավունքների ժամանակակից հայեցակարգերը

Մարդու իրավունքների հայեցակարգի ծագման պատմական և գաղափարախոսական նախադրյալները:

«Իրավունքների սերունդ» հասկացությունը, մարդու իրավունքների դասակարգման սկզբունքները (բնական, քաղաքական, քաղաքացիական, սոցիալ-մշակութային իրավունքներ):

Առաջին և երկրորդ սերնդի իրավունքների ամրագրման պատմական նախադրյալները: Կանանց իրավունքների ինստիտուտի ծագումը և զարգացումը:

Կանանց իրավունքների պաշտպանության շարժման պատմական

և գաղափարախոսական նախադրյալները: Ֆեմինիզմը՝ որպես կանանց շարժման գաղափարախոսություն. ֆեմինիզմի առաջին և երկրորդ ալիքները: Կանանց շարժման՝ որպես ազգային շարժման բաղկացուցիչ մասի առանձնահատկությունները:

Մարդու իրավունքների ժամանակակից հայեցակարգերը. հավասարության հայեցակարգ, որ հաստատում է իրավունքների զուտ անհատական բնույթը, և տարբերության հայեցակարգ, որ խմբերի համերաշխության վրա հիմնված/հենված կոլեկտիվ իրավունքների հիմքը դրեց:

«Կոլեկտիվ իրավունքները»՝ որպես երրորդ սերնդի իրավունքներ: Երրորդ սերնդի իրավունքների ծագման պատմական և գաղափարախոսական նախադրյալները:

Կանայք՝ որպես կոլեկտիվ իրավունքների սուբյեկտ:

Կոլեկտիվ իրավունքների հայեցակարգը՝ որպես տղամարդկանց և կանանց կարգավիճակների հավասարեցման փոխարինիչ՝ երաշխավորված պետության կողմից սոցիալական քաղաքականության միջոցով:

Թեմա 3. Գենդերային իրավահավասարությունը մարդու իրավունքների համակարգում

Գենդերային իրավահավասարության գաղափարների ծագման նախադրյալները

«Սեռերի հավասարություն (եզալիտարություն)» տերմինի փոխակերպման էվոլյուցիան և փուլերը:

- Մարդկանց միջև բացարձակ հավասարության գաղափարը՝ որպես սոցիալական արդարության բաղադրիչ:
- Ժողովրդավարական հասարակության բոլոր քաղաքացիների իրավունքների հավասարություն՝ առանց հատուկ պահանջմունքների ունեցող խմբերի իրավունքների հաշվառման:
- Հնարավորությունների հավասարություն հավասար իրավունքների

իրագործման համար՝ դրական խտրականության և տղամարդկանց և կանանց համար հավասար մեկնարկային մակարդակի ապահովման հատուկ քաղաքականության միջոցով:

– Արդյունքների հավասարություն:

Համալիր մոտեցում գենդերային իրավահավասարության խնդիրների նկատմամբ, Gender Mainstreaming, Եվրոպայի խորհուրդ, 1998: Հայեցակարգային շրջանակներ, մեթոդաբանություն, դրական փորձ:

Գենդերային չափման ներառումը քաղաքականության և օրենսդրության մեջ, սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում: Գենդերային հավասարության նորմերը և նշանակությունը XX դարի վերջին և XXI դարում:

Տարբերությունների հաշվառմամբ հավասարության քաղաքականությունը՝ որպես տարբեր ոլորտներում կանանց հատուկ իրավունքների պետական երաշխիքների ապահովման և կառուցվածքային խոչընդոտների վերացման ուղղությամբ պոզիտիվ գործողությունների քաղաքականություն:

Գենդերային իրավահավասարության գաղափարի ձևավորումը և զարգացումը կանանց միջազգային շարժման կողմից:

Գենդերային հավասարության հասնելու, գործունեության բոլոր ոլորտներում կանանց ներգրավման համար հասարակության և նրա ինստիտուտների արմատական վերակառուցման հիմնախնդիրները կանանց դրությանն առնչվող համաշխարհային համաժողովների փաստաթղթերում (Մեխիկո, 1975 թ., Կոպենհագեն, 1980թ., Նայրոբի 1985 թ., Պեկին 1995 թ.): Պեկինյան հռչակագիր:

Հայաստանը կանանց վիճակին նվիրված Պեկինի IV համաշխարհային համաժողովի համատեքստում:

Թեմա 4. Գենդերային իրավահավասարության գաղափարի զարգացումը Հայաստանի իրավաքաղաքական մտքի պատմության մեջ

Գենդերային իրավահավասարության գաղափարները և կանանց սոցիալական կարգավիճակը կանոնական իրավունքում:

Գենդերային իրավահավասարության խնդիրները Շահապիվանի ժողովի (443 թ.) որոշումներում:

Ընտանեկան, գույքային հարաբերությունների կանոնակարգման խնդիրները 11-րդ դարի իրավական նորմերում (Դավիթ Ալավկատրոյի):

Գենդերային իրավահավասարության գաղափարները Մխիթար Գոշի «Դատաստանագրքում»:

Գենդերային իրավահավասարության գաղափարները թոնդրակեցիների ուսմունքում:

Գենդերային իրավահավասարության խնդիրները Շ.Շահամիրյանի աշխատություններում:

Իրավահավասարության հարցերը Արևմտյան Հայաստանի «Ազգային սահմանադրության» մեջ (1863 թ.):

Գենդերային իրավահավասարության գաղափարների զարգացումը XIX դարի հայ հասարակական գործիչների ուսմունքներում (Ստ. Նազարյանց, Գր. Արծրունի, Բա.Ֆ.Ֆի):

Գենդերային իրավահավասարության գաղափարները Հայաստանի արդի գիտական մտքի մեջ:

Թեմա 5. Գենդերային իրավահավասարությունը՝ որպես զուգակշռված ժողովրդավարության և իրավական պետության կայացման գործոն

Քաղաքացիական հասարակության ինստիտուտները: Հասարակական կազմակերպություններ, կանանց շարժումը՝ որպես հասարակական շարժման մաս:

Իրավական պետություն հասկացությունը: Մարդու իրավունքների ապահովումը որպես օրինականության, սոցիալական արդարության, ազատության, իրավահավասարության, հումանիզմի և ժողովրդավարական այլ սկզբունքների հաստատման գործոն:

Ժողովրդավարության և մարդու իրավունքների հարաբերակցությունը:

Չուզակչոված ժողովրդավարության ժամանակակից հայեցակարգը (Վիեննա, 1994 թ.). կանանց և տղամարդկանց ներկայացվածությունը իշխանության կառույցներում ըստ 50:50 բանաձևի՝ որպես հասարակության կայուն զարգացման իրական նախադրյալ:

Գենդերային հավասարակշռությունը՝ որպես ռեսուրսների հավասարաչափ բաշխման, կառավարման և քաղաքական պաշտոններում ներկայացվածության անհրաժեշտ չափանիշ:

Գենդերային իրավահավասարությունը՝ որպես իրավական համակարգի անհրաժեշտ բաղադրիչ: Գենդերային հարաբերությունների համակարգի իրավական կարգավորում: Իրավական բարեփոխումների արդյունքները գենդերային հարաբերությունների՝ որպես իշխանություն և ռեսուրսներ ձևավորող և բաշխող հարաբերությունների համար:

«Գենդերային իրավահավասարության ամրապնդման ազգային ինստիտուտ» և «գործողությունների պլան» հասկացությունները: Կանանց շահերի ինտեգրացման ազգային մեխանիզմի մոդելը: Համաշխարհային փորձ:

Նոր իրավական մշակույթի ձևավորումը գենդերային գործոնի՝ որպես քաղաքացիական հասարակության հաստատման բնագավառում նպատակաուղղված քաղաքականության, հաշվառմամբ:

Իրավական նորմերի միասնականացման անհրաժեշտությունը գլոբալացման գործընթացների ֆոնի վրա: Մարդու իրավունքների և կանանց իրավունքների խնդրի փոխադրումը ազգային մակարդակից միջազգային իրավունքի մակարդակ:

Թեմա 6. Գենդերային իրավահավասարության սկզբունքների նորմատիվ-իրավական ամրագրումը ազգային օրենսդրության մեջ

Օրենսդրության և քաղաքականության գենդերային փորձաքննության էությունը և մեթոդները:

Հայաստանի օրենսդրության գենդերային փորձաքննություն.

– Գենդերային իրավահավասարության խնդիրները ՀՀ Սահմանադրության, ՀՀ Ընտրական, Քաղաքացիական, Քաղաքացիական դատավարության, Ընտանեկան, Աշխատանքային, Քրեական, Քրեական դատավարության օրենսգրքերում:

Օրենսդրական ակտերի և քաղաքականության գենդերային փորձաքննության ինստիտուցիոնալ-կառուցվածքային ապահովում:

Պետական, ազգային և նպատակային ծրագրերի գենդերային փորձաքննություն, «ՀՀ-ում կանանց կարգավիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիր, 2004-2010 թթ.»՝ ընդունված ՀՀ կառավարության որոշմամբ (08.04.04 թ.), կառավարության համապետական և տարածքային/մարզային ծրագրեր, տեղական ինքնակառավարման մարմինների ծրագրեր:

Թեմա 7. Գենդերային իրավահավասարության սկզբունքների ամրագրումը միջազգային մակարդակում

Գենդերային իրավահավասարության հայեցակարգը ՄԱԿ-ի համակարգում.

Ունիվերսալ միջազգային փաստաթղթեր,

ՄԱԿ-ի Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Ամենշաբաթյա հանգստի մասին կոնվենցիա (ԺՆՆ, 1921 թ.),

ԱՄԿ-ի Նվազագույն աշխատավարձի հաշվարկման գործընթացի մասին կոնվենցիա (ԺՆՆ, 1928 թ.)

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1948 թ.)

ՄԱԿ-ի Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիա (1953 թ.)

ՄԱԿ-ի Ամուսնացած կնոջ քաղաքացիության մասին կոնվենցիա (1957 թ.)

ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (կամընտիր արձանագրությամբ, 1966 թ.)

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (1966 թ.)

ԱՄԿ-ի Վճարովի արձակուրդի մասին վերանայված կոնվենցիա (Ժնև, 1970 թ.)

ԱՄԿ-ի Նվազագույն տարիքի մասին կոնվենցիա (Ժնև, 1973 թ.)

ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (երկրորդ կամընտիր արձանագրությամբ, 1979 թ.)

ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա (1989 թ.)

Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման մասին հռչակագիր (1993 թ.)

Գենդերային իրավահավասարության եվրոպական հայեցակարգ. գենդերային հավասարակշռության ապահովումը կենսագործունեության բոլոր ոլորտներում՝ որպես Եվրոպայի խորհրդի՝ տղամարդկանց և կանանց միջև իրավահավասարության հաստատմանն ուղղված գործունեության հիմնական նպատակ:

Տարածաշրջանային փաստաթղթեր

Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (1950 թ.)

Մշակույթի մասին եվրոպական կոնվենցիա (Փարիզ, 1954 թ.)

Տղամարդկանց և կանանց իրավահավասարության մասին Եվրոպայի խորհրդի հռչակագիր (1988 թ.)

Նոր Եվրոպայի համար փարիզյան խարտիա (ԵԱՀԽ, 1990 թ.)

Կանանց իրավունքների մասին Վենետիկի հռչակագիր և գործողությունների ծրագիր (1993 թ.)

Ձուգակշռված ժողովրդավարության հայեցակարգ՝ մշակված Եվրոպայի խորհրդի կառույցի Հավասարության կոմիտեի և Մարդու իրավունքների դեպարտամենտի կողմից (Վիեննա, 1994 թ.)

Խորհրդարանական վեհաժողովի հանձնարարականները կանանց իրավունքների ոլորտում շոշափելի առաջընթացի հասնելու մասին (1995 թ.)

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի «Ընտրություններին կանանց մասնակցության մասին» թիվ 1676 հանձնարարականը՝ ընդունված Խորհրդարանական վեհաժողովի 27-րդ նստաշրջանում (05.10.04 թ.)

Թեմա 8. Անձնական (քաղաքացիական) իրավունքների և ազատությունների գենդերային հայեցակետերը

Անձնական իրավունքների և ազատությունների ոլորտի միջազգային ստանդարտներ (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1948 թ.), Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (1950), ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (կամընտիր արձանագրությամբ, 1966 թ.), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա)

Անձնական իրավունքները և ազատությունները ՀՀ օրենսդրության մեջ (ՀՀ Սահմանադրություն, «Քաղաքացիության մասին» և «ՀՀ-ում արտասահմանյան քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներ, Քրեական օրենսգիրք, Ընտանեկան օրենսգիրք, ՁԼՄ-ների մասին օրենսդրություն և այլն):

ՀՀ-ում իրավակիրառական պրակտիկան անձնական իրավունքների և ազատությունների ոլորտում:

ՀՀ քաղաքացիության ձեռքբերման գենդերային հայեցակետերը:

Ամուսնացած կնոջ քաղաքացիության խնդիրները:

Խտրականություն՝ ըստ սեռի հատկանիշի: Ուղղակի և չեզոք խտրականություն:

Բռնություն կանանց նկատմամբ: Թրաֆիքինգ. գենդերային հայեցակետերը:

Խոսքի ազատությունը մամուլում և հեռարձակման ոլորտում: Կանայք ՉԼՄ-ներում. գենդերային գրաքննություն, գենդերային էթիկա: Մեքսիզմը ՉԼՄ-ներում:

Անձնական իրավունքների և ազատությունների իրականացման երաշխիքները ՀՀ-ում:

Թեմա 9. Քաղաքական իրավունքների գենդերային հայեցակետերը

Քաղաքական իրավունքների ոլորտի միջազգային իրավական ստանդարտները

(Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1948 թ.), Կանանց քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (1953 թ.), ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (կամընտիր արձանագրությամբ) 1966 թ.)

Քաղաքական իրավունքների ամրագրումը ՀՀ օրենսդրության մեջ. ՀՀ Սահմանադրություն, Ընտրական օրենսգիրք, «Քաղաքական կուսակցությունների մասին» ՀՀ օրենք:

Քաղաքական իրավունքներից օգտվելու իրական հնարավորությունները:

Կանանց քաղաքական մասնակցություն մոտիվացիա. հնարավորություններ:

Քվոտաները՝ որպես քաղաքական իրավունքների իրականացման մեջ գենդերային անհավասարակշռության կարգավորման հնարավոր մեխանիզմ:

Քվոտավորման տեսակները՝ «կոշտ քվոտա», «մեղմ քվոտա»:

Դրական խտրականությունը՝ որպես քաղաքական իրավունքների իրականացման երաշխիք:

Թեմա 10. Մարդու տնտեսական իրավունքների գենդերային հայեցակետերը

Տնտեսական իրավունքների ոլորտի միջազգային ստանդարտները (Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (1966 թ.), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և հանձնարարականներ):

Տնտեսական իրավունքները ազգային օրենսդրության մեջ. ՀՀ Սահմանադրություն, Քաղաքացիական օրենսգիրք, Աշխատանքային օրենսգիրք, ձեռնարկատիրական գործունեության մասին օրենսդրություն

Հայաստանի տնտեսական քաղաքականության գենդերային հայեցակետերը:

Կանանց զբաղվածությունը միջին և փոքր ձեռնարկատիրության ոլորտում. զբաղվածության գենդերային հարաբերակցությունը:

Կանանց խտրականությունը աշխատանքի շուկայում:

Կանանց կարիերային հնարավորությունները: «Ապակե առաստաղ» հասկացությունը:

Ուղղաձիգ և հորիզոնական սեգրեգացիա

Համարժեք աշխատանքի դիմաց արդարացի վարձատրության երաշխիքներ առանց սեռի հատկանիշով որևէ տարբերության:

Տնտեսական իրավունքների իրականացման խնդիրների լուծման հրատապությունը:

Թեմա 11. Մարդու սոցիալական իրավունքների գենդերային հայեցակետերը

Սոցիալական իրավունքների բնագավառի միջազգային ստանդարտները (Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (1966 թ.), Եվրոպական սոցիալական խարտիա (1961թ.), Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և հանձնարարականներ (ԱՄԿ N 117 կոնվենցիա, Մայրության մասին ԱՄԿ N 103 կոնվենցիա)):

Սոցիալական իրավունքները ՀՀ ազգային օրենսդրության մեջ

ՀՀ սոցիալական քաղաքականության գենդերային հայեցակետերը:

Բժշկական օգնության և առողջության պահպանման իրավունք: Վերարտադրողական առողջություն և կանանց վերարտադրողական իրավունքներ:

Ընտանիքի, մայրության և մանկության պաշտպանություն:

Դրական խտրականություն: Գենդերային դերերի փոխակերպումը ընտանիքում: Ընտանեկան հակամարտություններ:

Սոցիալական պաշտպանության իրավունք գենդերային մոտեցում:

Սոցիալական ապահովագրությունը՝ որպես քաղաքացիների հիմնական աջակցություն:

Հավասար վերաբերմունք կենսաթոշակային տարիքում:

Սոցիալական իրավունքների իրականացման ապահովման անհրաժեշտությունը:

Թեմա 12. Մարդու մշակութային իրավունքների գենդերային հայեցակետերը

Մշակույթի և կրթության բնագավառի միջազգային չափորոշիչները (Եվրոպական մշակութային կոնվենցիա (1954 թ.), Կոնվենցիա ընդդեմ խտրականության կրթության բնագավառում (1960 թ.), «Բարձրագույն կրթություն XXI դարի համար» համաշխարհային հռչակագիր (Փարիզ,

1998 թ.), կրթության իրավունքն ամրագրող միջազգային փաստաթղթեր, միջազգային պայմանագրեր կրթության բնագավառում համագործակցության և դիպլոմների փոխադարձ ճանաչման մասին, Եվրոպայի խորհրդի մարմինների դիրեկտիվները, Եվրոպայի խորհրդի հանձնարարականները հանրային և ոչ պետական կրթության մասին):

Բոլոնիայի գործընթացը և միասնական կրթական չափորոշիչների հիմնախնդիրները:

Մշակութային իրավունքները ՀՀ ազգային օրենսդրության մեջ:

ՀՀ-ում մշակութային իրավունքների իրականացման գեներալային հայեցակետերը:

Կանանց կրթության իրավունքը: Կանանց գիտական և կրթական ներուժի իրականացման հնարավորությունները:

Մշակութային իրավունքների իրականացման ապահովում:

Թեմա 13. Կանանց իրավունքների պաշտպանության մեխանիզմները

Կանանց իրավունքների պաշտպանության ներպետական համակարգը

- ՀՀ դատարաններ, մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) ինստիտուտ
- Հասարակական (ոչ պետական) իրավապաշտպան կազմակերպություններ

Կանանց իրավունքների պաշտպանության միջազգային համակարգը.

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կոմիտե

Եվրամիություն, Եվրոպայի խորհուրդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Կանոնադրությունների հիման վրա ստեղծված ինստիտուտներ. ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի կոմիտե (CSW), նրա գործունեության ոլորտ:

Համաձայնագրերի հիման վրա ստեղծված ինստիտուտներ. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե (CEDAW), ՄԱԿ-ի մարդու իրավունքների կոմիտե:

Իրավունքների պաշտպանության ընթացակարգերը. բողոքների ներկայացման, վերահսկման և զեկուցման ընթացակարգեր:

Մասնագետ իրավաբանը պետք է իմանա՝

- գենդերային տեսության հիմնական կատեգորիաները և հասկացությունները,
- գենդերային մշակույթի հիմնական կառուցատարրերը և բաղադրիչները,
- գենդերային անհավասարակշռության հիմնական դրսևորումները մարդու իրավունքների համակարգում,
- կանանց իրավունքների և իրավահավասարության նկատմամբ մոտեցումների առանձնահատկությունները մարդու իրավունքների ամրագրման պատմության մեջ,
- ՀՀ իրավաբանական համակարգը՝ ազգային օրենսդրությունը և կանանց իրավունքներն ամրագրող միջազգային վավերացված փաստաթղթերը,
- գենդերային իրավահավասարության գաղափարներն ամրագրող և կանանց իրավունքների իրականացման մեխանիզմներ ապահովող հիմնական ներպետական և միջազգային փաստաթղթերը,
- Մարդու և մասնավորապես կանանց իրավունքների պաշտպանության հիմնական ներպետական և միջազգային մեխանիզմները:

Մասնագետ իրավաբանը պետք է կարողանա՝

- կիրառել գենդերային վերլուծության մեթոդաբանությունը իրավակիրառական և իրավապաշտպան պրակտիկայում,
- կիրառել իրավակիրառական պրակտիկայի գենդերային մոնիտորինգի միջազգային չափորոշիչներին համապատասխան մեթոդաբանությունը

- բացահայտել գենդերային խտրականության և գենդերային անհավասարակշռության փաստերը ինչպես օրենսդրության մեջ, այնպես էլ իրավապաշտպան և իրավակիրառական պրակտիկայում,
- կիրառել ժամանակակից գենդերային տեսության և մշակույթի արժեքային չափանիշները իրավապաշտպանական, իրավակիրառական, կրթա-տեղեկատվական և լուսավորական գործունեություն իրականացնելիս:

«ԳԵՆԴԵՐԸ ԵՎ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ»

ՀԱՏՈՒԿ ԴԱՍԸՆԹԱՅԻ ԾՐԱԳԻՐ

Կրթության հիմնական հեռահար նպատակն այսօր ուսանողների նախապատրաստումն է ապագա գործունեության բազմաձևակության ժողովրդավարական, գենդերազգային և հանդուրժողական հասարակության մեջ: Ապագա իրավաբանները որպես մասնագետ պահանջված են գործունեության տարբեր ոլորտներում՝ իրավական և իրավապաշտպանական, կրթական և լուսավորական, ինչպես նաև քաղաքական և հասարակական: Գենդերային տեսության, գենդերի իրավական ասպեկտների իմացությունը անհրաժեշտ է գենդերային անհավասարության հաղթահարման համար: Գենդերային ուսուցումը օգնում է ինքնաճանաչմանը, սեփական իրավունքների և ազատությունների, քաղաքական և քաղաքացիական ակտիվության դրսևորման հնարավորությունների գիտակցմանը, ապահովում գիտելիքների անհրաժեշտ հիմք, որ նպաստում է հասարակության գենդերային աստիճանակարգության հաղթահարմանը և երկու սեռերի շահերի ավելի անկողմնակալ ընկալմանը: Ակտիվ քաղաքացիների ձևավորման գործում կարևոր դեր է խաղում սեփական իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացվածության գործոնը: «Գենդերը և մարդու իրավունքները» հատուկ դասընթացը նպատակաուղղված է ոչ միայն գիտելիքներ հաղորդելուն և ուսանողների ներգրավմանը գենդերային ուսումնասիրությունների ոլորտում, այլև իրավագիտակցության բարձրացմանը: Հատուկ դասընթացը նախատեսված է այն կուրսերի ուսանողների համար, որոնք արդեն ստացել են իրավունքի, իրավագիտության, պատմության, փիլիսոփայության, հոգեբանության և մշակութաբանության ոլորտների գիտելիքներ:

Հատուկ դասընթացի նպատակները

- Ներկայացնել արդի գենդերային հարաբերությունների դինամիկան և ժամանակակից հասարակությունների զարգացման միտումների գենդերային հայեցակետերը,

- Նպաստել մասնագետների գենդերային իրազեկության և գենդերային զգայնության բարձրացմանը՝ հասարակության հմտությունների ձեռք բերման, ըստ սեռական հատկանիշի խտրականության և խտրարարության բացահայտման և կանխարգելման կարողությունների ձևավորման համար,
- Ձևավորել գենդերային գործունը օրինաստեղծ և իրավակիրառական պրակտիկայում հաշվի առնելու հմտություններ,
- Նպաստել մասնագետների մեջ գենդերային մտածողության ձևավորմանը և իրավագիտակցության բարձրացմանը:

Հատուկ դասընթացի խնդիրները

- Ուսանողներին ծանոթացնել գենդերային տեսության հիմունքներին,
- Գիտելիքներ հաղորդել մարդու իրավունքների պաշտպանության գենդերային իրավահավասարության սկզբունքների վրա հիմնված ներպետական և միջազգային մեխանիզմների մասին,
- Ուսանողներին ծանոթացնել կանանց իրավունքների պաշտպանության հիմնական միջազգային փաստաթղթերին:
- Ուսուցանել նորմատիվ-իրավական ակտերի գենդերային վերլուծության մեթոդներ:

Թեմա 1. Գենդերային տեսության հիմնական հասկացությունները

«Մեռ» և «գենդեր» հասկացությունների տարբերությունները: Գենդերը որպես սոցիալական և մշակութաբանական հասկացություն, որը սահմանում է առնականության և կանացիության չափանիշները կոնկրետ հասարակության մեջ: Գենդերը՝ որպես սոցիալական վարքի ռազմավարություն: Գենդերային չափանիշների կախվածությունը մշակույ-

թից, ազգային ավանդույթներից և սովորույթներից, էթնոհոգեբանությունից, կրոնից, աշխարհաքաղաքականությունից: Հասարակության կազմակերպման գենդերային մոդելները: Հայրիշխանությունը՝ որպես արդիական գերակա մոդել: Գենդերային անհավասարակշռությունը՝ որպես հայրիշխանական աստիճանակարգության մոդելի հետևանք:

Գենդերային տեսության հիմնական հասկացությունները, մոտեցումները և ուղղությունները. գենդերային դերեր, նույնականության, դիսփլեյ, ստերեոտիպեր, սոցիալականացում, համակարգ, պայմանագիր, ռազմավարություններ: Գենդերային նորմատիվների պատմական փոփոխականություն ու տեղային պայմանավորվածություն:

Գենդերային սոցիալականացման հիմնական գործակալները և ինստիտուտները: Տղամարդկանց և կանանց սոցիալականացման առանձնահատկությունները: Սոցիալական վերահսկողության եղանակները: Տղամարդկանց և կանանց գենդերային դերերի խիստ նախասահմանվածության հետևանքները:

Պետության դերը գենդերային համակարգի և տղամարդկանց ու կանանց սոցիալ-իրավական կարգավիճակների ձևավորման գործում: Սոցիալական քաղաքականության ազդեցությունը գենդերային համակարգի վրա:

Սոցիալ-տնտեսական և քաղաքական գործընթացների գենդերային վերլուծության մեթոդները և պարամետրերը:

Գենդերային հիմնախնդիրները ընտանեկան, տնտեսական և քաղաքական ոլորտներում. աղբյուրները, մասշտաբները, ցուցիչները, միտումները (կրկնակի բեռնվածություն ընտանիքի ոլորտում, ընտանեկան պարտականությունների անհավասարաչափ բաշխում, աշխատանքի արտադրողական և վերարտադրողական տեսակների հարաբերակցություն, ունեցվածքի բաժանում, հողօգտագործում, հրապարակային ոլորտի մատչելիության սահմանափակություն, կնոջ լիդերության անընկալունակություն, կնոջ բնական դերակատարության հայեցակարգի գերակայություն և այլն):

Էգալիտար գենդերային մշակույթի ձևավորումը՝ որպես իրավական հասարակության զարգացման անհրաժեշտ գործոն:

Հարցեր ինքնաստուգման և կրկնության համար

1. Ո՞րն է «սեռ» և «գենդեր» հասկացությունների տարբերությունը:
2. Պարզաբանեք գենդերային տեսության հիմնական հասկացությունները և մոտեցումները:
3. Ի՞նչ դեր ունի պետությունը տղամարդկանց և կանանց սոցիալ-իրավական կարգավիճակների ձևավորման հարցում:
4. Ո՞ր ոլորտներում է արտահայտվում գենդերային անհավասարակշռությունը և ինչպե՞ս է դա ազդում իրավական հասարակության կայացման վրա:
5. Որո՞նք են սոցիալ-տնտեսական և քաղաքական գործընթացների գենդերային վերլուծության մեթոդները և պարամետրերը:
6. Ինչպե՞ս են գենդերային ստերեոտիպերն ազդում հասարակության իրավական մշակույթի ձևավորման վրա:

Թեմա 2. Մարդու իրավունքների ժամանակակից հայեցակարգերը

Մարդու իրավունքների ազատական հայեցակարգի ծագման պատմական և գաղափարախոսական նախադրյալները:

«Իրավունքների սերունդ» հասկացությունը, մարդու իրավունքների դասակարգման սկզբունքները (բնական, քաղաքական, քաղաքացիական, սոցիալ-մշակութային իրավունքներ):

Առաջին և երկրորդ սերնդի իրավունքների ամրագրման պատմական նախադրյալները: Կանանց իրավունքների ինստիտուտի ծագումը և զարգացումը: Օլիմպիա դը Գուժի «Կնոջ և քաղաքացուհու իրավունքների հռչակագիրը», ամերիկյան սուֆրաժիստուհիների «Զգացմունքների հռչակագիրը»:

Կանանց իրավունքների պաշտպանություն շարժման պատմական և գաղափարախոսական նախադրյալները: Ֆեմինիզմը՝ որպես կանանց շարժման գաղափարախոսություն. ֆեմինիզմի առաջին և երկրորդ ալիքները: Կանանց շարժման՝ որպես ազգային շարժման մասի, յուրահատկությունը Հայաստանում:

Մարդու իրավունքների ժամանակակից հայեցակարգերը, հավասարության հայեցակարգ, որ հաստատում է իրավունքների զուտ անհատական բնույթը, և տարբերության հայեցակարգ, որ կոլեկտիվ իրավունքների՝ որպես հատուկ պահանջմունքներ ունեցող խմբերի իրավունքների, հիմքը դրեց: Երրորդ սերնդի իրավունքների ծագման պատմական և գաղափարախոսական նախադրյալները:

Կանայք՝ որպես երրորդ սերնդի կոլեկտիվ իրավունքների սուբյեկտ: Կոլեկտիվ իրավունքների հայեցակարգը՝ որպես տղամարդկանց և կանանց կարգավիճակների հավասարեցման փոխարինիչ՝ երաշխավորված պետության կողմից սոցիալական քաղաքականության միջոցով:

Հիմնախնդիր քննարկման համար.

«Ֆեմինիզմը՝ որպես կանանց շարժման գաղափարախոսություն: Կանանց շարժման՝ որպես ազգային շարժման մասի, յուրօրինակությունը Հայաստանում»:

Հարցեր ինքնաստուգման և կրկնության համար

1. Պարզաբանեք մարդու իրավունքների լիբերալ հայեցակարգի ծագման պատմական և գաղափարախոսական նախադրյալները:
2. Ինչո՞ւ և ինչպե՞ս ծագեց «կանանց հարցը»:
3. Պարզաբանեք մարդու իրավունքների դասակարգման սկզբունքները:
4. Ի՞նչ դեր խաղաց ֆեմինիզմը կանանց իրավապաշտպանական շարժման զարգացման մեջ:
5. Որո՞նք են «կոլեկտիվ իրավունքների» առաջացման նախադրյալները:

Թեմա 3. Գենդերային իրավահավասարությունը մարդու իրավունքների համակարգում

Գենդերային իրավահավասարության գաղափարների ծագման նախադրյալները: «Մեռերի հավասարություն (էգալիտարություն)» տերմին-

նի էվոլյուցիան և փոխակերպման փուլերը (մարդկանց միջև բացարձակ հավասարության գաղափարը՝ որպես սոցիալական-արդար հասարակության օրինակ, ժողովրդավարական հասարակության բոլոր քաղաքացիների իրավունքների հավասարություն՝ առանց հատուկ պահանջումներ ունեցող խմբերի իրավունքների հաշվառման, հնարավորությունների հավասարություն հավասար իրավունքների իրագործման համար՝ դրական խտրականության և տղամարդկանց ու կանանց համար հավասար մեկնարկային մակարդակի ապահովման հատուկ քաղաքականության միջոցով, արդյունքների հավասարություն):

Համալիր մոտեցում գենդերային իրավահավասարության խնդիրների նկատմամբ (gender mainstreaming): Հայեցակարգային շրջանակներ, մեթոդաբանություն, դրական փորձառություն: Գենդերային չափման ներառումը քաղաքականության և օրենսդրության մեջ, սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտներում: Գենդերային հավասարության նորմերը և նշանակությունը XX դարի վերջին և XXI դարում:

Տարբերությունների հաշվառմամբ հավասարության քաղաքականությունը՝ որպես տարբեր ոլորտներում կանանց հատուկ իրավունքների պետական երաշխիքների ապահովման և կառուցվածքային խոչընդոտների վերացման ուղղությամբ պոզիտիվ գործողությունների քաղաքականություն:

Գենդերային իրավահավասարության գաղափարի ձևավորումը և զարգացումը կանանց միջազգային շարժման կողմից: Գենդերային հավասարության հասնելու, գործունեության բոլոր ոլորտներում կանանց ներգրավման համար հասարակության և նրա ինստիտուտների արմատական վերակառուցման հիմնախնդիրները կանանց դրությանն առնչվող համաշխարհային համաժողովների փաստաթղթերում (Մեխիկո, 1975 թ., Կոպենհագեն, 1980 թ., Նայրոբի, 1985 թ., Պեկին, 1995 թ.): Պեկինյան հռչակագիրը: Հայաստանը կանանց վիճակին նվիրված Պեկինի IV համաշխարհային համաժողովի համատեքստում:

Հիմնախնդիր քննարկման համար

«Գենդերային իրավահավասարության գաղափարների ձևավորու-

մը և զարգացումը միջազգային կանանց շարժման կողմից: Նվաճումներ և ձախողումներ»:

Հարցեր ինքնաստուգման և կրկնության համար

1. Փոխակերպման ի՞նչ փուլեր է անցել հասարակության մեջ գենդերային իրավահավասարության գաղափարի հաստատման գործընթացը:
2. Չեր պատկերացմամբ ինչպիսի՞ն է սոցիալապես արդար հասարակության նմուշը:
3. Ո՞րն է գենդերային իրավահավասարության խնդրի հանդեպ համալիր մոտեցման էությունը:
4. Պարզաբանեք պետության դերը հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում ըստ սեռի հատկանիշի խտրականության վերացման գործում:
5. Ինչպե՞ս և ինչո՞ւ տեղի ունեցավ հարացույցի ֆեմինիզմից գենդեր փոփոխությունը:

Թեմա 4. Գենդերային իրավահավասարության գաղափարի զարգացումը Հայաստանի իրավաքաղաքական մտքի պատմության մեջ

Գենդերային իրավահավասարության գաղափարները և կանանց սոցիալական կարգավիճակը կանոնական իրավունքում: Գենդերային իրավահավասարության խնդիրները Շահապիվանի ժողովի (443 թ.) որոշումներում:

Ընտանեկան, գույքային հարաբերությունների կանոնակարգման խնդիրները և գենդերային իրավահավասարության գաղափարները XI-XII դարերի իրավական նորմերում (Դավիթ Ալավկատրդի, Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը»):

Գենդերային իրավահավասարության գաղափարները թոնդրակեցիների ուսմունքում:

Գենդերային իրավահավասարության խնդիրները Շ.Շահամիրյանի աշխատություններում:

Իրավահավասարության հարցերը Արևմտյան Հայաստանի Ազգային սահմանադրության մեջ (1863 թ.):

Գենդերային իրավահավասարության գաղափարների զարգացումը XIX դարի հայ հասարակական գործիչների ուսմունքներում (Ստ. Նազարյանց, Գր. Արծրունի, Բաֆֆի):

Գենդերային իրավահավասարության գաղափարները Հայաստանի ժամանակակից գիտական մտքի մեջ:

Հիմնասխնդիր քննարկման համար

«Հայ կինը XIX դարի հասարակական գործիչների աչքերով»

Հարցեր ինքնաստուգման և կրկնության համար

1. Կանոնական իրավունքի օրինակներով ցույց տվեք կանանց կարգավիճակի իրավաբանական ամրագրումը միջնադարյան Հայաստանում:
2. Ինչպե՞ս էին կանոնակարգվում ընտանեկան և գույքային հարաբերությունները XI - XII դարերի իրավական նորմերում:
3. Յույց տվեք գենդերային իրավահավասարության գաղափարների զարգացման էվոլյուցիան XVII-XIX դդ. հայ իրականության մեջ:
4. Ի՞նչ առանձնահատկություն ունի այդ գործընթացը Հայաստանում:
5. Վերլուծեք գենդերային իրավահավասարության գաղափարների տեղն ու դերը Հայաստանի ժամանակակից գիտական մտքի մեջ:

Թեմա 5. Գենդերային իրավահավասարությունը՝ որպես ժողովրդավարության և իրավական պետության կայացման գործոն

Քաղաքացիական հասարակության ինստիտուտները: Հասարակական կազմակերպություններ. կանանց շարժումը որպես հասարակական շարժման մաս:

Իրավական պետություն հասկացությունը: Մարդու իրավունքների ապահովումը՝ որպես օրինականության, սոցիալական արդարության, ազատության, իրավահավասարության, հումանիզմի և ժողովրդավարական այլ սկզբունքների հաստատման գործոն: Ժողովրդավարության և մարդու իրավունքների հարաբերակցությունը: Եվրոպայի խորհրդի կառույցի Մարդու իրավունքների դեպարտամենտի և Հավասարության հարցերի կոմիտեի կողմից մշակված Ջուզակչոված ժողովրդավարության հայեցակարգը (Վիեննա, 1994 թ.), կանանց և տղամարդկանց ներկայացվածությունը իշխանության կառույցներում ըստ 50:50 բանաձևի՝ որպես հասարակության կայուն զարգացման իրական նախադրյալ:

Մեռերի հավասարությունը՝ որպես հիմնարար հարց և ողջ հասարակության շահ: Գենդերային հավասարակշռությունը՝ որպես ռեսուրսների հավասարաչափ բաշխման, կառավարչական և քաղաքական պաշտոններում ներկայացվածության անհրաժեշտ չափանիշ:

Գենդերային հարաբերությունների համակարգի իրավական կանոնակարգում: Իրավական բարեփոխումների հետևանքները գենդերային հարաբերությունների համար՝ որպես իշխանություն և ռեսուրսներ ձևավորող և բաշխող հարաբերությունների:

«Գենդերային իրավահավասարության ամրապնդման ազգային ինստիտուտ» և «գործողությունների պլան» հասկացությունները: Կանանց շահերի ինտեգրացման ազգային մեխանիզմի մոդելը: Համաշխարհային փորձ:

Գենդերային իրավահավասարությունը՝ որպես իրավական համակարգի անհրաժեշտ բաղադրիչ: Նոր իրավական մշակույթի ձևավորումը գենդերային գործոնի՝ որպես քաղաքացիական հասարակության հաստատման բնագավառում նպատակաուղղված քաղաքականության, հաշվառմամբ:

Իրավական նորմերի միասնականացման անհրաժեշտությունը գլոբալացման գործընթացների ֆոնի վրա: Մարդու իրավունքների և կանանց իրավունքների խնդրի փոխադրումը ազգային մակարդակից միջազգային իրավունքի մակարդակ:

Հիմնախնդիր քննարկման համար
*«Նոր իրավական մշակույթը՝ գենդերային գործոնի հաշվառմամբ.
իմ ավանդը, իմ սպասելիքները»*

Հարցեր ինքնաստուգման և կրկնության համար

1. Ի՞նչ կապ էք տեսնում մարդու իրավունքների պահպանման և ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության և իրավական պետության կայացման միջև:
2. Ո՞ր ոլորտներում և ի՞նչ մեխանիզմներով է խախտվում հասարակության գենդերային հաշվեկշիռը:
3. Ինչպիսի՞ն էք տեսնում քաղաքականության և օրենսդրության մեջ կանանց շահերի ինտեգրացման ազգային մեխանիզմի մոդելը:
4. Ազգային ի՞նչ մեխանիզմներ կարող էք առաջարկել իշխանության և ռեսուրսների հավասարաչափ բաշխման համար:

**Թեմա 6. Գենդերային իրավահավասարության
գաղափարների նորմատիվ-իրավական ձևակերպումը
ազգային օրենսդրության մեջ**

Օրենսդրության և քաղաքականության գենդերային փորձաքննության էությունը և մեթոդները: Հայաստանի օրենսդրության գենդերային փորձաքննություն. գենդերային իրավահավասարության խնդիրները ՀՀ Սահմանադրության մեջ, ՀՀ Ընտրական, Քաղաքացիական, Քաղաքացիական դատավարական, Ընտանեկան, Աշխատանքային, Քրեական, Քրեական դատավարական օրենսգրքերում:

Օրենսդրական ակտերի և քաղաքականության գենդերային փորձաքննության ինստիտուցիոնալ-կառուցվածքային ապահովում: Պետական, ազգային և նպատակային ծրագրերի գենդերային փորձաքննություն, «ՀՀ-ում կանանց կարգավիճակի բարելավման և հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիր, 2004-2010 թթ.»

(ընդունվել է ՀՀ կառավարության 08.04.04 թ. որոշմամբ), կառավարության համապետական և տարածքային ծրագրեր, տեղական ինքնակառավարման մարմինների ծրագրեր:

Հիմնախնդիր քննարկման համար

«Գեոդերային խնդիրների արտացոլումը Հայաստանի օրենսդրության մեջ: Օրենք և սյրակտիկա»

Հարցեր ինքնաստուգման և կրկնության համար

1. Մեկնաբանեք գեոդերային իրավահավասարության գաղափարներն ամրագրող հիմնական ազգային փաստաթղթերը (Սահմանադրություն, օրենքներ և այլն):
2. Գործնականում ինչպե՞ս են կիրառվում այդ օրենքների նորմերը: Ի՞նչն է, ըստ ձեզ, խոչընդոտում դրանց իրականացումը:
3. Օրենսդրության բարելավման ի՞նչ ուղիներ եք տեսնում:

Թեմա 7. Գեոդերային իրավահավասարության սկզբունքների ամրագրումը միջազգային մակարդակում

Գեոդերային իրավահավասարության հայեցակարգը ՄԱԿ-ի համակարգում.

Ունիվերսալ միջազգային փաստաթղթեր

ՄԱԿ-ի Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Ամենշաբաթյա հանգստի մասին կոնվենցիա (ԺՆՆ, 1921 թ.)

ԱՄԿ-ի Նվազագույն աշխատավարձի հաշվարկման գործընթացի մասին կոնվենցիա (ԺՆՆ, 1928 թ.)

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948 թ.:

ՄԱԿ-ի 1953 թ. ընդունված Կանանց քաղաքական իրավունքների

մասին կոնվենցիան՝ որպես գենդերային հավասարակշռության հաստատմանն ուղղված քայլ:

ՄԱԿ-ի Ամուսնացած կնոջ քաղաքացիության մասին կոնվենցիա, 1957 թ.:

Կրթության ոլորտում խտրականության դեմ կոնվենցիա, 1960 թ.:

Գենդերային իրավահավասարության գաղափարների հիմնավորումը Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (կամընտիր արձանագրությամբ, 1966 թ.), կանանց քաղաքական իրավունքների ամրագրումը դաշնագրում՝ որպես գենդերային իրավահավասարության հաստատմանն ուղղված քայլ:

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 1966 թ.:

ԱՄԿ-ի Վճարովի արձակուրդի մասին վերանայված կոնվենցիա (Ժնև, 1970 թ.):

ԱՄԿ-ի Նվազագույն տարիքի մասին կոնվենցիա (Ժնև, 1973 թ.):

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (երկրորդ կամընտիր արձանագրությամբ, 979 թ.)՝ որպես հասարակության մեջ գենդերային-գուգակշռված հարաբերությունների հաստատման ճանապարհին ցանկացած խոչընդոտ արգելող հիմնական փաստաթուղթ:

Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա (1989 թ.):

Կանանց նկատմամբ բռնության արմատական վերացման մասին հռչակագիր, 1993 թ.:

Գենդերային իրավահավասարության եվրոպական հայեցակարգ. գենդերային հավասարակշռության ապահովումը կենսագործունեության բոլոր ոլորտներում՝ որպես Եվրոպայի խորհրդի՝ տղամարդկանց և կանանց միջև իրավահավասարության հաստատմանն ուղղված գործունեության հիմնական նպատակ:

Տարածաշրջանային փաստաթղթեր

Գենդերային իրավահավասարության գաղափարները Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների եվրոպական կոնվենցիայում (Հռոմ, 1950 թ.):

Եվրոպական մշակութային կոնվենցիա (Փարիզ, 1954 թ.):

Իրավահավասարության խնդիրները և դրան հասնելու սկզբունքները տղամարդկանց և կանանց հավասարության մասին հռչակագրում (Եվրոպայի խորհուրդ, 1988 թ.):

Խտրականության բացառումը մարդու իրավունքներն իրականացնելիսՆոր Եվրոպայի համար փարիզյան խարտիայում (ԵԱՀԽ, 1990 թ.):

Կանանց իրավունքների մասին Վիեննայի հռչակագիրը (1993 թ.) որպես մարդու համընդհանուր իրավունքների համակարգի անքակտելի մաս, ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակներում կյանքի բոլոր ոլորտներում կանանց լիակատար և հավասար մասնակցության, ըստ սեռական հատկանիշի խտրականության բոլոր ձևերի վերացման երաշխիքները հռչակագրում:

Չուզակշռված ժողովրդավարության հայեցակարգ, մշակվել է Եվրոպայի խորհրդի կառույցի Հավասարության կոմիտեի և Մարդու իրավունքների դեպարտամենտի կողմից (Վիեննա, 1994 թ.):

Խորհրդարանական վեհաժողովի հանձնարարականները կանանց իրավունքների ոլորտում շոշափելի առաջընթացի հասնելու մասին (1995 թ.):

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1676 «Ընտրություններին կանանց մասնակցության մասին» հանձնարարականը, ընդունվել է Խորհրդարանական վեհաժողովի 27-րդ նստաշրջանում, 05.10.04 թ.:

Հիմնախնդիր քննարկման համար

«Կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարակշռության հատատման ուղղությամբ ՄԱԿ-ի համակարգի և Եվրոպայի խորհրդի գործունեության համեմատական վերլուծություն»:

Հարցեր ինքնաստուգման և կրկնության համար

1. Ընդհանուր գծերով պարզաբանեք ՄԱԿ-ի համակարգի գենդերային իրավահավասարության հայեցակարգի հիմնական սկզբունքները:

2. Մեկնաբանեք ՄԱԿ-ի ընդունած և գենդերային իրավահավասարության գաղափարներն ամրագրող հիմնական միջազգային փաստաթղթերը (կոնվենցիաներ, հռչակագրեր, կամընտիր արձանագրություններ, հանձնարարականներ):
3. Մեկնաբանեք սեռերի միջև իրավահավասարության հաստատման բնագավառում Եվրոպայի խորհրդի գործունեությունը
4. Քաղաքացիական հասարակության ձևավորման համար ի՞նչ նշանակություն ունի «Զուգակշռված ժողովրդավարության հայեցակարգի» ընդունումը:
5. Ի՞նչ պարտավորություններ է ստանձնել Հայաստանը գենդերային իրավահավասարության հասնելու ասպարեզում:

Թեմա 8. Անձնական (քաղաքացիական) իրավունքների և ազատությունների գենդերային հայեցակետերը

Անհատական իրավունքների և ազատությունների բնագավառի միջազգային ստանդարտներ (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948 թ., Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, 1950թ., Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (կամընտիր արձանագրությամբ) 1966 թ., Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագիր):

Անձնական իրավունքները և ազատությունները ՀՀ օրենսդրության մեջ. ՀՀ Սահմանադրություն, «Քաղաքացիության մասին» և «ՀՀ-ում արտասահմանյան քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավական կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներ, Քրեական օրենսգիրք, Ընտանեկան օրենսգիրք, ՉԼՄ-ների մասին օրենսդրություն և այլն:

ՀՀ-ում իրավակիրառական պրակտիկան անհատական իրավունքների և ազատությունների բնագավառում:

Քաղաքացիություն հասկացությունը: ՀՀ քաղաքացիության ձեռք բերման գենդերային հայեցակետերը:

Անուսնացած կնոջ քաղաքացիության խնդիրները, ՄԱԿ-ի Անուսնացած կնոջ քաղաքացիության մասին կոնվենցիա (1957 թ.):

Ըստ սեռի հատկանիշի խտրականություն հասկացությունը: Ուղղակի և չեզոք խտրականություն:

Բռնություն կանանց նկատմամբ: Թրաֆիքինգ, գենդերային հայեցակետը: Թրաֆիկինգի դեմ պայքարի իրավական միջոցները:

Խոսքի ազատությունը մամուլում և հեռարձակման ոլորտում: Կինը ՉԼՄ-ներում, գենդերային գրաքննություն, գենդերային էթիկա:

«Սեքսիզմ» հասկացությունը: Սեքսիզմը ՉԼՄ-ներում:

ՀՀ-ում անհատական իրավունքների և ազատությունների իրականացումն ապահովելու ուղիները:

Հիմնախնդիր քննարկման համար

«Որքանո՞վ է հնարավոր գործնականում անհատական իրավունքների իրականացումը»:

Հարցեր ինքնաստուգման և կրկնության համար

1. Ո՞ր ոլորտներում և ի՞նչ ձևերով է դրսևորում խտրականությունն ըստ սեռի հատկանիշի:
2. Կանանց նկատմամբ բռնության ի՞նչ դրսևորումների կարելի է հանդիպել հասարակության մեջ:
3. Իրավական ի՞նչ միջոցներով կարելի է կանխարգելել թրաֆիքինգը:
4. Մեկնաբանեք Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան:
5. Դիտարկեք, թե ինչպես է ներկայացվում կնոջ կերպարը ՉԼՄ-ներում: Անհրաժե՞շտ է արդյոք ՉԼՄ-ների գենդերային գրաքննություն:

Թեմա 9. Քաղաքական իրավունքների գենդերային հայեցակետերը

Քաղաքական իրավունքների բնագավառի միջազգային իրավական ստանդարտները (ՄԱԿ-ի Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիա, 1953 թ., Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (կամընտիր արձանագրություն), 1966 թ.):

Քաղաքական իրավունքների ամրագրումը ՀՀ օրենսդրության մեջ. ՀՀ Սահմանադրություն, Ընտրական օրենսգիրք, «Քաղաքական կուսակցությունների մասին» ՀՀ օրենք:

Քաղաքական իրավունքներից օգտվելու իրական հնարավորությունները. կանանց անհավասարակշիռ ներկայացվածությունը օրենսդիր մարմնում և գործադիր իշխանության համակարգում: Քաղաքական իրավունքների իրականացման խոչընդոտները (ռեսուրսների բացակայություն, հասարակական կարծրատիպեր):

Կանանց քաղաքական մասնակցություն՝ մոտիվացիա, հնարավորություններ:

Քվոտաները՝ որպես քաղաքական իրավունքների իրականացման գենդերային անհավասարակշռության կարգավորման հնարավոր մեխանիզմ:

Քվոտավորման տեսակները՝ «կոշտ քվոտա», «մեղմ քվոտա»:

Դրական խտրականությունը՝ որպես քաղաքական իրավունքների իրականացման երաշխիք:

Հարցեր ինքնաստուգման և կրկնության համար

1. Որքանո՞վ է Հայաստանում հնարավոր կանանց քաղաքական վերելքը:
2. Ի՞նչ դրական և բացասական հետևանքներ ունի քվոտավորումը:

Թեմա 10. Մարդու տնտեսական իրավունքների գենդերային հայեցակետերը

Տնտեսական իրավունքների բնագավառի միջազգային ստանդարտները (Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (1966 թ.), Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կոնվենցիաներ և հանձնարարականներ):

Ջրադվանդության ոլորտում խտրականության վերացման անհրաժեշտության մասին, համարժեք աշխատանքի դիմաց առանց սեռի հատկանիշով որևէ տարբերության հավասար վարձատրության երաշխիքների մասին, ընտանեկան դրության նկատառումներով աշխատանքից ազատումն արգելելու մասին դրույթները Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում:

Տնտեսական իրավունքների գենդերային հայեցակետերի արտացոլումը Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) փաստաթղթերում:

Աշխատավորուհիների իրավունքները՝ որպես այն արժեքների, սկզբունքների և խնդիրների անբաժանելի մաս, որ կազմում են սոցիալական արդարության հասնելու ուղղությամբ ԱՄԿ-ի լիազորությունների էությունը: ԱՄԿ-ի գործունեության հնարավորությունները զբաղվածության ոլորտում ըստ սեռի հատկանիշի խտրականության վերացման ասպարեզում:

Կանանց աշխատանքի օգտագործման սահմանափակումները գիշերային ժամերին՝ ըստ ԱՄԿ-ի որոշումների թիվ 171 կոնվենցիայում:

Մի շարք հատկանիշներով, ներառյալ սեռական պատկանելությունը, մասնագիտական կրթության մատչելիության, աշխատանքի մատչելիության՝ աշխատանքային պայմանների առումով, խտրականության չենթարկելու սկզբունքի հաստատումը ԱՄԿ-ի թիվ 111 կոնվենցիայում:

Մայրերին հղիության շրջանում և ծննդաբերությունից հետո հատուկ պահպանության տրամադրումը Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում (1966 թ.): Ըն-

տանեկան պարտականություններ ունեցող աշխատավոր տղամարդկանց և կանանց համար հավասար վերաբերմունքի և հավասար հնարավորությունների սկզբունքները ԱՄԿ-ի թիվ 156 կոնվենցիայում:

Տնտեսական իրավունքները ազգային օրենսդրության մեջ. ՀՀ Սահմանադրություն, Քաղաքացիական օրենսգիրք, Աշխատանքային օրենսգիրք, ձեռնարկատիրական գործունեության մասին օրենսդրություն:

Հայաստանի տնտեսական քաղաքականության գենդերային հայեցակետերը:

Կանանց զբաղվածությունը միջին և փոքր ձեռնարկատիրության ոլորտում. զբաղվածության գենդերային հարաբերակցությունը:

Խտրականությունը և հնարավորությունների անհավասարությունը աշխատանքային հարաբերությունների ոլորտում:

Կանանց պաշտոնական աճի հնարավորությունները: «Ապակե առաստաղի» հասկացությունը: Գործազրկությունը և դրա գենդերային հետևանքները:

Սեգրեգացիա հասկացությունը: Ուղղաձիգ և հորիզոնական սեգրեգացիա:

Տնտեսական իրավունքների իրականացման խնդիրների լուծման ուղիները:

Հիմնախնդիր քննարկման համար

«Գլոբալացման գենդերային հայեցակետերը տնտեսության ոլորտում»

Հարցեր ինքնաստուգման և կրկնության համար

1. Ինչպիսի՞ն է կանանց ներգրավվածությունը աշխատանքի շուկայում:
2. Կանանց նկատմամբ խտրականության և սեգրեգացիայի ի՞նչ ձևեր գոյություն ունեն աշխատանքային ոլորտում:
3. Կանանց կարիերայի աճի ի՞նչ խոչընդոտներ կան:
4. Ինչպիսի՞ն է երաշխիքների հարաբերակցությունը աշխատանքի

շուկայում հավասար վերաբերմունքի մասին միջազգային փաստաթղթերում և իրականության մեջ:

5. Ընդհանուր գծերով պարզաբանեք, թե ինչպես են արտացոլված տնտեսական իրավունքների գենդերային հայեցակետերը ազգային օրենսդրության մեջ:

Թեմա 11. Մարդու սոցիալական իրավունքների գենդերային հայեցակետերը

Սոցիալական իրավունքների բնագավառի միջազգային ստանդարտները (Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ՄԱԿ, 1966, Եվրոպական սոցիալական խարտիա, 1961թ., Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաներ և հանձնարարականներ):

ԱՄԿ-ի Սոցիալական քաղաքականության մասին թիվ 117 կոնվենցիայում ամրագրված հիմնական նպատակներն ու ուղղությունները: ԱՄԿ-ի Մայրության պահպանության մասին թիվ 103 կոնվենցիայում ամրագրված կանանց դրամական նպաստ ստանալու, կանանց աշխատանքային գործունեությունը հղիության արձակուրդի և ծննդաբերության կապակցությամբ դադարեցնելու իրավունքները:

Սոցիալական իրավունքների գենդերային ասպեկտների արտացոլումը ազգային օրենսդրության մեջ. ՀՀ Սահմանադրություն, Աշխատանքային օրենսգիրք, «Սոցիալական ապահովության մասին», «Սոցիալական քարտերի մասին», «Ձեռնարկատիրական գործունեության մասին» օրենքներ և հարկային օրենսդրություն:

ՀՀ սոցիալական քաղաքականության գենդերային հայեցակետերը:

Բժշկական օգնության և առողջության պահպանման իրավունք: Կանանց վերարտադրողական առողջություն և վերարտադրողական իրավունքներ:

Ընտանիքի, մայրության և մանկության պաշտպանություն: «Գրական խտրականություն» հասկացությունը, էությունը:

Գենդերային դերերի փոխակերպումը ընտանիքում: Գենդերային հակամարտություններ:

Սոցիալական պաշտպանության իրավունք՝ գենդերային մոտեցում:

Սոցիալական ապահովագրությունը՝ որպես քաղաքացիների հիմնական սոցիալական աջակցություն:

Հավասար վերաբերմունք կենսաթոշակային տարիքում:

Սոցիալական իրավունքների իրականացման ապահովման անհրաժեշտությունը ՀՀ-ում:

Հարցեր ինքնաստուգման և կրկնության համար

1. Կարո՞ղ է արդյոք պետության սոցիալական քաղաքականությունը նպաստել սոցիալական իրավունքների պահպանմանը մեր երկրի զարգացման արդի պայմաններում:
2. Ի՞նչ ձևափոխության են ենթարկվել գենդերային դերերը ընտանիքում:
3. Համեմատեք սոցիալական իրավունքների գենդերային հայեցակետերն արտացոլող ազգային և միջազգային փաստաթղթերը:

Թեմա 12. Մարդու մշակութային իրավունքների գենդերային հայեցակետերը

Մշակույթի և կրթության բնագավառի միջազգային ստանդարտները (Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, ՄԱԿ 1966 թ., Մշակույթի մասին եվրոպական կոնվենցիա, 1954 թ., Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիա, 1960 թ., Միջազգային պայմանագրեր կրթության բնագավառում համագործակցության և դիպլոմների ճանաչման մասին, Եվրոպայի խորհրդի մարմինների դիրեկտիվները, Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ-ի հանձնարարականները հանրային և ոչ պետական կրթության մասին):

Բոլոնիայի գործընթացը և միասնական կրթական չափորոշիչների

հիմնախնդիրները: Կանանց բարձրագույն կրթության խնդիրները «Բարձրագույն կրթություն XXI դարի համար» համաշխարհային հռչակագրում (Փարիզ, 1998 թ.):

Մշակութային իրավունքները ազգային օրենսդրության մեջ. ՀՀ Սահմանադրություն, կրթության մասին օրենքներ և այլն:

ՀՀ-ում մշակութային իրավունքների իրականացման գենդերային հայեցակետերը:

Կանանց կրթության իրավունքը: Կանանց գիտական և կրթական ներուժի իրականացման հնարավորությունները:

Մշակութային իրավունքների իրականացման ապահովում:

Հարցեր ինքնաստուգման և կրկնության համար

1. Ինչպիսի՞ն են կանանց հնարավորությունները իրենց գիտական և կրթական ներուժի իրականացման գործում:
2. Ի՞նչ ձևերով է արտահայտվում խտրականությունը կանանց նկատմամբ կրթության ոլորտում:

Թեմա 13. Կանանց իրավունքների պաշտպանության մեխանիզմները

Կանանց իրավունքների պաշտպանության ներպետական համակարգը. ՀՀ դատական համակարգ, մարդու իրավունքների պաշտպան, Հասարակական (ոչ պետական) իրավապաշտպան կազմակերպություններ: Դրանց գործունեությանը վերաբերող օրենսդրությունը:

Կանանց իրավունքների պաշտպանության միջազգային համակարգը:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կոմիտե:

Եվրամիություն, Եվրոպայի խորհուրդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Կանոնադրությունների հիման վրա ստեղծված ինստիտուտներ. ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի կոմիտե, գործունեության ոլորտը (CSW):

Համաձայնագրերի հիման վրա ստեղծված ինստիտուտներ. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտե (CEDAW), ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտե:

Իրավունքների պաշտպանության ընթացակարգեր. բողոքների ներկայացման, վերահսկման և զեկուցման ընթացակարգեր:

Հարցեր ինքնաստուգման և կրկնության համար

1. Կանանց իրավունքների պաշտպանության համակարգերը ինչ^օ երկու հիմնական մասերի են դասակարգվում:
2. Կանանց իրավունքների պաշտպանության ներպետական համակարգը ի՞նչ մարմիններ, ընթացակարգեր է ներառում:
3. Ներկայացրեք այդ մարմինների իրավասությունները բողոքների քննման հարցում:
4. Կանանց իրավունքների պաշտպանության միջազգային համակարգը ի՞նչ մարմիններ, ընթացակարգեր է ներառում:
5. Ներկայացրեք այդ մարմինների իրավասությունները բողոքների քննման, վերահսկման և զեկուցումների ներկայացման հարցերում:

Հանձնարարվող գրականություն

Նորմատիվ ակտեր, փաստաթղթեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
2. ՀՀ օրենքների ժողովածու (1990-95): Երևան 1995:
3. ՀՀ օրենքների ժողովածու: Հտ. Ա: Երևան 1999:
4. ՀՀ օրենքների ժողովածու: Հտ. Բ: Երևան 1999:
5. ՀՀ օրենքների ժողովածու: Հտ. Գ: Երևան 2000:
6. Մարդու իրավունքների վերաբերյալ ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրեր, պաշտոնական թարգմանություն: Գ-իրք Ա: Երևան, 2001:
7. Մարդու իրավունքների վերաբերյալ ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրեր, պաշտոնական թարգմանություն: Գ-իրք Բ: Երևան, 2001:
8. *Комплексный подход к проблеме равенства между полами,*

- Заключительный доклад о деятельности группы специалистов по вопросу о комплексном подходе к проблемам равенства женщин и мужчин. Страсбург. 1998.*
9. *Права человека: сборник международных документов, Хельсинский фонд по правам человека . Варшава. 2001.*

Հայաստանում հրատարակված գրականություն

10. Գենդերային Իրավիճակը Հայաստանում: Փոխակերպման գործընթացների հետևանքները և կանանց իրավունքներն ու հնարավորությունների ընդլայնումը հազարամյակների նպատակների համատեքստում, Գենդերային հետազոտությունների կենտրոն, ՀԿԿԱ, Եր. 2005:
11. Գրիգորյան Գ., Կնոջ իրազեկությունը իր իրավունքներին, Կանանալք գար գացման մեջ, Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա /ՀԿԿԱ/, Եր. 1999:
12. Գրիգորյան Գ., Կանանց իրավունքները Հայաստանում ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման համատեքստում. Ետպեկինյան դիտարկումներ, Ժամանակակից հասարակության գենդերային դինամիկան. Հայաստանի կանայք 21-րդ դարում. ՀԿԿԱ. Եր. 2000:
13. Էլիոտ Պ., Մենդել Ն., Ֆեմինիզմի սահմանումները, Գենդերային հետազոտություններ, N.1, ՀԿԿԱ, Եր. 2001:
14. Թելունց Մ.Մ., Իրավական պետության գաղափարը հայկական պատմա-իրավական հուշարձաններում, Պատմաբանասիրական հանդես. N.1 Եր. 1999:
15. Կլիմենկովա Տ., Գենդերային մոտեցման քննարկման շուրջ, Գենդերային հետազոտություններ, N. 1, ՀԿԿԱ, 2001:
16. Հասրաթյան Ջ., Կանանց շարժումը Հայաստանում 20-րդ դարում, Գենդերային հետազոտություններ, N.2, ՀԿԿԱ, 2001:
17. Հասրաթյան Ջ., Գենդերային հավասարություն. կանանց քաղաքական և քաղաքացիական մասնակցություն, Գենդերային հետազոտություններ, N 3, ՀԿԿԱ, 2001:
18. Հարությունյան Ա., Հայ կանանց շարժումը 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին, Գենդերային հետազոտություններ, N 2, ՀԿԿԱ, 2001:
19. Հարությունյան Մ. Գենդերային իրավահավասարությունը մարդու իրավունքների համակարգում, Գենդերային հետազոտություններ, N 8, ՀԿԿԱ, 2002:
20. Համալսարանական կրթությամբ կանայք, լրատու, N 7 սեպտ. 1998; N 6 հունիս, 1998; N 15 սեպտեմբեր 2000; N16 հոկ. 2000; N 20 հունիս 2001:
21. Մարգարյան Կ., Անցումային շրջանի տնտեսության միտումների դինամիկան. գենդերային չափում: Ժամանակակից հասարակության գենդերային դինամիկան, Հայաստանի կանայք 21-րդ դարում /խորհրդատվորվի նյութեր/ ,ՀԿԿԱ, Եր. 2000:
22. Մխիթարյան Ա. Գենդերային տեսության ներածություն, Գենդերային հետազո-

- տոություններ, N.12, ՀԿԿԱ, Եր. 2002:
23. Վարդանյան Ե. Գենդերային հետազոտությունների ներածություն, Եր.: 2002
 24. Քոչարյան Վ. Միջազգային իրավունք: Եր., 2002:
 25. Ֆեմինիզմի պատմություն և տեսություն, ՀԿԿԱ: Երևան, 1999:
 26. Мкртчян А, *Нормативный конфликт и хаос пессимизма*. В кн.: «Կանայք զարգացման մեջ»: Եր. 1999:
 27. Осипов В. *Проблемы демократизации современного общества; гендерный аспект. Права женщин-права человека*. «Կանայք զարգացման մեջ» գիրքով. Հանապարհակալ կրթությանը կանանց անցիցիվա /ՀԿԿԱ/: Եր. 1999:
 28. Осипов В., *Комплексный подход к проблеме гендерного равенства в перспективе национального механизма по улучшению положения женщин*, в кн. «Ժամանակակից հասարակության գենդերային դինամիկան. Հարաստանի կանայք 21-րդ դարում», ՀԿԿԱ: Եր. 2001:
 29. Осипов В., *Демократия участия; гендерный аспект*, В кн.: «Գենդերային հետազոտություններ», N 1, ՀԿԿԱ: Եր. 2001:
 30. Асратян Дж. *Гендерное равенство; женское гражданское и политическое участие. Гендерная динамика современного общества. Женщины Армении в 21-ом веке. Материалы конференции / Ассоциация женщин с университетским образованием. Ереван 2002*.
 31. Асратян Дж., *Женское политическое участие, Гендерные исследования, Ассоциация женщин с университетским образованием, N1, 2001*.
 32. Аракелян С. *Трудовая эмиграция. Гендерный подход, Гендерные исследования. Ер. 2001*.
 33. Бабаян С. *Армянское общество сквозь гендерную призму. Гендерное равноправие. Стереотипы и возможности их преодоления*. В кн.: *Гендерные проблемы общества в экстремальной ситуации в Гюмри. Гюмри, 2001*.
 34. Бабаян С. *Гендер и дискриминация. Гендерные исследования. N. 11. Ереван, 2002*.
 35. Варданян Е., *Женщины и женская активность, как объекты гендерных исследований*. В кн.: *Гендерные исследования, Ассоциации женщин с университетским образованием, Ереван, 2001*.
 36. Джагалян Н., *Права женщин в контексте прав человека*. В кн.: *Гендерная культура общества: перспективы и реалии*. Изд. Ассоциации женщин с университетским образованием, Ереван – Ванадзор, 2000.
 37. Есаян Г. *Женщина, закон и право*. В кн.: *Гендерная культура общества: перспективы и реалии*. Изд-во Ассоциации женщин с университетским образованием, Ереван-Ванадзор, 2000.
 38. *Конституционные основы государственной политики в области гендерного образования, Ер. 2004*.
 39. Явич Л.С. *Свобода и права человека в механизме правового регулирования*. - *Правоведение*. N 3. М. 1975.

Արտասահմանյան գրականություն

40. Айвазова С. Гендерное равенство в контексте прав человека. Пособие. М. 2001.
41. Воронина О. Гендер.— Женщина плюс, N2, 2001.
42. Мертус. Д. И др. Права женщин, права человека, М. 1996.
43. Новицкий М. Что такое права человека? Хельсинский фонд по правам человека. 2002.
44. Права человека для женщин шаг за шагом. ИСГ, М. 2004.
45. Поленина С.В. Права женщин в системе прав человека: международный и национальный аспект, М. 2000.
46. Уралова С., Ширококова А. Женское лидерство. Власть и женщина. Выборные технологии. Иркутск, 1999.
47. Франковски С., Гольдман Р., Лентовска Э. Верховный суд США о гражданских правах и свободах, изд., ОБСЕ, 2001.
48. Хрестоматия Основы гендерных исследований - М., 2000.
49. Шведова Н. Женщины и власть. М. 2001.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

ԲԱԺԻՆ 1

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՆԱԽԱԳԻԾ

«ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ»

Սոֆյա Բաբայան, Ջենմա Հասրաթյան, Վլադիմիր Օսիպով
*Պետական կրթական չափորոշիչ «Գենդերային կրթության
 ընդհանուր հիմունքները»* 11

ԲԱԺԻՆ 2

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՆԱԽԱԳԻԾ ԵՎ ԾՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Սոֆյա Բաբայան, Ջենմա Հասրաթյան
*Ուսանողների գիտելիքների և կարողությունների միասնական
 պահանջներ «Գենդերային գիտելիքների հիմունքներ»
 ներածական դասընթացի համար* 34

Սոֆյա Բաբայան, Ջենմա Հասրաթյան
*«Գենդերային գիտելիքների հիմունքներ» ներածական
 դասընթացի ծրագիր*41

ԲԱԺԻՆ 3

ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱԿԱՐԳԱԿ

Սիրանուշ Խաչկալյան, Ելենա Վարդանյան Գենդերային տեսական գիտելիքների և հմտությունների միասնական պահանջներ «Մշակութաբանություն» մասնագիտության համար	53
Սիրանուշ Խաչկալյան, Ջեմմա Հասրաթյան, Ելենա Վարդանյան Գենդերային տեսական գիտելիքների և հմտությունների միասնական պահանջներ «Մանկավարժության պատմություն» առարկայի համար	78
Ռուզաննա Մարդոյան, Ֆրունզե Ղազարյան, Ելենա Վարդանյան, Ջեմմա Հասրաթյան Գենդերային տեսական գիտելիքների և հմտությունների միասնական պահանջներ «Մանկավարժություն» առարկայի համար	107
Նինա Հովհաննիսյան, Հրանտ Ավանեսով Գենդերային տեսական գիտելիքների և հմտությունների միասնական պահանջներ «Հոգեբանություն» մասնագիտության համար	134
Կարինե Բազեյան, Յուրի Սկրտումյան, Ելենա Վարդանյան Գենդերային տեսական գիտելիքների և հմտությունների միասնական պահանջներ «Հայ ազգագրություն» առարկայի համար	152

ԲԱԺԻՆ 4

**ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐՐՈՐԴ ՍԱԿԱՐԴԱԿ**

Գյուլնարա Հովհաննիսյան, Հարություն Մարգարյան
 «Գենդերը և տնտեսագիտությունը» հատուկ դասընթացի չափորոշիչ:
 Գենդերային տեսական գիտելիքների և հմտությունների
 միասնական պահանջներ 171

Գյուլնարա Հովհաննիսյան, Հարություն Մարգարյան
 «Գենդերը և տնտեսագիտությունը» հատուկ դասընթացի ծրագիր
 բակալավրիատի համար 196

Գյուլնարա Հովհաննիսյան, Հարություն Մարգարյան
 «Գենդերը և տնտեսագիտությունը» հատուկ դասընթացի ծրագիր
 մագիստրատուրայի համար 213

**Ելենա Վարդանյան, Արթուր Նիկողոսյան, Սիրանուշ Խաչկալյան,
Կարինե Բազեյան**
 «Հայոց պատմության գենդերային դիսկուրսը» հատուկ դասընթացի
 չափորոշիչ: Գենդերային տեսական գիտելիքների և
 հմտությունների միասնական պահանջներ 228

**Ելենա Վարդանյան, Արթուր Նիկողոսյան, Սիրանուշ Խաչկալյան,
Կարինե Բազեյան**
 «Հայոց պատմության գենդերային դիսկուրսը» հատուկ
 դասընթացի ծրագիր մագիստրատուրայի համար 249

**Սոֆյա Բարսյան, Սելինե Հարությունյան, Վիգեն Քոչարյան,
Ջեննա Հասրաթյան, Լիլիթ Սիմոնյան**
 «Գենդերը և մարդու իրավունքները» հատուկ դասընթացի չափորոշիչ:
 Գենդերային տեսական գիտելիքների և հմտությունների
 միասնական պահանջներ 279

**Սոֆյա Բարսյան, Սելինե Հարությունյան, Վիգեն Քոչարյան,
Ջեննա Հասրաթյան, Լիլիթ Սիմոնյան**
 «Գենդերը և մարդու իրավունքները»
 հատուկ դասընթացի ծրագիր 296

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՈՒՄ:
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ**

**«Պետական կրթական չափորոշիչ: Գենդերային կրթությունը
բարձրագույն դպրոցում» նախագծի ղեկավար *Ջենմա Հասրաթյան***

Գլխավոր խմբագիր՝ *Ջենմա Հասրաթյան*

Խմբագիր՝ *Անահիտ Հարությունյան*

Թարգմանիչներ՝ *Գայանե Մերոյան, Սամվել Խաչատրյան*

Համակարգչային ապահովում՝ *Իրինա Շահինյան, Անահիտ Ավագյան,*

Ձևավորում՝ *Արթուր Բոյախյան*

**ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՄ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
375010, Երևան, Տիգրան Մեծի, 4:
Հեռախոս, ֆաքս. (374.1) 58-15-83, E-mail: aawue@arminco.com**

Տարածվում է անվճար

**«ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարան:
Հասցե՝ Երևան, Ավան, Գավիթ Մալյան 45
Հեռ. (374 1) 62-38-63, (374 1) 40-49-82
Էլ. փոստ print@netsys.am**